

ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ԱՐԵՎԵԼԻԻ  
ԵՐԿՐՆԵՐ  
ԵՎ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ  
XXII



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

**THE COUNTRIES AND PEOPLES  
OF THE NEAR AND MIDDLE EAST**

**XXII**

*This publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA*

YEREVAN - 2003

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

---

**СТРАНЫ И НАРОДЫ  
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

**XXII**

*Спонсор – "Фонд Армен и Берсабе Джереджян",  
США*

ЕРЕВАН – 2003



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXII

*Մեկնաստորյամբ  
Արմեն Լ. Բերսապե ճերմեան Հիմնադրամի - ԱՄՆ*



ԵՐԵՎԱՆ - 2003

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՂՏ 950  
ԳՄՆ 63.3(5)  
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Հովհաննիսյան Ն.Հ. (Մայրագամ),  
Բայրուրյան Վ.Ա., Հարությունյան Ն.Վ.,  
Չորանյան Պ.Ա., Սաֆրաստյան Ռ.Ա.

Մ 663 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXII)-  
եր., Ջանգալ-97, 2003, 336 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի XXII հատորը ներառում է հայ արևելագետների աշխատությունները: Աշխարհագրական – տարածքային առումով նրանք ընդգրկում են Արաբական Արևելքը, Իրանը, Թուրքիան, Բրիտանյա Արևելքը, Գին Արևելքը և Չինաստանը: Թեմատիկ առումով ժողովածուի հոդվածներում արծարծվում են նոր և նորագույն պատմության, քաղաքականության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, էին շրջանի, միջին դարերի, զրակաճության, արվեստի, լեզվաբանության և հարակից այլ արդիական հարցեր:

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, մշակութի հարցերով զբաղվողների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

Մ 0503030000 2003թ.  
0003(01)–2003

ԳՄՆ 63.3(5)

ISBN 99930-2-724-3

© Հեղինակներ, 2003 թ.



Արսեն ՃԵՐԵՋԻԱՆ  
1920–2003  
Arsen JEREJIAN

Հատորը նվիրված է «Արսեն և Բերսաբի Ճերեճյան հիմնադրամի» (ԱՄՆ) համ-  
գույցյալ Պրեզիդենտ, Հայաստանի արևելագետների անկեղծ բարեկամ, ԱՐՄԵՆ  
ՃԵՐԵՋԻԱՆԻ անմոռաց հիշատակին, նրա գործի բարձր գնահատանքով:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

This volume is dedicated to the memory of the late President of "Armen and Bersebe  
Jerejian Foundation" (USA), great friend of the Orientalists of Armenia ARSEN V.  
JEREJIAN with high appreciation of this noble work.

Institute of Oriental Studies of NAS RA

Этот том посвящен святой памяти Президента "Фонда Армен и Берсэбе Джере-  
джи" (США), большого друга востоковедов Армении АРСЕНА ДЖЕРЕДЖИЯНА.

Институт востоковедения НАН РА



**ՎԱՀԱՆ ԲԱՅՔՈՒԴՅԱՆ**

**ԻՐԱՆ-ԱԴԻԲԵՋԱՆ. ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ԹԵ՝  
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԱՆՈՅԱՆՆԵՐ**

Խորհրդային Միության փլուզումից և նորամկախ պետությունների այսպես կոչված «նարսեղային գոտու» ստեղծումից հետո, հետխորհրդային վիթխարի շափերի հասնող երկրամասերում քախվեցին քազմաքիվ երկրների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահեր: Անշուշտ մրցակցությունը հիմնականում գնում էր Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի միջև: Սակայն տաքածաշրջանում իրենց ուզմաքաղաքական և մասամբ նաև տնտեսական հզորության վերաքերթյալ մեծ համարում ունեցող Թուրքիային ու Իրանին թվում էր, քն Անդրկովկասում առաջացել է վակում, որը լցնելու իրավունքը առաջին հերքին վերաքախված է հենց իրենց: Ուստի Անկարան և Թեհրանը միմյանց հետ մտան քեծ մրցաքաղաքի մեջ, միմյանց կանխելու և ժամ առաջ հաստատվելու Այսրկովկասում, այնտեղ առաջատար դիրքեր ձեռք քեղելու և քելադրող ուծ դատնալու հեռանար մտադրությամբ:

Հայաստանն, անշուշտ, դուրս էր քուրք-իրանական մրցակցության դաշտից, որովհետև հասկանալի պատմատնեքով Թուրքիան չէր կարող այնտեղ որևէ ձևով ժավալվել: Առավել ևս, որ 1993թ. ապրիլին նա փակեց Հայաստանի հետ իր սահմանները, շրջափակման ենքարկելով նքան: Դա ուղեկցվեց Անկարայի կողմից Բաքվի քաղաքական կուրսի անվերաքախ պաշտպանությամբ: Հայաստանի հետ հարաքերություններում Անկարան իր արտաքին քաղաքականությունը դարձրեց Աղքեքանում իր սեփական շահերի պատանդը: Կասկածից վեր է, որ Թուրքիայի սեքո կապերը այդ հանրապետության հետ քելադրված էին ոչ միայն մչակուրքների, լեզվի, պատմական գործոնների նմանությամբ կամ ընդհանրությամբ, այլև Աղքեքանում առկա էժամ էներգետիկ անտրաներով:<sup>1</sup>

Հետևարար քուրք-իրանական մրցաքաղաքի կիզակետում մնում էին միայն Վրաստանը և Աղքեքանը: Այս վերջինին հետ հարաքերութ-

յումեներում Իրանն ուներ կարևոր առավելություն՝ բավականին մեծ քնն-  
հանույք սահման: Աղբրեզան ներթափանցելու համար Իրանը հույս ու-  
ներ հենվել այդ երկրի շինարական մեծամասնության աջակցության վրա,  
չբաժանատության մեջ դնելով ինչպես կրոնական կարգախոսները, այն-  
պես էլ այդ երկրի հետ Իրանի «դարավոր պատմական-

մշակութային ավանդույթները»: Մինչդեռ թուրքիսան Աղբրեզանի  
քաղաքական կողմնորոշումը իր կողմը չբջեղու համար ինչպես միշտ,  
ասպարեզ հանեց երկու քյուրքազեզու «հրթայր ժողովուրդների աջյան  
կանչը»:<sup>2</sup>

1989թ., այսինքն դեռևս Խորհրդային Միության գլոբալ տարի-  
ներին, թեևրանը և Մոսկվան ստորագրեցին հյուպատոսական մի հա-  
մաձայնագիր, որը մախատեսում էր, որ երկու երկրների քաղաքացինե-  
րը, որոնք բնակվում են սահմանային գծի 45 կիլոմետրանոց գոտու եզ-  
րու կողմերում (ԽՍՀՄ-ի և Իրանի միջև սահմանային գծի երկարությունը  
կազմում էր 2250կմ.) կարող են առանց վիզայի, տեղական իշխանու-  
թյունների բույրավայրամբ, հատել այն: Դրա հեռուանքը հանդիսացավ  
այն, որ 1989թ. դեկտեմբերի 31-ին Նախիջևանի Ինքնավար հանրապե-  
տության սովետա-իրանական սահմանի հատվածում տեղացի ազերի-  
ները քանդեցին ու ավերեցին սահմանային ճշանման ու մետաղյա աք-  
զիկավակեցները: Իսկ 1990թ. հունվարին խորհրդային զորքերի Բաքու  
մտնելու մախոյակին, հորդեցին Իրանի տարածքը, պատրվակ բանկով  
սահմանի այն կողմում իջնեց ազգականների հետ վերամիավորվելու  
ձգտումը:<sup>3</sup> Մ. Գորբաչևը մեղադրեց նրանց խոմեյնիզմին տուրք տալու  
մեջ: Մինչդեռ մինչև օրս այդ իրադարձությունը Բաքվում պաշտոնական  
մակարդակով մեկնաբանվում է որպես «անկախության համար պայքա-  
րի մի վառ ու հիշարժան դրվագ»:

1990թ. հունվարի 19-ին Նախիջևանի ԻՀՀ Գերագույն Խորհուրդը  
որոշում ընդունեց ԽՍՀՄ-ի կազմից ինքնավար հանրապետության դուրս  
գալու մասին և վկայակոչելով 1921թ. Կարսի պայմանագիրը, օգնության  
խնդրանքով դիմեց թուրքիայի հանրապետությանը, ինչպես նաև Իրանի  
Իսլամական Հանրապետությանը, ՄԱԿ-ին և մի շարք այլ պետություն-  
ների ու միջազգային կազմակերպությունների: Հենց այդ ժամանակվա-  
նից սկսած Իրանը գործում կերպով ներգրավեց աղբրեզանական քա-  
ղաքականության ոլորտը՝ որպես տարածաշրջանային ուժի ազդու  
կենտրոնի:

ԻԻՀ-ը առաջիններից մեկն էր, որ ճանաչեց Աղբրեզանի Հանրա-  
պետությունը (1991թ.մարտի 12-ին): 1991թ. Իրանի արտգործնախարար  
Սի Աքբար Վեյալաբին պաշտոնական այցով մեկնեց Մոսկվա, իսկ ա-  
պա ուղևորություն կատարեց Միջին Ասիա և Աղբրեզան: Այցի ընթաց-  
քում Բաքուն ցանկություն հայտնեց Իրանի հետ տնեմալու սերտ հարա-

քերտությունները:<sup>4</sup> Կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր քաղաքական, տնտեսական, գիտական ու մշակութային համագործակցության սկզբունքների մասին: Այցի ընթացքում քննարկվեցին նաև Ադրբեյջանի և Իրանի համար կազմավարական հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Որպես այդ բոլորի հետևանք, իրանական կառավարությունը որոշում ընդունեց Ադրբեյջանի հետ համատեղ Իրանի տարածքով կառուցել մի երկաթուղի, որը Ադրբեյջանը կապելու էր Նախիջևանի հետ, Բաքվում քացվեց «Իրան-Ադրբեյջան քարեկամության պալատ», հիմնադրվեց «Իրանա-ադրբեյջանական քարեկամության ընկերություն», որը սկսեց հրատարակել «Բաքվի ժայռ» շաբաթաթերթը, «Ի-ժամ Խոնյեյն» քարեգործական միությունը մշտապես օգնություն սկսեց ցուցաբերել ավելի քան 250 հազար չքավոր ադրբեյջանցիների և այլն: Առհասարակ, ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆիսանջանի կառավարման շրջանում (1989-1997թթ.) Իրանը մեծապես նպաստեց, որ Ադրբեյջանը ընդունվի ՄԱԿ-ի, Իսլամական Կոնֆերանս կազմակերպության, նորաստեղծ Տնտեսական համագործակցության կազմակերպության (ԷԿՕ) և այլ կառույցների մեջ:<sup>5</sup>

1991թ. օգոստոսին Ադրբեյջանի կանրապետության առաջին նախագահ Այազ Մուքալիբովը ԻԻՀ կառավարության նրավելով պաշտոնական այցով մեկնեց Թեհրան: Այցի ընթացքում նա համոզեւ եկավ հայտաբարությամբ, որ Ադրբեյջանի մերձեցումը Արևելքի երկրների և առաջին հերթին Թուրքիայի և Իրանի հետ ինքը համարում է «միանգամայն քնական ու դրական երևույթ»: Քննարկվեցին փոխշահավետ համագործակցությունն ընդլայնելու, երկու երկրների միջև «քարխլոցացիական ու եղրայրական հարաբերությունները անշեղորհն զարգացնելու ու խոյացնելու» վերաբերյալ հարցեր:<sup>6</sup>

Այդ այցից հետո, 1991թ. հոկտեմբերին, Բաքվում իրանական էյուպատոսությունը վերածվեց դեսպանության, իսկ Թեհրանում քացվեց Ադրբեյջանի դեսպանություն: Միաժամանակ Իրանը որոշակի օգնություն ցուցաբերեց Ադրբեյջանին նաև այդ պետության արտաքին քաղաքական գերատեսչությունը ձևավորելու գործում: Մասնավորապես Իրանի ԱԳՆ ընդունեց հատուկ որոշում, որի համաձայն ամբողջ աշխարհում Իրանի դեսպանությունները պետք է աջակցեին և զանազան ծառայություններ մատուցեին ինչպես ադրբեյջանական դիվանագետներին, այնպես էլ այդ համրապետության քաղաքացիներին:<sup>7</sup>

Անվարան կարելի է ասել, որ Այազ Մուքալիբովի կառավարման շրջանում իրանա-ադրբեյջանական հարաբերությունները ընթանում էին սաղմնավորման ու ձևավորման խաղաղ եռուով: Մակայն այն քանից հետո, երբ ազերի ծայրահեղ ազգայնականների կուսակցության Արբեյջանի Ժողովրդական ճակատի (ԱԺՃ) ուժգին ճնշման ներքո 1992թ. մար-

տի 3-ին Ա.Մուրալիբովը ստիպված էր հրաժարական տալ և հեռանալ երկրից, իրանա-սոցիալիստական միջպետական հարաբերությունների քննադատեցին քաղաքական տեղատվության փոխ:

1992թ. հունիսի 7-ին Աբուլֆազ Ալիևը (Էլիբեյ) հռչակվեց Ադրբեջանի նախագահ: Նրա առաջին հայտարարություններից մեկը համոզի-սացավ այն, որ Ռուսաստանը և Իրանը սպառնալիք են համոզիտանում Ադրբեջանի անվտանգության համար, ուստի Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Թուրքիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Արևմուտքի այլ տերությունների հետ: Էլիբեյը փոքրամ էր համոզել իր երկրի հասարակական կարծիքը, որ «Ադրբեջանը բուրք և ամերիկացի քարեկամների օգնությամբ կվերածվի տարածաշրջանի ամենազարգացած երկրի»:<sup>8</sup>

Էլիբեյի կատալալությունը համոզեց նկատ ռազմաշրջանը ծավալապաշտական հայտարարություններով ազերիների հայրենիքի «գերաբ-յան մեջ գտնվող մասը»: Իրանական Ադրբեջանը «սպառնալիք» և «երկու Ադրբեջանների միավորման» վերաբերյալ: Ադրբեջանի ժողովրդական ճակատի ծրագրի մեջ մտցվեց հատուկ կետ այսպես կոչված «Հարավային Ադրբեջանը» նորանկախ Ադրբեջանի հանրապետությանը միացնելու անհրաժեշտության մասին:<sup>9</sup> 1993թ. մարտին բուրքական «Թյուրքիչ բայն» քերթին տված հարցազրույցում Էլիբեյը նշել է «Իրանն ապագայում կմասնատվի. նրա տարածքում կտեղծվեն հինգ՝ քղերի, իլուզների, արաբների, ֆարսների և բուրքերի երկրներ: Ողջ Ադրբեջանը միասնական կդառնա և ծնունդ կտանի 40 միլիոն ազերի բնակչությամբ երկիր»:<sup>10</sup>

Էլիբեյը կտրականապես մերժում էր նաև դարաբաղյան խնդրի իսողաղ կարգավորման հարցում Իրանի ցանկացած միջնորդություն կամ քաղաքական նախաձեռնություն: Նրա այդ դիրքորոշման հետևանքով Իրանը լիովին դուրս մնաց խաղաղ կարգավորման գործընթացից:<sup>11</sup>

Էլիբեյի քաղաքական ազդեցության ներքո Ադրբեջանի համրապետությունից ազերիների խաչոր զանգվածներ ջաղո ու փշուր անելով սահմանային արգելքները, կրկին սկսեցին զանգվածորեն մեքիտուծել Իրանի տարածքը: Ի պատիվ իրանական կատալալության պետք է նշել, որ այդ օրերին նա դրսևորեց կատալալ զարկածություն, թեև Իրանում առկա էին ուժեր, որոնք գտնում էին, որ պատը միանգամայն պատեհ է Ադրբեջանի հանրապետության դեմ ձեռնարկելու ինչ-ինչ քաղեր:

Էլիբեյի պամթյուրքիստական կողմնորոշվեները, նրա կողմից «արյունակից եղբայր» Թուրքիան ռազմավարական գործընկեր հոյակե-րը և առհասարակ Թեհրանի նկատմամբ սաղորի քայլերը կտրուկ սրեցին Իրան-Ադրբեջան հարաբերությունները:<sup>12</sup> Թեհրանը հատկապես մտա-հոգված էր Բաքվի քաղաքական հետևանքով Իրանական Ադրբեջա-նում ապակայունացման հնարավորությունից: Իսկ դրա նախանշաննե-



քը ակնառու կերպով դրսևորվեցին նույնիսկ մայրաքաղաքում՝ Թեհրանում: 1993թ. ապրիլի 13-ին, Թեհրանի իսամալաքանի առավելագույն ազդերի ուսանողությունը, որոնց մեջ քիչ չէին մահ ուսանելու նպատակով Բաքվից Իրան եկած աղքերեզանցիներ, Թեհրանի պետական համալսարանի տարածքում կազմակերպեցին մի խոշոր համրահավաք, որտեղ Բեքրաբարում ԼՂՀ ուժերի կողմից վերահսկողություն հաստատելու կապակցությամբ հնչում էին հակահայկական ճառեր ու կոչեր: Համրահավաքի մասնակիցները այնուհետև քայլադշավ կազմակերպեցին դեպի քաղաքի կենտրոն, ուր գտնվում է Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության շենքը: Շահապահին քայլադշավի մասնակիցներին միացան մահ մեծ թվով քեհրամարմակ ազդերին: Դեսպանատան շենքի առջև համրահավաքը շարունակվեց, հնչեցին հակահայկական ճառեր ու կարգախոսներ, այդ թվում մահ Իրանի խորհրդարանի (մեջլիս) ազդերի պատգամավորների քերամից, ընդորում թուրքերին լեզվով: Եիկացած մթնոլորտում ամբոխը այրեց Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, սկսեց քարկոծել դեսպանության շենքը, միաժամանակ վտրժեղով ջարդել դռները և ներխուժել ներս: Իրանական կառավարությունը անվտանգության ուժերի և զորքի օգնությամբ ցրեց համրահավաքի մասնակիցներին: Հաջորդ օրը, ապրիլի 14-ին, Իրանի պետգործնախարար Ալի Աքբար Վելայաթին ուղերձով դիմեց Հայաստանի կառավարությանը, մտահոգություն հայտնելով «իրադարձությունների զարգացման այդօրինակ ընթացքի առնչությամբ»: Ուղերձում կոչ էր այվում հայկական ուժերը դուրս քերել «Աղբերջանի գրավյալ տարածքներից» և Դարաբադի խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով: Միաժամանակ Իրանի մախազահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին մի մամակ հղեց Հայաստանի կառավարությանը, որտեղ ոչ միայն խտորեն քննադատվում էր նրա դարաբադյան քաղաքականությունը, այլև սիյաշահելու խոսքեր էին պարունակվում Բաքվի հասցեին: «Նախազահ Ռաֆսանջանին, իրավացիորեն նշում է Է.Բեզիզանյանը, այդ քայլով քերևա նախտակ ուներ իսլամական աշխարհին ցույց տալ, որ, չնայած Էլչիբեյի համաբուրցական և հակաիրանական քաղաքականությանը, Թեհրանն Աղբերջանը դիտում է իբրև մահմեդական երկիր և պաշտպանում է նրա շահերը»:<sup>13</sup>

Անկախ նրանից, թե իրականում ում էր հասցեագրված Իրանի մախազահի մամակը, փաստը մնում էր փաստ, որ մախ իրանական կառավարությունը քույլ էր տվել Հայաստանի դեսպանության առջև կազմակերպված այդ սաղրիյ ծանրահավաքը և ապա ոչ միայն չէր դատապարտում նրա կազմակերպիչներին, այլև այդ բողոքի պատասխանատվությունը փաստորեն քարոշում էր Հայաստանի վրա: Որպես բողոք այդ բողոքի դեմ, ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության պրտակարգ և

լիազոր դեսպանը (տողեթիս հեղինակը) հետագավ թնկերանից և մեկնեց հայրենիք: Երկու շաբաթ անց, երբ Իրանի ԱԳ Ճախարաբարությունը հավաստիացումներ տվեց Հայաստանի կառավարությանը, որ մնան միջադեպերը այլևս չեն կրկնվի, դեսպանը վերադառնալով վերադարձավ թնկերան և դեսպանության դռնը կրկին բարձրացվեց:

Ուշագրավ է նշել, որ «երբ Բաքվում էր ստորեմիստական հասանքները գործում էին Իրանի դեմ»<sup>14</sup>, վերջին հաշվով Էլչիբեյի շեշտված նախաձեռնական դիրքորոշումը նպաստեց թնկերանի և Երևանի միջև նախաբերությունների էլ ավելի սերտացմանը:

1993թ. ամռանը Ղարաբաղում աղբյրեզամական քանակի լուրջ անհաջողությունները, Աղբյրեզանում հարստուն կելյավի խորացող սոցիալական, տնտեսական ու քաղաքական ճգնաժամը և միջազգային քաղաքական բնույթի մի շարք իրադրություններ այդ երկրում համզեցրին մոթ իշխանավարության: 1993թ. հունիսին Սուրեթ Հուսեյնովի ղեկավարման կողմից Էլչիբեյին իշխանագուրկ անելուց հետո, Աղբյրեզանի կառավարման ղեկն անցավ նախկին կոմունիստական ֆունկցիոներ, 70-ամյա Հեյդար Ալիևի ձեռքը: Հետագայից էլ նշել, որ դեռևս Էլչիբեյի օրոք, երբ Հեյդար Ալիևը հանդիսանում էր Նախիջևանի Գերագույն խորհրդի նախագահը, նրա և թնկերանի միջև ստեղծվել էին հաստատուն կապեր: Այդ օրերին Ղարաբաղում ընթացող պատերազմի հետևանքով Նախիջևանը հայտնվել էր բարդ իրադրության մեջ: Նախիջևան-Բաքու օդային գիծը, որի թռիչքներն իրագործվում էին Իրանի օդային տարածքով, ըստ էության միակ ճանապարհն էր, որը Նախիջևանը կապում էր բուն Աղբյրեզանի հետ: Սակայն Իրանի օգնությունը Նախիջևանին չէր սահմանափակվում դրանով: Այդ երկրամասի բնական կենսագործունեությունը ապահովելը անհնարին կլինեք առանց Իրանի աջակցության, որը Նախիջևանին մատակարարում էր ամեն ինչ, սկսած վառելիքից ու սննդամթերքից, վերջացրած առաջին անհրաժեշտության սպարանքներով: Այդ օրերին թնկերան կատարած այցերի ընթացքում Հեյդար Ալիևը լավ ընդունելության էր արժանանում Իրանի քաղաքական ղեկավարության կողմից, որը հավանական է, համոծինս նրա տեսնում էր Աղբյրեզանի ապագա նախագահին:

Հեյդար Ալիևի օրոք Աղբյրեզանի արտաքին քաղաքական կողմնորոշիչների մեջ տեղի ունեցան էական փոփոխություններ: Նախ Բաքուն անթաքույց քայլեր կատարեց Ռուսաստանի հետ տարածություն պահելու ուղղությամբ, միաժամանակ աշխատելով սահմանափակել իր մասնակցությունը ԱՊՀ գծով ինտեգրացիոն գործընթացներին: Այդ քաղաքականությունն ուղեկցվում էր ԱՄՆ-ի, արևմտաեվրոպական առաջատար պետությունների և Թուրքիայի հետ մերձենալու վճռական քայլերով: Բաքուն չէր խորշում քազմիցս հայտաբարելու, որ Վաչինգտոնը և

Անկարան, թրիվսիի հետ համատեղ, հանդիսանում են իր ռազմավարական դաշնակիցները:<sup>15</sup> Միաժամանակ Հ.Ալիևը որոշ չափով մեղմեց Ա.Էլիթիի ուլտրա-շովինիստական և պանթյուրքիստական քաղաքական շեշտադրումները, առավել ևս, որ թուրքական հանրապետության որոշիչ ուժ հանդիսացող զինվորականությունը ևս սկզբունքորեն դեմ է պանթյուրքիզմը տարփոխելու գործելակերպին: Ինչ վերաբերում է ԻԻ-Հ հետ հարաբերություններին, ապա Հ.Ալիևի քիմը գտնում էր, որ այդ երկիրը չի կարող ապահովել Ադրբեջանի երկարաժամկետ շահերը: Քաշվում անշուշտ գիտակցում էին նաև, որ հնարավոր չէ կողմնորոշվելով դեպի Թուրքիան և սերտ հարաբերություններ պահպանելով Իսրայելի հետ, միաժամանակ լավ հարաբերությունների մեջ լինել Իրանի հետ: Ուստի Հ.Ալիևը աշխատում էր իր երկրի «հեռացումը» ԻԻ-Հ-ից իրականացնել մի այնպիսի ձևով, որպեսզի չնաբուցի Թեհրանի շեշտված դժգոհությունը: Այդ քաղաքականության մղատակն էր առավելագույն օգուտներ քաղել Իրանի հետ քաղականին ծավալում առևտրատնտեսական հարաբերություններից:

Հ.Ալիևի որդեգրած արտաքին քաղաքական այդ մոդելը կուրսը միտված էր ոչ միայն լուծել երկրի առջև կանգնած կոնկրետ խնդիրներ, այլև ուղղված էր ապագային, հետապնդելով հեռահար նպատակներ: Այն միտված էր նաև Ադրբեջանը վերածելու Կովկասում և Անդրկասպյան տարածաշրջանում Արևմուտքի ազդեցությունը տարածողի դերին<sup>16</sup>, որը կարող էր ապագայում Ադրբեջանին բերել ոչ միայն առատ տնտեսական օգուտներ, այլև շռչափելի քաղաքական դիվիդենդներ:

Առաջին պահ Հ.Ալիևի արտաքին քաղաքական կողմնորոշիչները հատակորեն պարզ չէին շատերի համար, մասնավորապես որ նրա իրագործողը դրանք կյանքի էր կոչում մեծագույն զգուշությամբ: Ուստի այդ առթիվ Արևմուտքում հայտնվում էին ծայրահեղ հակասական կարծիքներ: Ըստ նրա գտնում էին, որ Հ.Ալիևը, որն իր անցյալ կոմունիստական շրջանի գործունեությամբ վաստակել էր Իրանի մասնատման ակտիվ ջատագրվի համբավ<sup>17</sup>, դժվար թե իր քաղաքականությունը կառուցի դեպի այդ երկրի հետ սերտ համագործակցությունը: Իսկ մի շարք վերլուծաբանների թվաց, թե քաղերկատարելով ռուսական կողմնորոշումից հեռանալու ուղղությամբ, Ադրբեջանի նախագահը անխուսափելիորեն տնտեսական, քաղաքական և ռազմական աջակցություն է փնտրելու իր սահմանակից ԻԻ-Հ-ում: Այդ ծաղվաթկը կառուցված էր այն մտայնության վրա, որ տարածաշրջանի կարևորագույն ուժային կենտրոններին մեկի՝ Իրանի հետ տնտեսական գործընկերության և մշակութային համագործակցության միջոցով Ադրբեջանը հնարավորություն է ստանում հավասարակշռել իր ակտիվ դիվանագիտական շփումները Արևմուտքի հետ: Ընդ որում հաստատ համոզմունք էր հայտնվում, որ իր հերթին Իրանը ևս չի

հասպաղի օգնության ձեռք մեկնել «աշխարհում երկրորդ շիֆական պետությանը», մանավանդ որ դա քիսում էր ԻԻՀ արտաքին քաղաքական դեկտրինի սկզբունքներին:

Այդ բոլորի տրամաբանական եզրակացությունը հանգում էր նրան, որ արտաքին քաղաքականության քննազավառում այսպես կոչված «հայաստանյան ուղղության» ընտրությունը իրենով նշանավորում է Ադրբեջանի վերադարձը իսլամական աշխարհ:՝<sup>18</sup> Բացվում մի շարք իսլամամետ գործիչներ նույնիսկ շտապեցին արտահայտվել այն ոգով, որ միջազգային հարաբերությունների համակարգում իր փնտրությունների մեջ Ադրբեջանը վերջապես գտնում է իր համասարտասխան տեղը: «Իսլամ, քաղաքականություն, մավթ», - անհ սրամբ են Ադրբեջանի և նրա սահմաններինց հարավ գտնվող տերությունների շահերի շփման գլխավոր կետերը, եզրակացնում էին այդ կերպ մտածող գործիչները:<sup>19</sup>

Վերտիչյալ տեսակետի ամրակայման լուրջ կովան հանդիսացան 1993թ. ԻԻՀ մախսգահ Աքբար Հաշեմի Ռաֆսամջանիի պաշտոնական այցը Բաքու և 1994թ. մախսգահ Հ.Ալիևի պատասխան այցը Թեհրան, որոնց հետևանքով ստորագրվեցին ավելի քան 90 փաստաթղթեր, այդ քվում մտն «Քարեկամության մասին համատեղ հայտարարություն»:<sup>20</sup>

Սակայն գլխապետույտ արագությամբ տեղի ունեցած մի շարք իրողություններ եկան սատը ցնցուղի դեք խաղալու այդ կերպ մտածող գործիչների համար, որոնք ցանկալին ընդունում էին իրականության տեղ: Նախ Հ.Ալիևի կողմինց մախսգահական պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո արագործնախարար Հասան Հասամովը մամուլում հանդես եկավ հողվածով, որտեղ անդրադառնալով Ադրբեջանի արտաքին քաղաքական կողմորդիչներին, Իրանի կապակցությամբ արտահայտվեց վերին աստիճանի զգուշորեն, նշելով, որ վերջին տարիներին այդ երկրի հետ հարաբերությունները եղել են ծայր աստիճանի անհարթ: Ճիշտ է, տպավորությունը մեղմելու համար մախարարը ավելացնում էր, որ ինքը հավատում է, որ կգա ժամանակ, երբ Ադրբեջանի տնտեսական շահերը նրան կտանեն Պարսից ծոց և այնժամ երկու հարևան պետությունները միմյանց կապող տրամապորտային երակները ձեռք կբերեն վճռական նշանակություն,<sup>21</sup> սակայն այդ վերապահումը չէր փոխում հարցի բուն էությունը:

Աստիճանաբար հտոակորեն շորվագծվեցին Հ.Ալիևի արտաքին քաղաքականության առաջնայությունները, որոնց մեջ կենտրոնական տեղը պատկանում էր հատակ կողմնորդմանը դեպի բուրջական պետականության աշխարհիկ լայնցիստական մուշաձեղ և մերձեցման ձգտումը ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի հետ: Հիրավի, Հ. Ալիևը գրեթե անփոփոխ պահպանեց Էլչիբեյի կամխագծած Բաքու-Անկարա փոխհարաբ-

բոլորումները, մասնակի խմբագրման եթարկելով իր մախոբոյն ճշացող համաբուրքակամությունը: Միաժամանակ գիտակցելով Ռուսաստանի հետ քայլ պահելու կարևորությունը Արցրեզանի ազգային շահերի տեսակետից, փորձառու Հ.Ալիևը ապահովեց Արցրեզանի անդամակցությունը ԱՊՀ-ին, դրանով իսկ միանգամից բուլացնելով Բաքու-Մոսկվա հարաբերություններում վերջնական գծով ընթացող լարվածությունը:

Անշուշտ Բաքվի վերոհիշյալ քաղաքականությունը անցող դժգոհությամբ պետք է ընդունվեր Թեհրանի կողմից: Այնտեղ նասկացան, որ Արցրեզանի աշխարհիկ-մոդեռնիստական ղեկավարությունը (նախկին կոմունիստները) աշխատում է նվազագույն չափով տուրք տալ կրոնական գործունին, այսինքն իրանական կոլմոնոպոլիտանը, նախապատվությունը տալով բուրքական աշխարհիկ մոդելին: Բացի այդ, Թեհրանում ձևավորվեց այն տեսակետը, որ Արցրեզանը ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի և Թուրքիայի համար ճանապարհ է քաջ անում դեպի Կովկաս և առիասարակ դեպի տարածաշրջան, որոնք հիմնավորվելով այնտեղ, անխուսափելիորեն աշխատելու են բուլացնել Իրանի ներկայությունը: Իսրայելի վարչապետ Բենիամին Նաբանյանուի 1997թ. Բաքու կատարած այցից հետո իրանական մամուլը գրեց, «Այժմ տարածաշրջանում տեղծվել է Արցրեզան-Թուրքիա-Իսրայել եռանկյունին: Սակայն մեզ չի թվում, որ այդ եռանկյունակցությունը չի վիճակի լինի նպաստել Դարաբադի հիմնահարցի լուծմանը»:

Իրանա-արցրեզանական միջպետական հարաբերությունների վրա ազդող ծանրակշիռ գործոն հաղխասցավ հատկապես Լեռնային Դարաբադի հիմնահարցը: Միանգամայն քնական է, որ Դարաբադում ընթացող պատերազմը անմիջականորեն չոչափում էր նաև Իրանի շահերը: Նախ պատերազմն ընթանում էր նրա ասեմանների մոտ, Արաքսի մյուս ափին, և Թեհրանում մտավախություն կար, որ լուրջ կոնֆլիկտը կարող է ծավալվել, իր մեջ ընդգրկելով տարբեր շահագրգիռ պետությունների, այդ թվում նաև Թուրքիային, և վերածվել տարածաշրջանային նախամարտության, գուցե և հրդեհի:

Թեհրանի համար հատկապես մղձավանջ էր Իրանական Արցրեզանում ազերիական ազգայնականության պտոթկման փտանգը, ինչպես նաև հայկական զոհերի գործողությունների անհաջողության դեպքում Անկարայի և Բաքվի միջև ուղղակի կապի տեղծման հավանականությունը, որն ուղիղ ճանապարհով կտաներ դեպի նամաբուրքակամների երազանքների իրագործում, այսինքն Իրանական Արցրեզանի անջատում Իրանի կազմից: Անշուշտ առաջին հերթին հենց դրանով է քաջատրվում այն նանգանանքը, որ պատերազմի տարիներին Թեհրանը անտարբեր չէր Հայաստանի ճակատագրի նկատմամբ, թեև թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում (Սաուդյան Արաբիա, Պակիստան, Աֆղանստան և այլն) առկա

Էին ուժեր, որոնք ճնշում էին գործադրում Թեհրանի վրա, սրահանգելով միակողմանի կերպով աջակցել Աղբյուրամին, փորձելով դա ելնմանը նկատմամբ, որ դարաբարության հակամարտությունը դա սրտեղծ է իսլամի և քրիստոնեության միջև:


Իսկապես, արևմտյան մի շարք փորձագետներ չէին քացառում, որ Իրանը իր համեմատելիությունը կհայտնի «չիթական երկրորդ պետությունը» և Աղբյուրամի կողմից կմիջամտի կոմիտիի կողմին:<sup>22</sup> Այդ տեսակետի հավանականության լուրջ կովան հանդիսացավ Թեհրանի հետևյալ քաղը. նա զորքեր ուղարկեց Աղբյուրամի սահմանների մոտ, դրանց անվտանգությունն ապահովելու համար:<sup>23</sup> Անդրադառնալով այդ նույն հարցին, իրանական դիվանագետ ղոկտոր Աբբաս Մալեքին գրում է, որ «Հայկական զորքերի հետագա առաջխաղացումն արգելակող գործոններից մեկը (Լեռնային Ղարաբաղի և Աղբյուրամի մյուս շրջանների՝ Չանգեղանի, Ֆիզուլի, Ջեբրայի գրավումից հետո) հանդիսացավ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից արված մախազգուշացումը»:<sup>24</sup>

1993թ. հուլիսին դարաբարության բանակի կողմից Աղղամի գրավումը խիստ քացասական արձագանք ունեցավ Թեհրանում: Իրանական մամուլը, հատկապես «Ջոմհուրիե Էլաֆի» Բեքթը, Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանեց որպես «հայկական ագրեսիա»: «Թյուրքական համեմատելիության» պոթենցիան դեմ որպես շանքարգել Թեհրանն աշխատում էր տարբեր ձևերով ի ցույց դնել իր աջակցությունը Աղբյուրամին և Հ.Ալիևի կառավարությանը: Հենց այդ նույն նպատակով Իրանի կոմնսպետ-առաջնորդ (գրախոս) ալաբուլա սեյդե Ալի Նամենեին ցուցադրական այց կատարեց Արևելյան Աղբյուրամ նահանգ, որի կենտրոն Թավրիզում հայտարարեց, որ ԻԻՀ-ը այսուհետև զգալուն կլինի աղբյուրամական տարածքների մկատմամբ ուսնձգության հարցում:<sup>25</sup> «Հայաստանի կառավարությունն ու Ղարաբաղի հայերը ճնշում են տարածաշրջանի մահմեդականներին: Ղատապարտելով Հայաստանի աջակցությանը արցախահայերի վերջին գործողությունները, իրանահայությունից ակնկալում ենք մմանօրինակ վերաբերմունք»,- հայտարարեց քախբաղը:<sup>26</sup> Որպես այդ ակնկալիքի անմիջական արձագանք, Թեհրանի հայոց բժնի առաջնորդ գերաշնորհ Արտակ արքեպիսկոպոս Մամուկյանը մամուլում հանդես եկավ «դատապարտող» հայտարարություններով: Դրա շնորհիվ Իրանի հասարակական կարծիքն իրեն բավարարված համարեց և միջադեպը կարելի էր համարել փակված: Իրան-Հայաստան փոխադարձությունները դիմացան այդ փորձությանը ևս և դարաբարության հարցը իր քացասական անդրադարձը չունեցավ երկու երկրների վերջնապես գարգացող միջպետական հարաբերությունների վրա:

Մինչդեռ Բաքուն այդ հարցում Թեհրանից պահանջում էր ավելին, ընդ որում ոչ թե հայտարարություններ, այլ գործնական քայլեր: Ղաթարադյան կոնֆլիկտի հենց սկզբից Բաքուն այն տեսակետին էր, որ Իրանը «զաղտնի ու ծածուկ ձևով նավանավորում է նայեթին»<sup>27</sup>: Բաքվում կատարում էին հետևյալ հարցադրումը. ինչու, ի՞նչ պատճառներով ԻԻՀ-ն անելուում է հնարավորություններ Հայաստանին փակուղուց և տնտեսական շրջափակումից դուրս բերելու համար, երբ հասարակ տրամաբանությունը հուշում է, որ «խալանական աշխարհի առաջին ուժ հանդիսացող» Իրանը պարտավոր է օգնության ձեռք մեկնել «Հայաստանի ազդեցիկ զոն» հանդիսացող «աշխարհի երկրորդ շիֆթական պետությանը»: Սակայն չմայած աղբրեզանական խթելիչներին Իրանից օգնություն ստանալու կամ Հայաստանը շրջափակելու համատ պահանջներին, Իրանը չի գնում այդ քայլին:

Աղբրեզանի ԶԼՄ-ները, մասնավորապես այնպիսի թերթեր, ինչպես «Աղբրեզանը», «Նալը գազերի»-ն, «Մուխալիֆաթ»-ը, «Էքսպրես»-ն, «Ազադդո»-ը, «525 gazet»-ը, «Ենի Մուսավաթ»-ն «Ենի Ազերբայջան»-ը, «Ռքի սահիլ»-ը և այլն, իրենց հրատարակումներում նույնիսկ մեղադրում էին Իրանին, որ նա փորձում է խախտել կայունությունն Աղբրեզանում և որ իրը Թեհրանն է աջակցել նայեթին Եռչին և Լայինը գրավելու գործում:<sup>28</sup> Արաբսի վրա Հայաստանի և Իրանի կողմից համատեղ կատարված կանոնադրի շահագործման համձնույթ, որը կատարվեց 1995թ. վերջին, ուղղակի հունից համեց Բաքվին, որը դա գնահատեց որպես Աղբրեզանի մեջքին Իրանի կողմից հասցված «դաշույնի ետքված»: Աղբրեզանի արտաքին քաղաքական հարցերի գծով պետխորհրդական Վահա Գուլուգադեն մեղադրում էր Թեհրանին նաև նրանում, որ նա դաշնակցային հարաբերությունների մեջ է մտնում Ռուսաստանի և Հայաստանի հետ ընդդեմ Աղբրեզանի: Նրա կարծիքով աստիճանաբար ձևավորվում է Մոսկվա-Երևան-Թեհրան ստանցքը, որը կոչված է ռուսայ-իրանական սեպ խրել թուրքական մակրոտրիեկտի մեջ:

1996թ. մարտին ԻԻՀ արագործնախարար Վելայարիի Բաքու կատարած պաշտոնական այցի ժամանակ Աղբրեզանի արագործնախարար Հասան Հասանովը խիստ քննադատության ենթարկեց Թեհրանին, նրան մեղադրելով Հայաստանը շրջափակումից փրկելու մեջ: Որպես պատասխան մեղադրանք Իրանի ԱԳ նախարարը լուրջ մտախոզություն հայտնեց Բաքու-Թեղ-Ավիլ սերտ հարաբերությունների անկյուրյաձք, նշելով, որ Իսրայելի հետ Աղբրեզանի սերտ կապերը անհանգստացնում են իրանական հասարակայնությանը: Հասան Հասանովը պատասխանել էր, որ այդ հասարակայնությանն ավելի շատ պետք է անհանգստացնել այն, որ Իրանը, անտեսելով Աղբրեզանի իր մուսուլման եղբայրների շահերը, շարունակում է ընդդայնել կապերը





Հայաստանի հետ և որ մա փաստորեն Հայաստանին հնարավորություն ընճեռնեց չիզոքացնելու մրա շրջափակումը Աղբրեջանի կողմից: Քաղաքական շանտաժի նկատառումներով Հ.Հասանովը մաև ազելացնում է, որ Հայաստանի նվաճողական ախորժակը չի սահմանափակվելու Ղարաբաղով: Հերթը անպայման գալու է մաև Նախիջևանին, ինչպես մաև հայերի կողմից «Պարսկահայք» հորթորթվող Իրանական Առքաթատականի տարածքներին, որոնք իբր հայերն աղղին մոցքել են «Մեծ Հայաստանի» քարտեզի մեջ: Դիվանագիտական այդ առճակատման հետևանքը հանդիսացավ այն, որ երբ մույն 1996թ. օգոստոսին Հ.Հասանովը հոօրյա այցով այցելեց Ցեխրան, այնտեղ տեղի ունեցած քանակցությունների ժամանակ իրանական ղեկավարության կողմից ոչ մի ղրվատական խոսք չազվեց մախազահ Հ.Ալիևի և մրա վարչակազմի վարած քաղաքականության մասին: Ավելին, ոչ մի իրանական գործիչ քեքրանից չարտաքերեց, որ Աղբրեջանի հետ հարաքերություններն Իրանի համար ունեն ոսազնավարական նշանակություն, մինչևև մախորղ տարիներին քանակցությունների ժամանակ դա հնչում էր քրպես սցոտոկոլային արտանայտություն: Իրանական կառավարությունը խոսափեց մաև Հ. Հասանովի հետ տարածաշրջանային, միջազգային և երկկողմանի քաղաքական հարցերի խորացված քննարկումից: Այցի հետևանքով կողմերի միջև չատքազրվեցին մաև մոր պայմանագրեր և մույնիսկ արտոգործնախարարների համատեղ հայտարարություն: Ավելին, այցի ընթացքում իրանական մամուլը գրեց, որ Աղբրեջանը միջազգային հարաքերություններում հիմնավորված, մշտական և վատահեղի սկզբունքներ չունի, որ մրա ղեկանագիտությունը «ղողացող» է, կառուցված խախտու հիմքերի վրա:

Հարկ է նշել, որ դարաքաղյան կոնֆլիկտի հենց սկզբից Իրանը իր գործուն մասնակցությունը քերեց այդ կոնֆլիկտի կարգավորման հարցում: Նույնիսկ արևմտյան տերություններն ընդունում էին, որ Իրանը որպես տարածաշրջանային կարևոր սկետություն և ուժային կենտրոն ղեքակատարություն ունի տարածաշրջանային խնդիրների, առավել ևս - կոնֆլիկտների լուծման գործում: Ճրամախայի կողմից Միևսկի լսքի մախազահը, գեռուկցելով այդ հանգամանքը, ժամանեց Իրան այդ երկրի ղեկավարության հետ Ղարաքաղի հարցում մոցքեր փոխամակելու համար: Բանակցությունների ժամանակ մա հայտարարեց, որ «Իրանի ղեքը կովկասյան տարածաշրջանում կայունության ու անվտանգության պահպանման գործում միանգամայն սկննայտ է»:<sup>29</sup> Պետք է խոստովանել մաև, որ իրանական ղեկանագետների իրակամացրած միջևորդական առաքելության շնորհիվ մի քանի անգամ հաջողվեց գեք ինչ որ ժամանակամիջոցի ընթացքում դարաքեցնել ռազմական գործողություններ հայկական և աղբրեջանական ուժերի միջև:



Մակայն շնայած Իրանի կողմից բարի կամքի դրսևորման այդ քայլերին, Բաքուն, որպես կանոն, մերժել է Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման գործով Իրանի միջնորդական առաջարկները: 1998թ. օգոստոսի կեսերին ԻՊՀ արտգործնախարար Քամալ Խարրազիի Բաքու կատարած պաշտոնական այցի ժամանակ իրանական դիվանագետը հայտարարեց, որ Թեհրանը պատրաստ է առավել ակտիվորեն մպատել հայատորրեջանական կոնֆլիկտի կարգավորմանը:<sup>30</sup> Մակայն առաջարկը մնաց անպատասխան: Ուշագրավ է նշել նաև ինտելյալ միջադեպը՝ 1999թ. մարտի 14-ին Ադրբեջանի ԱԳ նախարար Թեֆիկ Չուլխուդարովի եռօրյա պաշտոնական այցի ժամանակ Թեհրան, երբ նախարարը հանդիպում ունեցավ ԻՊՀ նախագահ Մոհամմադ Խաթամիի հետ, վերջինս պատրաստակամությամբ հայտնեց միջնորդել դադարադադարի հիմնահարցի լուծման առնչությամբ: Ադրբեջանի նախարարը հնարավոր և քննարկելի համարեց այդ առաջարկը և նույն օրը Իրանի արտգործնախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հաստատեց իր այդ ասածը: Մակայն նախարարի Բաքու վերադառնալուց հետո ոչ միայն գործնական ընթացք չտրվեց նրա պաշտոնական հայտարարությամբ, այլև Չուլխուդարովը հեռացվեց իր պաշտոնից:

Ղարաբաղի հարցի առնչությամբ Թեհրանի վարած քաղաքականության մեջ ակնհայտ կերպով նկատելի է տարրերի ժամանակներում մտածելովների մեջ որոշակի փոփոխություն. այդ հարցի կապակցությամբ իրանական կողմի քննախնդիր ձևակերպումը հասցում էր նրան, որ Իրանը պատեհարգող երկու կողմերի նկատմամբ վարում է «խստիվ հավասարակշռելու» քաղաքականություն, առավելություն չտալով նրանցից որևէ մեկին: Մակայն ակորնական էտապում ըստ էության Իրանը միակողմանիորեն բռնում էր Ադրբեջանի կողմը, հայկական կողմից պահանջելով առանց որևէ նախապայմանի դուրս գալ գրավված տարածքներից: Մակայն մեր կարծիքով, 1993թ. ամռանը Թեհրանի քաղաքականության մեջ նկատվեց որոշակի շրջադարձ: Թեև իրանական դիվանագիտությունը շարունակում էր գործածության մեջ քողմել միջազգային սահմանների անխաթար պահպանման վերաբերյալ իր քանակը, սակայն այլևս Ղարաբաղի և Հայաստանի հասցեին չէին օգտագործվում կոշտ արտահայտություններ: Ավելին, շրջանառության մեջ դրվեցին ինտելյալ ձևակերպումները. «Իրանը հանդես է գալիս խնդրի արագ, արդար և խաղաղություն նրաշխավորող կարգավորման կողմնակից», կամ «այդ զգայուն խնդիրը պետք է լուծում առանց տարածաշրջանի անվտանգության, երկու երկրների շահերի շրջանակում՝ խաղաղ ձևով»:

Անշուշտ մտածելովների այս փոփոխության մեջ իր դերակատարությունն ուներ Իրան-Ադրբեջան հարաբերությունների հարաճումն արդացումը, եթե չառնեք սրումը: Ուշագրավ է նաև նշել, որ անհրաժեշտությամբ

յան դեպքում Յեհրանը չէր խորշում դաբարադան հարցը օգտագործել իր հակաաղբյուրեցանական քարոզչության մեջ, իսկ առանձին դեպքերում նույնիսկ Աղբյուրեցանի վրա ճնշում գործադրելու համար: Ավելորդ չէ այդ առթիվ բերել հետևյալ փաստը. 1997թ. դեկտեմբերի 4-11ին Յեհրանում տեղի ունեցած Իսլամական Կոնֆերանս կազմակերպության /ՕԻԿ/ 8-րդ գագաթաժողովի ժամանակ իսլամական մի շարք պետությունների բան-քերով դաբարադան հիմնահարցը ոչ միայն մտցվեց գագաթաժողովի օրակարգ, այլև այդ հարցի կապակցությամբ ընդունվեց հատուկ քաղաքական բանաձև, որը դատապարտում էր «Հայաստանի ազդեցիկ»՝ Ղարաբաղի դեմ և որոշում էր Աղբյուրեցանին ցուցաբերել տնտեսական համակողմանի օգնություն: Սակայն այդ ոչ հայանաբաստ որոշումն արժանացավ Իրանի կայուն հակադեմոստրացիայի: Գագաթաժողովում ԻԿՀ ներկայացուցիչը ունեցավ հատուկ ելույթ, որտեղ վերոհիշյալ բանաձևը ի չլք դարձնելու նպատակով շեշտը դրեց Բաքվի ու Իսրայելի միջև սերտ հարաբերությունների խմորի վրա:՝ Այդ ելույթը դրական արձագանք գտավ արաբական երկրների և մի շարք այլ իսլամական պետությունների ղեկավարների մոտ, որի հետևանքով վերոհիշյալ քաղաքական բանաձևը էապես խմբագրվեց, մեծ հիասթափություն առաջ բերելով աղբյուրեցանական պատվիրակության և մրա ղեկավար Հ. Ալիևի մոտ:

Իրանը սովորաբար դրվատանքով է արտահայտվում Ղարաբաղի հարցի շուրջը ձեռք բերված զինադադարի պահպանման հարցում Հայաստանի որոշված դիրքորոշման նկատմամբ, դրա մեջ տեսնելով «հատուկ քաղաքական կանց»: Յեհրանում գոյություն ունի կայուն համոզմունք այն մասին, որ Ղարաբաղում զինադադարի խախտումը և հայաաղբյուրեցանական զինված առնակատման շարունակումը ոչ միայն քայլ կտա օտարերկրացիներին միջամտելու տարածաշրջանի գործերին, այլև կնպաստի այն բանին, որ Աղբյուրեցանը էլ ավելի սերտ կապերով կապվի ԱՄՆ-ի և Թուրքիայի հետ: Այդ իսկ տեսակետից Յեհրանը խիստ բնադատական վերաբերմունք է դրսևորում միջազգային-քաղաքական բնույթի իրադարձությունների Բաքվի կողմից շահարկելու և սարդիի գործադրություններ իրականացնելու վարքագծի դեմ: Իրանական «Անու-Ղարբա» ամսագրի խմբագիր Նասեր Սադաֆի Ամերին գտնում է, օրինակ, որ Միացյալ Մեծամզների ձգտումը համաշխարհային կարգը իր օգտին փոխելու ուղղությամբ, որը վառ կեդրավ դրսևորվեց Կոստվոյի խնդրի ժամանակ, Աղբյուրեցանը փորձում էր օգտագործել որպես լծակ Հայաստանի հետ իր կոնֆլիկտների ընթացքում: Նրա կարծիքով դա վերին աստիճանի վտանգավոր խաղ է, որը կարող է ծառայել որպես սկիզբ Կովկասի, Մերձավոր ու Միջին արևելքի տարածաշրջանում խաչոր կոնֆլիկտների համար:<sup>12</sup>

Իրանի և Ադրբեջանի միջև առկա կոնֆլիկտային պոտենցիալը ունենում է պոթենցիալ մեծ ամենատարբերորեն հարցերի կապակցությամբ: Դրա պատճառը կայանում է նրանում, որ այդ երկու պետությունների հարաբերությունների ողջ պատմությունը ունեցել է ճգնաժամային բնույթ: Ամենատարբեր առիթներով նրանք մշտապես մեղադրում են մեկը մյուսին: Այսպես, ԹՈՒՐԿԱՆ տեղեկատվական գործակալության վերլուծական ծառայության ղեկավար Հ. Կուլիևը գտնում է, որ «Իրանը աշխարհաքաղաքական առումով շահագրգռված է նրանում, որ իրադրությունը Ադրբեջանում մշտապես վատանա»:<sup>33</sup> Իսկ Թեհրանը մեծագույն անհանգստությամբ ընդունեց այն լուրերը, որ Բաքում պատրաստվում է միանալու Թուրքիա-Իսրայել ռազմական համագործակցությանը: Իրանի արտաքին գործոց նախարարության կարծիքով Ադրբեջանը ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի և Թուրքիայի համար ճանապարհի է բաց անում դեպի տարածաշրջան, որը ապառնալից է Իրանի ազգային անվտանգության համար:

Իրանի և Ադրբեջանի միջև միջպետական հակասության գլխավոր պատճառներն են մեկը, որն ընդ որում ունի մշտական բնույթ, դա Իրանական Ադրբեջանի «բռնազավթված տարածքների» խնդիրն է: Ժամանակակից Ադրբեջանում պաշտոնապես տիրապետող է այն տեսակետը, որ պատմականորեն գոյություն ունի միայն միազյալ Ադրբեջան, որը մասնատվելու քաժամակ է մասերի: Ընդ որում, հենց ինքը, Հ. Ալիևը ևս տուրք տվեց ազերի ազգայնականների այդ մտայնությանը, այն տարբերությամբ, որ «Իրանական Ադրբեջան» տերմինը նա փոխարինեց «Հարավային Ադրբեջանով»:<sup>34</sup>

Դեռևս Նախիջևանի Ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի նախագահի պաշտոնը զբաղեցնելիս, նրա նախաձեռնությամբ 1991 թ. դեկտեմբերի 16-ին որոշում ընդունվեց յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի օրը հայտարարելու տան՝ «Ամբողջ աշխարհի ազերիների համերաշխության օր»: Հետագայում Ադրբեջանի նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո նրա աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի կազմից կազմակերպված «Աշխարհի ազերիները պատմա-քաղաքական գործընթացներ, արդի ժամանակաշրջան» անվան տակ զամբարված խորհրդածաղովում ելույթ ունեցած հոնտոլոնիերը խոր ցավ էին հայտնում, որ ազերիները անկախ պետություն են կերտել միայն Ադրբեջանի «սրտանակն տարածքի» մի փոքր մասում:<sup>35</sup>

Ադրբեջանի հանրապետությունում զգալի բվով քաղաքական ուժեր համակերպված են վերաբերվում «Հյուսիսային և Հարավային Ադրբեջանների միավորման» ուտոպիական գաղափարի նկատմամբ: Թեև պաշտոնական մակարդակով աշխատում են դա չընդունելու, սակայն առիթը բաց չեն բռնում հայտարարելու, որ այդ հարցը առկա է իրենց

քաղաքական ծրագրերում և քարենպաստ իրադրության պայմաններում մրան կհատրդվի հրատապություն: Մի շարք կուսակցություններ, օրինակ, («Ամա վարան», «Մուսավաթ» և այլն) պարզեքարար փորձում են աշխարհի հասարակայնությանը հասցնել Իրանում աղյրքեզանցիների «ազգային իրավունքների ունեանարման» մասին տեղեկություններ: Այլ կերպ ասած, Բաքում սրողված ձևով խրախուսում է պանազերիական ազգայնականությունը: ՀԱԻԻԻ քաղաքական խորհրդական Վախա Գուլուզաղեն Ջորջ Վաշինգտոնի անվան ինստիտուտում կայացած միջինարևելյան քաղաքականությանը նվիրված գիտաժողովում ցնդգծել է. «25 միլիան ազերի թնակիչ ունեցող Իրանը սարտափում է սանեանակց եզոր և անկախ Աղյրքեզանից, քանի որ Իրանի ազերիների շրջանում օր օրի ուժգնամում են ազգայնական տրամադրությունները: Թեև Բաքում չի կաշող պաշտոնապես պահանջել երկու Աղյրքեզանների միացումը, այնուամենայնիվ մրանք վաղ թե ուշ կմիանան»:<sup>35</sup>

Վախա Գուլուզաղեն ՀԱԻԻԻ վարչակարգի անդամներից միակը չէր, որ իրեն բույլ էր տալիս մման ունեցիտական արտահարություններ: Իշխանությունների բողոսությունը Բաքվում ակտիվորեն գործում էր այսպես կոչված «Հաթափային Աղյրքեզանի ազգային-ազատագրական շարժման» կենտրոնակայանը, իսկ իրր «Վտարանդե» Աղյրքեզանի էմիսարները հրահրիչ գործունեություն էին ծավաղել Հյուսիսային Իրանում, ձգտելով ապակայունացնել բուրքաղեզու հոծ թնակչություն ունեցող այլ երկրամասը: 1999թ. օգոստոսին ՀԱԻԻԻ ստորազընց հրամանազեր իրանական ազերիների վերոնիշյալ անջատվողական կազմակերպության ղեկավարներից մեկին՝ Փիրուզ Դիշյանչիին, որը ձերբակալման վտանգից խուսափելով փախել էր Իրանական Աղյրքեզանից և Բաքվից խնդրել քաղաքական ապաստան, Աղյրքեզանի քաղաքազիություն տրամադրելու վերաբերյալ: Իսկ մույն թվականի սնայտեմբերին Աղյրքեզանի պետական հեռուստատեսությունը երեք տրամադրեց Իրանական Աղյրքեզանից փախած այլախոհ պրոֆեսոր Մ.Չեհրադանին:<sup>37</sup> Մի շարք ամելի զգուշ ազերի քաղաքական ղեմքեր (օրինակ, «Մրացյալ Աղյրքեզան» կազմակերպության ղեկավարներից Փանահ Հուսեյինովը և ուրիշներ) փորձում են «Մրացյալ Աղյրքեզանը» ներկայացնել ոչ որպես քաղաքական նպատակ կամ «ազգային իրձ», այլ պարզապես զուտ գաղափարական սկզբունք: Ընդորում մրանք պնդում են, որ այն ուղղված չէ Իրանի դեմ, որ առավել ևս չի կարելի այլ գաղափարն ցնկաղել որպես Իրանի ներքին գործերին միջամտություն, քանի որ այն ենքաղում է մախ և առաջ բողոր աղյրքեզանցիների ազգային, հոզուր և քարոչական միասնության քարոզություն:<sup>38</sup> Սակայն «Մրացյալ Աղյրքեզանի» ծայրահեղական բեղ իր մամուլի միջոցով Իրանական Աղյրքեզանի թնակչությանը հրահրում է դուրս գալ ազգային-ազատագրական պայքարի: Այդ թևին

պատկանող ազգայնականները ժամանակ առ ժամանակ Քաքվում ԻԻՀ ղեկավարության շնքի մոտ կազմակերպում են բողոքի ցույցեր, համրահավաքներ և այլն:

Ղեկնա 1990թ. ազնրի պանքյուրքիսառնրի կողմից Ցավրիզում առերծված «Հարավային Աղրրեզանի ազգային-ազատագրական շարժում» կազմակերպությունը իր ներկայացուցչություններն է բացել մակ Եվրոպայում, Կամադայում և այլ վայրերում:<sup>49</sup> Վերջին տարիներս հիշյալ կազմակերպությունը ալելի ու ալելի բարձրածայն հիշեցնում է իր գոյության մասին: Այսպես, Քաքվի ՋԼՄ-ների հաղորդման համաժայն, Ցավրիզում տերի էր ունեցել մի համրահավաք, որի մասնակիցները բողոքում էին Յրանսիայի խորնրդարանի կողմից 1915թ. արևմտահայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու որոշման դեմ: Համրահավաքում կոչեր էին հնչում իսգելու բոլոր տեսակի հարաբերությունները հայերի և «բոլոր մրանց հետ, ովքեր հովանավորում են մրանց»: 1999թ. փետրվարի 26-ին մույն կազմակերպության կողմից Ցավրիզում գումարված համրահավաքը ընթանում էր հետևյալ կարգախոսների ներքո. «Ցավրիզը մերը կլինի», «Կորչի Ֆարսերի շովինիզմը»: Հատկանշական է, որ մման բոլոր համրահավաքների ժամանակ պարտադիր կարգով հնչում են հակահայկական կոչեր:<sup>40</sup>

Ուշագրավ է, որ Քաքվի քաղաքական շրջաններում մման իրարարձություններն արժանանում են հիացական գնահատականների: Ընդորում դրանք մեկնաբանվում են այն իմաստով, որ իրամական ազնրիները «փրեհց աշխարհաքաղաքական դիտրորոշումները համասպատասխանեցնում են ոչ թե Ցեհրանի, այլ Քաքվի և Անկարայի շահերին»:<sup>41</sup>

Աղրրեզանի կողմից քաղաքական շահարկումների առարկա է հանդիսանում մակ Իրանում ազնրիների թվի հարցը: Մի շարք աղրրեզանցի գիտնականներ պնդում են, որ աշխարհում ազնրիների թիվը հասնում է 40 միլիոնի: Աղրրեզանի մաիսկին արտգործմաիսարար Նազար Նազարովը անգլիալեզու «Transitions» ամսագրի հետ տնեցած իր հարցազրույցում պնդում էր, որ այդ 40 միլիոն ազնրիներից Իրանում բնակվում են 20-ից մինչև 30 միլիոն մարդ:<sup>42</sup>

Բազմաթիվ փատոեր վկայում են այն մասին, որ Քաքվի իշխանությունները փորձում են միջազգայնացնել «Միացյալ Աղրրեզանի» հարցը: Հենց այդ նպատակով 1997թ. Լու-Անգելետում գումարվեց «Համայն աշխարհի աղրրեզանցիների առաջին համաշխարհային վնհաժողովը»: Այնուհետև այն դարձավ շարունակական: Երկրորդ վնհաժողովը գումարվեց 1998թ. մայիսի 30-31-ին Վաշինգտոնում, իսկ մեկ տարի անց՝ 1999թ. Քյոլնում տերի տնեցավ թվով երրորդ վնհաժողովը: Այդ հավաքների ժամանակ, հատկապես Աղրրեզանի համրապետության պատվիրակների կողմից կատարվում էին հարցադրումներ այն ոգով, որ Իրանը

պարտավոր է որպես առաջին քայլ «Հարավային Արրեքզանին» տրամադրել ինքնավարություն, որի պարտադիր պայմաններից է լինելու ուսուցումը մայրենի լեզվով, քեյրեքի և գրքերի հրատարակությունը ազերի լեզվով, մշակութային կենտրոնների բացումը և այլն:<sup>45</sup> Զրկումը բացահայտ հակահրամանական դիրքորոշմամբ հաղթեց նկատի ՌԻՀ-ում Արրեքզանի նախկին դեպքում Ալիյար Մաֆարլին: Նա հայտարարեց, որ անհրաժեշտ է Արրեքզանում ստեղծել աշխարհի բոլոր արրեքզանցիների համահարման հոգևոր կենտրոն, ինչպես նաև հատուկ ֆոնդ «Միացյալ Արրեքզանի» ստեղծման գաղափարը կյանքի կոչելու համար: Այդ նույն համատեղումը հանդես եկավ «Ազերիների համաշխարհային կոնգրեսի» ղեկավարներից մեկը՝ Թեյմուր Էմինբեյլին բացահայտեց նաև գործողությունների այն մեխանիզմը, որը նրա կարծիքով ի վիճակի էր կողողություն դարձնել «միացյալ Արրեքզանի» ծրագիրը: Առաջին էտապում նա անհրաժեշտ էր համարում «ազգային կատակարության վերականգնումը Հարավային Արրեքզանում», այսինքն պետականության ստեղծումը, իսկ երկրորդ էտապում պետք է գործողության մեջ մտնեք Հարավի և Հյուսիսի միավորումը:<sup>46</sup>

1999թ. օգոստոսին «Արրեքզանցիների համաշխարհային կոնգրեսի» կազմակերպչի նախագահ Թուրալ Գարափափախյը և պրոֆեսոր Ալիբա Լազմիի «Պիագոր ցեղայացուցիչ» Ջաֆար Իսմայիլին ստեղծեցին մի նախաձեռնող խումբ Արրեքզանի խորհրդարանում Հարավային Արրեքզանի օրենսդրական մարմին՝ «Հարավային Արրեքզանի խորհրդարան» ձևավորելու հետախար նպատակով:<sup>47</sup>

Ավելորդ չէ նշել, որ «Միացյալ Արրեքզանի» ջատագով ազերի ազգայնականները արևմուտքում «Մեծ Արրեքզանի» ասիմանները հասցնում են մինչև Սևանա («Գեյլա») լիճը, իսկ հյուսիսում՝ մինչև Դեբեճում:

1998թ. հունվարի 30-31-ին «Արրեքզանի ժողովրդական ճակատ» կուսակցության II (V) համագումարում Թուրքիայից հրավիրված ներկայացուցիչները հայտարարեցին, որ Աբուլֆազ Էլչիբեյը «թյուրքական աշխարհի առաջնորդն է և նոր առասպելական Արիարսլան Թյուրքեչը»:<sup>48</sup> Այդ համոլայխտություններից ռզևորված Էլչիբեյը առաջարկեց նոր ստեղծվելիք պետության՝ «Միացյալ Արրեքզանի» մայրաքաղաքը հռչակել Թավրիզը: «Եթե մենք չկարողանանք լուծել Թավրիզի պրոբլեմը (ինս՝ «Միացյալ Արրեքզանի» ստեղծումը Վ.Բ.), մեզ չի հաջողվի վերադարձնել Լեռնային Դարաքաղը: Ես գտնում եմ, որ այդ երկու խնդիրները սերտորեն փոխկապակցված են», - հայտարարեց Ա.Էլչիբեյը:<sup>49</sup>

Առեսաարակ քե՛ իր նախագահության շրջանում և քե՛ հետագայում, երբ Էլչիբեյը ծվարեց Նախիջևանի գյուղերից մեկում, նա իր ռազմաշունչ-ոսանջիտական ելույթների ժամանակ բազմիցս պատմում էր քախջախել Իրանը:<sup>48</sup> Իր հանդուգն ազդեցիկությամբ նրանից հետ չէր

մում մաւ վերլուծ հիշատակված Ալիյար Սաֆարին, որը թնկրանում որպես ղեկավար արտահայտություններ Իրանի և նրա քաղաքական գործիչների հասցեին:<sup>49</sup> Իսպառ կորցնելով յափի զգացումը և չկարողանալով սանձահանել իր հիվանդագին երևակայությունը, Սաֆարին պնդում էր, որ իր տեղեկությունների համաձայն, գոյություն ունի Իրանի տարածքից զինված ջոկատների մերխուժման սկսած Դարաբադ: Որ իբր այդ ջոկատները բաղկացած են ծառուկ ճամբարներում մարզված Բաքվի նկատմամբ աղբբջանական անհաշտ ընդդիմության ուժերից: Հայաստանը իբր պատրաստ է Դարաբադի գրավյալ շրջանների մի մասը հանձնել այդ ջոկատներին, որպեսզի սանձազերծի զինված կոնֆլիկտ վերջնաներիս և Բաքվի իշխանությունների միջև, այսինքն հրահրի քաղաքացիական պատերազմ, որը Իրանին հնարավորություն կտա միջամտելու Աղբբջանի ներքին գործերին:<sup>50</sup>

Ալիյար Սաֆարիի այդ սաղորիչ գործունեությունը լցրեց թնկրանի համբերության քաժակը և մա ստիպված եղավ Բաքվից պահանջել, որ հետ կանչի իր ղեկավարին: Այդ անհաջողակ ղիժամագետը վերադարձից հետո առանձնելով Բաքվի պետական իստիտուտների պաշտոնը, լծվեց էլ ավելի բուռն հակահրամական քաղաքական, պնդելով, որ Իրանը չի ցանկանում, որ Աղբբջանը դառնա ուժեղ պետություն, որ իրանցիները Աղբբջանում վարում են քայքայիչ աշխատանք, ձգտելով այնտեղ իրենց համար ստեղծել «եինզերտը գորսայուն» և այլն:

Ընդհանրացնելով վերլուծ շարադրվածը, հարկ ենք համարում շեշտել, որ այսպես կոչված «Հյուսիսային և Հարավային Աղբբջանների միավորման» հարցադրումը ոչ մի ոեալ հիեք չունի: Ատրպատականի ազերի քնակչությունը իր հոգեկան կեդրվածքով, հայրենիքի մասին իր մտեցումներով և այլն էապես տարբերվում է Աղբբջանի Հանրապետության ազերի քնակչությունից: Նա իրեն համարում է համահրամական քաղաքական ընդհանրության անբաժանելի մասը և իր մեծ մատով հակված է այն տեսակետին, որ հենց «մայր հայրենիքից» Իրանից, կտրված Աղբբջանի ազերի «եղբայրերն ու քույրերը» իրենք պետք է միաման Իրանին և դառնան իրանական պետականության անբաժանելի մասը: 1997թ. հունիսի 28-30-ը Լոս-Անջելեսում տեղի ունեցած «Համայն աշխարհի ազերիների համագումարը», հակառակ պահանջարկների ու Բաքվի վարչախմբի սպասելիքների արձամագրեց, որ Արաքսից այն կողմ գտնվող Աղբբջանը (յմա՝ Աղբբջանի Հանրապետությունը-Վ.Բ.) ինքը պետք է միավորվի Իրանի հետ: Ի դեպ, Աղբբջանի Հանրապետությունում առկա են մաւ քաղաքական գործիչներ, որոնք գտնում են, որ քաղաքական առումով երկու Աղբբջանների միավորումը մեկ ընդհանուր պետության մեջ նպատակահարմար չէ: Ուստի նրանք առաջ են



քաշում այդ հարցի լուծման հետևյալ քանակը. «Ֆեկ ժողովուրդ՝ երկու պետություն»:

Ինչպես տեսնում ենք, քեւ նվազում ձևով, սակայն աղբբջանական իրականության մեջ հնչում են նաև այդ ճայներ: Այդ ասումով ուշագրավ է նաև հետևյալ փաստը. «Մեմիթթո» ամսագրի 1998թ. 1/12 համարում տարագրվել էր Էլմար Հուսեյինովի (որը միաժամանակ ամսագրի գլխավոր խմբագիրն էր) «Աղբբջանցիներ» 21-րդ դարի ազգ» խոսում վերաառությանը հողվածը: Նրանում հեղինակը առաջ էր քաշում այն տեսակետը, որ աղբբջանցիները որպես ազգ անբողբջանք վերցրած դեռևս չեն ձևավորվել, ինչպես նաև տակավին գտրել են ազգային գաղափարից: Հողվածագիրը այնուհետև նշում էր, որ աղբբջանցիները ունակ չեն ինքնաբնթարատության, առաջի և ընդունակ չեն կյանքի կոչելու ուղամարական և մարտավարական խնդրներ, որ նոր դարաշրջանի չեմին ազգի մոտ բացակայում է սեփական մտավորական էլիտան, միաժամանակ Աղբբջանում տեղի է առնեցել առաավճու մտավորականության դուրս մղում մի կողմից՝ և Հայաստանից ելամ աղբբջանցիները լրումայնեղացում մյուս կողմից: Այդ բոլորի համբազումաշում է Հուսեյինովը կասկածի տակ էր դնում աղբբջանցիների ընդունակությունը պահպանելու անկախ պետականությունը: Հողվածագիրը գարգացնում էր նաև այն միտքը, որ հենց Իրանում է, որ պահպանվել է աղբբջանցիների էթնոգենեթառը, այնուեղ է գտնվում իսկական աղբբջանական էլիտան, որը հանդես է գալիս իրանական պետականության: Որ գոյություն ունի Կական տարբերություններ հյուսիսային և հարավային աղբբջանցիների միջև, ընդորում հյուսիսային աղբբջանցիներին նա բնորոշում է որպես «քրվորական-վակատուն» ժողովուրդ:

Հիշյալ հողվածը վայնասուն առաջ քերից Բաքվում: Է Հուսեյինովը դատի տրվեց «աղբբջանական ժողովրդի պատվին ու արժանապատվությանը վիրավորանք հառցնելու» մեղադրանքով: Դատարանը որոշեց պատժել հողվածագրին, նրանից գամծելով 16 միլլոն մանարի չափով խոշոր տուգանք:<sup>21</sup>

Բնական է, որ Թեհրանի օհակցիան Բաքվի կողմից առաջ քաշվող «Միացյալ Աղբբջանի» տարրանքի նկատմամբ խիստ բացատական ու ջրային է: «Թյուրքական հարցը» (Իրանում պաշտոնապես ազերիներին անվանում են թյուրքեր)<sup>22</sup> իրանական կառավարության համար ազգային հարցի համատեքատում ամենատր պրոբլեմներից մեկն է հանդիսանում: Առավել ևս, որ որոշ վոքթագետներ այն տեսակետն են հայտնում, որ եթև երբևիցե ԱՄՆ-ը որոշեն մասնատել ու տրոհել Իրանը, դրան հասնելու լավագույն ձևերից մեկը կարող է հանդիսանալ Իրանական Աղբբջանի անկախության հռչակումը և նրա անջատումը Թեհրանից:<sup>23</sup> Իրանը չի կարող նաև չամհանգստանալ, որ Աղբբջանում գոյութ-



յուն ունեցող աշխարհիկ վարչակարգը կարող է վարակել լինել սահմանի մյուս կողմի էթնիկական ազերիների համար: Այլ կերպ ասած, Թեհրանը չի կարող մտավախություն չունենալ, որ անկախ Ադրբեջանը կարող է հանդիսանալ իրանական ազերիներին իրեն ձգող մի մագնիս: Ուստի Իրանը մշտապես ստիպված է լուրջ քայլեր ձեռնարկել խոչընդոտելու համար հյուսիսից «թափանցումներն» Իրանական Ադրբեջան: Այդ մտավախությունը հավասարապես վերաբերվում է նաև Թուրքիայի քարոզչական գործունեությանը այդ երկրամասում: Առհասարակ Իրանի համար մղծավանց է Բաքվի և Անկարայի կողմից քոչարկված ձևով մղվող քարոզչությունը «Մեծ Ադրբեջան» առեղծելու վերաբերյալ: Թեհրանում հավատացած են, որ Ադրբեջանի հակաիրանական քաղաքականությունը իրագործվում է Թուրքիայի դղմամբ: Ուստի Թեհրանը աչալուրջ կերպով հետևում է, որպեսզի դրանից երկրի անվտանգությանը և կայունությանը սպառնացող գաղափարներ չներթափանցեն Իրանական Ադրբեջան: Ի պատիվ իրանական կառավարությանը պետք է ասել, որ նա կարողանում է իրականացնել Ադրբեջանում կենտրոնախույս միտումների քանական զսպման քաղաքականություն:<sup>34</sup> Եվ դա կատարվում է ոչ թե բոնի ուժով, այլ շրջահայաց ու խոհեմ քաղաքականության միջոցով: Ազերիների ներկայացուցիչներն, օրինակ, մուտք ունեն իշխանության բարձրագույն էշելոնները: Բազմաթիվ հանգուցային պաշտոններ զբաղեցնում են նրանք:<sup>35</sup> Ավելորդ չէ նշել, որ Իրանի ներկայիս կոնսուլներ-առաջնորդ այսօրվա սեյյեդ Ալի Խամենեյին ևս, որի ձեռքբերում կենտրոնացված է վիթխարի ռազմական, վարչական և քաղաքական իշխանություն, նույնպես ազերի է: Բաքվի կողմից առաջ քաշվող «երկու Ադրբեջանների» միավորման կոչի նկատմամբ որպես հակաքայլ, Իրանը ոչ պաշտոնական ձևով, մամուլի էջերում և այլն քարոզչություն է մղում «Թուրքմենիայի պատմական ամառադարությունը վերանայելու», Անդրկովկասի «իբրանական հողերը», մասնավորապես Ադրբեջանի տարածքները «եզոք ու քարզավաճ իսլամական Իրանին» վերադարձնելու, Ադրբեջանը իր «պապկեմական հայրենիքի» Իրանի հետ միավորվելու» վերաբերյալ և այլն:

Երկու Ադրբեջանների միջև սերտ էրնոմշակութային ու քաղաքական կապերի խափանման շահերից ելնելով, հակառակ Բաքվի համատ պնդումներին, Թեհրանը այդպես էլ իր համաձայնությունը չովեց, որպեսզի Թավրիզում քազվի Ադրբեջանի գլխավոր հյուպատոսություն: Ի դեպ, հավասարակշռությունը պահելու շահերից ելնելով մերժվեց նաև Հայաստանի Հանրապետության առաջարկը այդ նույն քաղաքում բաց անելու գլխավոր հյուպատոսություն:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարվածությունը միտումնավոր ու զխտակցված ձևով խրախուսվում է Բաքվի կողմից: Ադրբեջա-

նի Ազգային անվտանգության նախարարությունը ժամանակ առ ժամանակ տեղեկություններ է հրատարակում Արցրեզյանի դեմ իրանական քաղաքացիների կողմից լրանսական գործունեություն ծավալելու մասին,<sup>56</sup> մասնաշաղկապ հարձակումներ են հրատարակվում, որ Արցրեզյանում իրանական հատուկ ծառայությունները տեղեկ են գործակալական լայն ցանց,<sup>57</sup> հատկապես հավաքագրելով ընդդիմադիր գործիչներին: 1999թ. հոկտեմբերին, օրինակ, վկայակոչելով Գերմանական «Ռայն Պֆալց» քերթի հոկտեմբերի 21-ի հրատարակումը, «Բանկինսկի Ռաբոչե» պաշտոնաթերթում հրատարակվեց հաղոթյուն այն մասին, որ իբր նշված թվականի հունիսին Թեհրանում, Ազգային անվտանգության նախարարությունում («վեզարաթ-ե էքսեկաթ»), տեղի են ունեցել երեք զաղտնի համընդհանուր, որանց մասնակիցների թվում էիջատակվում են Մահիր Ջավադով<sup>1</sup> և Արցրեզյանի մահիկին նախագահ Այազ Մուքաչիբովը: Այդ համընդհանուրի ժամանակ իբր քննարկվել են Արցրեզյանի կատավարության դեմ նախապատրաստվող զանազան ծրագրեր՝ կովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-ի և Թուրքիայի աճող ազդեցությանը հակադրանքներ նպատակով:<sup>58</sup>

Իրան-Արցրեզյան հարաբերությունները մթազնուղ մյուս պլաներինը դա իսլամական կրոնի հետ կապված խնդիրներն են: Ինչպես հայտնի է, խորհրդային վարչակարգի կողմից տևական ժամանակաշրջանի ընթացքում ճնշման տակ գտնված իսլամը Արցրեզյանի անկախության ձեռք բերումից հետո սկսեց վերածվել ազգային ինքնությունը շնչուողող հարմար խորհրդանիշի: Ըստ այնմ, Իրանը մեծ հույսեր սկսեց կապել Արցրեզյանի հետ իր կոնֆեսիոնալ միասնության հետ, մասնավորապես որ Հ.Ալիևը ժամանակ առ ժամանակ հաճոյախոսություններ էր կատարում իսլամի հասցեին, հայտարարելով, որ ինքը Խորհրդային Միության ղեկավարության մեջ (որպես քաղաքաբնակի անդամ) միակ մահմեդականն էր:<sup>59</sup> Նա ցուցադրական ձևով հաճախ մասնակցում էր նոր կատուցված նվերների բացման արարողություններին, իսկ մեկ անգամ նույնիսկ հայտարարեց, որ «միոյանց այնքան նման ոչ մի ուրիշ երկիր չկա, որքան Իրանն ու Արցրեզյանը»:<sup>60</sup>

Այս բոլորը Թեհրանին հիմք էր տալիս ենթադրելու, որ Արցրեզյանում հնարավոր էլինի վերակենդանացնել «ուսմայի» և մահմեդական երայրության զաղափարները, որոնք կարող էին հոգեկան կովան հանդեսանալ մթանց մերձեցման համար:<sup>61</sup>

<sup>1</sup> 1995թ. մարտին Ռաբվում Հ.Ալիևի իշխանության դեմ գնված ելաթ կազմակերպած Ջավադով երայրներից մեկը, որը Արցրեզյանից փախուստի դիմելուց հետո ընդունել էր ափսոսելիական հպատակություն և որպես քաղաքական վտարանդի գտնվում էր Իրանում:

Անշուշտ Աղբրեզամի հետ իրենց հարաբերությունների սկզբունքները մշակելիս Թեհրանում իրենց հաշիվ էին տալիս, որ իսլամական հեղափոխության արտահանումը Աղբրեզամ և այնտեղ իսլամական արժատականության քարոզչության ծավալումը կարող է լինել ամենուրեքն ու ամենուրեքն քաղաքականություն, որովհետև այն կարող է առաջ բերել Բաքվի աշխարհիկ ղեկավարության հակազդեցությունը և տեղիք տալ այդ երկրի աբսոլյուտացմանը, որի վտանգավոր ալիքները կարող էին անցնել Արաքսը և քափանցել Իրանական Աղբրեզամ: Ուստի իրանական ղեկավարության մարտավարությունը ուղղված էր նրան, որ Աղբրեզամում Իրանը աստիճանաբար մուտք գործի համագործակցության ամենարժանապիսի բնագավառները, աշխատելով քայլ առ քայլ շահել այդ երկրի մանձիղական բնակչության համակրանքը:՝ Սակայն ի հիասթափություն Թեհրանի, կոնֆեսիոնալ միասնության գործունը չաշխատեց: Եսխս պարզվեց, որ Աղբրեզամում իսլամական գործունի խորը ընկալման համար բավարար հող գոյություն չունի: Այդ առթիվ Բաքվում ԻԻՀ ղեկավար Ա. Բիգելիին իր մամուլի ասուլիսներինց մեկում հայտարարել էր, որ «Աղբրեզամում գոյություն ունեն քուչեիկյան զաղափարախտության մնացուկներ»: Այնուհետև Աղբրեզամի համընդհանուրությունում ընդունված նոր սահմանադրությամբ երկիրը հայտարարվեց լայիք /աշխարհիկ/ պետություն, կրոնը համարվեց պետությունից անջատ և քաղաքացի Աղբրեզամում իսլամական պետական ինստիտուտների առկայությունը: Այդ փաստը ի դերև հանեց Թեհրանում փայփայվող այն երազանքը, որ Աղբրեզամը կդառնի ոչ թե բուրջական լայիք, այլ իրանական իսլամական մոդելը: Սահմանադրության մեջ լայիք համակարգի սկզբունքների որդեգրումը Թեհրանում ոչ առանց հիմքի ընկալվեց որպես Թուրքիայի հետ տնտեսական և քաղաքական ինտեգրացման ձգտում, որը ԻԻՀ մեկնարանությամբ անմիջականորեն ուղղված է տարածաշրջանում Իրանի ռազմավարական շահերի դեմ: Ուստի Թեհրանը փորձեց Աղբրեզամում շրջանառության մեջ դնել ազգայնականության կոնֆեսիոնալ տարրերակր, որը նույնպես չաշխատեց:

Թեհրանի համար անսպասելի էր նաև Աղբրեզամում «Իսլամական կուսակցության» գործունեության կասեցումը, իսլամամետ գործիչների ձեռքակալությունները, իսլամական ակտիվիստների նկատմամբ կիրառվող հալածանքները և այլն: Ոչ պակաս անսպասելի էր նաև այն, որ ընդհանուր առմամբ Հ. Ալիևի փարչակարգին հաջողվում է բնակչության քաղաքական եռանդը մղել որոշակի, իր համար ցանկալի հունով և իսլամական կրոնն օգտագործել որպես զանգվածներին ակտիվացնելու վստահելի միջոց՝ նրանց ակտիվությունը ի հարկին օգտագործելու համար: Թեհրանում զայրույթի փոթորիկ առաջ բերեց Աղբրեզամի կառավարության կողմից «Իսլամական կուսակցության» մի քանի անդամ-

ների նկատմամբ ներկայացված մեղադրանքը թեկրանի օգտին լուստություն անելու մեջ: 1996թ. վերջին Բաքվում տեղի ունեցավ այդ կուսակցության ղեկավարների դատավարություն, որոնց դատապարտեցին տարբեր ժամկետների ազատազրկման: Թեև քիչ անց մախագան Հ. Ալիևը «մեծահոգաբար» ներում շնորհեց նրանց, սակայն դրանից հետո ևս կուսակցության մախագան Ալիբրամ Ալիևը, նրա տեղակալ Հաջիադա Նուրիևը և ուրիշներ շարունակում էին գտնվել խիստ հսկողության տակ: Ի դեպ, սրանց ազդեցության ներքո գտնվող Նադրաբան գյուղը բացահայտ առնակատման մեջ է գտնվում Հ. Ալիևի վարչակարգի հետ, որը համախա վեր է անվում մաս զինված ընդհարումների: Բանց հասել էր նրան, որ Նադրաբանի քնակիչները գյուղի կենտրոնական հրապարակում իրենց համար փոքր էին գերեզմաններ և հայտարարել, որ պատրաստ են մտնելու համում հավատի ու աղաբարության:՝<sup>61</sup> Այսպես կոչված «Հարավային Աղբրեջանի ազգային-ազատագրական շարժման» կողմից հրատարակված «Անադմուկ պատերազմ» գրքույկում խոսվում էր այն մասին, որ Աղբրեջանի «ժողովական կուսակցությունը» համագործակցում է Իրանի հատուկ ծառայությունների հետ, և որ իբր Իրանական ղեկավարությունը ծրագրեր ունի Աղբրեջանում իրականացնելու հեղաշրջում:՝<sup>62</sup>

Գծվար չէ նկատել, որ այս բոլորի մեջ Բաքվի իշխանությունները ուժգին կերպով ձգտում են որոնել իրանական հետք: Ուտի իսլամիստների ողջ գործունեությունը դավեց Կովկասի մահմեդականների հոգևոր վարչության և նրա ղեկավար Ալլահշյուքուր Փաշազադեի անձնական հսկողության տակ:՝<sup>63</sup>

Բաքում հատկապես վախճնում է Իրանի տարածքից իսլամական արմատականության քախանցումից Աղբրեջան: Աղբրեջանի Եվրաստրանայան կենտրոնի մախագան Մսիմ Մուլազադեմ գրում է, որ 1993թ.-ից սկսած Իրանը դեպի Աղբրեջան իսլամական արմատականության արտահանման վրա ծախսել է մոտ 46 միլիոն դոլար:՝<sup>64</sup> «Ենի Ազերբայջան», «Խադր», «Ազերբայջան» և մի շարք այլ քերթեր հրատարակում էին հողվածներ, որոնցում պնդում էին, որ Իրանը ֆինանսավորում է Աղբրեջանի ընդդեմադիր ուժերին ներքին քաղաքական իրադրության ապակայունացման նպատակով:՝<sup>65</sup>

Իրան-Աղբրեջան հարաբերությունների լարվածության մյուս գործոնը Կասպից ծովի կարգավիճակի հարցն է: Այդ պորտեներ քազմարմոյթ է և իր մեջ ներառում է ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական խնդիրների մի ամբողջ փունց: Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում Իրանի և Աղբրեջանի դիրքորոշումների մեջ առկա են էական տարրերություններ:՝<sup>66</sup> Իրանական տեսակետի համաձայն, Կասպիցը ընդհանուր լիճ է և հետևաբար անխազրամճային հարատություն-

ներն էլ ընդհանուր են: Ուստի Իրանի կողմից պաշրեքարաբար ձեռնարկվում են որոշակի քայլեր, որոնց նպատակն է՝ բույլ շտալ առափնյա պետություններին սկսել վիճահարույց մավթահանքերի աղյուսաբերական շահագործումը: Անկասկած Իրանի և Աղբրեջանի միջև առկա հակասությունները ի վերջո պայմանավորված են մավթային պայմանագրերում Իրանի անբավարար ներգրավվածությամբ: Օգտագործելով տարածաշրջանում իր ուղջ ներուժը, Իրանը յի դաշարեցնում պայքարը իր համար հնարավոր լավագույն «քաժանում» ապահովելու նպատակով: Հարցի մյուս կողմը կայանում է նրանում, որ թեև կասպիական մավթի արտահանմամբ ամենահարմար տարանցիկ ենթակառուցվածքը, ինչպես նաև հմարավորությունները, տնօրինում է հենց Իրանը, գլխավորապես ԱՄՆ-ի քանջերով մա հետևողականորեն դուրս է մղվում կասպիական խաղերից: ԱՄՆ-ը հասկանալի պատճառներով դեմ է, որ կասպյան ավազանի էներգակիրները միջազգային շուկա հանվեն Իրանի տարածքով, Պարսից ծոցի վրայով, թեև այդ տարրերակը առևտրական տեսակետից ևս առավել նպատակահարմարն է,<sup>39</sup> որովհետև կարող է ապահովել կասպիականի մավթի և գազի ամենաարագ և կարճ ճանապարհով տեղափոխումը: Որքան էլ որ քայլը լինի գոյություն ունեցող, առաջարկվող և ենթադրվող մավթամուղների պատկերը, նրանք բոլորը անցնում են ոչ թե մեկ, այլ մի քանի երկրների վրայով: Այնպիսի տրտելված մի տարածաշրջանում, ինչպիսին կասպիականն է, դա առաջ է քերում համարյա ամուսնելի պարբերմանը: Եվ միայն մեկ ուղեգիծը դեպի հարավ, դեպի Պարսից ծոց, անցնում է միայն մեկ երկրի՝ Իրանի տարածքով: Սակայն քաղաքական պատճառներով Վաշինգտոնը դեմ է այդ տեսակետին, ուստի մշակվեց Իրանը շրջանցող մավթատար և գազատար խողովակաշարերն հայտնի Բաբու-Թրիլիսի-Ջեյհան մախագիծը՝ երեք միլիարդ դոլար արժողությամբ, որը Թուրքիային և ոչ թե Իրանին դարձնում է տարանցիկ տարածք, որի վրայով կասպիական մավթը պետք է հասցվի համաշխարհային շուկաներ:

Առհասարակ Իրանը շահագանց հիվանդազին կերպով է արձագանքում տարածաշրջանում Միացյալ Նահանգների ակտիվության նկատմամբ: Իրանական մարտիլ մշտապես զարգացնում է այն միտքը, որ Վաշինգտոնի համառ փորձերը ընդլայնելու իր ներկայությունը մերձկասպյան տարածաշրջանում առեղծույժ է որոշակի լարվածությամբ և ապակայունացնում իրադրությունը:<sup>40</sup> Իրանում գտնում են, որ Պարսից ծոցից հետո կասպից ծովի ավազանում անուր ուտքի տեղ անելու խնդիրը ԱՄՆ-ի համար միշտ էլ եղել է օպատմական երազանք: Թեև Իրանի համալսարանի պրոֆեսոր Հաֆեզիյան գտնում է, որ ԱՄՆ-ի կողմից Աղբրեջանի և կասպից ծովի տարածաշրջանի նկատմամբ իրագործվող քաղաքականության կասպակցությանը Իրանի համար ծա-

գել են մի շարք խնդիրներ, այդ թվում մաև անվտանգության պտորելներ և Կասպից ծովի ավազանում կոմիտիկոսների ծագման հավանականության մեծացում:<sup>71</sup> Առհասարակ ԻԻՀ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ պետք է պահպանվի առկա երկրաքաղաքական հավասարակշռությունը: Տարածաշրջանային երկրները չպետք է թույլ տան, որ արտաքին ուժերը միջամտեն ռեզիմնի երկրների ներքին գործերին, կամ փորձեն այս կամ այն ձևով ուղղել տարածաշրջանի երկրների ավագահ ճակատագիրը: Իրանը բնավ չի ցանկանում մաև իր սահմանների մոտակայքում տեսնել արևմտյան ընկերություններին: 1999թ. զարմանը ԱՄՆ-ում Ադրբեջանի հետ նոր նավթային պայմանագրերի ստորագրումից հետո Իրանի արտգործնախարարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ ադրբեջանա-ամերիկյան նավթային համաձայնագրերը Թեհրանը համարում է ոչ լեգիտիմ:

1997թ. զարմանը ԻԻՀ ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը՝ Մեջլիսի նախագահ Ալի Աբրար Նաթեղ Նուրին հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Ադրբեջանի նախագահ Հ.Ալիևը պատմական սխալ է թույլ տալիս հիմքեր տեղծելով ամերիկացիների միջամտության համար մերձկասպյան պետությունների գործերին»: Որպես պատասխան քայլ Վաֆա Գուլուզադին կտրուկ արտահայտություններով հակադարձեց իրանական Մեջլիսի խոսնակին և Բաքում իր «վճռականությունը» դրսևորելու համար հետաձգեց ԻԻՀ արտգործնախարարի տեղակալ Աբրաս Մալեթիի նախապես ծրագրված այցը Ադրբեջան:<sup>72</sup>

Իր հերթին ադրբեջանական կողմը զանազան մեղադրանքներ է ներկայացնում Իրանի հասցեին: Այսպես, վկայակոչելով Լոնդոնի «Յայմս»-ը, ադրբեջանական թերթերը Իրանին մեղադրում էին նրանում, որ իրր մա Կասպից ծովը օգտագործում է մեկ այլ երկրի պատագիտությանը Հայաստանին, քրդերին, բոսնիական սերբերին փոխանցելու, ինչպես մաև սեփական նպատակների, մասնավորապես ստրատեգիական նշանակության հրթիռներ պատրաստելու քաղադրամասեր ստանալու համար: 1998թ. մարտի 26-ին Աստարայի մաքսատանը կալանքի տակ դրվեց Ռուսաստանից Իրան ուղարկվող մի բեռ 21,7 տոնն քաշով: Բեռի պարունակությունը յժանգուտվող մետաղաթերթեր էին: Ադրբեջանի Անվտանգության ծառայությունների կարծիքով, այդ ապրանքը մախատեսված էր հեղուկ վառելիքով աշխատող քալիատիկ հրթիռներ պատրաստելու համար: Բեռը կալանքի ենթարկելու հենց նույն օրը Ադրբեջանը այդ մասին տեղեկացրեց Վաշինգտոնին:<sup>73</sup> Անկասկած ադրբեջանական լրատվամիջոցների կողմից նման հրապարակումների նպատակը մեկն է՝ պետք է փոխել Կասպից ծովի իրավական կարգավիճակը, որպեսզի հնարավորություն ստեղծվի ստուգման ենթարկելու Ռուսաստանի և Ի-

քանի միջև երթևեկող նավերը, ինչպես դա անում են բուրքերը Սևծովյան նեղուցներում:<sup>74</sup>

Իրանի և Ադրբեջանի տևական բանակցությունների ընթացքում հնարավոր չեղավ վերոնկիշյալ հարցերի, մասնավորապես կապիտալիստի ստորեմի կապակցությամբ ընդհանուր հայտարարի բերել կողմերի դիրքորոշումները: Ընդհակառակը, մրանց միջև լարվածությունը ժամանակ առ ժամանակ ընդունում էր պայթյունավտանգ ու սուր բնույթ: Այսպես, 2001թ. հուլիսի 23-ին իրանական մի ռազմանավ և երկու ռեսկուիվ ինքնաթիռներ ստիպեցին, որ գեոֆիզիկական հետախուզության ադրբեջանական նավը հեռանա հետազոտության այն վայրից, որ Թեհրանը համարում է Կասպից ծովի իր հատվածը:<sup>75</sup> Այդ միջադեպից հետո Բաքուն մեղադրեց Իրանին, որ ճա վարձում բռնազավթել Կասպից ծովի նավթով հարուստ ադրբեջանական սեկտորի մի մասը: Որպես մկանների ցուցադրման պատասխան քայլ, Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ Հուսեյն Կիլիկեօղլուն օգոստոսի 23-ին պաշտոնական այց կատարեց Բաքու, որի ընթացքում Թուրքիայի ռազմա-օդային ուժերի տասը Ժ-16 կործանիչներ ուղևեցում էին գեներալին, իսկ ապա սկսեցին Բաքվի վրա կատարել ցուցադրական քոչիքներ:<sup>76</sup>

Այդ միջադեպի առթիվ ամերիկյան վերլուծաբան դոկտոր Արիել Զոննը հանդես եկավ մի հոդվածով, որտեղ պահանջում էր, որ «Լաշինգտոնը պետք է բուր միջոցները ձեռնարկի, որպեսզի ամերիկյանաժետ կողմնորոշում չունեցող Ադրբեջանը չենթարկվի Իրանի կողմից ուժային ճնշման և որպեսզի «Բրիքիչ-պետրոլիում-Ամոց», «Շերոն», «Շքսան-Մորիլ», «Ֆրոնտայերա-ոնուրսիս» և այլ նավթային ընկերությունները, որոնք փաստորեն դարձել են տարածաշրջանի զարգացման շոգեքարշը, աշխատեն միանգամայն համզիտ պայմաններում և փոսանգի ոչ մի զգացում չունենան»:<sup>77</sup> Այդ վտանգի զգացումը իսպառ բացատելու համար ամերիկացի փորձագետը նախ առաջարկում էր վերացնել դարաբաղյան պատերազմի ժամանակ 1992թ. ամերիկյան կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության պաշտպանության ակտի» 907 ճշտումը և ապա ուժեղացնել Ադրբեջանի հետ ուղղակի ռազմական համագործակցությունը, ԱՄՆ-ի «դրաման ներդնելով» Ադրբեջանի ցամաքային, ծովային, օդային և տանիսային պաշտպանության ուժերի ստեղծման գործում: Միաժամանակ նա գտնում էր, որ ամերիսիչտ և նպաստել Ադրբեջանի կապերի ամրապնդմանը ՆԱՏՕ-ի հետ և աջակցել այդ համրապետության ռազմական եզրորության մեծացմանը «գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում համագործակցության հիմքի վրա:<sup>78</sup>

2002թ. մայիսին տեղի ունեցավ ՀԱԿԻՔի պաշտոնական այցն Իրան, որն ամրնդիստ հետաձգվում էր 2001թ. ամռանից սկսած: Եվ քնն



կնքվեցին մտտ մեկ տասնյակի հասնող մեր միջպետական համաձայնագրեր, սակայն իրանա-սղլեթեղանական հարաբերություններում որակական փոփոխություններ ու տեղաշարժեր տեղի չունեցան: Կողմնից չկարողացան համաձայնության գալ մաս Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում: Ավելին, այցի ընթացքում իրանական մամուլը ծավալեց հակասղլեթեղանական բուն քայտզարչավ:

Այս բոլորն անշուշտ չի մշամակում, որ Իրան-Սղլեթեղան հարաբերությունների ապագան անուսալի կերպով անդռչ է ու մշուշապատ: Կասկածից վեր է, որ Սղլեթեղանի հանրապետությունը իր կարևոր տեղն ունի ԻԻՀ տարածաշրջանային քաղաքականության մեջ և Թեհրանում գտնում են, որ ելնելով ազգային ու տարածաշրջանային շահերից, ԻԻՀ-ը սպարտավոր է լավ հարաբերություններ սրահայանել Սղլեթեղանի հետ, մամավանդ որ վերջինս այնուամենայնիվ համղխամում է իրանց դավանող երկիր, իսկ ԻԻՀ-ը իր այտոսքին քաղաքականության բնագտվառում առաջնայնությունը տակիս է իսլամական երկրների հետ համագործակցությանը: ԻԻՀ սանձամաղլություն 11-րդ հողվածում, որպես մսլատակ, իտավում է իրանական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնության հասնելու մասին: Անկախ դրանից, Թեհրանն ամեն կերպ աշխատում է ներկայանալ որպես իսլամական ժողովուրդների իրական շահերի մենատեր արտահայտիչ: Ընղիհանրապես ներկա աշխարհում ոչ մի ժամանակակից պետության բնորոչ չէ այնպիսի գաղափարականացված քաղաքականություն, ինչպեսին Իրանինն է:

Վերջին տաս տարիների ընթացքում ԻԻՀ-Սղլեթեղան առևրատնտեսական հարաբերությունների ցուցանիշները միշտ էլ բարձր են եղել: Դանղաղորեն, բայց այնուամենայնիվ երկու երկրների միջև ձևավորվում են տրանսպորտային ենթակառուցվածքներ: Կասպից ծովի համագործակցության երկրների կազմակերպության անղյամ պետությունների հետ առևրատնտեսական հարաբերություններ իրականացնելիս, Սղլեթեղանը արտոմյալ պայմաններով օգտվում է Կասպից ծովի էնզելի և Նոուշահր մավահանղխտներից, ինչպես մաս Իրանի հարրոյակցության ճանապարհներից: Կասպից ծովի իրանական ափին կառուցվող Ամիրաբաղ մավահանղատի շինաբարության ավարտից հետո կիրականանա Ամիրաբաղ-Բաքու շատսանղվային զետանղը: Մրագրեր կան միացնելու երկու երկրների երկաթուղագծերն ու ավտոճիղային ճանապարհները: «Սղլեթայցան հավաղղարի» և իրանական «Քասպիյան էլղայնղ» ավիաղնկերություններն իրականացնում են ուղղղ օղային չվերթներ Բաքվի և Թեհրանի միջև: «Քասպիյան էլղայնղ» ունի օղային չվերթներ մաս հետևյալ ուղղղություններով. Թեհրան-Բաքու, Թավրիղ-Բաքու, Թավրիղ-Նախիղևան: Սղլեթեղանում գործում են ավելի քան 300 իրանա-սղլեթեղանական համատղղ ձեռնարկություններ և 200



զուտ իրանական ճեղքարկություններ: Վերջապես ԻԻՀ ևս ինչ-որ չափով ընդգրկված է Ադրբեջանի մարտային պայմանագրերի մեջ և այլն: Իրանը մահ հատուկ հետաքրքրություն է դրսևորում Նախիջևանի նկատմամբ: Նախագծեր կան Իրանի կողմից Նախիջևանում կառուցելու ցեմենտի գործարան, առևտրական խոշոր կենտրոն, իրականացնելու Խոյ-Նախիջևան գազատարի շինարարությունը և այլն: Առավել հեռու ապագայում ծրագրվում է վերականգնել Բաքու-Նախիջևան երկաթուղագիծը, որի Մեդրիսով ընդհատվող հատվածը անցնելու է Իրանի տարածքով: Ներկայումս Իրանի տարածքով իրականացվում է մահ Ադրբեջանի և Նախիջևանի միջև ադրբեջանական բուժնատարների երթևեկությունը, զործում են ավտոբուսային շփերները Նախիջևանի մի կողմից՝ Թավրիզի, Ուրմիայի, Մակուի, Խոյի, Մարանդի և Արդեբիլի միջև մյուս կողմից: Ծրագրվում է Արաքս գետի վրա «Օրդուբադ» և «Ճուղաֆարին» հիդրոհանգույցների և Փողաշառահ բախրի կոչված սահմանային շրջանում մշտական կամուրջ կառուցելու հարցը: 1997թ. ԻԻՀ և Նախիջևանի Ինքնավար համրապետության միջև ստորագրված փոխընթերցման համաձայնագրով երկու երկրների քաղաքացիների երթևեկությունը իրականացվում է առանց վիզայի:

Այս բոլորն անշուշտ վկայում է այն մասին, որ չեն բուլանում Ադրբեջանում իր ներկայության և ազդեցության ամրապնդման ուղղությամբ Իրանի կողմից զործադրվող ջանքերը:

Նրա համար սկզբունքորեն կարևոր նշանակություն է ձեռք բերում ոչ միայն իր ունեցած հարաբերությունները տարածաշրջանի պետությունների հետ, այլև նույն տարածաշրջանի պետությունների միմյանց հետ ունեցած միջպետական հարաբերությունները:

## VAHAN BAYBURDYAN

### IRAN-AZERBAIJAN: NEIGHBORS OR GEOPOLITICAL-ECONOMICAL ENEMIES?

After the collapse of the USSR and the creation of the so-called "Southern Zone" of newly formed-independent countries the southern parts of the Caucasian countries became highly competitive. Here the interests of Great States clashed as well as those of regional force centers and in particular the interests of the Islamic Republic of Iran and Turkey. In this article the political aspect of Iran-Azerbaijan relations is analyzed on the basis of the International relations developing in this very region.

Particularly it is mentioned that the complicated as well as contradictory development of those relations makes it difficult for the analyzers to clarify whether Iran-Azerbaijan relations were those of frontier neighbors or of confrontational nature of geopolitical-economical enemies.

The fundamental question of Nagorno Karabakh, Islamic factor in Iran-Azerbaijan intergovernmental relations, the Caspian Oil factor as well as other problems are also examined in the article on the basis of crucial facts. Especially thoroughly is explained the question that one of the main reasons of Iran-Azerbaijan intergovernmental discrepancy is Iranian Azerbaijan or the so-called "Southern Azerbaijan" problem. The utopian plans of great number of political forces who want to unite Iranian Azerbaijan with the Republic of Azerbaijan, thus creating "the Great Azerbaijan" is also highlighted.

The official visit of Azerbaijanian president Haidar Aliiev to the Republic of Islamic Iran in May 2002, is particularly stressed in the article. Though new intergovernmental agreements were signed between the two sides, so far crucial changes and transpositions haven't taken place in Iran-Azerbaijan relations.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Sbu' Булент Араз, Турция: некоторые особенности отношений с государствами Закавказья. "Центральная Азия и Кавказ", 5 (17), 2001, с.104.
2. Sbu' Swietochowski Tadeusz. Azerbaijan: Perspectives from the Crossroads. "Central Asian Survey", December, 1999, vol. 18, N 4, p. 425.
3. Малек Аббас. Иран и Туран: к вопросу об отношениях Ирана с государствами Центральной Азии и Закавказья. "Центральная Азия и Кавказ", 5 (17), 2001, с.19.
4. Sbu' Shaffer Brenda. Partners in Need: The Strategic Relationship of Russia and Iran. Washington Institute for Near East Policy. Policy Paper, N 57, 2001, p. 34.
5. Sbu' Maleki Abbas. Iran and Russia: Neighbors without Common Borders. Հիւնկալ գրքում. Gennady Chufirin (ed.) Russia and Asia: The Emerging Security Agenda, SIPR: Oxford University Press, 1999, p. 230-265.
6. Малек Аббас. Иран и Туран, с. 110. Sbu' նաև ИТАР-ТАСС, 1991, 3 декабря.
7. Азербайджан, 1991, 16 августа.
8. Бигдели А., Обзор отношений между Исламской Республикой Иран и Республикой Азербайджан. "Аму-Дарья" 1999, N 2, с.19.
9. "Քեյխան" (պարսկերեն լեզվով թերթ), Լոնդոն, 11 հունիսի 1992թ.:
10. "Քեյխան", Լոնդոն, 4 հունիսի 1992թ.:
11. "Արաբս", Թեհրան, հուլիս, 1993թ.:
12. Բեգիջանյան Է., Իրանա-ադրբեջանական փոխարարերուցման հարցի շուրջ, երևան, 2001, էջ 56:
13. Altstadt A.L. Azerbaijan's Struggle toward democracy. Conflict cleavage and change in Central Asia and the Caucasus. Cambridge University press, 1997, p. 125-127.
14. Բեգիջանյան Է., նշվ. աշխ., էջ 70:
15. Бигдели А., նշվ. աշխ., էջ 20:

16. Ислам Назаров: Азербайджано-иранские отношения сегодня и перспективы на ближайшие годы. "Центральная Азия и Кавказ", 5 (23), 2002, с.95.
17. Sbu A hero of time. "Economist", 1994, February 12-18, N 7850, p. 30.
18. "Pbjhwi", Lnlnn, 24 hnljhu 1993p.:
19. Sbu Kochichian Joseph A. Theodore W. Karasik. The Crisis in Azerbaijan: how class influence the politics of an emerging republic. "Middle East Policy", 1995, September, V. 4, N 1-2.
20. Sbu Дипломатия мира (об итогах визитов президента Азербайджанской республики Гейдара Алиева в зарубежные страны 1993-1997), Баку, 1997, с.125.
21. Бигдели А., Обзор..., с. 21.
22. "Бакинский рабочий", 1994, 29 марта.
23. Out of the empire and into the fire. "US News and World Report", 1993. October 4, N 13, p.39.
24. Sbu Малек Аббас. Иран и Туран, с. 111.
25. Lnlnn lnlnn:
26. Pbjhwiwn t., lnj, wjhu, t 72:
27. "Pbwiw", 29 hnljhu, 1993p.:
28. Sbu Кулиев Г., Мифы и реальности нефтяной стратегии Азербайджана. "Центральная Азия и Кавказ", 1999, N 4, с.164.
29. Independent News Agency "Sarg" Бюллетень.-1999, 9 марта, N53, с.2.
30. "Tehran Times", 26 april, 2001.
31. "Бакинский рабочий", 1998, 14 августа.
32. "Зеркало", 1997, N50, с.8.
33. Насер Сагафи Амери. От главного редактора. "Аму-Дарья" 1999, N 2, с.10-11,16.
34. Кулиев Г.Г., Геополитические коллизии Кавказа. "Центральная Азия и Кавказ", 1999, N 3, с.26.
35. Оруджев И., Гейдар Алиев и национальная политика. "Бакинский рабочий", 1998, 13 января.
36. "Бакинский рабочий", 1998, 10 января.
37. "Lwjhr", 11 odlnlhu, 1995p.:
38. "525 gazet", 1999, 28 сентября.
39. "Зеркало", 1998, N17, с. 11.
40. "Зеркало", 1999, N5, с.30.
41. Independent News Agency "Sharg" Бюллетень.-1999, 19 марта, N62, с.3.
42. "Зеркало", 1998, N23, с.26.
43. Sbu "Transitions", 1997, Vol. 4, N 4, September, p. 64.
44. "Зеркало", 1998, N23, с.4, 10.
45. "Зеркало", 1999, N120, с.4.
46. "Зеркало", 1999, N83, с.2.
47. "Зеркало", 1998, N2, с.10.
48. "Зеркало", 1998, N5, с.10.
49. "Зеркало", 1999, N48, с.2.

50. "Зеркало", 1998, N11, с.11.
51. "Зеркало", 1999, N15, с.18.
52. "Бакинский рабочий", 1998, 10 января.
53. Жигалина О.И., Эволюция национальной политики в ИРИ (1978-1998). Иран: эволюция исламского правления, М., 1998, с. 38.
54. Sbu' Богданов М., Курс на Москву? "Независимая газета", 1999, 22 сентября.
55. Жигалина О.И., Եզլ. աշխ., էջ 42:
56. Жигалина О.И., Этносоциальная эволюция иранского общества, М., 1996, с. 211-212.
57. "Зеркало", 1999, N31, с.4.
58. "Зеркало", 1999, N1, с.10.
59. "Бакинский рабочий", 1999, 27 октября.
60. "Бакинский рабочий", 1999, 12 октября.
61. Առլն տեղում:
62. Sbu' Գարիրոլլա Արուիսաան Շիրազի, Սեյիաթիա-յե ախա-յե ճիանն, Թեհրան, 1992, էջ 336-337 (Պարսկերեն լեզվով):
63. The Iranian Journal of International Affairs, Spring 2000, Vol. XII, N1, p. 34.
64. Ислам Назаров, Եզլ. հոդվածը, էջ 98:
65. Sbu' "Центральная Азия и Кавказ", 5 (17), 2001., с.95-96.
66. "Зеркало", 1998, N31, с.4.
67. Моллазаде А., Безопасности Южного Кавказе и региональное сотрудничество. "Центральная Азия и Кавказ", 1999, N3, с.59.
68. "Зеркало", 1998, N46, с.4.
69. Sbu' Ардебилли Х.К., Правовой режим Каспийского моря, развитие ресурсов и энергетических магистралей. "Аму-Дарья" 1999, N 1, с.17.
70. Sbu' Bhatti R. and Beeson R., Nato's Mixed Signals in the Caucasus and the Central Asia. Survival, Autumn 2000, Vol. 42, p. 129-145.
71. Iran News, 1999, 22 փետրվարի:
72. Sbu' Первый совместный Круглый стол Исламской Республики Иран и Республики Азербайджан. Институт политических и международных исследований, 12 мая 1999, "Аму-Дарья" 1999, N 2, с.129.
73. "Независимая газета", 1997, 16 апреля.
74. "Зеркало", 1998, N16, с.5, N 17, с.22.
75. "Зеркало", 1999, N126, с.5.
76. Sbu' Iskenderov M., Wall T., Caspian Sea Disputes Flare, Raising Doubts about Oil and Gas Exploration. Eurasianet.org., 7 august, 2001.
77. Др. Ариэль Коэн. США: задачи в сфере защиты безопасности каспийских углеводородов от посягательства Ирана. "Центральная Азия и Кавказ", 1 (19) 2002, с.41.
78. Առլն տեղում, էջ 47:
79. Առլն տեղում, էջ 49:

## ՍՈՒՐԵՆ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

### ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԱՐԴԻԱԿԱՆ ԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԹԻ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ԴԵՐԻ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՉ (1970-2000-ական թթ.)

Արդեն բավականին տևական ժամանակամիջոց է աշխարհի տարրեր մասերում՝ Ֆիլիպիններից մինչև Բալկաններ ձևավորվում է աճող բազմամակարդակ (էթնոքաղաքական, ռազմա-քաղաքական, սոցիալ-քաղաքական) անկայունության գոտի՝ առյժմ ապակայունացնող գործընթացներում և գործողություններում իսլամական (կալամիստական) կազմակերպությունների, շարժումների, խմբավորումների և վարչակարգերի ակտիվ ներգրավմամբ: Այդ ապակայունացնող ակտիվության դեռևորումներն են ահաբեկչական ակտերը, խռովությունները, անջատողական շարժումները, ռազմական հակամարտությունները այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Մերձավոր և Միջին Արևելքը, Կենտրոնական Ասիան, Կովկասը, Հարավային Եվրոպան, Աֆրիկան:

Նման ապակայունացնող ակտիվության դեռևորումն համարժեք ձև է քաղաքական իսլամի կամ իսլամիզմի հայեցողությանը: Տվյալ հոդվածի խնդրո առարկան չէ քննարկել իսլամիզմի, մահմեդական արմատականության և ավանդապաշտության միջև առկա նմանությունները և տարբերությունները, դրա կրոնական հիմքերը: Սակայն կցանկանայինք համառոտ անդրադառնալ իսլամիզմի որոշ բնորոշումներին:

Հայտնի է, որ Իսլամը, քացի համաշխարհային քաղաքակրթություն լինելուց, հանդիսանում է մահ քաղաքականություն: Իսլամիզմն էլ գաղափարախոսություն է և պրակտիկ գործունեություն, որոնք ուղղված են այնպիսի պայմանների տեղծմանը, որոնցում պետությունների միջև և մահմեդական բնակիչներ ունեցող յուրաքանչյուր պետության (հասարակության) սոցիալական, տնտեսական, էթնիկական և այլ հիմնախնդիրներն ու հակասությունները պետք է լուծվեն բացառապես Շարիաթից, Կուրանից և Սուրայից թլաղ մահմեդական նորմերի կիրառմամբ: Այսինքն, խոսքը գնում է մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում իսլամական նորմերի կիրառման համար քաղաքական պայ-

մանենքի ստեղծման մախազծի և դրա իրականացման մասին: Հենց այդ պատճառով իսլամիզմը կոչվում է քաղաքական իսլամ:

Իսլամիզմի հայեցակարգի հովանու տակ մյավոքվում են տարբեր կարգի շարժումներ, որոնք գոյություն ունեն աշխարհի տարբեր ծայրերում: Իսլամիզմը մաս մի գերեռակցիա է, որը հակադրվում է բոլոր ուրիշ գաղափարախոսություններին, քաղաքական համակարգերին և հասարակական-քաղաքական (աշխարհիկ կամ արդիականացվող) մախազծերին: Ասել է թե, վերոհիշյալ տարածաշրջաններում համընդհանուր ապակայունացման գլխավոր աղբյուրը կայանում է իսլամիզմ-սկեռյուս-րիզմ գծով ընթացող հսկանաբարության մեջ:

Մյուս կողմից, ամերիկյան քաղաքագետ Ալի Աբուսալեբին տալիս է իսլամիզմի հետևյալ բնորոշումը. «Իսլամիզմը կարող է ներառել իր մեջ «առաջադիմական» հոգևորականներին և այն քաղաքաքրմակ մտավորականներին, որոնք հավատում են, որ իսլամական էմմանդույթները համատեղելի են այնպիսի արդիական արժեքների հետ, ինչպիսիք են ազատությունն ու ժողովրդավարությունը»<sup>1</sup>:

XX դարի պատմական զարգացումը բնութագրվում է մահմեդական երկրների արդիականացմամբ: Այն իրականացվում և շարունակվում է իրականացվել տարբեր ձևերով, բայց բոլոր դեպքերում բերում էր կրոնական գործոնի դերի և նշանակության կտրուկ անկմանը: Մակայն 1970-ական թվականներին Մերձավոր և Միջին Արևելքում սկսեց բազի հովաքել իսլամիստական շարժումը, որի մեջ մյավոքվեցին հսկանդեռնոխտական տարրերը, որոնք մպատակ էին հետապնդում կանգնեցնել կարծես թե արագորեն տեղի ունեցող ընթացքը դեպի արդիական և աշխարհիկ կարգեր: Հենց այդ ժամանակաշրջանում իրենց մասին հայտնել տվեցին երկու բեռկրատական վարչակարգ՝ Սաուդյան Արաբիայում և Իրանում: Տիրապետելով հսկայական տնտեսական ռեսուրսներին՝ քաղաքական իսլամը առաջ եկավ որպես Մերձավոր Արևելքի արդի պատմության մեջ գլխավոր մախազիծ և արդիականացման այլընտրանք՝ առաջ քաշելով «Իսլամն է լուծումը» բանաձևը և մարտահրավիր նետելով տարածաշրջանի պետություններում իշխող ընտրանում: Մահմեդական երկրներում սկսվեց իսլամիստական տարրերի ուժեղացման և տարածման ընթացքը, զանգվածային իսլամիստական հեմարանի, ինչպես մաս արդիականացվող-աշխարհիկ քաղաքական համակարգերին և նրանց լոյս քաղաքական ու հանրային ուժերի հանդեպ ընդդիմադիր, իսլամիստական բնույթի կրոնական-քաղաքական կազմակերպությունների ստեղծման գործընթացը:

Իր հերթին հայտնի ամերիկյան քաղաքագետ Մեմլուել Հանթինգտոնի կողմից առաջ է քաշվել այն տեսակետը, որ արդիականացումը մահմեդական աշխարհում ունի համախ ապակայունացնող բնույթ, և

Մա շնչառում է, որ իսլամական արմատականության վերակենդանացումը և մահմեդական երկրների բնակչության մեծամասնության աղքատությունը չի առեղծոքում հիմք այնտեղ ժողովրդավարության հաստատման համար<sup>1</sup>:

Քաղաքական իսլամի օջախներից մեկը 1970-ականներին դարձավ Մաև մահմեդական աշխարհի ամենաաշխարհիկ և «արևմտյան» պետության համըսակն ունեցող Թուրքիայի Հանրապետությունը:

Իսլամիզմի՝ որպես երևույթի, քաղաքական շարժման և գաղափարախոսության դերակատարումը ժամանակակից Թուրքիայում ունեցել է մի շարք համգրվաններ և առանձնահատկություններ:

Թուրքիայի Հանրապետությունում քաղաքական իսլամը կամ իսլամիստական շարժումը ունի երակարատև պատմություն<sup>2</sup>: Դեռևս 1920-ական թթ. իսլամը փաստացիորեն դարձավ քեմալիզմի միակ կենսունակ ալլըմտրանքը: Եվ քաջահայտ կամ թաքուն ընդդիմությունը քեմալիզմին հանդես էր գալիս հենց իսլամիզմի դիքքերից: Հեռաքար, իշխանությունները, իրենց քաղաքական հակառակորդների դեմ արգելանքների և հետապնդումների քաղաքականությունն իրականացնելիս, մշտապես օգտագործել են նրանց կողմից «երկրի քաղաքական կյանքում կրոնի կամ կրոնական տարրերի ներմուծման» մեղադրանքը:

Հարկ է մշել սակայն այն առանձնահատկությունը, որ Թուրքիայում մահմեդական վերնախավի դեմ գրոհները կատարվում էին աշխարհիկ դոկտրինը (լաիկիզմը) ելակետ ընունելով, որը 1920-ական թթ.-ից է վեր սկսվեց համարվել Թուրքիայի Հանրապետության քաղաքական հիմքը և արդիականացման հենասյունը, քայց անգամ քեմալական բարեփոխումների շրջանում լաիկիզմը չէր մշանակում իսլամի աջատում պետությունից, այլ՝ պետության գերիշխանություն մահմեդականության մկատմամբ: Կրոնը շարունակեց մնալ Թուրքիայում քաղաքական հիմնահարց, ինչը հետևանք է երկրի և ընտրամու երկվությանը: Ընտրանին ընկելուց քեմալական բարեփոխումները, քայց դրանց ազդեցությունը Անատոլիայի պահպանողական տարրերի վրա մնաց յուր:

Այստեղ պետք է համաձայնել Ս.Համթինգտոնի այն կարծիքի հետ, որ Թուրքիան պատկանում է «մերօրից պատակոված» երկրների շարքին<sup>3</sup>: Աճորդ XX դարի երկրորդ կեսի ընթացքում և նոր հարյուրամյակի սկզբին բուրքական քաղաքական և ռազմական ղեկավարությունը պահպանել է իր հավատարմությունը Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթյուրքի քաղաքական փիլիսոփայությանը և դատում էր իր երկիրը արդիական, աշխարհիկ, արևմտյան տիպի ազգ-պետությունների շարքին: Միևնույն ժամանակ բուրքական ծանրության զգալի մասը շարունակում էր աջակցել իսլամական սականդույթների վերածննդին և պնդում է, որ իր հիմքում Թուրքիան՝ մերձավորարևելյան մահմեդական

երկիր է: Ավելին, Թուրքիայի անդամագրումը եվրոպական Միությանը կախեցվում է այն պատճառով, որ Արևմուտքի քաղաքական վերնախավը չի ընդունում Թուրքիային, քանզի, ըստ Թուրքիայի ուրբերույ մախս-գահ Թուրքույր Օզալի, «մենք մահմեդականներ ենք, իսկ նրանք՝ քրիստոնյաներ, քայց նրանք դրա մասին քացահայտ չեն խոսում»<sup>2</sup>:

Երև Դեմոկրատական կուսակցության կառավարման օրոք (1950-1960թթ.) տեղի ունեցավ իլամական գաճազան խմբավորումների վերակենդանացում, ապա 1961թ. լիբերալ Սահմանադրության ընդունումից հետո իլամական շարժումը հնարավորություն ստացավ գործել օրինական շրջանակներում՝ առեղծելով իր կառույցներն ու հավաքագրելով իր կողմնակիցներին: 1969թ.-ին Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր Նեզմեթին Էրքաքանը նախածեմեց քաղաքական շարժում, որը մեջլիսի ընտրություններում շահեց ձայների 5,6 տոկոսը և ստացավ խորհրդարանում 13 տեղ: Հաջորդ տարի այդ շարժումը վերակազմակերպվեց «Ազգային Կարգ» կուսակցության: Այս կուսակցության առաջացումն ընկալվեց առավելապես որպես պահպանողական շրջանակների պատասխան երկրում աճող ձախ տրամադրություններին և արագ տեմպերով ընթացող սոցիալական, քաղաքական և տնտեսական արդիականացմանը: Իսլամիստական շարժման հիմքը դարձան Անատոլիայի հենց այն խավերը, որոնք երկար պատում էին արդիականացման օգուտներին իրենց համար, սակայն հուսախար լինելով՝ որոշեցին իրենց դիմադրությունն արդիականացմանը ցույց տալ իլամիզմի միջոցով:

Սակայն այս շարժումը չէր փորձում իրեն դուրս դնել համակարգից և ձգտում էր հանդես գալ որպես լոյալ ընդդիմություն, որն աջակցում է ժողովրդավարությանն ու սահմանադրական խորհրդարանական կարգին:

Բացի հուսախարված քնակչությունից, իսլամիստական շարժման մեջ ընդգրկվեցին տարբեր կրոնական երթայրություններում ընդգրկված պահպանողականները, որոնք ձևավորեցին թեկուզ և ոչ քացահայտ, քայց քաղականին ազդեցիկ ցանց:

«Ազգային Կարգ» կուսակցությունը առաջին իլամական քաղաքական ուժն էր, որն հնարավորություն ունեցավ իր քաղաքական օրակարգն առաջարկել Թուրքիային: Սակայն այն արգելվեց 1971թ. մայիսի 20-ի Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ զինվորականության ճնշման հետևանքով, երբ մեղադրվեց լաիցիզմի սկզբունքների խախտման մեջ:

1972թ. հոկտեմբերին Էրքաքանի շուրջ համախմբված իլամիստները վերակազմակերպվեցին Ազգային Փրկության կուսակցության մեջ, որին աջակցում էին նահանգների առևտրականները, արհեստավար



խավերը և երկու ոչ ֆորմալ կրոնական կազմակերպություններ՝ Նաքչ-բենդիները և Նուրջունների եղբայրությունները:

1973թ. կայացած ընտրություններում կուսակցությունը զգալի հաջողություն ունեցավ՝ հավաքելով ընտրողների ձայների 11,8 տոկոսը և ձեռք բերելով մեջլիսում 48 պատգամավորական տեղ, ինչը դարձրեց ԱՓԿ-ին երրորդ քաղաքական ուժը երկրում Հանրապետական-Ժողովրդական և Արդարության կուսակցություններից հետո: ԱՓԿ-ն մտավ ՀԺԿ-ի հետ կոալիցիոն կառավարության մեջ՝ լինելով իսլամական ավանդական կարգերի վրա հիմնված և շարիաթի օրենքները, օսմանյան պատմական մեծությունը և ազգայնականությունը զուգակցող «արբար հասարակության» չառագույնը<sup>6</sup>:

ԱՓԿ-ին հաջողվեց, լինելով իշխող կոալիցիայի անդամ, օրինազիծ անցկացնել աստվածաբանական քաթրազույն դպրոցների՝ իմամ-հաթիպները միջնակարգ դպրոցի կարգավիճակին հավասարեցնելու մասին<sup>7</sup>:

1980թ. սեպտեմբերի 12-ի ուսգմական եղաչրջումից հետո ԱՓԿ-ի գործունեություն արգելվեց, և միայն 1983թ. հուլիսի 19-ին մրա հիմքի վրա ստեղծվեց «Ռ-եֆահ» («Քաջօրություն») կուսակցությունը, որը քաղաքական արգելանքի տակ գտնվող Ն.Էրբասանի փոխարեն ղեկավարում էր մինչև 1987թ. Այն թուրքմենը: 1987թ. նոյեմբերին Էրբասանը վերադարձավ իսլամիստական շարժման ասոցիորդի ղեկին և այդ իսկ ժամանակ կայացած մեջլիսի ընտրություններում «Ռ-եֆահը» ստացավ ձայների 7,2 տոկոսը: Իսկ արդեն 1991թ. ընտրություններում կուսակցությունը մախլամուրական դաշինք կազմեց Ազգայնական Գործողություն կուսակցության հետ և միասին մրանք ստացան ձայների 16,7 տոկոսը:

Փաստորեն, 1970-1980-ական թվականների ընթացքում իսլամիստական շարժումը ստեղծում էր իր կրթված հակա-էլիտան ընդդեմ համրապետական էլիտայի, իսկ քաղաքական իսլամը դարձավ միջոց, որն արատանայտում է գոյություն ունեցող համակարգի հանդեպ գավառներում և տարբեր խմբերի ու խավերի քաղաքական դժգոհությունը: Այս կապակցությամբ բոլոր հայտնի հասարակագետ Բյուլենք Արսաղ-ճյում է, որ Թուրքիայում ընթանում է իսլամի բուրքական ձևի և բուրքական արգայնական գաղափարախոսության իսլամիզացման գործընթացը. «Կրոնի վերակենդանացման ժամանակաշրջանում, բուրքական պետության ընտրանին զգում է ճնշում՝ Օսմանյան շրջանում գոյություն ունեցող կրոնի և պետության միջև լեգիտիմացնող կապը վերականգնելու ուղղությամբ»<sup>8</sup>:

Այնուամենայնիվ, սխալ կլինի պնդել, որ քաղաքական իսլամի կարգախոսանքը Թուրքիայում օգտագործել և օգտագործում են միայն

խղամիտական կուսակցությունները: Այդ կարգախոսների տակ հանդես եկան և իրենց նպատակների են ձգտել հասնել թե՛ Թուրքոյթ Օզալի գլխավորած «Մայր-Հայրենիք» կուսակցությունը, թե՛ Մուլխյան Դեմիրելի և Թամառ Չիլլերի գլխավորած Եչմարլետ Ուլի կուսակցությունը, որոնք կառավարում էին երկիրը համապատասխանաբար 1980-ական և 1990-ական թվականների ընթացքում:

Այսպես, 1980-ականների սկզբին մի խումբ մտավորականների կողմից մշակվեց և գիմվորակամության կողմից ընդունվեց այսպես կոչված «բուրջ-խաճամական համադրության» գաղափարը, որը փորձ էր ներկայացնում համախմբել խղամիտների և ազգայնականներին: Այս հայեցակարգի հիմնադրույթը կայանում էր նրանում, որ խղամական ազդեցությունը, որն ընդգրկված է հասարակական և քաղաքական համակարգի մեջ, կարող է նպաստել երկրի տարածքային անբողոքականության սխալամեծացման և հակակշռել հեղափոխական տարրերին՝ հատկապես՝ քրդական երիտասարդության մեջ:

1980-ական թթ.-ին վարչապետ Թ. Օզալը մարդու իրավունքների և խղճի ազատության համատեքստում գնաց կրոնական գործունեությունը և կրոնական դարոցների տարածումը արգելող օրենքի վերացմանը: Արդյունքում ինամ-նաթիխները իրենց ցանցով ժամկեցին ամբողջ երկիրը, որի շրջամավայրոսները համալրում են խղամիտական կուսակցությունների շարքերը: Աճեց մզկիթների, մահմեդական երաստարակությունների քանակը երկրում: 1991թ. Ֆրեսկան օրենսգրքից վերացվեց 163 հոդվածը, որը սխալապես էր աշխարհիկ Հանրապետությունը «քաղաքական խղամից»:

Արդիականացման ընթացքը, ինչպես հայտնի է, 1980-ականներին արագացվեց Թուրքոյթ Օզալի կառավարության նախատեսմամբ ազատական բարեփոխումների շնորհիվ, ինչի հետևանքով Թուրքիան դարձավ կիսա-ազատական մի երկիր, որտեղ ամրապնդվել է շուկայական տնտեսությունը: Նման բարեփոխումները սովորաբար շատ ցավալի են անցնում զարգացող երկրներում, ուժեղացնելով սոցիալական բևեռացումը բարեփոխումներից շահածների և կորցրածների միջև: Ազատականացման քաջատական արդյունքը դարձան Թուրքիայում գործազուրկների քանակի կտրուկ աճը, կրթության և ստորջապահության ոլորտների վիճակի վատթարացումը: Ուղեկցվելով քրոնիկական դարձաց բարձր սղանով, պետական պաշտոնյաների կոռուպցիոնարությամբ և քաղաքական ճգնաժամներով այս զարգացումները տեղի ծեցին համատարած ավտանտության և բարոյալքվածության մթնոլորտ՝ հատկապես իշխող վերնախավի և արևմտյան արժեքների քարոզող և տաքիներով կառավարության ղեկը իրենց ձեռքերում պահող այսպես կոչված «աշխարհիկ» կուսակցությունների նկատմամբ:

Այս պայմաններում օրինաչափ էր իսլամի քաղաքական դերակատարման ուժեղացումը, հատկապես մի երկրում, որի քնակչության 99% մահմեդականներ են: Եվ իսլամի միասնականության գաղափարը կրկին դարձավ այլընտրանք աշխարհիկ և ժողովրդավարական քաղաքականությանը: Իսլամիստները նկան գրավելու կենտրոնամետ և ծախս կուսակցությունների տեղը, որոնք ձախողվեցին երկիրը տնտեսական բարեփոխումների ենթարկելու և քաղաքաքրման չքավոր խավերի և պահպանողական գյուղացիության համար հուսալի ապագա ստեղծելու գործում:

Բացի այդ, վերջին տասնամյակներում քուրդերը փորձ կատարեցին վերանայել իրենց տեղը ժամանակակից աշխարհակարգում: Մի կողմից, առկա էր Եվրոպայի մշտական քննադատությունը Թուրքիայի հասցեին՝ մարդու իրավունքների, ժողովրդավարացման, քրեական հարցի առնչությամբ: Ավելի, տևական քրեական խտուրտությունը երկրի հարավ-արևելքում և Թուրքիայի սահմանների մոտ ծագած ազգամիջյան հակամարտությունը (Բոսնիա, Կոսովո, Ղաբաթառ, Չեչնիա) ուժեղացրին երկրի ներսում քննաբնույթները «ազգային ինքնության» խնդրի շուրջ՝ արթնացնելով նաև կրոնական զգացումները, որոնք, անկասկած, օգնեցին իսլամիստական ուժերին:

Իսլամիստական կուսակցությունները համղես նկան որպես ուժեր, որոնք առաջարկեցին միջազգային քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների պարզագույն պատմական, հոգեբանական և մշակութային բացատրությունները՝ առաջարկելով նաև որոշակի մի նախագիծ, որը կարելի է անվանել «նեոօսմանիզմ», մինչդեռ ողջը հիմնական քաղաքական ուժերը աջակցում էին գլոբալիզացման կամ արևմտականացման հոսանքին: Հեռուարար, նրանք, ովքեր դեմ էին Արևմտաքի քաղաքականությանն ու արևմտյան շախմատիչների ներմուծմանը Թուրքիայում, ենարավորություն էին ստանում ներկայացնել իրենց պահանջներն ու շահերը իսլամական կուսակցությունների միջոցով: Այլ խոսքով, իսլամիստները շահագործում էին հասարակ քաղաքացիների վախերն ու անապահովությունը ինչպես մշակութային, այնպես էլ հասարակական-քաղաքական գլոբալիզացիոն պրոցեսների հանդեպ:

Իսլամիստական «Ռ-ԵՖ-Ես» կուսակցության անդամների քանակը 1990-ական թթ. սկզբին հասել էր գրեթե 2 մլն. հոգու: Հիմնվելով բողոքող զանգվածի վրա, որը, հոգնելով անընդհատ կառավարական ճգնաժամերից և կառավարությունների անգործությունից, քվեարկում էր իսլամիստների օգտին, այդեն 1994թ. տեղական կառավարման մարմինների ընտրություններում «Ռ-ԵՖ-Ես» հաղթանակ տոնեց 28 քաղաքապետարաններում, այդ թվում՝ Ստամբուլում և Անկարայում: Հաջորդ տարի կա-

յացած Թորքիայի Մեծ Ազգային ժողովի ընտրություններում «Ռեֆահլ» միանոց ժայնրի 21,4 տոկոսը՝ գրավելով առաջին տեղը:

Այստեղ կարելի է համաձայնել ամերիկյան քաղաքագետ Սեյմուր Լլինսթրի այն տեսակետի հետ, որ «հասարակական և տնտեսական արդիականացման գործընթացը պատճառ է դառնում անհատների կամ որոշ խմբերի տնտեսական զրկանքների, և նրանք սկսում են յուրազանց համակրել ժայռահեղ ազակողմյան կուսակցություններին»<sup>10</sup>:

«Ռեֆահլ» առաջարկեց «ազգայնականության» իր մեկնաբանությունը՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ ազգը պետք է քննազդվի իր մախարո՝ օսմանյան իմաստով՝ որպես «միջո» կրոնական համայնք: Այս շրջանակներում էլ առաջարկվում էր քրոյական խմբի լուծումը. քրդերն ու բուրքերը որպես մեկ համայնքի անդամներ կարող են զոյակցել կրոնական ներաշնակության մեջ<sup>11</sup>: Այս կարգախոսը ևս աշխատեց քազմաթիվ ընտրողների ժայնրը շահելու առումով: Հենց քրդական շրջաններում «Ռեֆահլ» առաջավ զգալի առավելություն աշխարհիկ կուսակցությունների նկատմամբ:

Մակբայն «Ռեֆահլ» գլխավորած կառավարության քաղաքականությունը հաճախ շփոթություն էր առաջացնում նրա ընկալման տեսանկյունից: Այն հայտարարում էր Արևմուտքի հետ Թորքիայի ռազմավարական դաշինքը պահպանելու քաղաքական զծի մասին, բայց միաժամանակ քակականին աշխուժորեն ցանում էր կապելու հաստատել մահնդական աշխարհի հետ: Այսպես, 1996թ. դեկտեմբերից էլրաքանը փորձեր էր կատարում ռազմական համաձայնագիր կնքել Իրանի հետ, ապա կուսակցությունը ձևոնամոխ եղավ կանանց գլխաշորով համայնարաններ մուտք գործելու արգելքը հանելու մախոսնությունը<sup>12</sup>:

Այս հակասական քաղաքականությունը, հատկապես կուսակցության որոշ պաշտոնյաների կողմից արված հրահրիկ հայտարարությունները, երբ, մասնավորապես, Սիմզանի ռեֆահլական քաղաքապետը Իրանի դեսպանի ներկայությամբ կոչ արեց իրանական հեղափոխության մնամ մի ապստամբության, երուսաղեմի ազատագրման և մեծարեց Հեզրոլահի ա Համասի «մահապարտներին»<sup>13</sup>, հանգեցրին զինվորականության վճռական քայերին, որը ստիպված էր փաստացիորեն վերադառնալ 1980-83թթ. իր կատարած վերահսկիչ գործառույթներին՝ աբաբյուրքիատական ուղերձը պաշտպանելու պատրվակով:

1997թ. փետրվարի 28-ին Ազգային Անվտանգության խորհուրդը, երկրի փաստացի զերագույն իշխանությունը, որչաեց «խորհուրդ տալ» կառավարությանը առ այն, որ երկրի ազգային համախմբման առաջնահերթ սաբառնալիքն ալրև հանդիսանում է ոչ թե քրդական PKK-ն, ալլ իսլամական արժատականներն ու նրանց արուաքին աբակիցները: ԱՄՆ-ն հարկադրեց վարչապետին ստորագրել 20 պարտավորություններ պա-

բունակող մի հանձնարարական, որի մեջ մտնում էին հազուատի կրման հետ կապված օրենքների պահպանումը, սուֆիական եղբայրությունների արգելումը, իսլամիստական ուժերի կողմից որոշ գործողությունների սահմանափակումը, Իրանի կողմից Թուրքիան ապակայունացելու փորձերին ուղադիր հետևումը և այլն<sup>14</sup>։ Էրբաքանի համար դա հավասարագոր էր ուղղափառ արաբալուրդիստական ուղերձի քնդումնամը։

Այս ճնշմանը գտնարվեցին «Ռեֆահի» և Ղչմարիտ Ուղու կուսակցության միջև ներքին տարածայնությունները, ինչպես նաև ներքին քաղաքականության մեջ, հատկապես՝ տնտեսական ոլորտում Էրբաքանի առաջարկված իսլամիստական օրակարգում գտնվող որևէ նպատակի չիքակնացված մնալը։ 1997թ. գարնանը պարզ դարձավ, որ կառավարությունն ի վիճակի չէ կատարել ԱՄՆ-ի հանձնարարականները։ Չինվորական վերնախավը, ընդդիմադիր կուսակցությունները, արհմիությունները և տնտեսական ընտրանին փաստորեն միացան Ռեֆահի և ՏՈՒԿ-ի կողմից խալի դեմ։ Վերջապես, 1997թ. հունիսի 18-ին Նեջմեթին Էրբաքանը հրաժարական ներկայացրեց, իսկ կես տարի անց, 1998թ. հունվարի 16-ին Թուրքիայի Հանրապետության Սահմանադրական դատարանը Հանրապետության լսիցիստական կարգերի դեմ ուղղված գործողությունների համար լուծարեց «Ռեֆահի» կուսակցությունը և արգելեց նրա առաջնորդ Ն. Էրբաքանին հինգ տարվա ընթացքում զբաղվել քաղաքական գործունեությամբ։ «Բարօրության» կառույցների հիմքի վրա նույն թվականի աշնանը առեղծվեց «Նազիլեթ» («Առաջնություն») կուսակցությունը Ռեֆահի Զուրանի գլխավորությամբ, որը 1999թ. ապրիլին կայացած խորհրդարանական ընտրություններում ստացավ ձայների 15 տոկոսը՝ լինելով երրորդ և գլխավոր ընդդիմադիր խմբակցությունը մեջլիսում։

Մակայն շարժման ներքում արդեն հասունացել էր ճգնաժամ՝ կապված նրա լիցերության խնդրի հետ։ Փաստորեն 1970թ.-ի-ց ի վեր Էրբաքանը մնում էր իսլամիստական շարժման անփոխարինելի առաջնորդ, որին ոչ ոք չէր համարձակվում մարտահրավեր նետել։ Նրան մույնիսկ անվանում էին «Հոջա» (Ուսուցիչ, առաջնորդ), իսկ կուսակցական հավաքներին նրա կողմնակիցները հաճախ վանկարկում էին, որ «այստեղ հավաքված է մի ամբողջ բանակ, իսկ Էրբաքանը նրա հրամանատարն է»<sup>15</sup>։

Բայց 1990-ականների վերջին շարժման մեջ առաջ եկան երկու քևեր, որոնցից մեկը ներկայացնում էր պայմանականորեն պահպանողականներին կամ Էրբաքանի կողմնակիցներին, մյուսը՝ քարեխոխականներին (այն ժամանակ Սուամբուլի քաղաքապետ Թայլի Էրդուանը, Արդուլահ Գյուլը, Ալի Ջոշկունը)։ Վերջիններս 1999թ. հուլիսին հայտադրեցին Նազիլեթ կուսակցությունից իրենց դուրս գալու մասին և

2000թ. հիմնադրեցին «Արադեք վե Կալքրնմա» (AKP՝ «Արդարություն և Բարգավաճում») նոր կուսակցությունը՝ Ստամբուլի մախկին քաղաքացիա թայրի Էրդողանի գլխավորությամբ: «Նազիլեք» կուսակցության գործունեության արգելումը Սահմանադրական դատարանի կողմից առավել ևս խթանեց իրամիաստական շարժման պատակտումը: Էրդողանի կուսակցությունն արագորեն համարվեց նոր անդամներով, իսկ միացած մասը խմբավորվեց «Երբբանկություն» (Saadet) կուսակցության մեջ:

2002թ. նոյեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններում AKP-ն շահեց ձայների 34 տոկոսը և 550 պատգամավորական տեղից ստացավ 363՝ առաջին անգամ վերջին 15 տարվա ապահովելով թուրքական խորհրդարանում մեկ քաղաքական ուժի քացարձակ մեծամասնությունը:

Այս հաջողությունը ունեի որոշակի խորքային պատճառներ: Նախ, AKP-ն մասնակից չի եղել վերջին տասնամյակի քաղաքական կյանքին, հետևաբար պատահաբանաբար չէր առկա տնտեսական և քաղաքական ձայնողությունների համար, ինչն էլ ապահովեց կուսակցության ժողովրդականության այդպիսի տոկոսը:

Թեև AKP-ն ուներ իսլամիստական կուսակցության հանրավ, սակայն նրա առաջնորդները ամեն կերպ փորձում էին անբացուցիչ հսկանակց: Նմանապես վարչապետ թայրի Էրդողանին մեղադրում էին «թաքնված իսլամիստ» լինելու մեջ, ինքն իրեն ջանում էր ներկայացնել «պահպանողական դեմոկրատի» կերպարանով<sup>16</sup>: AKP-ն զերծ է մնում քաջահայտ իսլամիստական կոչերից, կասկածի տակ չի դնում Հանրապետության աշխարհիկ կարգերը: Սակայն որոշ թուրք վերլուծաբաններ կարծում են, որ AKP-ի յափավորական ճարտասանությունը գուտ քող է, և այս կուսակցությունը քիչ քանով է տարբերվում մախրոլ իսլամիստական կուսակցություններից<sup>17</sup>:

Միչա է, որ թե՛ Էրդողանը, թե՛ կուսակցության մյուս լիդերները իրենց քաղաքական կրթությունն ու մկրտությունը ստացել են իսլամիստական շարժման ներսում: Եվ «Բարբորություն» և «Արդարություն և Բարգավաճում» կուսակցությունների միջև առկա են ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Երկուսն էլ վարպետորեն օգտագործեցին պոպուլիստական կարգախոսները, տնտեսական դժվարությունները և աջ ու ձախ քաղաքական ճամբարներում տիրող պատակտունները, ինչպես նաև իշխող վերնախավի կոռուպցիայի և ծախսերի մեղադրանքները՝ արդյունքում նվաճելով ընտրազանգվածի համակրանքը: Այսպես, Ն. Էրբասանը շահեց 1995թ. ընտրությունները՝ օգտագործելով ուռույթիկան և ամբոխավարական գաղափարներ՝ այսպես կոչված «աբդար հասարակության» տեղծում, ազգային եկամտի վերաբաշխում, մահմեդական երկրների հետ սահմանների քացում, մահմեդական

չուկա, որի շնորհիվ երկրում չի մնա ոչ մի գործազուրկ և ոչ մի սոված, վերջ կտրվի ահաբեկչությանը, և ազգը կհասնի բարօրության<sup>18</sup>։

ԱԿՔ-ն էլ իշխամության եկավ «տնտեսական վերելքը սկսելու, եկամտունքի բաշխման մեջ չարաշահումները վերացնելու, ընչազրկությունը վերացնելու» խոստումներով<sup>19</sup>։

Մակայն ԱԿՔ-ի թե՛ ընտրական ուղերձը, թե՛ ազակիցների հիմքը որոշակիորեն տարբերվում են իսլամիստական շարժման ուղերձներից և բազայից։ Կուսակցության բոլոր ընտրողները չէ, որ կհաում են իսլամիստական հայացքները կամ գաղափարները։ Հենց ԱԿՔ-ի չափավորական, ոչ առճակատման քաղաքական գիծը բայլ տվեց իր կողմը գրավել ընտրագանգվածի տարրեր խավերին՝ ներատյալ ինչպես իսկական իսլամիստներին, այնպես էլ քաղաքարմակ մոսավորականներին և գործաքարներին։

Այսպես, հարկ է նշել, որ եթե «Ռեֆահը» ձգտում էր վերականգնել քեմալիզմի կողմից ոչնչացված պետության և կրոնի միջև կապը, ապա ԱԿՔ-ի ծրագրում նշվում է, որ «կուսակցությունը համոզես է գալիս Թուրքիայի Հանրապետության ամբողջականության և միասնության, աշխարհիկ, դեմոկրատական, սոցիալական և իրավական պետության, քաղաքացիական հասարակության, ժողովրդավարացման, խղճի ազատության և հավասար հնարավորությունների հիմնարար սկզբունքների դիրքերից»<sup>20</sup>։ Արդիական քաղաքակրթությունը հռչակվում է որպես Թուրքիայի զարգացման չափանիշ։ Իսկ որպես այդ քաղաքակրթության հիմք ընդունվում են մարդու հիմնարար ազատություններն ու իրավունքները։ Ենչտվում է, որ «ե՛ր կուսակցությունը դիտում է Արաբյուրքի սկզբունքներն ու ե՛րափոխությունը որպես միջոց բուրքական հասարակությունը ժամանակակից քաղաքակրթության մակարդակին հասցնելու գործում»<sup>21</sup>։ Այսինքն, որոշ առումով ԱԲԿ-ն մուսլիսկ որդեգրել էր արաբյուրքիստական քաղաքական փոխափայությունը։

Արտաքին քաղաքականության մեջ ԱԿՔ-ի ծրագրային դրույթները ևս որոշակիորեն տարբերվում էին նախորդ իսլամիստական օրակարգից։ Եթե «Ռեֆահը» արտաքին քաղաքականության ոլորտում հայտաբարում էր Արևմուտքի կողմից հռչակված «ենթ աշխարհակարգը» շրջադառնելու մասին (քանի որ այն, օրինակ, ունի տարրեր ստանդարտներ մահմադական Իրաքի ազդեխայի և քրիստոնեական Հայաստանի և Սերբիայի ազդեխաների դեպքում)<sup>22</sup>, ինչպես նաև փորձ կատարվեց փոխել նրա ուղիվածությունը դեպի արևելյան պետություններ, ինչի վկայություններն էին վարչապետ Ն.Էրբաքանի այցերը Իրան, Լիբիա, Պակիստան<sup>23</sup>, ապա Թ.Էրդողանի քաղաքական գիծը հենց սկզբից ակտիվ էր եվրոպական և ամերիկյան ուղղությամբ։ Այսպես, կուսակցությունը համարում է, որ երկրի արտաքին քաղաքականության օրակարգում ա-



ուսման հետք են հարաբերությունները Եվրոպայի երկրների հետ և Թուրքիան պետք է կատարի Եվրամիության մեջ անդամագրվելու համար իրեն ներկայացրած արարտավորությունները: Միևնույն ժամանակ երկիրը պետք է շարունակի իր ցանքերը գործադրել ԵԱՏՕ-ի շրջանակներում, ինչպես նաև եվրոպական անվտանգության այլ կառույցներում պատասխանատու դեր կատարելու ուղղությամբ: Ինչ վերաբերվում է մանուկական երկրների հետ Թուրքիայի հարաբերություններին, ապա AKP-ն դրանք հատուկ կարևորում է՝ դիտելով Թուրքիային որպես կապող օղակ կամ կամուրջ Արևմուտքի և Արևելքի միջև<sup>24</sup>:

Բացի այդ, չի կարելի AKP-ն լիովին համարել Ռեֆանից դուրս եկած կուսակցություն, քանզի վերջին տարվա մեջ այն համալրվել է աջակցողներով կուսակցություններից դուրս եկած քաղաքական գործիչներով, ինչը տեղեղում է բուն AKP-ի ներսում քաղաքականություն և աստանում կուռ գաղտնիարախտական հենքը:

AKP-ի հաղթանակն իր հիմքում ունի նաև հետևյալ պատճառը. հանրապետության և ժողովրդավարական իրավական պետության կադապարի միջև գոյություն ունի միայն ձևական կապ: Հայ բուրջագետ Ռ.Սաֆրաստյանն արդարացիորեն նշում է, որ AKP-ի հաղթանակը Թուրքիայում կառուցվածքային ճգնաժամի արդյունք է, երբ երկիրը գտնվում էր տնտեսական փտախտի մեջ. «Քաղաքական համակարգը չէր համապատասխանում տնտեսական վիճակին, և այդ համակարգը պետք է քանդվեր»<sup>25</sup>:

Մյուս կարևոր է ավելացնել, որ այս հաղթանակը հետևանք էր նաև արդիականացման պահանջների և սուկա քաղաքական համակարգի միջև անհամապատասխանությանը: Այդ համակարգը առեղծվել էր փաստորեն 1980թ. զինվորական հեղաշրջման արդյունքում և նրա օրենսդրական, կառավարական և քաղաքական տարրերը կրում էին այդ ժամանակաշրջանի դրոշմը:

Հենց AKP-ի հիմնադրար ծրագրում արդեն առաջընթացներ են արվում երկրում քաղաքական արդիականացման ուղղությամբ: Այսպես, որպես օրակարգի խնդիր է հռչակվում քաղաքական կուսակցությունների մասին օրենքի փոփոխությունը՝ այն հարմարեցնելով ժողովրդավարության պահանջներին, իսկ կուսակցությունների արգելման մասին որոշումները առաջարկվում է ասուհետ կայացնել Եվրոպայի մարդու իրավունքների դատարանի և Վենետիկի համաձայնողովի համապատասխան դրույթներին համապատասխան<sup>26</sup>:

Առաջարկվում է նաև փոփոխությունների ենթարկել ընտրությունների մասին օրենքը՝ հարմարեցնելով այն մարդու ազատությունների և իրավունքների հիմնարար փաստաթղթերին: Մասնավորապես, իջեցնել պատգամավոր ընտրվելու համար պահանջվող տարիքը մինչև 25 տա-



րեկան և կիրառել կուսակցությունների ներսում մախնական ընտրությունների համակարգը:

ԱԿՔ-ն ուղղակիորեն հայտարարում է, որ կոչված է «Թուրքիայի քաղաքականության մեջ ընդել նոր պատկերացումներ»: Կուսակցության մյաւտակներէից մեկն է հայտարարվում երկրի քաղաքական կյանքում քնակչության մասնակցության աստիճանի մեծացումը, այն է՝ լայնորեն օգտագործել ժողովրդի համագործակցութեան իրավունքը<sup>27</sup>:

ԱԿՔ-ն մերժում է մինչ այդ կիրառվող բյուրոկրատական ավտորիտար պետության հասկացության վրա հիմնված լուծումները և առաջ է քաշում «սահմանադրական պետության» հասկացությունը, որը հարկը է ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի զարգացմանը<sup>28</sup>:

ԱԿՔ-ն առաջարկում է մահ ԱՄԽ-ին դարձնել ժողովրդավարական պետությանը համարժեք և Եվրոպական Միության չափանիշներին համապատասխան պետական մարմին<sup>29</sup>:

Ըստ էության, այսօր իրավիճակը Թուրքիայում որոշակի փոխություններ է կրել. ըստակը, որը Աքաբյուրքի քաղաքական փոխադասության պահասպան իրեն հոչակելով, մշտապես համոզու էր զաղիս որպես Թուրքիայի արդիականացման առաջատար ուժ, այսօր դառնում է դրա հետագա ընթացքի հիմնական ընդդիմախոսը, իսկ երկրի արևմտյան տիպի արդիականացմանը ընդդիմադիր իսլամիստական Բարքորություն կուսակցությունից ծնված քաղաքական նոր կուսակցությունը դարձել է առջ գործընթացի և երկրում կրոնական և քաղաքական փոխադարձ համոզութողականության և քաղմակարծության զատագույլը:

Քաղաքական իսլամի հաջողությունը, ինչպես մահ երկրի ներքին տևական ճգնաժամը ստիպում են համաձայնել ամերիկյան քաղաքագետ Բարի Ռուրիմի այն տեսակետի հետ, որ Թուրքիան չկարողացավ մինչ օրս դառնալ Եվրոպայի մաս այն պատճառով, որ Քեմալ Աքաբյուրքի և նրա հետնորդների նպատակը՝ ստեղծել Թուրքիայում արևմտյան հասարակություններին հատուկ աշխարհիկ մոդելը, ծախսողից<sup>30</sup>:

Միևնայն ժամանակ պետք է նշել, որ թուրքական իսլամիստական շարժումը ինքը միատարր չէ, և նրա մեծ մասը բողոքովին էլ իսլամական ենդափոխության կամ քիհառի զատագույլ չեն: Այդ սրատճառով Ռուրիմը դատակարգում է թուրքական իսլամիստական շարժումը այն շարժումների շարքին, որոնք համոզեամու են ավելի շուտ քարեփոխական, քան թե արմատական՝ զամալով գործել որպես «ճնշման խմբեր» հասարակությունն ավելի իսլամական դարձնելու, այլ ոչ թե այն անբողջովին փոխելու առումով<sup>31</sup>:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումների գալ:

ա/ Իսլամիզմի առաքացումը և զարգացումը ժամանակակից թուրքիայում տեղի է ունեցել որպես պատասխան երկրում սոցիալական, քաղաքական և տնտեսական դժգոհությունների, ճեխադատ օտար ազդեցությունների, ուրբանիզացման, արդիականացման և լսիցիլացման նկատմամբ:

բ/ Թուրքիայում իսլամիստական շարժումը գերադասեց գնալ ոչ քե բռնության, այլ պարզամեծական ժողովրդավարության ճանապարհով, քանզի այս ճանապարհը քույլ էր տալիս օրինական ձևով գալ իշխանության, իրականացնել օրենսդրական փափոխություններ, ազդել ուրշումների կայացման վրա, ազատորեն օգտվել ռեսուրսներից, որոնց միջոցով հնարավոր էլիներ պարարտ հող ստեղծել երիտասարդ իսլամիստական հոսանքի ձևավորման համար: Դժամով, փաստորեն, իսլամիստները կիրառում են իրենց կողմից քննադատվող Արևմուտքի քաղաքականության ձևերը: 1970-ական թթ.-ից ի վեր երկրի քաղաքական զարգացումը վկայում է, որ իսլամիստական կուսակցությունը՝ տաքքեր ամվանումների տակ, մշտապես եղել է առկա քաղաքական համակարգի մասը, և չի փորձել դիմել որևէ ծայրահեղական քայլերի անգամ ամօրինական հայտարարվելու դեպքում: Ակնհայտ է, որ իսլամիստական շարժումը Թուրքիայում ընդունում է խաղի կանոնները, բոլոր իսլամիստական կուսակցությունները ձգտել են ապացուցել, որ իրենք լեգիտիմ, «համակարգային», այլ ոչ քե ծայրահեղական, տոտալիտար ուժ են, որը ընդունելի էլինի քե՝ երկրի իշխող վերնախավի, քե՝ ամբողջ հանրության համար:

գ/ Թուրքիայի դեպքը ցույց է տալիս, որ իշխանության եկած իսլամական կուսակցությունը չունի գործողությունների լայն դաշտ, և նրա ցանկացած մախսձեռնություն կարող է խափանվել պետության մեջ հաստատված համակարգի և նրա կառավարող ընտրամու (տվյալ դեպքում՝ զինվորականության) կողմից, ինչը, իր հերթին, փարկարեկում է այդ կուսակցությանը սեփական ընտրազանգվածի այցերում: Թերևս երկրում զինվորականության և արմտյան արժեքներ դավանող քաղաքական, տնտեսական և մտավոչական ընտրամու առկայությունը և քաղաքական համակարգի առանձնահատկությունները քույլ են տալիս պնդելու, որ տեսանելի ապագայում քաղաքական իսլամը Թուրքիայում հնարավորություն չի ունենա երկիրը փանելու դեպի իսկապես շարխաքական կարգեր:

դ/ Իսլամական քաղաքական հոսանքի պատասխանը արդիականացմանը չի նշանակում ամպայման ժողովրդավարության ձևերի նկատմամբ անհանդուրժողականություն: Անգամ կարծի իսլամական վարչակարգ ունեցող այսպիսի երկրում, ինչպիսին Իրանն է, առկա են ժողովրդավարական նրանակով ընտրված պետական իշխանություն-

ներ: Եվ հենց նույն թուրքիան կարող է օրինակ ծառայել, քե ինչպես իսլամական կուսակցությունը կարող է խաղաղ կերպով, խորհրդարանական ճանապարհով իշխանության գալ՝ օգտվելով ժողովրդավարության կողմից ղեկավարված հնարավորություններից: Դրանով որոշ առումով ապացուցվեց, որ քաղաքական իսլամը՝ հակաժողովրդավարական երևույթ չէ: Փաստորեն, Արդարություն և Բարգավաճում կուսակցության կառավարումը յուրատեսակ փորձարկում է, քե արդյո՞ք հնարավոր է արդիականացման և իսլամի, ժողովրդավարության և իսլամական գաղափարների և քաղաքական համակարգի համադրություն: Թեև երկրի առջև ծառայած տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները լուծելու անկախության դեպքում, չի բացառվում, որ AKP-ն կսկսի խաղաղ կել կրոնական խաղաբուրքը, ինչը իր հերթին կրերի գիմվորականության համարժեք արձագանքին:

Ե/ Բացի երկրի ներքին արդիականացումից քաղաքական իսլամը քախվում է մաև ժամանակակից աշխարհում և տարածաշրջանում ըմբացող արդիականացման կամ, արդեն հայտնի «գլոբալիզացիա» հասկացությամբ բնութագրվող գործընթացի հետ, որը քաղաքական մակարդակում նշանակում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների մերձեցում Արևմուտքի և նրա քաղաքակրթական, քաղաքական և մշակութային արժեքների հետ: Փաստորեն, այն պատասխանից, որը քաղաքական իսլամը պատրաստ է տալ այս երևույթներին կախված է մաև թուրքիայի մասնակցությունն ու մրցումակությունը այսօրվա աշխարհում:

SUREN BAGHDASARYAN

#### TO THE ISSUE OF THE PROCESS OF MODERNIZATION AND THE ROLE OF POLITICAL ISLAM IN TURKEY (1970-2000S)

In the paper there is presented an issue of the interrelationship of political life and the Islamist political movement in modern Turkey. There are discussed the problems of the Islamism concept and performance in the Middle Eastern region, its relation to the modernization process and the Western values, the roots, development and achievements of the Islamist movement in Turkey, especially in the context of the latest successes of the Islamists in 1990s, the issue of the basis and causes of the Turkish political Islam uprising, as well as the peculiarities of the Islamist movement in 1970-2000s, when the political Islam in Turkey reached its influence top. Particularly, there is given the comparative analysis of "Refah" and AKP movements concepts and policies. In the end of the paper the author made conclusions about the Turkish political Islam role in the Turkey's politics, its relation to the process of modernization as a main trend of the Turkish life, as well as the models of future developments in these processes for Turkey and the Middle Eastern region.

1. Ali R. Abotoalebi, Islam, Islamists, and Democracy. – MERIA Journal, Volume 3, No. 1 - March 1999, [www.meria.org](http://www.meria.org)
2. Samuel Huntington, "Will More Countries Become Democratic?," Political Science Quarterly, N 99, Summer 1994, pp.193-218.
3. Թարգմանում 1920-1960-ական թթ.-ին իսլամի և քաղաքականության միջև հարաբերությունների պատմության մասին տես P.Ո.Քոստակոս, Կրթությունը և քաղաքականությունը և Իսլամ, Երևան, 1983.
4. Samuel Huntington, Clash of Civilizations - "Foreign Affairs", Fall 1993, N 3, p. 15
5. Ibidem, p. 15
6. Ersin Kalaycioglu, The Logic of Contemporary Turkish Politics – "Perceptions", Volume 1, No. 3, September 1997, [www.mfa.tr/perceptions](http://www.mfa.tr/perceptions)
7. Այդ դպրոցների բազմաթիվ շրջանավարտներ 1980-ական թթ.-ին միայն իսլամիզացիայի շարժումը, այդ թվում Ստամբուլի ապագա քաղաքապետ և Թուրքիայի ապագա վարչապետ Ռեֆիկ Թայյիբ Էրդոգանը:
8. Roundtable: Kemal Kirisci and Bulent Aras, "Four Questions on Recent Turkish Politics and Foreign Policy" - MERIA Journal, Volume 2, No. 1 - March 1998, [www.meria.org](http://www.meria.org)
9. Binnaz Toprak, "Religion as State Ideology in a Secular Setting: The Turkish-Islamic Synthesis" in Malcolm Wagstaff (ed.), Aspects of Religion in Secular Turkey, University of Durham, Center for Middle Eastern and Islamic Studies, Occasional Paper Series No. 40, 1990, pp. 10-15)), p. 10, [www.meria.org](http://www.meria.org)
10. Seymour M. Lipset, Political Man: The Social Bases of Politics, New York, 1960, pp. 131-134.
11. Ersin Kalaycioglu, The Logic of Contemporary Turkish Politics – "Perceptions", Volume 1, No. 3, September 1997, [www.mfa.tr/perceptions](http://www.mfa.tr/perceptions)
12. Ersin Kalaycioglu, The Logic of Contemporary Turkish Politics – "Perceptions", Volume 1, No. 3, September 1997, [www.mfa.tr/perceptions](http://www.mfa.tr/perceptions)
13. Alan Makovsky, Erbakan on the Ropes - Policywatch, Number 239, March 12, 1997, [www.policywatch.org](http://www.policywatch.org)
14. Rusen Cakir, Ne Seriat Ne Demokrasi: Refah Partisini Anlamak, Istanbul, 1994, s. 156
15. Hürriyet, 4.11.2002
16. Soner Cagaptay, November Elections in Turkey, Policywatch, Number 663, September 25, 2002, [www.policywatch.org](http://www.policywatch.org)
17. Այստեղից էլ էրբաքանի կուսակցության "Refah" ("Բարօրություն") անվանումը, Hürriyet, 14.05.1994
18. [www.akp.tr](http://www.akp.tr).
19. [www.akp.tr](http://www.akp.tr).
20. [www.akp.tr](http://www.akp.tr)
21. Milliet, 15.02.1996
22. Ersin Kalaycioglu, The Logic of Contemporary Turkish Politics – "Perceptions", Volume 1, No. 3, September 1997, [www.mfa.tr/perceptions](http://www.mfa.tr/perceptions)

23. [www.akp.tr](http://www.akp.tr)
24. [www.akp.tr](http://www.akp.tr)
25. Ութին Սափրատյան, «Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեղներ ստեղծել հարևանների միջև...», Երևան, 2003, էջ 47:
26. [www.akp.tr](http://www.akp.tr)
27. [www.akp.tr](http://www.akp.tr)
28. [www.akp.tr](http://www.akp.tr)
29. [www.akp.tr](http://www.akp.tr)
30. Barry Rubin, The Triumph of the "Old Middle East" – MERIA Journal, Volume 6, No. 2 - June 2002, [www.meria.org](http://www.meria.org)
31. Barry Rubin, "Islamic Radicalism in the Middle East: a Survey and Balance Sheet" - MERIA Journal, Volume 2, No. 1 - May 1998, [www.meria.org](http://www.meria.org)

## ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

### ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ԻՐԱՔԱ-ԻՐԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1980-1988թթ.)

XX դարի 70-ականների վերջին և 80-ականների սկզբին արաբական աշխարհը հանդիպեց լուրջ դժվարությունների: Արտաքին քաղաքականության բնագավառում համագործակցության անհրաժեշտությունը խոչընդոտվում էր արաբական աշխարհի սոցիալ-քաղաքական միատարր շինելու հանգամանքով, տնտեսության անհամաչափ զարգացածությամբ, տեղական ազգայնականության աճի, կրոնադավանական ու գաղափարաբանական հակասությունների և այլ պատճառներով: Խոչընդոտների շարքում ոչ պակաս կարևոր տեղ էին զբաղեցնում արաբական ղեկավարների մրցակցությունը և միմյանց հանդեպ գոյություն ունեցող անհամադրժողականությունը:

Տարիներ շարունակ Իսրայելին հակադրող արաբական երկրների շարքում կարևորագույն տեղ էր զբաղեցնում Եգիպտոսը: Սակայն Մաեհամեդ Ամվար Սադատի նախագահության շրջանում 1978թ. սեպտեմբերին ստորագրված Զեմի-Դևիդի համաձայնագրի, այնուհետև 1979թ.<sup>1</sup> մարտին Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագրի ստորագրման հետևանքով Կահիրեն կորցրեց իր այդ դերը: Ավելին, Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) անդամ երկրների 1978թ. նոյեմբերին և 1979թ. մարտին Բաղդադում կազմակերպված հանդիպումներին արաբական երկրները դատապարտեցին Եգիպտոսի արտաքին քաղաքական ուղղելիքը և որոշեցին սառեցնել նրա ամրամակցությունը ԱՊԼ-ում<sup>2</sup>: Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 1979թ. մայիսին Ֆեհում հրավիրված հանդիպմանը նույնպես որոշվեց սառեցնել Եգիպտոսի ամրամակցությունը այդ կազմակերպությունում<sup>3</sup>: Արաբական բոլոր երկրները, բացի Օմանից, Մուղանից և Սոմալիից, ետ կանչեցին իրենց դեսպաններին Կահիրեից: Եգիպտոսը զրկվեց մաև մավր արյունաքերոզ արաբական երկրների կողմից տրամադրվող տարեկան 2,7 մլրդ. դոլար օգնությունից, իսկ ԱՊԼ-ի գրասենյակը Կահիրեից տեղափոխվեց Թունիս<sup>4</sup>: Արաբական աշխարհում Եգիպտոսը հայտնվեց մեկուսացման մեջ:

1980թ. սեպտեմբերի 22-ին՝ սկսվեց իրացա-իրանյան պատերազմը, որը նպաստեց տարածաշրջանում Եզիպտոսի տեղի և դերի վերականգնմանը, ու նրա համար վերադարձի ճանապարհի հարթեց դիպի «արարական ընտանիք»։ Իրացյան զորքերը ներխուժել էին Իրան, երբ վերջինս հրաժարվել էր կատարել 1975թ. Բաղդադում ստորագրված իրացա-իրանյան համաձայնագրի պայմանները<sup>5</sup>։ 1975թ. մարտի 6-ին Ալ-ժիրում Իրանի շահ Ռեզա Փևիշվիհն և Սադդամ Հուսեյնը (այն ժամանակ պաշտոնապես դեռ երկրորդ մարտը Իրացում) Ալժիրի մախազահ Հուսրի Թուհեյնեհի ներկայությամբ ստորագրել էին ալժիրյան հռչակագիրը<sup>6</sup>։ Համաձայն հռչակագրի պայմանների, երկու երկրների միջև սահմանը անցնում էր Շատ-ալ-Արաբի գետահովտով (տալվեզ), Իրանը դադարեցնում էր օգնություն ցույց տալ Իրացում իշխանության դեմ պայքարող ջրղերին, իսկ Իրացը՝ պարտավորվում էր արտաքսել երկրից Իրանի իշխանությունների դեմ գործող ընդդիմությանը, այդ թվում նաև Իմամ Խոմեյնիին։ Հետագայում, 1975թ. հունիսի 13-ին ստորագրված երկու երկրների միջև Բաղդադի պայմանագրի հիմքում դրվել էին ալժիրյան հռչակագրի պայմանները մի տարբերությամբ, որ ավելացվել էր նաև Իրացի պահանջը իրեն հանձնել իրացա-իրանյան սահմանամերձ մի տարածք<sup>7</sup>։ 1980թ. սեպտեմբերի 7-ին Իրացը Իրանից պահանջել էր 1975թ. Բաղդադի պայմանագրի համաձայն իրեն հանձնել սահմանամերձ տարածքը։ Ի պատասխան Իրանի մերժման, իրացյան կողմը մախազահ տեղյակ պահելով Բաղդադում Իրանի ղեկավարությանը, սկսել էր այն զբաղեցնելու գործողությունները, որն ավարտվել էր սեպտեմբերի 16-ին, իսկ 17-ին Իրացը շեղյալ էր հայտարարել ալժիրյան հռչակագիրը և Բաղդադի պայմանագիրը։ Նույն օրը Իրացը փակել էր Իրանի նավերի մուտքը Շատ-ալ-Արաբ։

Իրացի ղեկավարությունը հայտարարել էր, թե Իրանի դեմ պատերազմելով պաշտպանում է ողջ արաբական ազգի շահերը<sup>8</sup> և խոչընդոտում է իսլամական հեղափոխությունը արաբական աշխարհի արտահանելու Թեհրանի փորձերին։ Իրացը նկրտումներ ուներ ոչ միայն Օսգի շրջանում, այլ նաև ողջ արաբական աշխարհում<sup>9</sup> մասնավաճեց, երբ Եզիպտոսի մեծան հզոր պետությունը արաբական աշխարհում գտնվում էր «մեկուսացման» մեջ։

1980թ. սեպտեմբերի 28-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը (ԱԽ) ընդունեց 479 բանաձևը՝ պահանջելով կողմերից անհապաղ դադարեցնել կրակը և բանակցությունների շուրջ մտախել։ Իրացը միակողմանի ձևով դադարեցրեց կրակը հոկտեմբերի 5-8-ը, սակայն պատերազմը դարձյալ վերակալեց։ Պետք է նշել, որ ողջ պատերազմի ընթացքում Իրացը մի քանի անգամ պատրաստակամություն էր հայտնել դադարեցնել կրակը և բանակցել Իրանի հետ։ Բայց Թեհրանը չէր ցանկանում

որևէ զիջման գնալ: Երկու երկրների ղեկավարների միջև քչամամնջը այնքան մեծ էր, որ նույնիսկ, երբ 1982թ. ամռանը Մոզի աջարական երկրների համագործակցության խորհրդի (ՄԱԵՀԽ) անդամ երկրները Իրանին 25 մլրդ դոլար փոխհատուցում խտտացան, երե վերջինս դադարեցնելու պատերազմը, Խոմենին պահանջեց նախ դատի տալ Սադդամին, այնուհետև վճարել Իրանին 150-160 մլրդ դոլար<sup>10</sup>:

Պատերազմի սկզբում, 1980թ. աշնանը, ԽՍՀՄ-ը կոչ արեց դադարեցնել անիմատո աշյունահեղությունը<sup>11</sup>, սակայն 1982թ.-ից սկսեց զենք մատակարարել Իրաքին<sup>12</sup>: Պատերազմի հանդեպ ԱՄՆ-ի դիրքորոշման մասին լավագույն սահմանումը տվել է նախկին պետարտուղար Հենրի Բիտինջերը. «Ախտո, որ պատերազմում չեմ կարող պարտություն կրել ոչ Իրաքը, ոչ Իրանը»<sup>13</sup>:

Չնայած Վաշինգտոնի կողմից արված շեղորոշյան մասին հայտարարությանը, 1984թ. նոյեմբերին, երբ վերականգնվեցին 1967թ. խաթարված իրաքա-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունները, ԱՄՆ-ը սկսեց զենք մատակարարել Իրաքին<sup>14</sup>:

1980թ. նոյեմբերին Ամմանում (Հորդանան) տեղի ունեցած արաթական երկրների ղեկավարների հանդիպմանը շնագողվեց ընդհանուր հայտարարի գալ՝ Իրաքին համաարաթական աջակցություն ցույց տալու հարցում<sup>15</sup>: Արդյունքում Արաթական աշխարհը պատակտվեց մի քանի բևեռի. Հորդանանը, Սաուդյան Արաթիան, Մաթոկկոն, Քուվեյթը, Կատարը, Բահրեյնը սատարեցին Իրաքին:

Ալժիրը, Թունիսը և Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությանը՝ (ՊԱԿ) չեզոք դիրքորոշում գրաղեցրեցին: Միլիան, Լիբիան, Արաթական Միացյալ Էմիրությունները, Օմանը և Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը (ԵԺԴՀ) կանգնեցին Իրանի կողմը<sup>16</sup>: Ամմանյան հանդիպման ավարտից հետո Իրաքի հետ դիվանագիտական հարաբերությունները խզեցին Միլիան, Լիբիան և ԵԺԴՀ-ն<sup>17</sup>:

Պատերազմը երկու երկրների միջև ընթացավ մի քանի փուլերով: Առաջին փուլը՝ 1980թ. սեպտեմբեր-1982թ. մայիս, քնդոշվեց իրաքյան զորքերի որոշակի հաջողությամբ. նրանք կարողացան գրավել Իրաքին սահմանակից իրանյան 20 հզ.<sup>18</sup> կմ տարածք: Պատերազմի երկրորդ և երրորդ փուլերը՝ 1982թ. մայիս-1984թ. գալուն և 1984թ. գալուն-1987թ. մայիս, նշանավորվեց իրանյան զորքերի հակահարձակմամբ, որի արդյունքում պատերազմական գործողությունները տեղափոխվեցին Իրաքի տարածք: Սակայն Իրանին հաջողվեց միայն գրավել Իրաքի հարավում մոտ 150 քառ. կմ. և հյուսիս-արևմուտքում 50 քառ. կմ. իրաքյան տարածք<sup>19</sup>: Պատերազմի երրորդ փուլի ընթացքում Իրաքն առաջին անգամ օգտագործեց զարգվածային ոչնչացման քիմիական զենք<sup>18</sup>:



Իրացա-իրանյան պատերազմը դադարեցնելու հարցը քննարկվեց մաս 1981թ. ԻԿԿ ԹԻԿԻՔի զագաթնաժողովում, որտեղ Իրաքը հայտարարեց, քե պատրաստ է նու վերադարձնել Իրանին պատերազմի ընթացքում նրանից զբաղված տարածքները, եթե վերջինս կատարի 1975թ. Բաղդադի համաձայնագրի պայմանները<sup>19</sup>։ Իրանի պատվիրակությունը չէր մասնակցել ԻԿԿ հանդիպմանը։

Պատերազմը դադարապարտեց մաս Թուրքիան՝ կոչ անելով վերջ տալ երբայրասպանությանը և չեզոք դիրքորոշում ընդունեց<sup>20</sup>։ Իր չեզոքության մասին հայտնեց մաս Պակիստանը, որը սակայն, շարունակում էր Սաուդյան Արաբիայում 20 հազարանոց զորք պահել՝ սաուդական իշխանություններին հարկ նշած դնացրոն օգնություն ցույց տալու նպատակով<sup>21</sup>։

Արաբական աշխարհում առաջնորդ դառնալու Իրաքի նկրտումները հիմնավորվում էին մաս այն համգամանքով, որ 1982թ. Իրաքը պետք է դառնար շմիացող երկրների շարժման առաջնորդ<sup>22</sup>։ Բացի դրանից 1978-1982թթ. ընթացքում համաձայն որոշ տեղեկությունների, որոնք մեր կարծիքով քավակաճին հակասական են, Իրաքը ԱՄՆ-ից անտոդակի ճանապարհով գնել էր 6,5 մլրդ դոլարի ԽՍՀՄ-ից՝ 1,8 մլրդ դոլարի, Արևմուտքից՝ 4,3 մլրդ դոլարի սպառազինություններ<sup>23</sup>։ Դեռ 1975թ. մասնագետները նկատում էին, որ Բաղդադը կտրուկ ավելացրել էր սպառազինություններ գնելու համար նախատեսվող գումարը՝ 6-8 մլրդ դոլարից հասցնելով այն տարեկան 16-18 մլրդ դոլարի<sup>24</sup>։

Պատերազմի պաշտոնական դադարապարտությանը հանդես եկավ մաս Եզիպտոսի մախազահ Սադադը։ Եթե 1978 և 1979թթ. հակաեզիպտական Բաղդադի հանդիպումները նախատեսվել էին ամփոջակամորեն Իրաքի կողմից, ապա պատերազմից 10 օր անց, երբ պարզ դարձավ իրացյան զորքերի անկարող լինելը արագ պարտության մատնել Իրանին՝ Սադդանը գնեք արամադրելու խնդրանքով դիմեց Սադաթին<sup>25</sup>։ Արդեն 1980թ. վերջին Իրաք ներմուծվեցին Եզիպտոսից առաքված առաջին սպառազինությունը։ Եթե քվականի ղեկտնրերին Եզիպտոսի և Իրաքի միջև վերականգնվեց քաղաքացիական օդային կապը<sup>26</sup>։

Պատերազմի հանդեպ Եզիպտոսի դիրքորոշման արդյունքում ի հայտ եկան եզիպտոս-արաբական մերձեցման եզրագծեր։ 1981թ. հոկտեմբերի 16-ին Եզիպտոսում գալով իշխանության, Մուհամեդ Հոսեի Մորթարաքը արտաքին քաղաքական հայեցակարգում առաջ քաշեց արաբական աշխարհի նետ հարստերությունները քարելավելու սկզբունքը<sup>27</sup>։ Արաբական շատ երկրներ, այդ թվում մաս Սաուդյան Արաբիան, շահագրգռված էին «արաբական ընտանիք» Եզիպտոսի շտտախույք վերադարձով։ Հարկ է նշել, որ իրացա-իրանյան պատերազմը ամենից շատ մտահոգում էր Օոցի արաբական միապետություններին։ Արևելա-

գետ Ջ.Հոգինդը նշում է, որ Սաուդական ղեկավարությունը երկտողում էր այն համզամանքից, որ Իրաքի պարտության դեպքում, անմիջական ապահովելը կտեղծվեր իր գոյությանը<sup>34</sup>։ Եզխարտող շատ հաճախ Օսցի արաբական երկրների անվտանգության ավանդական երաշխավորներից մեկն էր, իսկ Իրաքի անհաջող փորձը, ամբողջովին փոխարինել նրան, ստիպում էր Էո-Ֆիադին վերականգնել երբեմնի ծախսերությունները Կահիրեի հետ։

1982թ. ամռանը Եզխարտող Իրաքին 1 մլրդ դոլարի գնեք, ինչպես նաև 60 օդաչուներ տրամադրեց<sup>35</sup>։ Այն որ Օսցի մալք արդյունաբերող երկրները չէին ցանկանում Իրաքի պարտությունը, վկայում է նաև այն փաստը, որ պատերազմի առաջին 4 տարիների ընթացքում նրանք Բադդադին 40 մլրդ դոլարի օգնություն տրամադրեցին<sup>36</sup>։ 1983թ. աշնանը Իրաքի կողմում ռազմական գործողություններին մասնակցում էին 12 հազ. եզխարտական զինվորներ և սպաներ ու ևս հազարավոր զինծառայողներ զինվորական ծառայություն էին անցնում նաև իրաքյան ներքին գործերի նախարարությունում<sup>37</sup>։ Նույն թվականի ղեկեներերին Եզխարտողի Իրաք ներմուծվող սպասագինությունների արժեքը նստավ 2,7 մլրդ դոլարի, իսկ Իրաքում կուլող եզխարտական «կաճավորների» թիվը հասավ 30 հազարի։ Իրաքում աշխատող եզխարտական բանվորների թիվը նստել էր 1 մլն. -ի<sup>38</sup>։ 1985թ., երբ Իրաքը ենթարկվեց Իրանի զորքերի կողմից ողջ պատերազմի ընթացքում ամենախաղցր հարձակմանը, Մոքաբաքը Հոդղամանի բազավոր Հուսեյնի հետ ժամանեց Իրաք՝ Սադդամին իր համերաշխությունը հայտնելու նպատակով։ Ի պատասխան դրան, Սադդամը հայտարարեց, որ «արաբական համերաշխությունը երբեք չի լինի լիարժեք առանց Եզխարտողի»<sup>39</sup>։

Փաստորեն, Եզխարտող, մախազան Մոքաբաքի իշխանության առաջին շրջանում կարողացավ դե-ֆակտո վերականգնել հարաբերությունները Օսցի արաբական երկրների հետ ու այդպիսով սկսել իր դիվերսի վերականգնումը արաբական աշխարհում։

1984թ. հունվարին տեղի ունեցած ԻԿԿ 4-րդ գագաթնաժողովին Սաուդյան Արաբիայի և Իրաքի անմիջական միջնորդությամբ վերականգնվեց Եզխարտողի անդամակցությունը մահմեդական աշխարհի այդ հեղինակավոր կազմակերպությունում<sup>40</sup>։ 1984-1988թթ. ընթացքում Եզխարտողի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնեցին Հոդղամանը, ՊԱԿ-ը, Ջիբուտին, Արաբական Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան, Զուվեյթը, Բահրեյնը, Կատարը, ԵժԴԿ-ն, Մավրիտանիան, Եմենի Արաբական Հանրապետությունը, Թունիսը, Լիբանանը, Լիբիան, Ալժիրը և Իրաքը<sup>41</sup>։ Տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում Կահիրեի ցուցաբերած աշխուժությունը՝ նպատեց 1984թ. Եզխարտողի ՄԱԿ-ի ԱՆ անդամ ընտրվելուն<sup>42</sup>։

1989թ. նոյեմբերին իրաքա-սատրակամ միջնորդությամբ Եզիպտոսը վերականգնեց իր անդամակցությունը նաև ԱՊԼ-ում<sup>37</sup>։ Արաքսական աշխարհում Եզիպտոսի դիրքերի վերականգնման հարցում մեծ նշանակություն ունեւր նաև Սիրիայի դիրքորոշումը։ 1989թ. դեկտեմբերի կեսերին վերականգնվեց օդային կապը Կահիրեի և Դամասկոսի միջև, իսկ երկու շաբաթ անց վերականգնվեցին նաև դիվանագիտական հարաբերությունները այդ երկու երկրների միջև<sup>38</sup>։

Իրաքա-իրանյան պատերազմը ծանր հետևանքներ ունեցավ կողմերից երկուսի համար։ Պատերազմում Իրանը 250 հազ. զոհ և 500 հազ. վիրավոր էր տվել, իսկ Իրաքը՝ 100 հազ. սպանված և 150 հազ. վիրավոր<sup>39</sup>։ Պատերազմը խոչընդոտեց նաև արաքսական աշխարհի սպակայուն վիճակը և մպաստեց Իսրայելի կողմից 1982թ. ամռանը Լիբանան ներխուժմանը, մղազեցրեց պաղեստինյան խնդրի հարցում գործադրվող քանքերը և արգելակեց մերձավորարևելյան համընդհանուր կարգավորման գործընթացը։ Օգտվելով Իրաքի պատերազմի մեջ լինելու համգամանքից, 1981թ. հունիսի 7-ին Իսրայելի ռազմաօդային ուժերը ռմրակծեցին Քաղդաոսի մոտակայքում գտնվող իրաքյան միջուկային հետազոտությունների կենտրոնը<sup>40</sup>։ Պատերազմը ծայրաստիճան սրեց նաև միջազգային դրությունը։ 1988թ. հունիսի սկզբին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Բելգիայի ռազմական նավերի քամակը Շոցում հասել էր 80-ի, որից 38-ը պատկանում էր Միացյալ Նահանգներին<sup>41</sup>։

ԱՄՆ-ի ԱԽ-ն իրաքա-իրանյան պատերազմի հանդեպ 1987թ. հունիսի 20-ին ընդունեց 598 քանաձևը<sup>42</sup>, որը պահանջում էր կողմերին դադարեցնել կռակը և քանակությունների միջոցով լուծել երկու երկրների միջև եղած հակասությունները։ 1988թ. հունվարի 7-9-ը Ալժիրում կայացած ԱՊԼ արտահերթ գագաթնաժողովի առաջին անգամ արաքսական լուրոր երկրները, ներառյալ Լիբիան և Սիրիան՝ դատապարտեցին Իրանին հաշտության քանակություններից խույս տալու մեջ։ Եզրափակիչ հռչակագրում համդիպման մասնակիցները նշում էին, որ «արաքսական որևէ երկրի հանդեպ ազրեսիան կդիտվի որպես ազրեսիա ողջ արաքսական ազգի հանդեպ»<sup>43</sup>։

1988 թ. գարնանը իրանյան զորքերի վերջին վտրոն՝ պարտության մատնել իրաքյան քանակը, ձախողվեց։ Իրանի անհաջողությունները մարտի դաշտում, երկրի տնտեսական քայքայվածությունը, Սիրիայի և Լիբիայի որպես դաշնակիցների կոջուսող, ինչպես նաև հունիսի 3-ին Իմամ Խոմենիիի մահը, ստիպեցին թւիրանին դաշարեցնել պատերազմը։

1988թ. հունիսի 18-ին Իրանի ղեկավարությունը հայտնեց, որ ընդունում է 598 քանաձևը և նպահանջում է, որպեսզի պատերազմում մեղավորը պատասխանատվության առջև կանգնի<sup>44</sup>։ Սակայն Իրաքի ան-

հանդուրժողականության պատճառով պատեզմական գործողությունները շարունակվեցին, որի հետևանքով իրաքյան քամակի հսկողության տակ հայտնվեց 2.600 քառ. կմ. իրանյան տարածքի մի հատված: Կողմերի միջև կրակը դադարեցվեց միայն օգոստոսի 20-ին<sup>45</sup>:

1988թ. օգոստոսի 26-ին սկսվեցին իրաքա-իրանյան հաշտության քամակաբախումները: Տեղի ունեցան քամակաբախումների 15 փուլեր՝ Ժնևում և Նյու-Յորքում, սակայն կողմերը համաձայնության չեկան և 1990թ. օգոստոսին քամակաբախումները ընդհատվեցին: Իրաքա-իրանյան հակամարտությունը ասեղծվեց, իսկ տազմական գործողությունները այլևս չվերսկսեցին<sup>46</sup>:

Փաստորեն, Արաբական Արևելքում տեղի ունեցող ցանկացած գործընթացների և մասնավորապես իրաքա-իրանյան պատերազմի, Լիբանանում իսրայելյան ազդեցության և պաղեստինյան հարցի նամղեպ ունեցած գործուն դերերը շման այդպեցում, Եգիպտոսը կարողանում էր վերականգնել իր դերը արաբական աշխարհում: Այս առումով իրաքա-իրանյան հակամարտությունում Եգիպտոսի ներգրավումը քացատիկ կարևոր նշանակություն ունեցավ Մոցի մնան քարղ տարածաշրջանում ուժերի հարաբերակցության պահպանման հարցում, որում շահագրգռված էին ինչպես Մատրյան Արաբիան, այնպես էլ արաբական մյուս երկրները: Եգիպտոսի մախազահը, դրսևորելով զգուշություն, չափավորություն, պրագմատիզմ և հետևողականություն՝ կարողացավ վերականգնել Եգիպտոսի կարևորագույն դերը արաբական աշխարհում և նորովի ներկայացնել իր երկիրը միջազգային հարաբերություններում:

GOR GEVORGYAN

### EGYPT AND THE IRAQ-IRANIAN WAR (1980-1988)

For many years the most important country among the Arab countries counteracted Israel was Egypt. In September of 1978 Egypt's president Mohamed Anwar al-Sadat signed the Camp David's Agreement, then in March of 1979 signed the Egypt-Israeli Agreement in consequence of which Cairo lost its leading rôle in the Arab world.

All the Arab countries, besides Oman, Sudan and Somali, broke their diplomatic relations with Egypt.

In September of 1980 due to its flexible position towards the Iraq-Iranian war, some contours were sketched to the Egypt-Arabian rapprosch. Supporting Iraq during this war Egypt smoothed away to the "Arab family". Beginning with the presidency of Mohamed Hosny Moubarak the Egypt-Arabian relations began to improve.

Due to its effectual positions towards the Iraq-Iranian war and the other processes in the region in the end of 1980s Egypt succeeded to return to the "Arab family".

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Sbu' A Framework for Peace in the Middle East. Agreed at Camp David. Office of the White House Press Secretary. Sept. 18. 1978. p.1 & United States Policy Statement Series. 1979. The Egyptian-Israeli Peace Treaty. - The White House. Monday. March 26, 1979.
2. Ե.Լ.Վարամանովյան, Արարական Պետությունների Լիգայի դերը Արարական երկրների հսկայականիայինստական պայքարում, Եր., 1988, էջ 166, Գ.В.Севастьянов, Американский экспансионизм, М., 1986, с. 543, Ա.Հ.Հովհաննիսյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001, էջ 23:
3. "Le Monde", 14.05.79, տե՛ս Арабский мир: три десятилетия независимого развития, М., 1990, с. 308.
4. А.Г.Кикаева, Египет после Насера, 1970-1981 гг., М., 1986, с.206, Арабская Республика Египет, М., 1990, с. 97, Арабский мир, 02.01.82, с. 348.  
\* Իրացը պատերազմի ակիզը համարում էր սեպտեմբերի 4-ը, երբ իրանյան զորքերը կրակ էին քաշել իրաքյան Մեդդեի և Համադան քաղաքների վրա:
5. Iran-Iraq War: Historical documents, տես՝ www.fas.org.
6. J.M.Abdulghani, Iraq and Iran: The years of Crisis. Baltimore (MD), 1984, p.242-249.
7. Նույն տեղում, մաս. А.Табери, The Spirit of Allah. Khomeiny and Islamic Revolution, London, 1985, p. 163.
8. The New York Times, N.Y., 12.10.1980, մաս. I.Tareq, Iraq and Iran: Roots of Conflict, Syracuse Univ Press, 1982, N 4, p. 210. \*Իրաքի արարական շահերի պաշտպանության հիմնադրման կենտրոնական փաստաթղթերից մեկն էլ Իրանի կողմից 1971թ. նոյեմբերին զբաղեցրած Մոցի արարական 3 կղզիների՝ Արու Մուսան, Մեծ և Փոքր Թումբերը վերադարձնելը էր: Կղզիները պատկանում էին հետազայում Արարական Միացյալ Էմիրությունների մաս կազմած՝ Շարթա և Ուսու-ալ-Խայմա Էմիրություններին: Sbu՝ Н.О.Оганесян, Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985, с. 82, Новейшая история Арабских стран Азии, М., 1989, с 326.
9. Б.Сейранян, "Звезда и жизнь диктатора", см. Азия и Африка сегодня, N 4, 1994, с. 7-8.
10. Middle East International, L., 04.06.82, Л.В.Валькова, Саудовская Аравия: Нефть, ислам, политика, М., 1987, с. 201.
11. Проблемы мира и социализма, 31.05.82.
12. Б.Сейранян, 02.01.82. նույն տեղում, ТАСС Информбюллетень 04.06.83.
13. Bienen H, The Superpowers and the War. The Iraq-Iran War. Issues of Conflict and Prospects for Settlement, Princeton Univ, 1981.

14. US Department of State. Bureau of Public Affair Testimony before the House of Representatives Committee on Foreign Affairs. 3 Sept. 1985. Current Policy Paper N 215, B.Rubia, United State – Iraq Relations, p. 118.
15. Арабский мир... Աշխ. աշխ. ս. 314.
16. Ближний Восток и Международное право, М., 1992, с. 102
- \* 1982թ. սկսած եժ-Դ-ն կանգնեց Իրաքի կողմն և վերականգնեց նրա հետ զինամագիստակն հարաբերությունները:
17. Տե՛ս Եվրոպական Վերջ. աշխ. մեջ: ս. 99-100, Н.Жданов, А.Игнатенко, Ислам на пороге 21 века, М., 1986, с. 285-288.
18. Л.Данилов, Армия, власть и общество в современном Ираке, в кн. Армия и власть на Ближнем Востоке, М., 2002, с. 56, The Middle East, May, 1988, p. 16.
19. Речь президента Саддана Хусейна на 3-ей Исламской конференции в зерхах. Багдад, 1981, с. 27-28.
20. "Aktualite" Istanbul, 1980, Sept. p. 6. Ситс И.И.Иванова, Турецко-арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983), М., 1985, с. 120.
21. Ближний Восток и ... Աշխ. աշխ., նույն տեղում.
22. А.З.Егорин, Х.А.Абдель Хамид, Война за ближневосточный мир, М., 1998, с. 63.
23. The Middle East and North Africa, L., 1986, p.155.
24. The Military Ballance 1975-1980, L., 1980, p. 4.
25. Р.Дж.Алдайк, Саддам Хусейн, Ростов на-Дону, 1999, с. 293.
26. ТАСС БПИ N 164, 20.08.87, ТАСС Атлас N 25, 18.06.82.
27. Տե՛ս Գ. Գևորգյան, եվրոպայի արտաքին քաղաքական նոր հայեցակարգի ձևավորումը 1980-ականներին, (արարելիք), «Արև», Կահիրե, 2002, նոյեմբեր (59) 11, էջ 3-7:
28. The New York Review of Books, N.Y., 01.04.82, сар. XXIX N 5, p. 26.
- \* 1961թ. Քուվեյթի անկախության հռչակումից հետո, վերջինիս հանդեպ Իրաքի հավակնությունների պատճառով առեղծված լարված իրավիճակը հնարավոր եղավ կարգավորել մեկ ԱՊԼ-ի համապատասխան որոշումով, որի համաձայն, 1961թ. սեպտեմբերին Արաբական Միացյալ Հանրապետության ստորաբաժանումները արաբական մի քանի երկրների զինված ուժերի հետ համառոտ ճառան Զուվեյր: Տե՛ս Новейшая история Арабских стран, М., 1968, с 327-328.
29. Newsweek, N.Y., 26.07.82.
30. I.Tareg, L.Jacklin C., Iraq's interrupted revolution. Current History, Philadelphia, 1985, January, Vol. 84, N 498, p. 30.
31. Le Nouvel Observateur, P., 25.09.83, քաղ. Л.В.Валькова, Աշխ. աշխ., с. 215.
32. Р.Дж.Алдайк, Աշխ. աշխ., с. 295.
33. Նույն տեղում:
34. В.Сънев, "Проблемы политики и новые тенденции в деятельности организации Исламской Конференции", в кн. Современный ислам: Проблемы политики и идеологии, М., 1985, вып. 3, с. 133.
35. ТАСС БПИ, N 206, 22.10.90., մեկ Boston Sunday Globe, 03.02.88.

36. ORBIS. A Journal of World Affairs, Philadelphia, 09.01.84., Правда, М., 21.04.84.
37. ТАСС Агзас, N 16, 15.04.88.
38. Դ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արաբական Արևելքում, երևան, 1999, էջ 10:
39. SIPRI: Yearbook, 1987, p. 302.
40. U.N.Press Release G.A. /7272, 13.07.1986, p. 7.
41. Cristian Science Monitor, 07.10.87.
42. U.N. Documents, S/RES/598.
43. Н.В.Жданов, А.А.Игнатенко, Ислам на пороге 21 века, с. 291.
44. U.N.Documents, Security Council, The Declaration of the General Secretary of the United Nations, 1988, Sept., 16, p. 4.
45. Л.Данилов, Армия, власть и общество в современном Ираке, մշվ. աշխ. մեջ с. 56.
46. Современные международные отношения, под ред. А.В.Торкунова, М., 2001, с. 398, Ближний Восток... մշվ. աշխ. մեջ, с. 108.

## ԳՈՒՄ ԻՍԿԱՆԳԱՐՅԱՆ

### 1959թ. ԻՐԱՆԱ-ԱՍԵՐԻԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Իրանա-ամերիկյան հարաբերությունները թևակոխեցին զարգացման նոր փուլ հասնելու 1950-ականների վերջերին 1960-ականների սկզբին, որով էլ պայմանավորված է հիշյալ ժամանակահատվածի նկատմամբ առաջացած խիստ հետաքրքրությունը: Իրանա-ամերիկյան հարաբերությունների զարգացմանն են անդրադարձել բազմաթիվ հետազոտողներ<sup>1</sup>:

1958թ. հունիսի 14-ին՝ Իրաքի հեղափոխությունից հետո, պարզ դարձավ, որ խարխլվում են ԱՄՆ-ի ջանքերով ստեղծված Բաղդադի պակտի հիմքերը: Սակայն դրա վերջնական փլուզումը չէր կարելի թույլ տալ, ինչի համար էլ ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ: Բաղդադի պակտից Իրաքի հեռանալուց հետո ԱՄՆ-ը վճեց ռազմական պայմանագրեր կնքել դաշինքի անդամ մյուս երկրների հետ: 1958թ. հուլիսին պակտի հույակագրում ակնարկվում էր ԱՄՆ-ի և Բաղդադի պակտի արևելյան երկրների միջև նման համագործակցության անհրաժեշտության մասին: Այդ ծրագիրը իրականացնելու համար 1958թ. հունվարին Թեհրան ժամանեց ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ.Ֆ. Դալլեսը: Նա Իրանի շահին խորհուրդ տվեց վերանայել Իրանի կառավարության քաղաքականությունը և որոշելու Միության նկատմամբ<sup>2</sup>: Պարզ է, որ այդ քաղաքականությունների ընթացքում խոսվել է նաև երկկողմ ռազմական պայմանագրի մասին: Դալլեսը, պետական քարտուղարի օգնական Ռատմերին, ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Մակելոյը, Հենդերսոնը և ուրիշներ 1958թ. վերջին և 1959թ. սկզբին Իրանից բազմի այցելեցին նաև Թուրքիա և Պակիստան, որտեղ հանդիպումներ ունեցան այդ երկրների կառավարությունների ղեկավարների հետ և ինչպես հետագայում հայտնի դարձավ, համաձայնություն ձեռք բերեցին մտտ ապագայում ԱՄՆ-ի հետ ռազմական պայմանագիր ստորագրելու հարցում<sup>3</sup>:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Մակելոյը 1958թ. շարունակում էր Թեհրանում քաղաքականություններ վարել իրանա-ամերիկյան երկկողմ նոր ռազմական համաձայնագիր կնքելու ուղղությամբ: Քաղաքականությունները ձգձգվեցին, քանի որ Իրանի կառավարությունը փոր-



ձում էր ԱՄՆ-ից ռազմական աջակցություն ստանալ երկրին սպառնացող ջանքերից վտանգի առկայության պարագայում<sup>1</sup>։ Ամերիկացիները, լինելով առավել շքեհասալաց, ձգտում էին խուսափել շահի վարչակազմի պահպանման համար երաշխիք ստանձնելու պարտականությունից։ Նրանց մպառասկը մեկն էր. գեթ պահել Իրանը խորհրդային կամ կոմունիստական վտանգից, ամրապնդել իրենց՝ այլ ոչ քե պահպանել շահի դիրքերը։

Ինչ վերաբերում է շահի վարած արտաքին քաղաքականությանը, ապա պետք է նշել, որ մա հիմնականում հակված էր դեպի Միացյալ Նահանգները, իսկ քե այն փոքր-ինչ չէր քավարարում Իրանին, ապա շահը հայտարարում էր, որ քարեկամության և համագործակցության եզրեր կգտնի Խորհրդային Միության հետ։ ԽՍՀՄ այցելելուց հետո շահը քազմիցս նշել է, որ Իրանն իր արտաքին քաղաքականությունը կառուցում է թղթ երկրների հետ քարիդրացիական սկզբունքներով։

1958թ. դեկտեմբերին Իրանի կառավարող շքեհանները դիմեցին իրենց քաշ հայտնի խուսանավելու քաղաքականությանը Խորհրդային Միության և ԱՄՆ-ի միջև։ Իրանի կառավարությունը փորձում էր ցույց տալ, քե քանում է քարեկավել հարաքերությունները Խորհրդային Միության հետ, դրանով փորձում էր ճնշում գործադրել ԱՄՆ-ի կառավարության վրա՝ առավել զգալի զիջումների հասնելու համար։

Իրանի կառավարությունը Խորհրդային Միությանը պաշտոնապես առաջարկեց ստորագրել «Բարեկամության և 20 տարվա չխարձակման» պայմանագիր։ Պայմանագրի տեքստը կազմել էր իրանական կողմը և հանձնվել էր Թեհրանում ԽՍՀՄ-ի դեսպանին։

ԽՍՀՄ-ը, որպես քանակությունների մախապայման, հայտարարեց, որ Իրանը չպետք է նրբոյդ երկրի հետ կնքի ռազմական համաձայնագիր։ Հասկանալի է, որ Խորհրդային Միությանը հայտնի էին Իրանի կառավարության մպառասկերն ու ծրագրերը, և նրբոյդ երկիր ասելով այս պարագայում, հասկանում էին միայն ԱՄՆ-ին։ Չհայած ձեք քերված համաձայնությանը, Իրանի դեկավար այրեքը շարունակում էին զուգահեռ քանակություններ վարել ամերիկյան պատվիրակության հետ։

Հարկ է նշել, որ 1958թ. դեկտեմբերի 28-ին ԽՍՀՄ-ի դեսպան Պեզովը Իրանի կառավարությանն էր հանձնել ԽՍՀՄ-ի հուշագիրը՝ ապասփող երկկողմանի ռազմական պայմանագրի վերաքերյալ։ «Խորհրդային կառավարությունն անհասնգատացած է, շահեկան Իրանի կառավարության կողմից որոշակի ժամանակահատվածում իքականացված արտաքին քաղաքական և ռազմական այնպիսի միջոցառումներից, որոնք չեն կարող գնահատվել այլ կերպ, քան Խորհրդային Միության դեմ ուղղված քաղաքականություն... Գրա մասին է վկայում Իրանի օրավոր մեծացող

համագործակցությունը երբորդ պետությունների ազդեցիվ ուժերի հետ, որոնք չեն բացքնում իրենց ձգտումները՝ օգտագործել Իրանը և Իրանի տարածքը ընդդեմ Խորհրդային Միության: Այս պարագայում, անխառն կհատրքն միայն արտասահմանյան շրջանակները և Իրանից շատ հեռու տեղությունները: Առաջին հերքին կառուծի Իրանը, որը նման քաղաքականության պատճառով ռազմական բախման դեպքում, կարող է հայտնվել ոչնչացման վտանգի առաջ: Խորհրդային կառավարությունը, խտսելով այդ մասին, չի փորձում ապահույն, այլ արձանագրում է առկա փաստերը, որոնց հերքումը կնշանակեր հակասել իրականությանը: ԽՍՀՄ-ի կառավարությունն ամենայն անկեղծությամբ ցանկանում է նշել, որ եթե Խորհրդային Միությունը, որի ուժերը և հնարավորությունները դժվար է համեմատել Իրանի ուժի և հնարավորության հետ, անհանգստանում է խորհրդա-իրանական հարաբերությունների վատացման հետևանքների կապակցությամբ, ապա Իրանն առավել ևս պետք է անհանգստանա<sup>5</sup>:

Հակված ենք կարծելու, որ սա իսկապես քաղաքական սպասուկը էր՝ քողարկված «քարեկամության» սկզբունքներով: Սա էլ դրոջն Իրանին դիմելու իր հայտնի խոստանալիս քաղաքականությանը: Իրանը ծրագրում էր միաժամանակ բանակցություններ վարել և՛ ԱՄՆ-ի, և՛ Խորհրդային Միության հետ: Հասկանալի է, մախրնորելով համաձայնության հասնել Միացյալ Նահանգների հետ: Սակայն համաձայնության չհասնելու դեպքում Իրանը իր հյուսիսային եարևանի հետ զոնն կուննար «Բարեկամության և 20-տարվա շեղծակցման» պայմանագիր:

1959թ. հունվարի 19-ին Իրանի արտգործնախարար Հեքմատը խորհրդային դեսպանին հայտնեց, որ Խորհրդային Միության հետ շեղծակցման պայմանագիր կնքելու դեպքում Իրանը ԱՄՆ-ի հետ չի կնքի ռազմական համաձայնագիր<sup>6</sup>:

Շուտով ԽՍՀՄ-ի և Իրանի դեկավարները համաձայնության եկան բանակցությունները առավել քարձր մակարդակով վարելու վերաբերյալ: Խորհրդային Միությունը հայտարարեց, որ պայմանագրի կնքման վայրը թողնում է Իրանի նայեցողությանը: 1959թ. հունվարի 29-ին Բաղդադի պակտի՝ Կարայիում տեղի ունեցած նոտաշրջանից մեկ օր անց, Իրանի կառավարության հրավերով Թեհրան ժամանեց ԽՍՀՄ-ի կառավարության պատվիրակությունը՝ փոխարտգործնախարար Վ.Ս.Մեյյուսովի գլխավորությամբ:

Խորհրդային կառավարությունն առաջարկում էր, որ կողմերից յուրաքանչյուրը պարտավորվի երբորդ պետությանն իրավունք չուս իր տարածքում կառուցելու կամ օգտագործելու արդեն կառուցված ռազմական բազաներն ու օդանավակայանները, թույլ չուս իրենց տարածք մտցնել որևէ երբորդ պետության ռազմական ուժեր: Խորհրդային Միու-

յունը մախատեսում էր խթանել նրկու նրկունքի միջև տնտեսական, առևտրական և մշակութային կապերի հետագա զարգացումը: Մինչդեռ իրանական կողմը բանակցությունների ժամանակ հատուկ ուշադրություն էր դարձնում 1921թ. սովետա-իրանական պայմանագրի 5-րդ և 6-րդ հոդվածների վերացման վրա: Իրանի շահը հայտարարեց, որ 1921թ. պայմանագրի հիշյալ հոդվածների՝ հատկապես 6-րդ հոդվածի վերացումը, որը մախատեսում էր որոշակի իրավիճակներում խորհրդային զորքի մուտքի իրավունք Իրանի տարածք, կնպաստի ԽՍՀՄ-ի և Իրանի միջև վստահության և քաղաքականության հիմքերի ամրապնդմանը<sup>9</sup>:

1959թ. հունվարի 30-ին խորհրդային պատվիրակության հետ առաջին հանդիպման ժամանակ Իրանի շահը հայտարարեց, որ խորհրդա-իրանական պայմանագրի ստորագրումն իսկապես չքաղաքական էր կլինի ԽՍՀՄ-ի և Իրանի միջև հարաբերությունների քաղաքական գործում և ընդհանրապես կնպաստի Մերձավոր և Միջին Արևելքում լաքվածության բուլացմանը:

Սակայն 1959թ. փետրվարի 10-ին, երբ շահը չընդունեց սովետական պատվիրակությանը, պատճառաբանելով քննիվանդ է ու փոխարենը ընդունեց ամերիկյան ներկայացուցիչներին՝ ծովակալ Ռեյնոլդին և Մակգրին, պարզ դարձավ, որ շահական կառավարությունն առավել նպատակահարմար է գտել քանակցելու ամերիկյան կողմի հետ<sup>10</sup>:

Խորհրդա-իրանական բանակցությունների տապալման մեջ Իրանի շահը մեղադրում է խորհրդային պատվիրակությանը: Դա մա պատճառաբանում է հետևյալ կերպ. «Մուսնեղը թույլ տվեցին մի սխալ: Նրանց պատվիրակությունն ուշացավ նրկու շարքում, որի ընթացքում ԱՄՆ-ի հետ նրկկողմանի մախմական պայմանագիրը համապատասխանեց մեր պահանջներին և ցանկություններին: Հասնելով Իրան՝ ոտսական պատվիրակությունը գործեց մեկ այլ սխալ ևս. քանակցություններն սկսելու նամար մեզանից պահանջեց հրաժարվել Բաղդադի պակտի ամրամակցությունից: Հանդիպելով մեր խիստ հակազդեցությանը՝ նրանք հրաժարվեցին իրենց այդ պայմանից, սակայն այս անգամ էլ սկսեցին պնդել, որ ԱՄՆ-ի հետ չպետք է ստորագրենք նրկկողմանի պայմանագիր: Վերոհիշյալ պատճառներով իրանա-խորհրդային պայմանագիրը չստորագրվեց, իսկ պատվիրակությունն առանց մեզ տեղեկացնելու հետագավ Իրանից», գրում է Մոհամմադ Ռեզա Փանելալին<sup>10</sup>:

Ի դեպ, Իրանի շահի հայտարարությունը, քն պատվիրակությունը ժամանել է նրկու շարք ուշացումով, չի համապատասխանում իրականությանը:

Խորհրդա-իրանական ամիաջող բանակցություններին հակառակ՝ ակտիվորեն ընթանում էր իրանա-ամերիկյան նրկկողմանի ռազմական պայմանագրի ստորագրման գործընթացը:

Իրանը գտնում էր, որ երկկողմանի ռազմական պայմանագրի կա-  
րիքն ամենից առաջ զգում են իրենք, քանզի այդպես առավել պաշտ-  
պանված կլինեն իրենց դիրքերը: Ինչ վերաբերում էր Թուրքիային և Պա-  
կիստանին, ապա նրանցից մեկը գտնվում էր ՆԱՏՕ-ի, իսկ մյուսը՝ ՍԵԱ-  
ՏՕ-ի հովանու ներքո, որոնք ապահովում էին նրանց անվտանգությունը:

Երկկողմանի համաձայնագիրը նախատեսում էր Իրանի, Թուր-  
քիայի, Պակիստանի կառավարությունների և ԱՄՆ-ի կառավարության  
ռազմավարական համատեղ միջոցառումների իրականացում:

Երկկողմանի ռազմական պայմանագրով էլ ավելի էին սնրու-  
նում Բաղդադի պակտի Միջին Արևելքի երկրների և ԱՄՆ-ի հարաբե-  
րությունները՝ մի կողմ մղելով պակտի մյուս անդամ Անգլիային:

Հետագայրակամ է մտն այն փաստը, որ ամերիկա-իրանական  
ռազմական համաձայնագրի քանակցությունների ընթացքում ամերիկա-  
յան կողմը հաստատարեց, որ իրանական զորքը պետք է զբաղվի երկրի  
մեջքին գործելով, իսկ ինչ վերաբերում է Խուզիսթանի և Պարսից ծոցի  
նավթային շրջանների պաշտպանությանը, ապա այդ խնդիրները կիրա-  
կանամացման ամերիկյան զորքերը, քանզի իրանական զորքը ի զգույն չէ  
լուծելու մտան խնդիրներ<sup>11</sup>:

Խորհրդա-իրանական համաձայնագրի տապալումը խիստ վա-  
տացրեց երկու կողմերի հարաբերությունները: Խորհրդային կառավա-  
րությունը դիմեց մի շարք միջոցների՝ իրանա-ամերիկյան ռազմական  
պայմանագրի կնքմանը խաչընդոտելու նսմար: Սակայն իրանա-ամե-  
րիկյան պայմանագիրը ստորագրվեց Անկարայում 1959թ. մարտի 5-ին:  
Այս համաձայնագրով ԱՄՆ-ին իրավունք տրվեց զորքեր մտցնելու Իրա-  
նի տարածք՝ «ցամակացած ազրեսիայի» դրսևորման դեպքում<sup>12</sup>:

Ռազմական երկկողմանի պայմանագրեր կնքվեցին մտև ԱՄՆ-ի  
և Թուրքիայի, ԱՄՆ-ի և Պակիստանի միջև: Թուրքիայի կողմից պայմա-  
նագիրը ստորագրեց արտգործնախարար Ֆ.Ռ.Չոքլուն, Իրանի կողմից՝  
Անկարայում Իրանի դեսպան Հասան Արֆան, Պակիստանի կողմից՝  
Անկարայում Պակիստանի դեսպան Հասանը, իսկ ԱՄՆ-ի կողմից՝ Թուր-  
քիայում ԱՄՆ-ի դեսպան Ֆրեդչեր Ուորենը: Պայմանագրի ստորագր-  
ման ժամանակ ներկա էր մտև Անգլիայի դեսպան Բերնարդ Բարրոտսը:  
1959թ. մարտի 5-ի համաձայնագիրը պաշտոնապես կոչվեց «Համագոր-  
ծակցության համաձայնագիր»: Պայմանագրի տեքստը քաղկացած էր  
մեղաժականից և վեց հոդվածներից:

Հարկ ենք համարում ներկայացնել հիշյալ համաձայնագրի առա-  
վել կարևոր կետերը.

1. Իրանի շահնչահական կառավարությունը լի է վճռականույ-  
թամբ՝ պայքարել ընդդեմ ազրեսիայի: Իրանի դեմ ազրեսիայի իրակա-  
նացման դեպքում ԱՄՆ-ը՝ համաձայն Միացյալ Նաեանգների սահմա-

նաղջության, անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի, մերստայլ ռազմական ուժ կօգտագործի, երկու կողմերի համաձայնությամբ... Իրանի կառավարության օգնության խնդրանքի դեպքում:

2. ԱՄՆ-ի կառավարությունը համաձայն 1954թ. փոխադարձ անվտանգության օրենքի... համաձայն համապատասխան պայմանագրերի, որոնք արդեն կնքվել են կամ կկնքվեն ԱՄՆ-ի և Իրանի կառավարությունների միջև, կրկին անգամ հաստատում է, որ այն շարունակելու է ռազմական և տնտեսական օգնություն ցուցաբերել, որի շուրջ համաձայնություն ձեռք կրելով ԱՄՆ-ի և Իրանի կառավարությունների կողմից, նպատակ է Իրանի կառավարության՝ ազգային անկախության պահպանման, տարածքային ամբողջականության և երկրի տնտեսության աջակցման վտանգված զարգացման գործին:

3. Իրանի շահնշահական կառավարությունը պարտավորվում է ԱՄՆ-ի կառավարության կողմից նատկացրած ռազմական և տնտեսական օգնությունը օգտագործել համաձայն 1958թ. հունիսի 28-ի լոնդոնյան կոնյունցիկեով կառավարությունների կողմից սահմանված նպատակների և խնդիրների վրա, ինչպես նաև Իրանի տնտեսության աջակցման վտանգված զարգացման նպատակով ստեղծել միջոցներ և պահպանել Իրանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը<sup>17</sup>:

Մեր կարծիքով Իրանի ներգրավվումը ՄԵՆՏՕ-ի պակտի մեջ և ԱՄՆ-ի ու Իրանի միջև երկկողմանի ռազմական համաձայնագրի կնքումն ամենակարևոր իրադարձությունն էր իրանա-ամերիկյան հարաբերությունների այս ժամանակահատվածի պատմության մեջ:

1959թ. մարտի 13-ին Միացյալ Նահանգների նախագահ Էյզենհաուերը, քաթճր գնահատելով Իրանի դերը, հանդես եկավ ուղերձով. «Եթե Բաղդադի քրեկո ամերիկյան կառավարող շրջանակների կողմից դիտվում է որպես ՆԱՏՕ-ի և ՄԵՆՏՕ-ի միջև կապող օղակ, ապա Իրանը իր աշխարհագրական դիրքով ԱՄՆ-ի այքում դիտվում է որպես այդ շրջանի մի մասը, առանց որի իրենց ռազմական ծրագրերը չէին իրականանա»<sup>18</sup>:

1950-60-ականներին ԱՄՆ-ն Իրանի հետ կնքեց մի շարք մտերմ կողմանի պայմանագրեր: Երկարաժամկետ, ինչպես նաև կնքվեցին մտերմ համաձայնագրեր Իրանի ռազմական ուժեղում, օտարերկրացիներին և ժամկարգների հայում ամերիկյան ռազմական և քաղաքացիական խորհրդակցականների, մասնագետների և խորհրդատուների գործունեության մասին:

1959թ. օգոստոսին Բաղդադի պակտի հիման վրա ստեղծվեց Կենտրոնական դաշինքի կազմակերպությունը (ՄԵՆՏՕ), որի կազմի մեջ մտան պակտի մեջ մնացած երկրները՝ Թուրքիան, Իրանը, Պակիստանը և Անգլիան: Միացյալ Նահանգներն էլ իր հերթին, ինչպես Իրան-

նին, այնպես էլ անդամ մյուս պետություններին, հատկացնում էր ֆինանսական և ռազմական օժանդակություն: 1959թ. մայիսին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Իրանի պլանային կազմակերպությանը 72 մլն դոլար փոխառություն հատկացրեց ճանապարհաշինության և վերակառուցման նպատակով: 1959թ. սկզբներին ԱՄՆ-ը նույն կազմակերպությանը 47,5 մլն դոլարի վարկ հատկացրեց, որը նախատեսվում էր իմնականում հարդրակցության կայաններին, նավահանգիստներին և օդակայաններին կառուցման համար: Այդ փոխառությունը հատկացվեց 1959թ. ամստանգության համատեղ սարահովման ծրագրի շրջանակներում<sup>15</sup>:

Ֆեդերատիվ հիմունքներով քրդերի ինքնավարության հիմնադրոցը Իրաքում նման ձևով ու մակարդակով ազգային հարցի լուծման առաջին փորձն է մահմեդական Արևելքում: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ տարածաշրջանի որոշակի ուժերին (ինչպես աշխարհիկ, այնպես էլ՝ կրոնական) խիստ մտահոգում է ոչ միայն և ոչ այնքան քրդերի ինքնավարությունը Իրաքում, որը կատարված փաստ է, որքան նրա հետևանքների խնդիրը ազգային լուծված մի շարք հարցեր ունեցող

տարածաշրջանի համար: Պատահական չէ, որ առավել մեծ ակտիվությամբ այդ գործընթացի դեմ և այն խաթարելու ծրագրերով համոզու է գալիս Տուրքիան, ազգային հարցի մարզում իր հին ու նոր ծանր քեռների համար հաշվետու լինելու մտահեզությանը: Անա քե ինչու Հարավային Քուրդիստանում իսլամական ծայրահեղականների գործունեությունը պաշտպանում են ոչ միայն բուրջական մահմեդական կղերականությունը, այլև իրենց լաիկիզմի կողմնակիցները հորջորջող բուրջական իշխանությունները:

Իսլամիստների անհանգստության մյուս պատճառը կապված է այն րանի հետ, որ Հարավային Քուրդիստանի օրինակը կարող է անցանկալի մախադնայ լինել տարածաշրջանում, որտեղ իսլամական գործունե ավանդաբար բարձր է դասվում ազգայինից և այդ հիմամբ նախողվում էր զարկված պահել ազգային նոր հարցերի երևան գալը:

Որպիսի՞ք են իսլամական գործունի դերի հետահեղափոխությունը Քուրդիստանում ընդհանրապես, նրա Հարավային մասում մասնավորապես: Վերջ քննարկված գործունեների վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ հազիվ քե ենարավոր է լիովին ազատվել իսլամական ծայրահեղականության վտանգից: Որպես մասն ենթադրության հիմք կարող են ծառայել երկու պատճառ: Նախ, իսլամը յուրօրինակ զարթոնք է ապրում և որքան էլ հիմնավոր են քրդական ազգային շարժման ընդհանուր գործընթացում նրա քաջատական դերի մասին եզրակացությունները, իսլամադավան քրդերի ակտիվության տակ պահելու նրա ենարավորությունները մեծ են և որքանք դեռևս Լական դեր կարող են խաղալ: Երկրորդ, իսլամական ծայրահեղականությունը միջազգային երևույթ է. այն ունի ֆինանսական, քաղաքական և այլ միջոցների քաղական մեծ համակարգ, որին դժվար է դիմագրավել, առավել ևս այնպիսի բոլոր պաշտպանված շրջան, ինչպիսին Քուրդիստանն է: Առկա են մասն մի շարք նակընդիր քնույրի գործունեներ, որոնք հիմք են տալիս քաջատելու Քուրդիստանի նասարակական քաղաքական կյանքի համընդհանուր իսլամականացումը: Այդպիսի ենթադրության հիմք են տալիս քրդական սոցիումի անցյալն ու ներկան, որը մասնագետների մշահամուռ եզրակացությանը, ընդհանուր առմամբ, այքի է ընկնում կրոնական մոլեռանդության, առավել ևս ֆանատիզմի քաջակայությանը: Այնուհետև, պատմական անցյալի փորձը քուրդ ժողովրդի՝ ազգային ինքնբարոյման համար պայքարի մեջ իսլամի դերի մասին դրական նյութ չի տալիս: Ի վերջո ուշագրավ է, որ ընայած վերջին տասնամյակներում իսլամական գործունի դերի բարձրացմանը, նրա քաջմապիսի դրսևորումներին ու ակտիվությանը, այնուհանդերձ շարժաքի ներմերի հիման վրա ընդհանուր քաղաքական պետական համակարգի ստեղծման փորձերը անհաջողության են մատնվում (Աֆղանստանի փորձը, իրանական քեռլրատիկ ոեծիմի գար-

գացումները և այլն): Այս առումով պատահական չէ, որ Իսլամում և արաբական մի շարք երկրներում լուրջ ուժի է վերածվում իսլամական բարեփոխությունների հոսանքը, որը հակադրվում է իսլամի ծայրահեղական և պահպանողական թևին:

Հարավային Ֆուդղիստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական քարեփոքությունները, քաղաքացիական հասարակության հիմքերի ստեղծումը այս շրջանում իսլամական արմատականության և դրա դրսևորումների արմատավորումը բացառող կարևոր գործոն է:

## SHAKRO MHOYAN

### ON THE ACTIVIZATION OF ISLAMIC EXTREMISM IN KURDISTAN

It is widely accepted that Islam has played negative role in historical fate of Kurdish people. Due to its corporative and regulative functions Islam has kept Kurds in line with interests of Arab Caliphate and Ottoman and Iranian Shah Empires for a long historical period. Thus Islam was slowing down the development of Kurdish national self-consciousness.

Nowadays Islamists are acting against the process of self-determination of Kurdish people. "Umma" and Islamic solidarity are the basic ideas of program documents of all Kurdish Islamic Organizations. It is not surprising that they have links with international Islamic Organizations. Islamists' proposed religious identity is in contradiction with the national interests of Kurds. The main goal of these Organizations is to object the process of self-determination in Kurdistan.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեղրերտունը ըստ՝ Ա. Փաշայան, Իսլամական կոմպերանս կազմակերպությունը նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ, Երևան, 2003, էջ 100:
2. Л. Шебаршин, Ислам (см. "Общая газета" 30.06., 6.12.2002)
3. П. Цветков, Джихад в Коране, С.П., 1912, стр. 19.
4. А. Коровиков, Исламский экстремизм в арабских странах, М., 1990, стр. 30.
5. J.P.Piscatori, Islam in the political process, Cambridge, 1983, p. 13.
6. "Известия" 8.08.2002
7. Х. Аршаруни, Габадулин, Очерк панисламизма и пантюркизма в России, М., 1931, стр. 5.
8. М. Пиотровский, Пророческое движение в Аравии в 7 веке (Сб. Ислам. религия, общество, государство, М., 1988).
9. Программа Исламской партии Курдистана (см. М. Гасратян "Курдская проблема в Турции", М., 2001, стр. 207-208).
10. Там же.

11. Там же.
12. Там же.
13. Специальное заявление Патриотического Союза Курдистана, 19.09.2001 г.
14. Там же.
15. Там же.
16. Там же.

## ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

### ՄԱԿ-ը ԵՎ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԱՄՆ-ի ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅՈՎ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած Իրաքին վերաբերող փաստաթղթերի ռազմաճակատայինը ցույց է տալիս, որ սկսած 1991թ.-ից մինչև 2003 թ. ընկած ժամանակահատվածին բնորոշ է խաղաղության հաստատման, տարածաշրջանում անվտանգության ապահովման հետևողական առաքելությունը:

1991 թ. ստեղծված UNIKOM-ը՝ ՄԱԿ-ի շրջանակում իր դիտորդական գործունեությանը քաղաքացիական համադրությամբ համապատասխան սամկցիաների ընդունման համար: ՄԱԿ-ի 2000թ. ընդունած որոշումները այդ են ընկնում ծրագրերի ժամկետների երկարաձգմամբ<sup>1</sup>:

1980-1988թթ. իրանա-իրաքյան պատերազմը, 1990թ. օգոստոսին Իրաքի ներխուժումը Քուվեյթ քելադրում էին համապատասխան քայլեր շարժված Իրաքի տնտեսության դեմ: Այդ սամկցիաների նպատակը Իրաքին հետագա ռազմական գործողություններից ետ պահելն էր, և որոշակի ուժային հավասարակշռության ապահովումը տարածաշրջանում:

Հատկապես քննադատական է տնտեսական գործունի կարևորումը այդ ժամանակահատվածում: Նավթի և նավթամթերքների վաճառքին քելադրվող պայմանները, «Ֆալթ» պարենի դիմաց» ծրագիրը, Իրաքի արտաքին քաղաքականության դրսևորումներին ի պատասխան, ՄԱԿ-ի գործունեության շարունակական մասն էին կազմում<sup>2</sup>:

ՄԱԿ-ի անունից գործող սոցիալական և տնտեսական քննադատականի տարածաշրջանային հանձնաժողովներից Արևմտյան Ասիայի գործերով հանձնաժողովի կենտրոնը, մինչև 2003թ. պատերազմական իրադարձությունները, գտնվում էր Բաղդադում<sup>3</sup>:

Չպետք է անտեսել, որ Իրաքի տնտեսությունը լրջորեն տուժել էր նախ իրանա-իրաքյան պատերազմից: Խաթվված տնտեսությունը վերականգնելը պահանջում էր առնվազն 230 մլրդ ԱՄՆ դոլար: Անգամ եթե յուրաքանչյուր դոլարը հատկացվեր տնտեսության վերակառուցմանը, վերականգնողական աշխատանքների նպատակին, դարձյալ կպահանջվեր գրեթե երկու տասնամյակ: Արդեն իրանա-իրաքյան պատերազմական գործողությունների ավարտից մեկ տարի անց Իրաքի նավ-

քից առացված 18 մլրդ դոլար շահույթը բավարար չէր անգամ ընթացիկ ծախսերը հոգալու համար: Քաղաքացիական ոլորտի ներմուծման ծախսերը 12 մլրդ դոլարի շրջանակում էին, որից 3 մլրդ դոլարը հատկացվում էր սննդամթերքին, իսկ ռազմական նպատակով ներմուծվող ապրանքների արժեքը գերազանցում էր 5 մլրդ դոլարը: Ավելացնենք, որ Իրաքի սրբաբեր, որը անհրաժեշտ էր վերադարձնել, կազմում էր 5 մլրդ դոլար: Արտասահմանյան բանվորներին հատկացումները հասնում էին 1 մլրդ դոլարի: Սադրամ Հուսեյնի վարչակարգին տարեկան անհրաժեշտ էր ևս 10 մլրդ դոլար, ընթացիկ դեֆիցիտը հավասարակշռելու համար<sup>4</sup>:

Քուվեյթ ներխուժման առանցքում նույնպես գլխավոր նպատակը տնտեսական շարժառիթն էր:

Հայտնի է, որ OPEC-ի որոշ անդամներ, հատկապես Քուվեյթը և Աբուբական Միացյալ Էմիրությունները, շարունակում էին զգալի կերպով բարձրացնել իրենց քվոտաները, դրանով իջեցնելով մավթի համաշխարհային ընդունված գները<sup>5</sup>:

Այդ իրավիճակի և Իրաքի անհանգստությունների ապացույցն է նաև այն, որ 1990թ. փետրվարին Քուվեյթ կատարած աշխատանքային այցելության ժամանակ Իրաքի նավթային արդյունաբերության մախարար Իսամ Աբդել Ռահիմ ալ Հալաբին փորձում էր համոզել հաշվի առնել տարվա սկզբին OPEC-ի սահմանած նավթային նոր քվոտաները: Այդ նույն առաքելությանը նա այցելեց նաև ար-Ռիադ: Իսկ ժնեվում 3 ամիս անց, նա կարևորում էր ընդունված՝ օրական 22 մլն բարելի սահմանը պահպանելը և ջանում համոզել մավթի գինը բարձրացնել մինչև 18 ԱՄՆ դոլար, մեկ բարելի դիմաց<sup>6</sup>: Դրա հաստատումն է այն փաստը, որ արդեն Իրաքի համոզելի պատժամիջոցների ընդունումից հետո ՄԱԿ-ի անդամ պետություններից մի քանիսը, այդ քվոտա Ֆրանսիան և Ռուսաստանը, համոզես էին գալիս այդ սանկցիաների մեղմացման օգտին: Սակայն որոշ վերլուծաբանների կարծիքով, ԱՄՆ-ը սանկցիաների հարցում այն տեսակետին էր, որ Իրաքի վերադարձը նավթային շուկա բացասաբար կանրադատար Սաուդյան Արաբիայի շահերին: Վերջինիս տնտեսությունը լրջորեն տուժել էր Իրաքի դեմ ռազմական գործողությունների նպատակով 55 մլրդ դոլար տրամադրելու պատճառով:

Մինչ Իրաքի վարչակարգը զբաղված էր իր երկրի վրա ծանրացած տնտեսական պատժամիջոցների պայմաններում տեղավորվել ստեղծված իրադրության մեջ, գլխավոր շեշտը դնելով ներմուծվող և արտահանվող ապրանքների շրջանակը հնարավորինս լայնացնելու վրա, սաստկացավ ճակատագրական մեղադրանքը ԱՄՆ-ի կողմից, այն է՝ մարդկությանը սպառնացող զանգվածային ընթացման գնացքի արտադրությունը Իրաքին հասցնագրելը: Այս առումով ուշադրության արժանի փաստաբույր է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1999թ. դեկ-

տեմբերի 17-ի թիվ 4084 որոշումը<sup>8</sup>, համաձայն որի ստեղծվեց նոր հանձնաժողով: 39 կետերից բաղկացած այս փաստաթուղթը ընդունվեց միաձայն, ձեռնպահ մնացին Չինաստանը, Ֆրանսիան, Մալազիան, Ռուսական դաշնությունը:

Այս նպատակով հետագայում ստեղծվեցին նոր հանձնախմբեր և մարտկոչայան առջև Իրաքը ներկայացվեց, որպես հույժ կասկածելի և վտանգավոր երկիր, քանի որ խոսքը վերաբերվում էր զանգվածային բնաջնջման երևակայական զինապահեստներին և այլն: ՄԱԿ-ի տեսչաների հետ Իրաքի վարչակարգի աշխատանքը ցավոտ և երկարաժամկետ քանակությունների շրջա է: Այն այդպես էլ իր ավարտին չհասավ:

Եվ քանի որ, հատկապես ԱՄՆ-ի կողմից գնալով ահազմանում էր Իրաքի դեմ ռազմական գործողությունների վտանգը, լարված պայմաններում հայտնվեց նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում՝ 2002թ. սեպտեմբերի 12-ի իր ելույթում հատուկ ընդգծեց, որ միայն ՄԱԿ-ը կարող է որոշում ընդունել Իրաքի դեմ ռազմական ուժ գործադրելու վերաբերյալ: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը ՄԱԿ-ի ամբիոնից խոսում էր անզան իր երկրի ինքնապաշտպանության մասին, և խնդիրը տեղափոխվեց բոլորովին այլ դաշտ՝ աներիկա-իլրաքյան ռազմական կոնֆլիկտի հասունացման հետանկարով: Կոֆի Անանը հավատարիմ մնալով ՄԱԿ-ի կանոնադրությանը, պնդում էր, որ «միջազգային խաղաղությանն և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում ոչինչ չի կարող փոխարինել ՄԱԿ-ի որոշումների օրինականությանը»: Միաժամանակ նա ավելացրեց՝ «եթե որևէ երկիր համախա է դիմում միջազգային հաստատություններին, հարգելով ընդունված արժեքները և իր վրա վերցնելով համապատասխան պարտավորություններ, ապա մյուս երկրները մույնպես կվստահեն և կհարգեն նրան», քանի որ մույնիսկ անենահզոր պետությունները «միջազգային կազմակերպություններում մյուս պետությունների հետ» պարտավոր են համագործակցեն: Կոֆի Անանը բազմիցս պնդում էր, որ «Իրաքի խնդիրը լուծվելու է ՄԱԿ-ի կողմից...»<sup>9</sup> և իր աշխատանքը նպատակաուղղել էր, որպեսզի Իրաք վերագտնան ՄԱԿ-ի զինվորական տեսչաները, և աշխարհը համոզվի ներկայացված տվյալների հարցում: 1990թ. Իրաքի Զուվեյր ներխուժումից հետո ընկած ժամանակահատվածում ՄԱԿ-ը հետևողական կերպով իրականացնում էր Իրաքի վրա ռազմական վերահսկողությունը, հանձնախմբերի միջոցով:

Սակայն ՄԱԿ-ի նշված ժողովից ընդամենը երեք օր անց, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմական օդանավերը հեքթակն անզան ուժակոծեցին Իրաքի հարավը: «Տեղական ժամանակով 9:35-ին ամերիկյան և բրիտանական օդանավերը խախտեցին մեր օդային տարածքը: Զուվեյթում տեղաբաշխված ռազմականներինց նրանք 38 թփիչ կատարե-

ցին», հայտարարեց Իրաքի զինված ուժերի մասիո քարտուղարը երկրի պաշտոնական լրատվական գործակալության թղթակցին, նշելով, որ «Դիսիլարի մարզում ռմբակոծվել են քաղաքացիական և ռազմական շինություններ»:

Յլոդիյայի մահանգի Տամպա քաղաքում ԱՄՆ-ի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը հաստատեց այդ տեղեկությունները, ավելացնելով, թե օդային զոհերը «Իրաքի վերջին գործողությունների պատասխանն են»: Թե ինչ «գործողություններ» էին վերագրվում Իրաքին այդպես էլ հայտնի չլսարձակ, քանի որ այդ շրջանում, հիմնականում, ՄԱԿ-ի զինվորական տեսուչների Իրաք թողնել-չթողնելու մասին խաղաղ բանակցություններ էին տարվում Իրաքի վարչակարգի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջև: Ըստ Ռոյթեր գործակալության, ամերիկա-բրիտանական ռազմաօդանավերը ճշգրիտ նշանակության զենք են օգտագործել Բադդադից 260 կմ հարավ ընկած Թալի քաղաքի հակաօդային պաշտպանության կայանների դեմ<sup>10</sup>:

Այս կարգի ռազմական զոհերը Իրաքի վրա ԱՄՆ-ի և նրա դաշնակիցներից՝ հատկապես Մեծ Բրիտանիայի աջակցությամբ, զնալով հաճախակի բնույթ էին կրում, իսկ սեփական վարչակարգից Իրաքն «ազատագրելու» կոչերը լեզունգներից վեր էին ածվում շրջադարձային գործողությունների: Աշխարհի շատ երկրներում, այդ թվում հենց ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցող լայնածավալ բողոքի ցույցերն ու ընդվզումները ի գորտ չեղան կասեցնելու նրանց ռազմական ծրագրեր իրականացնել Իրաքում:

2003թ. մարտի 20-ին Մոսկվայի ժամանակով առավոտյան ժամը 4-ին լրացավ ԱՄՆ-ի կողմից Իրաքի մախագահ Մադդամ Հուսեյնին առաջարկված ուլտիմատումի ժամկետը: Ամերիկյան կողմը սանձազերծվող պատերազմը որակեց «Ազատություն Իրաքին» նշանաբանով: Դրա մախօրենի, 2003թ. մարտի 19-ին, գլխերը Նյու Յորքում կայացավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միստը: Միջազգային հանրությունը քանում էր ամեն զեով կասեցնել պատվող պատերազմը Իրաքում, և նա պահել Բուշին իր որոշումից: ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի հիմնգետը Գավատտրմի հրամանատար Թիմոթի Հիթինգի համոզմամբ «ազատությունն» Իրաքում կրևածի «երկու օրվա ընթացքում»<sup>11</sup>:

Այդ առիթով ուշագրավ է ֆրանսիական ազդեցիկ շաքաթաթերթի «L'Express» 2003թ. մարտի 20-ի համարում տպագրված «Վատաղության ամերիկյան տարրերակը ամհանգստացնում է Արևելքին» հոդվածը, որի հեղինակն է մեկնարան Վինսեն Գյուժոն<sup>12</sup>. Ֆրանսիացի մեկնարանը այն կարծիքին է, որ Վաշինգտոնի փորձերը տարածաշրջանի երկրներին պարտադրել արևմտյան տարրերակի դեմոկրատիա, որպեսզի իշխանության գան ԱՄՆ-ի նկատմամբ լոյալ քաղաքական ուժեր, հագիլ



քննադատվեմ: «Ազատ և արդար» ընտրությունների արդյունքում իշխանությունը կարող է հայտնվել իտալական կուսակցությունների ճեղքում: Այդ պատճառով էլ ամերիկացիները մինչև այժմ միշտ մախրեցան ինչ գործ ունենալ, ավելի շուտ, լուսավորված բուրձակների հետ, քան ռուսական խաղեր խաղալ ընտրությունների հետ»<sup>13</sup>:

Միաժամանակ մշվում է հեքսական հարվածների հերակա երկրների ցանկը՝ «Պատերազմն Իրաքում դեմոկրատիա հաստատելու ընդամենը երկրորդ փուլն է արաբա-մահմեդական աշխարհում ԱՄՆ-ի լայնածավալ ծրագրերում: Առաջինը իրականացվեց Ավդաճառանում, հետո հերթը կհասնի Իրանին, ևս մեկ երկրի, որը մտնում է «չարիքի առանցքի մեջ»: Դրանից հետո կենտրոնը՝ Մատրյան Արաբիան, Սիրիան և Պաղեստինյան ինքնավարությունը»<sup>14</sup>:

Իրաքի դեմ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից պատերազմի հենց առաջին օրը Ռուսաստանի դաշնության մախագահ Վլադիմիր Պուտինը ելույթ ունենալով իր երկրի ուժային մախարարների առջև, դատապարտեց այդ պատերազմը, այն որակելով որպես «քաղաքական մեծ սխալ»: Այդ ելույթում մշվեց, որ անպատասխան մնաց այն «կարևոր հարցը» քննարկելով Իրաքը ունի զանգվածային բնաջնջման զենքեր, երբ այդ, ապա ինչ միջոցների օգնությամբ և ինչ ժամկետներում պետք է դրանք վնասագործել: «Իրաքը մինչև պատերազմը վտանգ չէր ներկայացնում ո՛չ իր հարևանների և ո՛չ էլ տարածաշրջանի համար», մշեց Պուտինը, ավելացնելով, որ տասնամյա տնտեսական ենթարգոյի հետևանքով, Իրաքը ռազմական և տնտեսական տեսանկյուններից բույր է, և քանի որ փորձագետները հաջողությամբ աշխատեցին, վտանգը ավելի նվազեց:

Չի կարելի բույր տալ «արաբազի միջազգային իրավունքի փոխարեն բռնազորի իրավունքը գործի, համաձայն որի ուժերը միշտ իրավացի է և կարող է ամեն ամեն ինչ, իր միջոցները ընտրելիս չընդունելով որևէ սահմանափակումներ»<sup>15</sup>:

Ռուսաստանի դաշնության մախագահի մամուլ ծառայության, այդ առիթով տարածած հայտարարության մեջ սաղվում է, որ Պուտինը Բուշին հայտնեց նաև իր տեսակետը, որ «Միացյալ Ազգերի կազմակերպությունը և Անվտանգության խորհուրդը ցանկացած իրադրության դեպքում պետք է խաղան գլխավոր դերը՝ Երկրագնդի վրա խաղաղության պահպանման և կայունության գործում»<sup>16</sup>:

Այդ առումով բազմիցս հիշատակվում էր ԱՄՆ-ի Խարտիան և միջազգային իրավունքը, որոնց նորմերի հետ խորը հակասության մեջ է ԱՄՆ-ի վարած քաղաքականությունն Իրաքում:

Ընդ որում, նման մտահոգություններով հոդվածներ տպագրեցին նաև Գերմանիայում հրատարակվող "Frankfurter Allgemeine Zeitung" և "Die Welt" պարբերականները:

ՄԱԿ-ի կանոնադրությունը արգելում է ուժի սպառնալիքը կամ նրա կիրառումը ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այդպես էլ այլ դրսևորումներ, համարելով անհամատեղելի ՄԱԿ-ի նպատակների հետ (կետ 4, հոդված 2)<sup>17</sup>:

Դրանով ամրացված է պետությունների տարածքային անձեռնմխելիության սկզբունքը, ինչը կարևոր նշանակություն ունի: Առաջին՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը վերջնականապես և անշրջելիորեն արգելում է ուժի կիրառումը տարածքային անձեռնմխելիության դեմ: Երկրորդ՝ կանոնադրությունը համոզիաստու է ամենաբազմակողմ միջազգային պայմանագիրը և համապատասխանաբար ամրացված է տարածքային անձեռնմխելիության սկզբունքը, որպես միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունք բոլոր պետությունների համար<sup>18</sup>:

Ուրեմն, ինչպե՞ս քացատրել, հենց միջազգային իրավունքի նորմերի կուպիտ ոտնահարումը, որի ակամատեսը դարձավ մարդկությունը 2003թ. մարտ-ապրիլ ամիսներին ի դեմս ԱՄՆ-ի սանձազերծած պատերազմի Իրաքի դեմ:

«Կարևոր փաստաթուղթ հետպատերազմյան Իրաքի վերակազմավորման և ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ» այս վերնագրով հոդվածի հեղինակն է պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը<sup>19</sup>: Դա «Իրաքում ԱՄՆ-ի հետկոնֆլիկտյան քաղաքականության ղեկավար սկզբունքները» փաստաթուղթն է, որը համատեղ մախապատրաստել են ԱՄՆ-ի Ջեյմս Բիքերի քաղաքականության ինստիտուտը և Արտաքին քաղաքականության խորհուրդը, և որը դրվել է պրեզիդենտ Ջորջ Բուշ կրտսերի սեղանի վրա:

Հոդվածագիրը հիշեցնում է, որ Ջեյմս Բիքերն ԱՄՆ-ի պետական քարտուղարն էր 1988-1992թթ. Ջորջ Բուշ ավագի նախագահության շրջանում: Այդ ինստիտուտը ԱՄՆ-ի կարևոր և հեղինակավոր ուղեղային կենտրոններից մեկն է, որի սեփուհն է Էդվարդ Ջերեյանը: Հոդվածում նշված է՝ «փաստաթղթի ծանուցությունը և առանձին հատվածների վերլուծությունը ցույց են տալիս, որ դա ընդգրկում է անվտանգության, Իրաքի վերակառուցման և կառավարման, տնտեսության վերականգման և մեքսիկո-արևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի առանցքային հիմնախնդիրները, որոնց կիրառումը Բուշի կառավարության կողմից պետք է նոր իրադրություն ստեղծի ինչպես Իրաքում, այնպես էլ տարածաշրջանում, իսկ ավելի լայն առումով աշխարհում»<sup>20</sup>:

Հետաքրքիր փաստ է, որ ամերիկա-իրաքյան հարաբերությունների հետագա ընթացքը հաստատում է վերը նշված փաստաթղթի որոշ համգուցային սկզբունքների իրականին մոտ լինելը: Հոդվածում նշված է՝ «նախատեսվում է Իրաքի պատերազմից ամփոսպես հետո կամ անցման առաջին շրջանում ստեղծել արտակարգ՝ անցումային կառավարություն, որը պետք է ունենա իրաքցի խորհրդակամներ: Անցումային երկրորդ փուլում պետք է կազմավորվի միջազգայնորեն և ՄԱԿ-ի կողմից վերահսկվող Իրաքի կառավարություն, իսկ երրորդ՝ ավարտական փուլում պետք է ստեղծվի ինքնիշխան Իրաքի կառավարություն»<sup>21</sup>:

Իրաքյան վարչակարգի տապալումն Իրաքում վերջանելու չի կարող դնել Ամերիկա-իրաքյան կոնֆլիկտին: Վերը նշված փաստաթղթի կետերը հաջորդաբար ի հայտ են գալիս:

2003թ. ապրիլի 15-ին Ուր քաղաքի մոտակայքում, որը համարվում է քիթլիական Արբահամի ծննդավայրը, տեղի ունեցավ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների նշանաբանով հավաք: Իսկ դրա նախօրեին ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելը հայտարարեց, որ նավթը կծառայի Իրաքի ժողովրդին և նրա սեփական քաղաքականը: Մտաւորապես 58 երկրներ արդեն ցանկություն են հայտնել մասնակցելու Իրաքի վերականգման ու վերակառուցման աշխատանքներին: Միաժամանակ նշվեց, որ ԱՄՆ-ը ձգտում է համագործակցել նաև ՄԱԿ-ի հետ<sup>22</sup>:

Եվրամիության Իրաքում գործող հումանիտար առաքելության ղեկավար Պոլ Նելսոնը 2003թ. մայիսին հայտարարեց, որ այդ երկրին տրվող հումանիտար օգնությունը պետք է զտնվի ՄԱԿ-ի նսկություններից, այլ ոչ քե ԱՄՆ-ի: Նա ավարտելով իր երկօրյա այցը Իրաք, քննարկեց հումանիտար օգնության առաքման այն հնարավորությունները, որոնց միջոցով կարելի կլինի շրջանցել ամերիկյան գործակալությունները: Նրա այցելության ծրագրում բոլորովին տեղ չէր գտել Իրաքում ԱՄՆ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի հետ քամակցություններ վարելու հնարավորությունը: Եվրամիությունը ծրագրում է Բաղդադում մոտ ժամանակներս բացել հումանիտար առաքելության բաժանմունք, որը կիմնականում կըրադվի առողջապահության և ջրի սամիտարական մաքրության հարցերով<sup>23</sup>:

Ուշագրավ են նաև կաղրային փոփոխությունները Բաղդադում, Իրաքի ամերիկյան ժամանակավոր վարչակազմում, որոնք կատարում է Բուշը: Ամերիկյան զանգվածային լրատվամիջոցները հաղորդեցին, որ Վաշինգտոն է վերադարձել Բաղդադի «քաղաքապետ» հայտնի դիվանագետ Բարբարա Բոդինը: Մայիսի 12-ին Բաղդադ է ժամանել Իրաքում ԱՄՆ-ի ժամանակավոր վարչակազմի նոր ղեկավար Փոլ Բրեմերը, որը փոխարինելու է նորանշանակ կառավարիչ, գեներալ Ջեյ Գարներին: Այս պաշտոնափոխությունների պատճառով Իրաքում տիրող իրադրուք-

յան վատթարացումն է: Բնականում կրանքը չի վերականգնվել: Մերք ընդ մերք տեղի են ունենում փոխերածգություններ: Մայրաքաղաքի էլիկտրամատակարարումը կվերականգնվի 2 ամսից ոչ շուտ: Նոր վարչակազմի աշխատանքը ընդամենը երեք շաբաթվա կենսազրոյթյուն ունի, սակայն արդեն տեղեկացնում են, որ Բաղդադից հեռանալու են «տեղեկատվության մախարար» Մարգարեռտ Թիթուայլերը, «արդյունաբերության և հանքային ռեսուրսների մախարար» Թիմ Քարնիին, ինչպես նաև ժամանակավոր վարչակազմի երկու ներկայացուցիչներ՝ Դևիդ Դանֆորդը և Ջոն Լինքերտը<sup>24</sup>:

Պատահականություն չէ, որ ԱՄՆ-ը զիջումներ է անում Իրաքի հարցում: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկմանն է դրվել Իրաքին վերաբերվող բանաձևի նոր մախագիծ: ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Նեգրոպոլտոնն Բիրիսիի թրթալցին հայտարարել է, «Մենք հնարավոր ամեն ինչ արեցինք, որպեսզի բանաձևի այս մախագիծում ստավելագույնս հաշվի առնվեն ԱԽ՝ անդամ բոլոր երկրների արտահայտած ցանկությունները»: Նա ավելացրել է, որ տվյալ մախագիծը «վերջնական տարրերակ» է: Նոր մախագիծով նաև առաջարկվում է 6 ամսով երկարաձգել ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը, միևնույն ժամանակ տարրերակում մախատեսվում էր 4 ամսում այն աստիճանաբար կրճատել:

Փաստաբոլքի մախտը տարրերակում «սկուպացիոն ուժերի» ներկայության համար մախատեսված էր 12 ամիս, որը կարող է երկարաձգվել, եթե ԱԽ-ն այլ որոշում չկայացնի:

ԱՄՆ-ը նաև համաձայնվում է վերանայել ՄԱԿ-ի տեսչների մանդատը: Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը պնդում են, որ միջազգային տնտեսները պաշտոնապես հաստատեն Իրաքի զինաբախումը՝ մախքան հակաիրաքյան պատժամիջոցների վերացումը:

Իրաքի պարտքերի հարցը նույնպես լուծում կստանա քազմակողմ այնպիսի կազմակերպությունների շրջանակում, որոնցից է վարկատուների Փարիզյան ակումբը<sup>25</sup>: Այս նոր մախագիծը ընդունվեց, սակայն սրանով քննվ չի ավարտվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի առաքելությունը և դեռևս Իրաքի հասարակական-քաղաքական և տնտեսական քննազավատներում:

Բավական է նշել, որ Իրաքում 2003թ. մայիսի վերջին լուծարվել են պաշտպանության մախարարությունը, տեղեկատվության մախարարությունը, երկրի Ազգային գվարդիան: Իսկ ամերիկյան քանակը Իրաքում մտադիր է մնալ դեռևս, առնվազն, երկու տարի<sup>26</sup>:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում տեսչական խմբի ղեկավար Հանս Բլեքսը 2003թ. հունիսի 5-ին ներկայացրեց իր գլխավորած խմբի առուզումների մասին վերջնական եզրակացությունը՝ «Երեքուկես ամիս

տևած մեր ստուգումների արդյունքում չենք հայտնաբերել զանգվածային ունիտարներ որևէ զենք: ... Այսուհանդերձ, չի կարելի ասել, որ Իրաքում չկան մնացած զենքեր: Կան հարյուրավոր տեղամասեր, որոնք մեր կողմից դեռևս ստուգված չեն»<sup>27</sup>:

Իրաքում մարդու իրավունքների, երկրի կյանքում կանանց մասնակցության, երեխաների իրավունքների պաշտպանության, մերձակա շրջապատի բնապահպանության և այլ խնդիրների հետ մեկտեղ, ՄԱԿ-ը ստիպված է լինելու մաս որոշակի վերափոխումներ կատարել իր կազմակերպության մեջ, իրաքյան վերջին իրադարձություններից հետո: Իրաքյան ճգնաժամը, իրոք որ, թելադրում է, որոշակի բարեփոխություն ՄԱԿ-ի շրջանակում<sup>28</sup>: Հատկանշական է մաս, որ ՄԱԿ-ի դերի կայունացումը անհրաժեշտ է անդամ պետություններից յուրաքանչյուրին, այդ թվում մաս ԱՄՆ-ին:

KARINE SAMVELYAN

### THE UNITED NATIONS AND THE PROBLEM OF MILITARY OPERATIONS BY THE USA AGAINST IRAQ.

The article deals with the analyses of the role of United Nations in social-political and economic life of Iraq in period of 1991-2003 years.

It included the examination of resolutions and statements of Security Council of United Nations, concerning the economic sanctions against Iraq and its results.

Among the significant social-political and economic factors of regional importance is the role of United Nations in Iraq after the overthrow the regime of Saddam Hussein.

ՇԱՆՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

\* UNIKOM – United Nations Iraq Kuwait Observer Mission

1. Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, երևան, 2002, էջ 137-146:
2. Shu' Press Release Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1996; 1997; 1998.
3. Р.Дж.Фельтхэм, Настольная книга дипломата, пер. с англ. Минск, 2000, с. 104.
4. Робин Дж. Андейк, "Саддам Хусейн", полит.биограф., Ростов на Дону, 1999, с. 365.
5. Նույն տեղում, էջ 372:
6. Նույն տեղում, էջ 373:
7. Նույն տեղում, էջ 504:

8. Press Release Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1999, p. 86-92.
9. «Ազգ», 13, IX, 2002, էջ 5:
10. Առյժն տնդրոժ, 17, IX, 2002, էջ 5:
11. "Известия", 20, III, 2003, с. 1.
12. Sbu "Деловой экспресс", 22, III, 2003, с.8.
13. Առյժն տնդրոժ:
14. Առյժն տնդրոժ:
15. Առյժն տնդրոժ, էջ 9:
16. Առյժն տնդրոժ:
17. Курс Международного права, М., Наука, 1989, с. 105.
18. Առյժն տնդրոժ, էջ 106:
19. «Ազգ», 29 III, 2003; "Новое время" 19, IV, 2003.
20. Առյժն տնդրոժ, էջ 4:
21. Առյժն տնդրոժ:
22. "Известия" 29 IV, 2003, с. 4.
23. Առյժն տնդրոժ, 8, V, 2003, էջ 4:
24. «Ազգ», 13 V, 2003, էջ 5:
25. Առյժն տնդրոժ, 21, V, 2003, էջ 5:
26. "Известия" 24 V, 2003, с. 4.
27. «Ազգ», 6, VI, 2003, էջ 1:
28. "Известия" 14, V, 2003, էջ 4:

## ՄՆԱՑԱԿԱՆ ՍԱՖԱՐՅԱՆ

### ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ

#### 1. Չինաստանը տնտեսական հզորության և քաղաքական զարգացման ճանապարհին

Չինաստանը և չինացիները հայ պատմագրության մեջ հիշատակվում են 5-րդ դարից սկսած: Հիշատակումների մի մասը վերաբերում է Չենց (Միվնիկա, Մենաստան, Չինուսայիմ) երկրի աշխարհագրությանը (Անանիա Շիրակացի, Ղևոնդ), իսկ մյուսը՝ Մամիկոնյան մախարարական տան առաջացմանը (Փավստոս Բյուզանդ, Մովսես Խորենացի): Եթե Չենց երկրի աշխարհագրական դիրքի վերաբերյալ տեղեկությունները հիմնված են քավակամին ճշգրիտ ուսումնասիրությունների վրա, ապա Մամիկոնյանների տան սերման պատմագրական հիշատակումների մեկնարարության շուրջ ժամանակակից պատմաբանների շրջանում գոյություն ունի տարակարծություն: Խուսափելով հակասական մեկնարարություններից, մշենք միայն, որ աղբյւն վաղ միջնադարի հայ գիտնականները քաջատեղյակ են եղել Երկնատակի Կայսրության գոյությանը և, ամզած՝ համեմատաբար ստույգ տեղեկություններ են հաղորդել այս հետավոր երկրի բուսական և կենդանական աշխարհի, ժողովրդի կենցաղի ու բարքերի, տեղի ապրանքատեսակների և այլնի մասին: Ամենայն հավանականությամբ այս տեղեկությունները ստացվել են Չինաստանից Միջին Արևելք և Եվրոպա տանող առևտրական մայրուղիների երկայնքով գործող քաղաքականների միջոցով և՛ մեզ հասել չափազանցված չաքստղմամբ:

Չինաստանը հեռավորարևելյան քաղաքակրթության մշակութային ինսուլսների օրբամն է: Այստեղ են ծնունդ առել տարածաշրջանի մի շարք ժողովուրդների պատմական զարգացումը, մտածելակերպը, կենսագործունեությունը պայմանավորող բազմաթիվ փիլիսոփայական ուղղություններ, ուսումնքներ ու սովորույթներ, պետական, հասարակական, կրթամշակութային կյանքի նորամուծություններ: Ցանցզե և Խուանիս գետերի ավազաններում իրաք են հաջողվել ցիլլային վերելք և ամկում ապրող կայսրություններ և բազավորություններ: Դրանցից վերջինին՝

Ցինգ կայսրությանը, ժամանակակիցները դասել են աշխարհի ամենա-  
զարգացած երկրների շարքին: 1750 թվականին «եբրոդդ աշխարհի»  
երկրների, որոնց շարքում առանձնանում էին Չինաստանը և Հնդկաս-  
տանը, քաժին էր ընկնում արդյունաբերական արտադրության 73 տոկո-  
սը, իսկ Արևմտյան Եվրոպայի երկրներին՝ 20 տոկոսը: 19-րդ դարի կես-  
երկից սկսված անկումը Չինաստանը կայողացել է հարքահարել մոտ  
մեկ դար տևած պայքարի արդյունքում՝ վերապրելով զարթոթացումը, հե-  
ղափոխությունները, համաշխարհային ու քաղաքացիական պատե-  
րազմները:

Չինաստանն իր խնքնիշխանությունը վերականգնել է 1949թ.-ին՝  
հռչակելով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը:

Ընդհանուր առմամբ՝ անցած հինգ տասնամյակների ընթացքում  
ՉԺՀ-ն անցել է կայուն զարգացման ճանապարհ: 70-ականների վերջե-  
րին Դեն Սյաոպինի հռչակած բարեփոխումների ժողին բռնելուց հետո,  
Չինաստանին մինչ այժմ հաջողվել է պահպանել տնտեսական զար-  
գացման աշխարհում առկա ամենադինամիկ ցուցանիշները: 1978-  
2001թթ. ընթացքում երկրի ներքին համախառն արտադրանքի Լ-ՀԱ/  
միջին տարեկան աճը կազմել է 9.3 տոկոս: 2002թ. Լ-ՀԱ աճը կազմել է 8  
տոկոս՝ հասնելով 10 տրիլիոն յուանի<sup>2</sup> ընդհանուր ծավալի<sup>3</sup>:

Միայն 2002թ. ընթացքում երկրի տնտեսական զարգացման  
տեմպերը մեծապես պայմանավորող օտարերկրյա ուղղակի ներդրում-  
ների ընդհանուր ծավալը տնտեսության մեջ կազմեց 50 մլրդ ԱՄՆ դո-  
լար: «Չորչյն» պարբերականի տվյալների համաձայն՝ 2001թ. դեռու-  
յամբ աշխարհի 500 առաջատար ընկերությունների 80 տոկոսը ներդ-  
րումներ են իրականացրել Չինաստանի ավելի քան 2000 ներդրումա-  
յին մախագծերում<sup>4</sup>:

2001թ. հոկտեմբերի 18-ին ՉԺՀ արտարժույթային պահուստը գե-  
րազանցեց 200 մլրդ ԱՄՆ դոլարը<sup>5</sup>: 2001թ. դեկտեմբերին քազմամյա քա-  
նակցություններից ետոտ՝ ՉԺՀ-ն դարձավ Առևտրի համաշխարհային  
կազմակերպության ԱԿԿ/ անդամ:

ՉԺՀ արտաքին քաղաքականության հիմնական աշխարհաքա-  
ղաքական վեկտորը տարածվում է Միջինասիական և Ասիական-Խա-  
ղաղօվկիսանոսյան (ԱԽՏ) տարածաշրջանների տնտեսական ենթակա-  
ռուցվածքների հնարավոր միաձուլման ուղիների երկայնքով, ինչը  
րխում է այս տարածքների աշխարհատնտեսական զարգացման օրի-  
նաչափություններից: Տվյալ ենթակառուցվածքային համակարգի ձև-  
վորման հիմքն այս երկու տարածաշրջանների երկրների տնտեսություն-  
ների փոխընթացող քնույթն է՝ էներգակիրներով հարուստ Միջին Ասիայի  
երկրները ելք են ստանում դեպի էներգակիրների մեծ պահաջարկ և եր-



կար ժամանակ աշխարհում առկա տնտեսական զարգացման ամենա-  
դինամիկ ցուցանիշները պահպանած տարածաշրջան:

Վերոնիշյալ ծրագրերի իրականացման ուղղությամբ՝ Չինաստանը  
ջանում է լայնածավալ և երկարաժամկետ համագործակցություն  
սահմանել միջինասիական երկրների և Ռուսաստանի հետ երկաթուղա-  
յին, ավտոմոբիլային, ջրային և օդային տրանսպորտի, ինչպես նաև  
նավթի և գազի տեղափոխման խողովակաշարային ենթակառուցվածք-  
ների քննզավառմելու: Այս ծրագրերի մշատակն է հասնել տրանս-  
պորտային ենթակառուցվածքների համատեղ և համակարգված օգտա-  
գործմանը՝ ապահովելով անխափան փոխադրումներ ԱԽՏ - Միջին Ա-  
սիա - Ռուսաստան - Եվրոպա և հակադիր ուղղություններով:

Ասիական-Ռադադովկիանոսյան տարածաշրջանի պատմաճա-  
կութային ժառանգությանը և ներկայիս համաշխարհային տնտեսական  
ինտեգրացիոն զորքընթացների գերազգային քնույրը տարածաշրջանի  
երկրների մոտ ձևավորել են յուրահատուկ մոտեցումներ առկա քաղա-  
քական խնդիրների լուծման ուղղությամբ, որտեղ մեծ դեր են խաղում  
ԱԽՏ կառավարությունների կողմից տնտեսական ինտեգրացման ա-  
ռաջնայնության գիտակցումը, ինչպես նաև մշակութային արժեքների  
ընդհանրությունները՝ հատկապես տարածաշրջանի երկու հզորագույն  
պետությունների՝ Չինաստանի և Վապոնիայի միջև: Այս պատճառով,  
վերջին տասնամյակում Ասիական-Ռադադովկիանոսյան այս կամ այն  
ենթատարածքում ընթացող և, որոշ դեպքերում, քաղաքական եղանակա-  
վորում ստացող տնտեսական ճգնաժամերի հետ մեկտեղ, տարածաշր-  
ջանի առանձին երկրների կամ տնտեսական խմբավորումների միջև  
առևտրատնտեսական կապերի կայուն զարգացումը շարունակում է թե-  
լադրել քաղաքական ստրյեկտների աշխարհաքաղաքական վարքի կա-  
նոնները, որով մեծապես պայմանավորվում է ընդգրկումը ռեգիոնի քա-  
ղաքական և տնտեսական կյանքի զարգացումներում:

Մյաժամամակ, Չինաստանի աճող տնտեսական հզորության  
չուրք ձևավորվող այս քաղաքատնտեսական տարածքի համեմատա-  
կան կայունությունը դրական դեր է խաղում գլոբալ տեղաշարժերի ըն-  
թացքում իրավիճակի մեղմացման ուղղությամբ:

Տարածաշրջանի երկրների տնտեսություններին մեծ վնաս պատ-  
ճառած 1997թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում ցայ-  
տուն կերպով դրսևորվեց ճգնաժամի հետևանքների չեզոքացմանը և վե-  
րացմանն ուղղված միջազգային միջոցառումների իրականացման գոր-  
ծում Չինաստանի տնտեսության և շինական շուկայի կայունացնող դե-  
րը: 1997թ. հուլիսից սկսված ֆինանսական ճգնաժամի պատճառով լրջո-  
րեն վատթարացավ Թայլանդի, Ինդոնեզիայի, Մալազիայի, Հարավա-  
յին Կորեայի, Ֆիլիպինների, Սինգապուրի տնտեսական վիճակը: Ազ-

զային դրամների արժեզրկման միջոցով արտահանման խթանման ուղղված՝ այս երկրների կողմից իրականացված միջոցառումներն ապարդյուն եղան՝ գլխավորապես ճապոնական ինժե արժեզրկման պատճառով: 1998թ. առաջին եռամսյակում Ինդոնեզիայում, Թայլանդում, Մալզիայում, Հարավային Կորեայում գրանցվեց բացասական տնտեսական աճ: Ճապոնական ինժե կորուկ անկումը բերեց ճապոնական արտադրանքի մրցունակության զգալի աճի՝ չեզոքացնելով տարածաշրջանի մյուս երկրների արտահանման բոլոր առավելությունները:

Չինաստանը՝ ճգնաժամի առաջին իսկ փուլում հայտարարելով ֆինանսական ճգնաժամում հայտնված երկրներին օգնելու իր պատրաստակամության մասին, խստացավ չարժեզրկել չինական յուանը՝ տարածաշրջանում տնտեսական որոշակի կայունություն ապահովելու նպատակով: Գնաժամի ընթացքում Արևելյան Ասիայի երկրների ինտենսիվ արտահանումները Չինաստան նպաստեցին դրանց տնտեսության վերականգնմանը<sup>6</sup>:

Բնականաբար ճգնաժամը զգալի ազդեցություն ունեցավ նաև Չինաստանի տնտեսության վրա: Յուանի կայուն կուրսի պահպանումը հանգեցրեց 1-1.5% դեֆլյացիայի: Արտահանման ծավալները 1999թ. առաջին կիսամյակում նվազեցին մոտ 2.4 մլրդ ԱՄՆ դոլարով, բազմաթիվ մանր և միջին ձեռնարկություններ հայտնվեցին սննկացման եզրին, մոտ 1.5-2%-ով նվազեցին ընդհանուր տնտեսական աճի տեմպերը: Չնայած դրան երկրի տնտեսությունը ընդհանուր առմամբ կարողացավ դիմակայել ճգնաժամին:

Գնաժամի հետևանքների վերացման նպատակով ՉԺՀ կառավարությունը 1999-2000թթ. ընթացքում միջոցներ ձեռնարկեց երկրի ընդհանուր տնտեսավարման համակարգում: Ակտիվ հարկա-բյուջետային քաղաքականության շնորհիվ հաջողվեց մեծացնել ներքին սպառման ծավալները, որը՝ ըստ ՉԺՀ Ազգային վիճակագրական տեսչության, 2001թ. առաջին կիսամյակին կազմել է՝ 7.9 % ընդհանուր տնտեսական աճի, 93%-ը: Վերջին երեք տարիների ընթացքում զանազան տարանյալ պարտատոմսերի դիմաց կուտակված գումարները տնտեսական ենթակառուցվածքների շինարարության ծրագրերին հատկացնելով՝ Չինաստանին հաջողվեց մեծացնել արտաքին և ներքին ներդրումների պահանջարկը: Իր ներքին ներդրումների աճ առաջացրեց նաև ներքին սպառման ծավալների մեծացումը: Դրան զուգահեռ՝ 2000թ. ընթացքում մշակվեց Չինաստանի հեռանկալի արևմտյան շրջանների ենթակառուցվածքային և արդյունաբերական շինարարության ծրագիր՝ երկրի ծովամերձ և ներքին տարածքների տնտեսական զարգացման մակաբյուրեղներ միջև գոյություն ունեցող յազվածքը վերացնելու նպատակով:

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման արդյունքում անցին մահ 1997թ. ֆինանսական ճգնաժամից տուժած երկրների՝ Չինաստան արտահանման ծավալները: Ըստ ԾԺՀ մաքսային գերատեսչության տվյալների՝ 2009թ.՝ մախոդ տարվա համեմատ, Ճապոնիայի, Մալազիայի, Ֆիլիպինների, Սինգապուրի, Կորեայի Հանրապետության, Թայլանդի և Մյանմայի (Հոնգկոնգ) արտահանման ծավալները մայրցամաքային Չինաստան աճել էին ավելի քան 20 տոկոսով:

Մյաժամանակ, ին տնտեսագետների կարծիքով Չինաստանի գյուղացիական տնտեսությունների (գյուղական քմակյությունը Չինաստանում կազմում է 65-70%) եկամուտները և արտահանման ծավալները մոտակա տարիներին կպահպանեն ճգնաժամից հետո առաջացած նվազման միտումը, որը կարող է խոչընդոտել՝ ներքին սպառման ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճ ապահովելու՝ ԾԺՀ - կառավարության միջոցառումներին: Սակայն, կարծիքներ կան մահ, որ սպառման ոլորտի կայունությունը, արագ տեմպերով աճող մասնավոր ձեռներեցությունը և՛ վերջին տարիներին քաղականին արդյունավետորեն իրականացվող, պետական ձեռնարկությունների տնտեսավարման վերակառուցումը կրթացնեն ընդհանուր տնտեսական աճի այս բացը:

Ճգնաժամի հարթահարումից հետո միջազգային փորձագետների շրջաններում կարծիքներ են ձևավորվել, որ Չինաստանն աստիճանաբար դառնում է արտաքին պահանջարկից մեծ կախվածության սլայմաններում տնտեսական վերակենդանացում ապրող՝ ասիական մի շարք երկրների և ենթատարածքների սպառման հիմնական շուկա, ինչը Չինաստանի համար ենարակորության է ստեղծում Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հանդես գալ ավելի ամուր քաղաքական դիրքերից<sup>7</sup>: Այսպես, արդեն 2001թ. ԱՄԵԱՆ<sup>8</sup> գումարած 3 (Ճապոնիա, Չինաստան և Հարավային Կորեա) տարեկան հանդիպման ընթացքում ԱՄԵԱՆԻ երկրների և Չինաստանի միջև համաձայնություն ձեռք բերվեց մինչև 2010 թվականը ստեղծել ազատ առևտրի գոտի: Տվյալ մախսածոնությունը, որը անկասկած խաթախված էր վերջին տասնամյակի Չինաստանի տնտեսական վերելքին, ճապոնացի մի շարք վերլուծարանների քերեց այն կարծիքի, որ «Ասիայի տնտեսության առանցքն աստիճանաբար Ճապոնիայից տեղափոխվում է Չինաստան»<sup>9</sup>:

Չինական կապիտալի կուտակման ներկայիս մակարդակը լուրջ մախսադրյալներ է ստեղծել բոլոր աշխարհագրական ուղղություններով երկրի տնտեսության հետագա ծավալման համար:

Բնականաբար, այս ուղղություններից մեկը դառնում է միջինասիական ուղղությունը, որտեղ Չինաստանի տնտեսական կայունությունը խթանում է մահ ԽՍՀՄ փլուզումից ի վեր առևտրատնտեսական կա-

պերի վերածնունդի մասին պայմաններում զարգացող Միջին Ասիայի երկրների, ինչպես նաև Ռուսաստանի միջին և հեռավոր-արևելյան շրջանների տնտեսական վերակենդանացման գործընթացները, ինչն արտահայտվում է տարածաշրջանից էներգակիրների փոխադրումների ծրագրերին ակտիվ մասնակցությամբ, միջինասիական երկրների նկատմամբ բարենպաստ աստորային ռեժիմի պահպանմամբ և այլն: Ավելորդ չէ նշել, որ միջինասիական տարածաշրջանից էներգակիրների փոխադրման վերաբերյալ Չինաստանի պաշտոնական մտածողությունը չեն հակադրվում տարածաշրջանում խողովակաշարերի շինարարության այլ ծրագրերին:

ԽՍՀՄ փլուզումը որոշակի աշխարհագրաքաղաքական գործընթացների ակնարկը դրեց ոչ միայն «խորհրդային ժառանգության» նկրտական, այլև նկրատական հատվածում այն տարրերությամբ, որ այստեղ իր կարևոր է միանգամայն անկախ դերը ստանձնեց Չինաստանը: Նշված աշխարհագրաքաղաքական գործընթացներին Չինաստանի ներգրավումը վերջինիս տնտեսության մեջ որակական և կառուցվածքային աճի պայմաններում, զգալիորեն ամրապնդեցին Պեկինի դիրքերը միջազգային ասպարեզում: Տեղական նշանակության ուժային կենտրոնից Չինաստանն աստիճանաբար վերածվեց նկրատական տարածաշրջանում կատարվող բոլոր կարևորագույն գործընթացներին հաղորդակից պետության, որը հայտարարում է նոր աշխարհակարգի ստեղծմանը, որպես առանձին բևեռ՝ մասնակցելու պատասխանատվություն ստանձնելու իր պատրաստակամության մասին:

Տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման և դրա կայունության ապահովման ենթատեքստում ԶԺՀ-ն 90-ականների կեսերին համդես եկավ տարածաշրջանային անվտանգության համակարգի ստեղծման նախաձեռնությանը: Այս համակարգի անկյունաքարն է ԶԺՀ և ՌԴ միջև «ռազմավարական գործընկերության» զարգացման մտածողությունը, որի մասին երկու երկրներն առաջին անգամ համդես եկան հայտարարությամբ 1996թ.-ի Շանհայի զագաբաժնորդի ընթացքում: Այս ձեռնարկը հետագա տարիների ընթացքում ստացավ միջինասիական տարածաշրջանի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերով պայմանավորված՝ տրամաբանական զարգացում, որը Ալթյանստանում պարբերաբար սրվող քաղաքացիական պատերազմի և այդ երկրում ապաստան գտած զանազան ախլի իսլամական ժայռահեղականների կողմից թիտղջ փտանգի առկայության հետևանքն էր: Արդյունքում այս տարվա հունիսին Ռուսաստանի, Չինաստանի, Ազգայնության, Արդատանի, Տաջիկստանի և Ռոքիկստանի նախագահների՝ Շանհայում կայացած զագաբաժնորդի ընթացքում հայտարարվեց Համագործակցության Շանհայյան կազմակեր-

պոքայան ստեղծման մասին, որը ինստիտուցիոնալ մակարդակի բերեց Չինաստանի մեքզրավումը հետխորհրդային տարածքի երկրների հետ հարաբերություններում: Կազմակերպության ստեղծման հիմնական նպատակներն են՝ տարածաշրջանում արմատ գցած իսլամական խոնդաննետալիզմի առաջխաղացմանը համատեղ ջանքերով դիմակայելը և տնտեսական զարգացման խթանումը:

Կառավիակամ-միջմիասիական տարածաշրջանի տնտեսական և քաղաքական կառույցների ձևավորման ապագայի առումով կարևոր նշանակություն ունենցան՝ 2001թ. հուլիսին կայացած, ԾԺՀ մախսագահ Չյան Չեմինի՝ Ռուսաստան այցի արդյունքները: Այցի ընթացքում ԾԺՀ և ՌԴ-միջև ստորագրվեց «Բարխիդյացիության, քարեկամության և համագործակցության վերաբերյալ պայմանագիրը»: Պայմանագիրը համընդունարի է բերեց վերջին տասնամյակի ընթացքում հարաբերությունների կանոնավորման և ստրատեգիական գործընկերության հաստատման ուղղությամբ երկու երկրների կողմից կատարված քայլերը: Միջազգային իրավիճակի առումով պայմանագրում տեղ գտած կարևորագույն կետը վերաբերվում է ԱՄՆ-ի կողմից միջմայրցամաքային հակահրթիռային գործող կարգի վերանայման միակողմանի քայլերին: Այս կապակցությամբ կողմերը վճռականորեն համոզեց են զայիս տվյալ ասպարեզում գործող պայմանագրի պահպանման օգտին: Պայմանագրում ամրագրված են մաս երկկողմ համագործակցության ոլորտների ողջ համալիրի հետագա զարգացման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը: Ուշաբժան է այն փաստը, որ 1950թ. ի վեր երկու երկրների միջև այս մակարդակի պայմանագիր չի ստորագրվել: Միաժամանակ, պայմանագրի տարրեր հատվածներում նշվում է, որ ուսու-չինական համագործակցությունն ուղղված չէ սրկիցե երբորդ երկրի դեմ:

## 2. Հայ-չինական հարաբերությունների բնույթը և զարգացման դիմամիկան

Չինաստանում հայկական փոքրաթիվ գաղութներ են հիմնվել մոնղոլական առաջին արշավանքներից հետո (13-րդ դարի սկիզբ), երբ Հայաստանից գերիվաճված հայերի մի մասը բնակեցվել է Չինաստանի հյուսիսային շրջաններում:

Նշմարելի է եղել հայ վաճառականների դերը Չինաստանի առևտրում 17-18-րդ դարերում, երբ նրանք ունեցել են անգլիացիներին հավասար իրավունքներ, սեփական նավեր, հիմնել՝ գործարաններ Չինաստանի հարավային ծովափնյա շրջաններում:

Հետագայում ամենախաչատ գաղութը ձևավորվել է Խարքի-  
նում, որտեղ 1930թ. ստեղծվել են «Արծիվ» միությունը, Հայ երիտասարդ-  
ների միությունը և այլն: 1937թ. Շանհայում քնակվել է մոտ 200 հայ:

Հայ համայնքները զգալիորեն տուժել են Երկրորդ համաշխարհ-  
ային պատերազմի տարիներին: 1950-ական թթ. սկզբին Չինաստանի  
հայերի մեծ մասը գաղթել է Ավստրալիա, ԱՄՆ և Ֆիլիպիններ:

Պատմության ընթացքում հայ և չին ժողովուրդների միջև շփում-  
ների երկարածամյակո դադարեցումները պայմանավորվել են ինչպես  
աշխարհագրությամբ, այնպես էլ պատմական զարգացման իրողու-  
թյամբ: Երկու ժողովուրդների միջև ուղղակի կապերի հաստատման և  
միջպետական հարաբերությունների հնարավորություն ստեղծվել է  
ԽՄՀՄ փլուզման արդյունքում:

Հայաստանի անկախացումից ամմիջապես հետո հայ-չինական  
հարաբերությունները՝ մի շարք քաղաքական և մշակութային գործոննե-  
րով պայմանավորված, արագ զարգացման միտում տուցան, որը հե-  
տագայում իր գործնական իրականացումը գտավ՝ աստիճանաբար ին-  
տենսիվացող փոխայցելությունների, փոխանակումների ընթացքում  
տնտեսական և հասարակական կյանքի զանազան ոլորտներում քազ-  
մարնույթ համագործակցության ծավալմամբ և խորացմամբ:

Հայ-չինական հարաբերությունները ծավալային ու բովանդակա-  
յին առումով առաջնային տեղ են զբաղեցնում Հայաստանի ասիական  
քաղաքականության մեջ: Ի դեմս Չինաստանի այսօր մենք գործ ունենք  
միջազգային ասպարեզում անդապնդվող այնպիսի գերտերության հետ,  
որի քաղաքական և տնտեսական շահերը համագործակցության հնա-  
րավորություն են ստեղծում ինչպես մեր ասիական քաղաքականության  
չրջամակնեղում, այնպես էլ Հայաստանի համար կենսական մշանա-  
կություն ունեցող միջազգային խնդիրների կարգավորման ուղղությամբ:

Հայ-չինական պետական շփումների սկիզբը դրվել է 1991 թ. դեկ-  
տեմբերի 27-ին ՉԺՀ-ի (Չինաստանի Ժողովրդական Հանրապետու-  
թյուն) կողմից Հայաստանի Հանրապետության պաշտոնական ճանաչու-  
մից հետո: Դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների  
միջև հաստատվել են 1992 թ. սպռիլի 6-ին: 1992 թ. հուլիսին Երևանում  
սկսել է գործել Չինաստանի դեսպանությունը, իսկ 1993 թ. մարտին՝  
Երևան ժամանել ՀՀ-ում ՉԺՀ դեսպան Ծաո Միլին:

Առաջին քաղաքաստիճան այցը ՉԺՀ տեղի է ունեցել 1992 թ. հու-  
լիսի 2-6-ը, երբ ՉԺՀ պետական խոցիչի (Չինաստանի քաղաքացույց  
գործադիր մարմին) նախագահ Լի Պենի իրավերով Չինաստան է այցե-  
լել Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակությու-  
նը ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գազիկ Հարությունյանի գլխավո-  
րությամբ: Այցելության ընթացքում ստորագրվել են գլոտատեխնիկական

համագործակցության, կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության, ՉԺՀ կողմից Հայաստանին վարկ տրամադրելու վերաբերյալ համաձայնագրերը:

1993-1995թթ. պետական շփումների որոշակի պասիվությունը արդյունք էր հարավկովկասյան տարածաշրջանում տիրող իրավիճակի:

1996 թ. ապրիլին Հայաստան է այցելել ՉԺՀ Պետխոսիքի մախոսգահի տեղակալ, արտաքին գործերի մախարաթ Ցիան Ցիչենը: ՀՀ - դեկավարների հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվել են միջազգային կազմակերպություններում և մասնավորապես ՄԱԿ-ում համագործակցությանը վերաբերող խնդիրներ:

Մի շարք պատվիրակությունների փոխայցելությունների արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունները և զանազան միջազգային խնդիրների վերաբերյալ երկու երկրների դիրքորոշումները և երկկողմ համագործակցության հետագա զարգացման առումով փոխադարձ մտածելումներն իրավական հաստատում են ստացել 1996թ. մայիսին կայացած՝ ՀՀ Նախագահի՝ ՉԺՀ պաշտոնական այցի ընթացքում: Այցի արդյունքում ստորագրվել է ՀՀ և ՉԺՀ միջև քարեկամական հարաբերությունների սկզբունքների վերաբերյալ համատեղ կոմյունիկե, որում ամրագրվել է քարձր մակարդակի միջպետական հարաբերությունների ծավալման փոխադարձ ձգտումը: Այցի ընթացքում ստորագրվել են մաև երկու երկրների կառավարությունների միջև՝ կրկնակի հարկումից խուսափելու, օդազնացության քննազավառում, ՀՀ Կեմտրոմական բանկի և ՉԺՀ Պետական բանկի միջև համագործակցության վերաբերյալ համաձայնագրերը:

1996թ. օգոստոսի 10-ին Պեկինում քացվել է Հայաստանի դեսպանությունը, որն իր քացման առաջին իսկ օրերից ձեռնամուխ է եղել երկու պետությունների միջև կապերի ամրապնդման, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի տարրեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության հնարավորությունների քացահայտման աշխատանքներին:

1997թ. գարնանը Հայաստան է այցելել ՉԺՀ Ժողովրդական ներկայացուցիչների համալինական Ժողովի (Չինատոանի քարձրագույն օրենսդրական մարմին) Մշտական կոմիտեի փոխնախագահ Վան Բինցյանի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ Ազգային Ժողովում ստեղծել ՉԺՀ-ի հետ համագործակցության հանձնաժողով, իսկ ՉԺՀ Ժողովրդական ներկայացուցիչների Համալինական Ժողովում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության հանձնաժողով:

Երկու երկրների միջև ծավալված քաղաքական երկխոսությանը պատշաճ մակարդակ հաղորդելու, տնտեսության քննազավառում քազ-

մաթիվ փոխարացնող հետաքրքրությունների գործնական իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ 1997թ. հոկտեմբերին Հայաստանը բարձրացրել է Պեկինում իր դիվանագիտական ներկայացուցչության մակարդակը: Չինաստանում Հայաստանի առաջին դեսպան է նշանակվել Ազատ Մարտիրոսյանը:

1998 թ. հոկտեմբերին տեղի է ունեցել ՀՀ Պաշտպանության նախարար Վ.Սարգսյանի գլխավորած պատվիրակության այցը Չինաստան: Բանակցությունների ընթացքում քննարկվել են երկու երկրների քանակների միջև համագործակցության ծավալմանն առնչվող հարցեր:

1999թ. ապրիլին Չինաստան է մեկնել գյուղատնտեսության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Վ. Մովսիսյանի գլխավորությամբ: Պաշտոնական հանդիպումներից բացի, պատվիրակությունը այցելել է մեկ տասնյակից ավելի գյուղատնտեսական գիտության և արտադրական ձեռնարկներ և ձեռնարկություններ, այդ թվում նաև՝ Չինաստանի Ռերեյ մահանգում ստեղծված հայկական ծիրանենիների այգի և հայկական հացահատիկի սերմերի փորձակայան (ձեռնադրվել է 1998թ.): Այս առումով չինական կողմի հետ գոյություն ունի պայմանավորվածություն փորձակայանի հիման վրա հետագայում համատեղ վերամշակման գործարան հիմնել: Այցի ընթացքում Չինական կողմը Հայաստանի Համընթացությանը միմի տրակտորներ անհատույց տրամադրելու պատրաստակամություն է հայտնել, որի արդյունքում 2000թ. սկզբին Հայաստանին տրամադրվել են 78 միմի տրակտորներ:

1999 ապրիլի 30-ին ՉԺՀ Կունցին քաղաքում իր աշխատանքն է սկսել «Մարդը և բնությունը 21-րդ դարի շեմին» միջազգային այգեգործական ցուցահանդեսը, որին 95 ալ երկրների շարքում ներկայացված է եղել մաս Հայաստանը: Հայաստանի ցուցասրահը կազմակերպիչների կողմից պարզևատրվել է արձաքյա մրցանակով:

*1997-1999թթ. կտրվածքով՝ աճել է հայ-չինական պաշտոնական և գործնական շփումների ինտենսիվությունը: Մասնավորապես, տնտեսական և գիտական ոլորտներում փոխանակվող պատվիրակությունների այցերի ընթացքում ընդլայնվել են այս բնագավառներում գործնական համագործակցության ծավալները, ակտիվացել իրականացվելիք կոնկրետ ծրագրերի շրջանակներում համապատասխան գերատեսչությունների, կազմակերպությունների և ընկերությունների միջև ուղղակի կապերը: Դրան զուգահեռ՝ շարունակվել է նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող միջազգային և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ կարծիքների փոխանակումը:*

1999 թ. օգոստոսին տեղի է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի պաշտոնական այցը ՉԺՀ, որի ընթացքում Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը խանդավառ է երկրի



վարչապետ Չժու ժունցզիի, արտաքին գործերի նախարար Տան Յզյասյուանի, ՉԺՀ Ժողովրդական ներկայացուցիչների համալիմակամ ժողովի արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ Յզնմ Յզիանհուեյի և այլոց հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են միջազգային կազմակերպություններում երկու երկրների միջև համագործակցության խորացման, տարածաշրջանային անվտանգության հետ կապված հարցեր, կարծիքներ փոխանակվել՝ երկկողմ տնտեսական համագործակցության ոլորտների ողջ համալիքի վերաբերյալ:

Ակտիվացող տնտեսական հարաբերությունների խթանման և համակարգման նպատակով ստեղծվել է հայ-չինական առևտրատնտեսական միջկառավարական հանձնաժողով, որի առաջին նիստը կայացել է Երևանում՝ 1999թ. օգոստոսին: 2000թ. հոկտեմբերին Պեկինում կայացել է հանձնաժողովի երկրորդ նիստը, որի ընթացքում քննարկվել են երկկողմ տնտեսական համագործակցության խնդիրները, ձևեր քերվել՝ կոնկրետ պայմանավորվածություններ՝ մասնավորապես քիմիական արդյունաբերության ոլորտում: Նիստի արդյունքների վերաբերյալ ստորագրված արձանագրությունում կողմերը սահմանել են Հայաստանից Չինաստան սինթետիկ կաուչուկի տարեկան արտահանման ժամանակացույց, ամրագրվել են՝ Չինաստանում «Նախիխտ» ՓԲԸ արտադրանքի հայ-չինական համատեղ արտադրության ծրագրի շուրջ ձևեր քերված պայմանավորվածությունները: Հանձնաժողովի հայկական կողմի նախագահ, ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Ա.Թումանյանի և ՉԺՀ ԱԳ նախարարի օգնական-փոխնախարար Լյու Գույանի հետ միջև կայացած հանդիպման ընթացքում՝ միջկառավարական հանձնաժողովի նիստի արդյունքները քննարկելիս, նրանք մանրամասն անդրադարձել են սինթետիկ կաուչուկի արտադրության հայ-չինական համատեղ ձեռնարկության ստեղծման քանակություններին:

2000թ. նոյեմբերին Հայաստան է այցելել Չինաստանի արտաքին առևտրի և համագործակցության նախարարի օգնական-փոխնախարար Խն Սյաովեյը: ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի, վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ տնտեսական հարաբերությունների, մասնավորապես երկու երկրների միջև արտաքին առևտրի խթանման խնդիրները:

Երկու երկրների միջև ծավալված համագործակցության արդյունքներն անփոփոխելու և քննարկվող տնտեսական ծրագրերի շրջանակներում Չինաստանի ղեկավարության հետ կարծիքներ փոխանակելու նպատակով 2000թ. դեկտեմբերին աշխատանքային այցով ՉԺՀ է մեկնել ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանը: Չինական կողմից հնարավոր քարձր մակարդակով կազմակերպված այս այցի ընթացքում՝ ՀՀ վարչապետը հանդիպումներ է ունեցել ՉԺՀ նախագահ Չյան Չենիի, վարչա-

պետ Ջու ժամգզիի, ինչպես նաև Ըանխայի քաղաքացիներ Մյոյ Կուանդիի հետ: Եշենք, որ այցի ամբողջ ընթացքը լուսարանվել է Չինաստանի բոլոր կենտրոնական լրատվամիջոցներով: Երկու երկրների վարչապետների համոզիչման ընթացքում գոհունակություն է արտահայտվել, որ ընդհանուր ջանքերի շնորհիվ երկու երկրների համագործակցությունը տարբեր ոլորտներում անընդհատ ընդլայնվում է՝ տալով ցանկալի արդյունքներ: Կարևորվել է մշակույթի, էներգետիկայի, գյուղատնտեսության, քիմիական արդյունաբերության ոլորտներում համագործակցության հետևողական զարգացումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հայկական տեխնոլոգիայով սինթետիկ կաուչուկի համատեղ արտադրությունների կազմակերպման և իրականացման աշխատանքներին:

Չինաստանի ղեկավարության հետ համոզիչումների արդյունքներն ամփոփվել են համատեղ կոնյունիկեում, որ ամբողջվել են կողմերի մտտեցումները միջազգային հարաբերությունների ծավալման, երկկողմ հարաբերությունների զարգացման և տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման վերաբերյալ: Մասնավորապես, Հայաստանը կրկին հայտարարել է, որ պահպանում է «մեկ Չինաստանի» իր սկզբունքային դիրքորոշումը՝ մասնաչեղով, որ ՉԺՀ կառավարությունը Չինաստանի միակ օրինական կառավարությունն է, իսկ Քալվանց՝ Չինաստանի ամբակտեի մասը: Լեռնային Դաշնաբաղի հիմնահարցի առումով կոնյունիկեյում արծարծված հատվածում ասվում է, որ չինական կողմը ողբում է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև ամփոփական համոզիչումները և միջազգային հանրության ջանքերը հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ և հույս հայտնում, որ առկա բանակցային գործընթացի շրջանակներում որքան հնարավոր է շուտ կզտմվի հակամարտության արգար և ռացիոնալ լուծումը՝ համաձայն միջազգային ասպարեզում համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին և նորմերին:

2001թ. փետրվարին Չինաստան է այցելել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Խաչատրյանը: ՀՀ ԱԺ նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել ՀՀ և ՉԺՀ խորհրդարանների հանձնաժողովների ներկայացուցիչների աշխատանքային համոզիչում, որի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության բազմաթիվ քաղաքական, տնտեսական և մշակութային ասպեկտները:

Ներկայումս հայ-չինական հարաբերությունների զարգացումն ընթանում է քնականոն ճանապարհով: Երկու երկրների քարձրաստիճան ղեկավարության կողմից բազմիցս շեշտվել է հարաբերությունների տվյալ փուլում փոխշահավետ առևտրատնտեսական և գյուտատեխնիկական համագործակցության զարգացման գերակայությունը: Այս ուղ-

դուրյամբ ակտիվ գործունեություն են ծավալել երկու երկրների դիվանագիտական ներկայացուցչությունները, վերոհիշյալ ուղղումներում միջկառավարական համագործակցության հանձնաժողովները:

Չինական ընկերությունները հետքորդություն են ցուցաբերել Հայաստանի արդյունաբերության տարրեր ճյուղերի վերագործարկմանն ուղղված վարկային ծրագրերի իրականացմանն ուղղությամբ: Եռչափելի արդյունք է գրանցվել էներգետիկայի ոլորտում (Հրազդանի ՊՇԷ-Կ-ի 5-րդ փուլի գործարկման աշխատանքներն իրականացնում է մրցույթում այդ իրավունքը շահած չինական ընկերությունը): Հայաստանի և Չինաստանի միջև տնտեսական կապերի ամրապնդման, հայկական արտադրանքի և գիտական ներուժի՝ չինական, ինչպես նաև ասիական տարածաշրջանի շուկա արտահանմանն առումով լուրջ մասնադրյալներ կատեղծի «Նաիրիտի» արտադրանքի համատեղ ձեռնարկության հիմնումը Չինաստանում, որի գործարկման ծրագրի շուրջ վաղվող քանակություններն այժմ գտնվում են տեխնիկական խնդիրների լուծման փուլում:

Հաջող է ընթանում նաև հայ-չինական համագործակցությունը կրթամշակութային ոլորտում: Համապատասխան ուղղումներում ստորագրված միջոցառնական համաձայնագրերի շրջանակներում ամեն տարի իրականացվում է ուսանողների փոխանակում, անցկացվում են մշակութային միջոցառումներ: Ուշագրավ է վերջին երկու տարիներին չինացի ուսանողների՝ մասնավոր հիմունքներով ներգրավումը Հայաստանի ԲՈՒՀ-երում (Հայաստանի տարրեր ուսումնական հաստատություններում ուսանում են մոտ 10 չինացիներ): Երկու երկրների կրթական գերտեսչությունների միջև գործող ծրագրի շրջանակներում Չինաստանում սովորում են թվով 15 հայ ուսանող և հայցվոր: Մշակութային փոխանակումների շրջանակներում Հայաստան է այցելել չինական կրկեսը, կազմակերպվել է չինական արվեստի փառատոն: Չինաստանում ելույթներով հանդես է եկել Հայաստանի պարի պետական համույթը: Այս տարի նախատեսվում են Հայաստանի «Բարեկամություն» համույթի ելույթները ՉԺՀ տարրեր քաղաքներում: Ակտիվ համագործակցություն է ծավալվել Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿՍ) և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի Չինաստանի ասոցիացիայի միջև:

ՀՀ և ՉԺՀ միջև արդյունավետ համագործակցության փաստերի շարքին կարելի է դասել՝ Պեկինում ՀՀ դեսպանության ջանքերի և չինական կողմի գործուն ացակցության շնորհիվ, Ուշուի միջազգային ֆեդերացիայի կողմից ընդունված որոշումը՝ մարզաձևի հերթական միջազգային առաջնությունը այս տարի հոկտեմբերին Երևանում անցկացնելու վերաբերյալ:

Փորձենք հիմնավորել ՉԺՀ հետ հարաբերություններին հատուկ ուշադրություն ցուցաբերելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի իսմար կարևորություն մերկայացնող մի շարք քաղաքատնտեսական տեղաշարժերի ներատեսքատում:

Աշխարհաքաղաքական տեսանկյունից՝ ՉԺՀ հետ հարաբերությունների կարևորությունը պայմանավորվում է Միջինասիական և Ասիական-Նադադօվկիանոսյան տարածաշրջանների միջև նրա ունեցած աշխարհագրական դիրքով, երկրի հավաքական հզորությամբ, միջազգային հարաբերություններում ստանձնած դերակատարումով և այլն:

Ի թիվս այլ գործոնների, ՉԺՀ-ի հետ տարրեր քննազավառնելում համագործակցությունը խորացնելու զբաղիչ կողմերից մեկը՝ քերես - կարևորագույնը, այն է, որ՝ մշակելով և իրագործելով մերկա դրությամբ իր արդյունավետությունն ապացուցած՝ սոցիալիստական հասարակարգի և շուկայական տնտեսության փոխընդհանուր միասնության արդյունքում ստացված քաղաքատնտեսական զարգացման նորայրը, Չինաստանը մերկայումս ստեղծել է երկկողմ և բազմակողմ արտաքին հարաբերությունների ծավալման ճյուղ համակարգ, որում քաղաքական և տնտեսական ուղղությունները՝ թեև որոշ դեպքերում ինչ-որ չափով փոխկապակցված, աստիճանաբար ձեռք են բերում միմյանց գոյությունը չպայմանավորող, ամկախ բնույթ: Միասնամակ, փորձ է աշխույժ Չինաստանի մասնավոր ձեռներեցիներին մերզբաղիչ երկրի ապագայի քաղաքական մոդելի ձևավորման գործընթացում: Սա է վկայում մերկայումս ՉԺՀ պետական շրջաններում քննարկվող՝ Չինաստանի կոնունիստական կուսակցություն (ՉԿԿ) մասնավոր ձեռներեցիների ընդունման փորձնական ծրագիրը, որի մասին հայտարարվել է այս տարվա հուլիսին կայացած՝ ՉԿԿ 80-ամյակի տարեդարձի ընթացքում:

Չինական անսահմանափակ, մերկայումս դեռևս ձևավորվող, շուկայի պահանջները տնտեսական համագործակցության կայուն մախապայման են ստեղծում ոչ միայն բնական ռեսուրսներով հարուստ երկրների, այլև օտարերկրյա շուկաներից դուրս մղված խորհրդային շրջանում ինդուստրիալիզացված երկրների համար: Խոսելով Չինաստանի մերդրումային հնարավորությունների մասին՝ պետք է նշել, որ դրանք նույնպես բնութագրվում են որոշակի առանձնահատկություններով: Չինաստանը իր մերդրումների պաշտպանության համար չի օգտվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից և իր հիմնական ներդրումները կատարում է ոչ թե ֆինանսական և բանկային համակարգում, այլ ուղղում է դրանք տնտեսության իրական հատվածը:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Չինաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները ձեռք են բերել որակական նոր և

կարևորագույն հատկանիշ: Աստիճանաբար ավելի նշմարելի է դառնում շինական կապիտալի արտահանումը՝ որը տվյալ պարագայում պայմանավորված է երկրի տնտեսական զարգացումից բխող օրյեկտիվ անհրաժեշտությամբ:

Այս առաքելներում մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն այլ տերությունների, Չինաստանի հետ տնտեսական համագործակցությունը հնարավորություն է առնում ոչ միայն ներդրումների ներգրավման, այլև Չինաստանում տեղական հսկայական շուկան սպասարկող որոշակի գիտական և տեխնոլոգիական ուղղվածությամբ ներդրումների կատարման ուղղությամբ: Չինաստանի հետ համատեղ տնտեսական ծրագրերի իրականացումը ենթադրում է տնտեսության մեջ պետության ծրագրավորման և կարգավորման հատակ գործառույթների իրականացում:

Հաշվի առնելով կասպիական-միջինասիական տարածաշրջանի քաղտնտեսական զարգացման ընդհանրությունները, Եվրասիական կառույցների վրա միջազգային իրադրության փոփոխությունների անդրադարձը՝ հարավ-կովկասյան երկրների և, հատկապես, Հայաստանի համար, որը Չինաստանի հետ հարաբերություններում քաղաքիվ փոխընդունող թևույթի հետաքրքրություններ ունի՝ ՉԺՀ հետ կապերի զարգացումն ու ամրապնդումը երկարաժամկետ կարևորության խնդիր են դառնում: Չինաստանի իրավահավասար ներգրավումը տարածաշրջանային գործընթացներին՝ նվազագույնի կհասցնի տարածաշրջանի տնտեսական զարգացման սահմանափակ հնարավորությամբ, միաբևոտ ազդեցության գոտի դառնալու հնարավոր հեռանկարը, ինչպես նաև սառը պատերազմի օրինակով քաղաքական և տնտեսական բաժանարար գծերով սահմանափակված երկրներության հաստատման փտանգը:

Այստեղ հարկավոր է նշել, որ ի տարբերության միջինասիական տարածաշրջանի երկրների հանդեպ ՉԺՀ կողմից վարվող միատիպ քաղաքականության, հարավ-կովկասյան տարածքում Չինաստանը հնարավորություն ունի կիրառել տարբերակված քաղաքական մոտեցումներ:

Հայ-չինական հարաբերությունների հետագա զարգացումը և խորացումը ըխում է երկու ժողովուրդների շահերից:

MNATSAKAN SAFARYAN

ARMENIAN-CHINESE RELATIONS IN NEW HISTORICAL REALITIES

This article presents a brief introduction of historical ties between the Armenians and the Chinese, some aspects of modern economic and political course of

the People's Republic of China (PRC), with the view of present Armenian-Chinese relations.

During their long and eventful history the two nations had repeatedly established and developed trade and cultural relations, which especially flourished in the period of the Great Silk Road. These relations interrupted due to various historical processes in the period of modern history, gained ground in the last decade.

The rapidly growing reformed PRC and the newly independent Armenia established formal relations, based on friendship and mutually beneficial cooperation right after the disintegration of the USSR in early 1990s, and maintained and developed these ties during this period. The cooperation boosted by bilateral visits and exchanges gradually evolved to many spheres of political, social, economic and cultural life.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Азия и Африка Сегодня. Институт Востоковедения РАН, No. 3 (548) 2003, Цянь Сюэнь, стр. 282. 1 ՍՄԼ դրամը = 8.27 յուան
3. *Renmin Ribao* Online edition, "China's Contribution to World Economy", March 31, 2003
4. Նույն տեղում
5. *Asian Survey*, A Bimonthly Review of Contemporary Asian Affairs, University of California Press, Vol. XLII, No.1, January/February 2002, "China in 2001", Dali L. Yang, p. 14
6. *Renmin Ribao* Online edition, "China's Contribution to World Economy", March 31, 2003
7. *Asian Survey*, A Bimonthly Review of Contemporary Asian Affairs, University of California Press, Vol. XLII, No. 1, January/February 2002, "China in 2001", Dali L. Yang, p. 17
8. Հարավ-արևելյան Ասիայի երկրների արդիացիա (ASEAN)
9. *Quoted in Asian Survey*, "Japanese Officials Concerned by China-ASEAN Trade Gains"

## ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓՈՒՅԱՆ

### ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԸ ՌԵՉԱՆՆԱԿ ՓԱՏԼԱՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1920-ական քվականների սկզբին Իրանում լիարժեք իշխանություն հաստատելուց և երկրի կայունությունն ապահովելուց հետո՝ Ռեզա շահ Փանդալին ձեռնամուխ եղավ մի շարք միջոցառումների, որոնք ուղղված էին Իրանի արդիականացմանը և արևմտականացմանը:

Ռեզա շահի կարծիքով՝ Իրանի արդիականացման ճանապարհին առկա էր երեք կարևորագույն խնդիր՝ հոգևորականության ավանդական ազդեցությունը, քնակչության անզրագիտությունը և կանանց կախյալ վիճակը: Ուստի բնակչության կրթական մակարդակի բարձրացումը և կանանց վիճակի բարելավումը սոսկ ինքնամարտակ չէր, այլ հոգևորականության ազդեցությունը թուլացնելու լավագույն միջոց:

Իրանի արդիականացումն ու արևմտականացումը իրողություն դարձնելու համար անհրաժեշտ էր նախ թուլացնել հոգևորականության ազդեցությունը: Ռեզա շահը անհամատեղելի էր համարում շիիզմի ուսմանը երկրի առաջնության հետ, այդուհանդերձ, հատկանշական է, որ նա երբևիցե արևմտարիական կամ քչամասկան վերաբերմունք չի ցուցաբերել կրոնական հավատալիքների հանդեպ:<sup>1</sup> Շահը ձգտում էր ոչ քե թուլացնել կրոնի հիմքերը, այլ մվազեցնել հոգևորականների ազդեցությունը, որով նա ցույց էր տալիս ինչպես իր ժողովրդին, այնպես էլ իսլամ դավանող այլ ազգերին, որ շիիզմը ձեռք է բերել ակնհայտ անձնական հասնողմունքների քնույր և աշխ չպետք է խառնվի հասարակական և միջազգային հարաբերություններին:

Նաքեր շարունակ Իրանի կամայք իրենց կյանքն անց են կացրել անդադրմամբ, այսինքն՝ հարեմում, այլ օրինական կամանք և հարձեղի, իրենց երեխաների ու ծառաների հետ: Նրանց կյանքն անցնում էր կենցաղային պարտականություններ կատարելով և երեխաներին դաստիարակելով, որը սահմանափակում ուներ, քանի որ տղա երեխաները, որոշակի տարիքի հասնելով, հետամուտ էին անդադրումից՝ ուսում ստանալու համար: Իրանի կամայք արական սեռի ներկայացուցիչներից կաշող էին շիվիլ միայն իրենց ամուսինների և ամենամոտ ազգականների հետ: Կանանց շրջանում տարածված զվարճանքներից էին փոխադարձ հյու-

քրեկալոթյունները և հասարակական քաղցիքը, որ երանք այցելում էին որոշակի օրեր:

Այդ ամենը մատնանշում էր հասարակությունում կանանց մեկուսացված լինելու հանգամանքը: Ուտոի, եթե շահը ցանկանում էր արևմտականացնել Իդամը, ապա նա պետք է վերափոխեր կանանց կախյալ վիճակը՝ տալով երանց օրինական և սոցիալական հավասարության կարգավիճակ:

Կանանց վիճակը քարելավելու համար Ռեզա շահը կարևորում էր առաջին հերթին երանց կրթական մակարդակի բարձրացումը, որը կանանց հնարավորություն կտար դառնալ հասարակության լիարժեք անդամ և կնպաստեր երանց ինքնագլխակցության բարձրացմանը:

Չնայած աղջիկների համար առաջին դպրոցը բացվել էր 1897թ., սակայն միայն Ռեզա շահի կատավարման շրջանում էր, որ կրթությունը պարտադիր դարձավ մաև աղջիկների համար: Այդուհանդերձ, երանց ուսումնական ծրագրերում կային որոշակի տարբերություններ: Որոշ ճշգրիտ առարկաների փոխարեն աղջիկները անցնում էին կարուճ, նկարչություն, տնտեսություն և երեխաների խնամք:<sup>3</sup>

1934թ. կանանց տրվեց բարձրագույն կրթություն ստանալու իրավունք: Նրանք կարող էին ընդունվել Համալսարան, Ուսուցիչների քարձրագույն դպրոց կամ Բուժքույրության տարբեր քոլեջներ: Այդ շրջանում գոյություն ունեւր մաև երկամյա մի ծրագիր այն աղջիկների համար, ովքեր չէին ցանկանում քարձրագույն կրթություն ստանալ: Այն ներառում էր ծեղրի աշխատանք, տնային տնտեսություն, երեխաների և ստոլչության խնամք:<sup>4</sup>

Իրանում կանայք կարող էին տանից դուրս գալ որոշակի ժամերի և չէին կարող այցելել հասարակական վայրեր: Միայն 1928թ. երանց իրավունք տրվեց հաճախելու կինոթատրոններ և սրճարաններ:<sup>5</sup>

1932թ. թեւերանում կայացավ Արևելքի կանանց համագումար, որը մախազահում էր շահի ավագ դուստրը, որը 2 տարի անց դարձավ Կանանց առաջին ակումբի մախիսագահ: Ի դեպ, այն առաջինն էր կանանց նմանատիպ ակումբներից և միություններից:

Իրանի կանանց կախյալ վիճակի չափանիշ էր դարձել մաև չադրան, որը ծածկում էր նրանց ուտրից գլուխ՝ քարքնելով անհատական հատկանիշները և մրատեսակ դարձնելով բոլորին: Այն ուներ ոչ միայն հագուստի նշանակություն, ալև համդես էր գալիս որպես կնոջ մեկուսացման և երա բացառման խորհրդանիշ հասարակութունից: Հատկանշական է, որ կրոնական փոքրամասնությունները չեն ենթարկվել այս տահմանափակումներին:<sup>6</sup>

Արդին 1920-ական քք. նկատվում էին որոշ փոփոխություններ, սակայն նրք հարևան Աֆղանստանի Ամանուլլահ բագավորը կարուկ



քարեփոխումների պատճառով կորցրեց իր գահը, Իրանում նոր շարժումը որոշակի նահանջ ապրեց:<sup>7</sup>

Սակայն, 1930-ական թթ. արդեն բարձր խառնի կանայք տանը կրում էին եվրոպական հագուստ, բանակի սպաներին չէր բուլլատրվում չաղրայով կանանց հետ փողոց դուրս գալ, պետական ծառայողների կանայք ևս պետք հետևին նորաձևությանը:<sup>8</sup>

Կանանց վիճակի բարելավման գործընթացը ակտիվացավ հատկապես 1934թ., երբ Ռեզա շահը այցելեց Թուրքիա, որտեղ Մուստաֆա Էմեալ Արաբյուրը նմանատիպ քաղաքականություն էր անցկացնում: Նույն թվականի աշնանը ուսուցչուհիներին և աշակերտուհիներին արգելվեց չաղրա կրելը:<sup>9</sup>

Ի վերջո, 1936թ. հունվարի 8-ը Իրանի կանանց կյանքում դարձավ շրջադարձային օր, երբ Ռեզա շահը Թեհրանի քարձրագույն դպրոցի շրջանավարտներին վկայականներ հանձնելու նպատակով ներկայացավ իր տիկնոջ և երկու ավագ դստերի հետ: Ի դեպ, առաջին անգամ էր, որ քաղավորական ընտանիքի կանայք ներկայանում էին հասարակությանը առանց չաղրա՝ եվրոպական հագուստով: Այդ օրը այդուհետ ճանաչվեց որպես Կանանց տոն:<sup>10</sup>

Այդ միջոցառման ժամանակ Ռեզա շահը դիմելով կանանց՝ նշում էր, որ չափազանց ուրախ է տեսնել Իրանի կանանց, որոնք ուսման և ձեռք բերված գիտելիքների շնորհիվ կարողացան ճանաչել իրենց իսկական դիրքը և հասկանալ իրենց իրավունքներն ու արտոնությունները: Նա նշում էր, որ Իրանի կանայք հասարակությունից մեկուսացված լինելու պատճառով հնարավորություն չեն ունեցել ցույց տալու իրենց տաղանդը և ունակությունները, ապա ավելացնում էր, որ ավելի ճիշտ նրանք հնարավորություն չեն ունեցել՝ իրականացնելու իրենց պարտականությունները սիրելի հայրենիքի և ժողովրդի համդեպ ու ծառայելու իրենց երկրի քարոջությանը այնպես, ինչպես պետք է անելին:<sup>11</sup>

Ռեզա շահը շեշտում էր, որ չպետք է անտարբեր մտռննալ այն փաստին, որ ազգի կեսը հաշվի չի առնվել, այլ խոսքերով «ասած» երկրի աշխատուժի ուղիղ կեսը պարասպարդի է մատնվել: Իր այդ խոսքերով Ռեզա շահը կրկին անգամ արագացրեց էր այն, որ նրա իվանկան միտքը մարդկային ճեղքումները հնրավորին չափ երկրի քարոջության համար օգտագործելն էր:

Ռեզա շահը նշում էր, որ կանայք երբեք մարդաձեռքի չեն մասնակցել, քանի որ նրանք առանձին համայնք են կազմել և չեն համարվել իրանական հասարակության մաս: Միայն մեկ դեպքում են կանանց մարդահամարի մեջ ընդգրկել, երբ սննդի պակաս է եղել: Նրանց հաշվի են առել, որպեսզի ապահովեն սննդի մատակարարումը: Դիմելով կանանց, Ռեզա շահը նշում էր, որ նրանք պետք է ընդունեն հունվարի 8-ը

որպես շրջադարձային օր և օգտագործեն իրենց ընձեռված հնարավորությունը՝ երկրի առաջընթացի համար: Նա դիմում էր կամանց՝ շեշտելով, որ նրանք պետք է դառնան լավ տեսիլներ և դաստիարակեն լավ քաղաքացիներ: Նա ավարտել է իր խոսքը՝ նշելով, որ կրթված կամայք, այժմ տեղյակ լինելով իրենց իրավունքներին և արտոնություններին, կկատարեն իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:<sup>12</sup>

Այդ օրվանից կամայք իրավահավասար ճանաչվեցին տղամարդկանց: Չաղրան արգելվեց:<sup>13</sup> Ոչ մի խամութ չէր սպասարկում շաղրա կրող կամանց, նրանք չէին կարող հաճախել հասարակական վայրեր և անգամ դուրս գալ փողոց:<sup>14</sup> Չարմամալի չէ, որ շատերը շաղրայի արգելքը համարում էին ոչ թե կամանց իրավունքների հավասարեցում, այլ ոստիկանական ճնշում:

Չաղրայի արգելքը ֆինանսական խնդիրներ առաջացրեց յունկոր խավի կամանց համար, քանի որ այն քույր էր տալիս նրանց չեզոք հագուստի մասին: Այդ էր պատճառը, որ կատարությունը յունկոր կամանց 25.000 ֆունտ տեղեփնց հատկացրեց՝ նոր հագուստ գնելու համար:<sup>15</sup> Սակայն առաջին արդյունքները բարեհաջող չէին. բարձր խավի կամայք կարող էին հագնվել փարիզյան նորաձևությանը համապատասխան, իսկ մնացածը պետք է բավարարվեին նրանով, ինչ կարող էին գտնել շուկաներում: Իսկ հենի և նորի խատուրոլը ոչ միայն տգեղ էր, այլև ակնհայտ էր դարձնում սոցիալական անհավասարությունը:

Չաղրա կրելու արգելքը ցնցում էր Իրանի հասարակության համար: Կամայք չգիտեին, թե ինչպես պետք է իրենց պահեն տղամարդկանց շրջապատում, տեղյակ չէին էրիկայի կանոններին, նորաձևությանը: Իսկ տղամարդիկ զայրամուտ էին, երբ տեսնում էին իրենց կամանց և աղջիկներին առանց շաղրա փողոցում զբոսնելիս և առավել ևս երբ նկատում էին հայացքներ նրանց նկատմամբ:<sup>16</sup>

Այս նորամուծությունը տարբեր մտեցումների արժանացավ հենց կամանց կողմից: Տարեցների համար դա մի մղձավանց էր, և նրանցից շատերը սկզբում անգամ հրաժարվեցին փողոց դուրս գալ: Երիտասարդների համար դա կյանքը փոխելու ճույս էր, և նրանք ուրախությամբ ընդունեցին իրենց տրված ազատությունը: Դա առաջին սերունդն էր, որը դուրս գալով անդաբունից, ընկրմվեց ազատության մեջ: Դա բավականին դժվար ճանապարհ էր, քանի որ նրանք յունիին հետևելու օրինակներ:

Եվ չնայած, որ այդ քայլը հեղափոխական էր և կարող էր հանդիպել դիմադրության, այնուամենայնիվ, լուրջ միջադեպեր չեն գրանցվել՝ գուցե քաղաքային արդյունավետության շնորհիվ:

Այդ շրջանում հոգևորականությունը խուսափում էր բացահայտ ընդդիմանալ Ռեզա շահի բարեփոխումներին, և միայն 1941թ. հետո

նրանք ակտիվացրեցին իրենց գործունեությունը:<sup>17</sup> Հետագայում, Ռեզա շահի՝ գահից երաժարվելուց հետո, հոգևորականության ազդեցության հետևանքով նրա որդին՝ Մոհամմեդ Ռեզա շահ Փահլավին փոխեց լադրայի արգելքը՝ ազատ ընտրության հնարավորություն ընձեռելով կամանց: Ժածր խալի կամայք նորից սկսեցին շադրա կրել, քանզի այն քաղցնում էր նրանց մաշված հագուստը:<sup>18</sup> Անգամ երիտասարդներից շատերը, ովքեր մախրմտրում էին նիդուպական հագուստ, որոշ դեպքերում կրում էին լադրա, օրինակ՝ աղոթքի ժամանակ, սուրբ վայրերում կամ ավագ սերմդի ներկայացուցիչների ներկայությամբ:

Չնայած Ռեզա շահի կատարյալաման շքամում կատարված ասլ-չեցուցիչ փոփոխություններին՝ սխալ կլիներ ենթադրել, թե Շարիաթի՝ դարերով սրբազորված գաղափարները, որոնք իրանական հասարակության և մշակույթի հիմքն են կազմում, ամբողջովին ամուշադրության էին մատնվել կամ փոխարինվել: Աշխարհիկ և Շարիաթի օրենքների միջև հնարավոր տարբերությունների խնդիրը կարգավորում էր Հիմնական օրենքի լրացումը, ըստ որի ոչ մի դեպքում օրենքները չպետք է հակասեին Շարիաթին:<sup>19</sup>

Այսպիսով, մեր ընդունված Քաղաքացիական օրենսգիրքը իրենից ներկայացնում էր Շարիաթի և արևմտյան աշխարհիկ օրենքների ընդհանրացում:

Ոչ մի այլ քննազավառում Շարիաթի գաղափարներն այնքան հարատև չէին, որքան ամուսնությանը, ապահարզանին, ընտանեկան հարաբերություններին, և բարոյականության դեմ հանցագործություններին վերաբերող օրենքներում:<sup>20</sup> 1926-1940թթ. ընթացքում այդ խնդիրներին վերաբերող օրենքները փոփոխվել են չորս անգամ՝ յուրաքանչյուր անգամ հեռանալով բուն Շարիաթի սկզբունքներից, սակայն մահ պահպանելով մախնական գաղափարների կորիզը:<sup>21</sup>

Օրենքով՝ ամուսնությունը դարձավ աշխարհիկ, սակայն ամուսնությանը վերաբերող օրենքների մեծ մասը ակնհայտորեն հետևում էին Շարիաթին:<sup>22</sup> Այդուհանդերձ, ամուսնությունը և ապահարզանը օրինական չէին համարվում, եթե չէին զրանցվում քաղաքացիական գրասենյակներում: Քաղաքացիական գրասենյակներն էլ ամուսնության վկայական տալիս էին միայն այն դեպքում, եթե կատարվում էին օրենքի բոլոր պահանջները: Սակայն այդ օրենքը չէր կարող լիարժեք գործել, քանի որ գյուղական տարածքների մեծ մասում քաղաքացիական գրասենյակներ չկային:<sup>23</sup>

Ըստ Շարիաթի՝ ամուսնական մախսանեությունը և բոլոր իրավունքները պատկանում են ամուսնուն, սակայն, եթե նա ունի ավելի քան մեկ կին, ապա մա բոլոր առումներով հավասարապես լավ պետք վերաբերվի նրանցից յուրաքանչյուրին:<sup>24</sup>

Իրանցիների շրջանում քազմակնության ամօրոքյանը զուգահեռ ընդունված էր նաև շիական սիդե հասկացությունը, այսինքն ժամանակավոր ամուսնությունը, որի տևողությունը կարող է լինել մեկ գիշերվանից մինչև ամբողջ կյանքը: Նոր ընդունված Քաղաքացիական օրենսգրքի 1075-77 հոդվածներով պահանջվում էր ժամանակավոր ամուսնությունների գրանցում: Սակայն այդ օրենքները չի էին հակասություններով և քացերով՝ սիդեի տևողությունը, նյութական հարցերը և ժառանգական իրավունքներին վերաբերող խնդիրները որոշելու համար:<sup>25</sup>

Սակայն մինչև Ռեզա շահի իշխանության գալն արդեն նկատվում էր միակնության միտում, որը կապված էր տարբեր գործոնների հետ՝ Արևմուտքի ազդեցությունը, ժամանակակից կրթությունը, և վերջին, սակայն ոչ պակաս կարևորը՝ կենսամակարտակը:<sup>26</sup> Ռեզա շահը օրենքով չարգելեց քազմակնությունը, քանի որ դա համարում էր հակառակ Սուլիմանաղ մարզաբեի օրենքին, որը թույլ էր տալիս 4 օրինական կին ունենալ:<sup>27</sup>

Ինչ վերաբերում է ապահարզանին, այսա Քաղաքացիական օրենսգրքի 1133 հոդվածը նշում է, որ «ամուսինը կարող է բաժանվել կնոջից ցանկացած ժամանակ, իսկ կնոջը դրա համար որոշակի պատճառներ են պետք»<sup>28</sup>, որը ճշգրիտ համապատասխանում է Շարիաթի օրենքներին: Սակայն համաձայն 1931թ. ընդունված նոր օրենքի՝ կնոջը տրվեց իրավունք դիմելու ամուսնալուծության, եթե նրա ամուսինը հարսանիքից առաջ չի տեղեկացրել կնոջը այլ կանանց մասին, կամ ամուսնացել է կրկին առանց նրա համաձայնության:<sup>29</sup>

Շարիաթի օրենքին համապատասխան՝ Իրանի Քաղաքացիական օրենսգրքը նշում է, որ օրինական երեխաները պատկանում են հորը, և ապահարզանի դեպքում խնամակալությունը հոր իրավունքն է: Ժառանգության, ամուսն օգտագործելու և խնամակալության իրավունքին վերաբերող օրենքները նմանապես համապատասխանեցված են Շարիաթին:<sup>30</sup>

1938թ. նոյեմբերի 24-ին Մեջլիսի ընդունած օրենքի համաձայն՝ ամուսնությունից առաջ բոլոր փեսացուներից և հարսնացուներից բժշկական վկայական էր պահանջվում:<sup>31</sup> Բավականին հակասական է, քայց հարսնացուներն ազատված էին սեռական օրգանների հիվանդությունների քաջակայության մասին վկայական ցույց տալուց: Սա ակնհայտ զիջում էր կանանց խռիմությանն ու զգայունությանը, որոնք չէին ցանկանում զենվել տղամարդ բժշկի կողմից:

Ըստ քաղաքացիական օրենսգրքի 1041-43 հոդվածների ամուսնության համար օրինական տարիք էր սահմանվում տղամարդու համար՝ 18, իսկ կնոջ համար՝ 16 տարեկանը: Սակայն որոշակի պայմաններում և ծնողների համաձայնությամբ թույլ էր տրվում համապատասխան

ճաքար 15 և 13 տարեկանը: <sup>32</sup> Մակայն կրթական մակայրակի բարձրագույն շնորհիվ նկատվում էր միակնություն և ամուսնական տարիքի բարձրացման միտում:

Մի իրանցի իրավաբան այդ շրջանում նշում էր, որ կամայք իրավահավասար չեն տղամարդկանց միայն 5 կետում:

1. Տղամարդը կարող է մեկից ավելի կին ունենալ, այն դեպքում, երբ կինը այդ իրավունքը չունի:

2. Տղամարդը կարող է բաժանվել իր կնոջից ցանկացած պահին, այն դեպքում, երբ կինը կարող է դա անել միայն որոշակի պայմաններում:

3. Կինը ունի ավելի քիչ ժառանգական իրավունքներ քան տղամարդը, սակայն մյուս կողմից կնոջը ամուսնական օժիտի իրավունք է տրվում, և նա կարող է լիարժեք տնօրինել իր ունեցվածքը:

4. Ամուսինը ընտանիքի գլուխն է և ըստ օրենքի երեխաները նրան են պատկանում:

5. Կամայք չեն կարող քվեարկել կամ իրենց թեկնածություններն առաջադրել Մեջլիսի ընտրությունների ժամանակ: <sup>33</sup>

Մակայն կան մեկ այլ տարբերություններ: Օրինակ՝ չնայած Քաղաքացիական օրենսգրքի 1062, 1064, 1070 հոդվածներով որպես ամուսնության անհրաժեշտ պայման պահանջվում էր երկու կողմերի համաձայնությունը, իրականում այդ պայմանները չէին իրագործվում և հիմնականում չէին էլ կարող իրագործվել: Դրա վատ ասպեկտը էր այն, որ մույն օրենսգրքի 1042-1043 հոդվածներով դատեր ամուսնության համար պահանջվում էր հոր թույլտվությունը, իսկ արու զավակների ամուսնության դեպքում դա չէր պահանջվում: <sup>34</sup>

Քաղաքացիական օրենսգրքի 1060 հոդվածի համաձայն իսլամ դավանող կինը չի կարող ամուսնանալ ոչ մահմեդականի հետ, իսկ մահմեդական տղամարդը կարող է ամուսնանալ ոչ մահմեդական կնոջ հետ, եթե նա կտապաշտ չէ: <sup>35</sup>

Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1050, 1051 հոդվածների արգելվում էր բազմամուսնությունը, իսկ 942 և 1046 հոդվածներով տղամարդուն թույլ էր տրվում ունենալ 4 մշտական և անսահման քանակության ժամանակավոր կին: <sup>36</sup>

Ամուսնացած զույգերի իրավունքները և պարտականությունները ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1102-1118 հոդվածների բաժանվում էին երկու տիպի՝ մյուսական և ոչ մյուսական:

Ամուսնու մյուսական պարտականությունները և կնոջ իրավունքները սահմանվում էին որպես աջակցություն: Այն ներառում է սնունդ, հագուստ և տուն՝ կնոջ կարիքներին համապատասխան: Այնուամենայնիվ, միայն մշտական կինը աջակցություն ստանալու իրավունք ունի: <sup>37</sup>

Իսկ կնոջ մյուսական պարտականությունները և ամուսնու իրավունքները սահմանվում էին որպես հնազանդություն: Հնազանդությունը լինում է բնդիանուր և հատուկ: Ընդհանուրի իմաստով այն ենթադրում է կնոջ քոյր պարտականությունները, իսկ հատուկ իմաստով այն վերաբերում է ամուսինների ինտիմ կյանքին:<sup>38</sup>

Ամուսնության ոչ մյուսական իրավունքները և պարտականությունները սահմանվում էին հետևյալ կերպ. «Ընտանիքի ստեղծումը հիմնվում է ամուսնու և կնոջ ներդաշնակ գոյակցության վրա» (Քաղաքացիական օրենսգրքի 1104 հոդված): Սակայն այդ ներդաշնակ գոյակցությունը չի քացատում ամուսնու զերականող դերը ընտանիքում:<sup>39</sup>

Ոգեշնչված իրենց՝ այս օրինական ազատությամբ և ժամանակակից կրթության շնորհիվ՝ Իրանի կանայք ավելի ու ավելի էին ներդաշնակ իրենց երկրի կյանքի մեջ: Սկզբում կանանց կարիերայի հնարավոր միակ ուղին ուսուցչի մասնագիտությունն էր, սակայն այս դեպքում ևս նրանց աշխատավարձերը կիսով չափ արակառ էին տղամարդկանցից: 1938թ. ընդունվեց Աշխատանքային նոր օրենսգրքը, որի համաձայն՝ աշխատանքի ոլորտում կանայք տղամարդկանց հավասար իրավունքներ ստացան:<sup>40</sup>

Հետո նրանց հնարավորություն ընձեռվեց ստանալու բժշկի կամ քուժքրոջ, ապա լրագրողի մասնագիտություն, ինչպես նաև արտասահմանում ուսում ստանալու հնարավորություն: 1936 «Էմանսիպացիայից» հետո կանանց տղամարդկանց հավասար պայմաններով սկսեցին ընդունել Բարձրագույն ուսումնական հաստատություններ (սակայն նրանք լսարան էին մտնում տղամարդկանցից առաջ և հատուկ մուտքով):

Անգլո-իրանական մավթային ընկերությունը առաջիններից մեկն էր, որ ընդունեց կանանց աշխատանքի որպես մեքենագրուհիներ և քարտուղարուհիներ, սակայն շուտով այլ ընկերությունները ևս հետևեցին նրանց օրինակին, և կանայք փոխարինեցին տղամարդկանց այս ապարիզում:<sup>41</sup>

Այս ամենի շնորհիվ կանանց հնարավորություն ընձեռվեց՝ կիրառելու ստացած գիտելիքները և օգտագործելու իրենց ներուժը երկրի քարզավաճման համար: Կանանց իրավունքների հավասարեցումը ոչ միայն Իրանի սոցիալական քարեփոխումների ցուցանիշն է, այլև այն նշանակում է մահապետական ընտանիքի վերափոխումը և կանանց մասնակցությունը երկրի մշակութային և հասարակական կյանքին:

Հագուտի արևմտականացումը հետապնդում էր ոչ միայն կանանց վիճակի քարեփոխման, հոգևորականության ազդեցությունը քաղցնելու նպատակ, այլ նաև համընդհանուր էր Ռեզա շահի կենտրոնց-

ման ծրագրի լավագույն ասպարույց: Ռեզա շահի կարծիքով միատեսակ հագուստը կենթընդեր քնակությունը մաս միատեսակ մտածելակերպ: <sup>42</sup>

Ռեզա շահի կատարարման շրջանի վերջում Արևմտացի շունչը կլուղ օրնըքնների ազդեցությունը մարդկանց կյանքում զգալի էր, սակայն, ինտրին, ոչ այն աստիճանի, որ ներկայացվում է պատմական գրականության մեջ: Մոցիլավական և մշակութային օրինակները փոխվում էին քաղաքային քնակության շրջանում, իսկ գյուղերում ավանդույթները փոփոխության մշտյլ անգամ չունեին: <sup>43</sup> Օրենսդրական դաշտի փոփոխությունները արտահայտում էին Ռեզա շահի ցանկությունը՝ արդիականացնել և աշխարհիկ ուղու վրա դնել Իրանի հասարակությունը՝ Իրանի միջազգային վարկանիշը բարձրացնելու և իր իսկ դիցքերը ամրապնդելու նամար:

Այսպիսով, կանանց վիճակը բարելավելու՝ Ռեզա շահի ծրագիրը հետապնդում էր առնվազն երեք միջամանց փոխկապակցված առաջնակարգ նպատակ՝ արևմտականացնել Իրանը, բուլացնել հոգևորականության ազդեցությունը, օգտագործել կանանց մեղուժը երկրի զարգացման ու առաջադիմության գործընթացում: Այս ամենով համոզված՝ Ռեզա շահը, որոշակի արտոնություններ շնորհելով կանանց, ձգտում էր ի դեմս նրանց ձեռք բերել սոցիալական հեմարան՝ իր քաղաքականության իրականացման համար:

Չնայած բոլոր բարեփոխումներին, Ռեզա շահը չէր կարող նկրտական ազդեցությունը առանց Իրանի ավանդույթներին և իրականությանը հարմարեցնելու տարածել նրկում, քանի որ հասարակությունը չէր կարող կտրուկ վերափոխվել պատմական այդպիսի կարծ ժամանակշրջանում:

#### STEPANYAN LUSINE

### THE STATUS OF WOMEN IN THE PERIOD OF REZA SHAH PAHLAVI

Having undisputed political power, Reza Shah initiated a number of social reforms. Three facts, he saw, obstructed the way, Shia religion in its traditional form, illiteracy and the status of women. If, then, the Shah wanted to modernize Iran, he had to transform the inferiority, which was the women's fate in Muslim countries, into a status of legal and social equality.

So one of more spectacular and fundamental changes on the way of modernization, possibly was the emancipation of women. From January 8, 1936 a great step was taken, and women were regarded in law as being equal with men. The veil was strictly forbidden. It was, of course, not the discarding of the veil as an article of dress, but the veil as a symbol of edition of women from society.

One of the most important reforms was the new Civil Code, which reflected a new outlook in the official attitude towards principles pertaining marriage, divorce, family relations. Despite the changes of the Reza Shah period, the new Civil Code was a perplexing mismatch of the shariah and the western secular codes.

Due to the reforms of Reza Shah and inspired by their new legal freedom, Iranian women were entering more and more into life of their country.

By the end of the reign of Reza Shah the influence of the western-inspired reforms upon the lives of the people was considerable. But social and cultural patterns were changing among the urban population but in the village the age-old practices showed, no signs of disappearing.

#### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. William S. Haas, *Iran*, Columbia University Press, New York, 1946, p.153.
2. William S. Haas, *Iran*, p.153.
3. Elwell-Sutton, *Modern Iran*, London, 1941, p.135, Տի'ս Բալև Էրվանդ Աբահամյան, *Iran Between Two Revolutions*, Princeton University Press, Princeton, New Jersey, 1982, p.144.
4. George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, Stanford, California, 1978, p. 97, Տի'ս Բալև Յ.Ա. Արեբաճյան, *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, Москва, "Наука", 1991г., с.53, М.С. Иванов, *Очерк истории Ирана*, АН СССР, 1952г. стр. 343.
5. Elwell-Sutton, *Modern Iran*, p.121, Տի'ս Բալև D. Bourke-Burrowes, *Changes and development in Persia during Pahlavi Regime*, *Journal of the Central Asian Society*, vol. XVIII, Part I, January, 1931, p. 46.
6. Elwell-Sutton, *Modern Iran*, p. 122.
7. *Ibid.*, p.121, Տի'ս Բալև' *Journal of the Central Asian Society*, vol. XVIII, Part I, January, 1931, p. 46, *Иран: Очерки новейшей истории*, 1976г. стр. 114.
8. Elwell-Sutton, *Modern Iran*, p.122, Տի'ս Բալև' Joseph. M.Upton, *The History of Modern Iran: an interpretation*, Cambriedge, Massachussets, 1965, p. 62, *Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions*, p.144.
9. Peter Avery, *Modern Iran*, p. 291, Տի'ս Բալև George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p. 97, *Иран: Очерки новейшей истории*, с. 127.
10. Elwell-Sutton, *Modern Iran*, p.122, Տի'ս Բալև' Peter Avery, *Modern Iran*, p. 292, George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p. 98, p.34, *Иран: Очерки новейшей истории*, с. 20.
11. Elwell-Sutton, *Modern Iran*, p.122-123, Տի'ս Բալև' Donald Wilber, *Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran*, New York, 1975, p.173-174.
12. George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p. 98.
13. Բեզա Գոժե, *Иран в XX веке: Политическая история*, Москва, "Наука", 1994г., с. 148, Տի'ս Բալև' Joseph. M.Upton, *The History of Modern Iran: an interpretation*, p. 62, *Дустов Дуст Каримович, Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX в.)*, Автореферат диссертации на соискание ученой



- степени кандидата исторических наук, М., 1989г., с.8, Eryand Abrahamian, *Iran Between Two Revolutions*, p. 144, З.А. Арабаджян., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с. 52.
14. Donald Wilber, *Riza Shah Pahlavi*, p.174, Sh'u Buzl' Peter Avery, *Modern Iran*, p. 292, Lewis V. Thomas and Richard N. Frye, *The United States and Turkey and Iran*, Cambridge, Massachusetts, 1952, p. 224.
  15. Elwell-Sutton, *Modern Iran*, p.123, Sh'u Buzl' Peter Avery, *Modern Iran*, p. 292.
  16. Manucher Farmanfarmaian and Roxane Farmanfarmaian, *Blood and oil: inside the Shah's Iran*, New York, 1999, p. 120.
  17. Дустов Дуст Каримович, Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX в.), с. 8.
  18. Manucher Farmanfarmaian and Roxane Farmanfarmaian, *Blood and oil: inside the Shah's Iran*, p. 120, Sh'u Buzl' Дустов Дуст Каримович, Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX в.), с. 8.
  19. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, Stanford, California, 1961, p. 77.
  20. Иран; Очерки новейшей истории, 76, Sh'u Buzl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.80.
  21. George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p.92 Sh'u Buzl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.80.
  22. Реза Годс, Иран в XX веке: Политическая история, с.142, Sh'u Buzl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.81.
  23. З.А. Арабаджян., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с.50. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.81.
  24. Коран, М. 1990, Сура 4, 24(20), с. 84.
  25. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.83, Peter Avery, *Modern Iran*, p. 296, George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p. 92, З.А. Арабаджян., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с.49.
  26. Elwell-Sutton, *Modern Iran*, p.124, Sh'u Buzl' The Middle East and North Africa, 1964-65, London, p.26, William S. Haas, *Iran*, p.167.
  27. Коран, М. 1990, Сура 4, 3(3), с. 81.
  28. Elwell-Sutton, *Modern Iran*, p.124, Sh'u Buzl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 83, Eryand Abrahamian, *Iran Between Two Revolutions*, p.144, Иран; Очерки новейшей истории, с.121, З.А. Арабаджян., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с.49.
  29. William S. Haas, *Iran*, p.181-182, Sh'u Buzl' Peter Avery, *Modern Iran*, p. 290.
  30. Арабаджян., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с.49, Sh'u Buzl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 84.
  31. Elwell-Sutton, *Modern Iran*, p.124-126.
  32. Арабаджян., *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с.49.
  33. Elwell-Sutton, *Modern Iran*, p.125, Sh'u Buzl' William S. Haas, *Iran*, p.182, Peter Avery, *Modern Iran*, p. 292.

34. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 81, Sh'ū Sulū' Peter Avery, *Modern Iran*, p. 295-296, George Leuzowski, *Iran Under The Pahlavis*, p. 92, Арабаджян, *Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.)*, с.49.
35. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 82-83, Sh'ū Sulū' Peter Avery, *Modern Iran*, p. 296, *Иран: Очерки новейшей истории*, с. 121.
36. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 82.
37. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 83.
38. *Ibid.*, p.83
39. *Ibid.*, p.84
40. Elwell-Sutton, *Modern Iran*, p.127.
41. *Ibid.*, p.126, Sh'ū Sulū' М.С. Иванов, *Очерк истории Ирана*, с. 343.
42. *Иран: Очерки новейшей истории*, с. 113.
43. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 84.

## ԱՐԱՔԱ ՓԸՇԱՅԸՆ

### ՋԻՀԱԴ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ

#### ԵՎ ԴՐԱ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒԻՉ

Միջազգային հարաբերությունների ժամանակակից փուլում խալանի հարաճումն քաղաքականացման հետևանքով *Ջինադ* տերմինն ավելի հաճախ է սկսել հայտնվել ինչպես քաղաքագիտական ուսումնասիրություններում ու մամուլում, այնպես էլ խղամական քաղաքական և կրոնական ուղղությունների ու հոսանքների հայեցակարգերում: *Ջինադ* վերաբերյալ գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ<sup>1</sup>:

*Ջինադ* խղամական աշխարհընկալման յուրահատուկ ձև է: Իսլամական աշխարհի քաղաքական և կրոնական չափավոր ու արմատական հոսանքները սնվում են *Ջինադ* գրույթներով: Միևնույն ժամանակ այս հայեցակարգը դարձել է աշխարհում ամենադաժան երևույթներից մեկի՝ անարեկություն, շարժիչ ուժը, դրա գաղափարական հիմքը:

*Ջինադ* տերմինի նշանակությունը բավական լայն ընդգրկում ունի: Իսլամական շրջանակներում այն տարբեր մեկնաբանությունների առիթ է դարձել մանենդական քաղաքական, կրոնական գործիչների ու տեսարանների կողմից: Բազմազան և հակոտմյա են տեսակետները *Ջինադ* իրագործման ուղիների, մեթոդների և նշանակության մասին:

*Ջինադ* բառը ծագում է արաբերեն *յիժ* արմատից, որ նշանակում է *բանքեր գործադրել, ճնգել քափել, պայքարել*: Իրավական-կրոնական տեսանկյունից *Ջինադ*ը ասածն հավատքի նվիրդյալների կողմից գործադրվող բազմաթիվ միջոցների համալիր է: Այս առումով ուշագրավ է իսլամի տարբ գրքի՝ *Դուրանի* (ալ-Կուրան, արաբերեն՝ ըմբռցվածք) հետևյալ այսբը. «Դուք հավատում եք Ալլահին և նրա առաքյալին և պայքարելով՝ ընծախարություն եք հանում Ալլահի ձեռ ունեցվածքն ու կյանքը: Դա երջանկություն է, եթե դուք դա երբևէ հասկանում եք»<sup>2</sup>:

*Ջինադ*ը հասկացությունը ձևավորվել է Մուհամմադ մարգարեի քաղաքական շրջանում և կապված էր նոր հավատքի գաղափարախոսության հետ: Այն առաջին հերթին նշանակում էր հրաժարվել բազմաստվածությունից (*polytheism*)՝ հոգուտ միաստվածության (*monotheism*) գաղափարի: Այսպիսով, իսլամի սկզբնական շրջանում *Ջինադ*ը առավելապես փրկության, քան գործադրության հայեցակարգ էր<sup>3</sup>:

Իսլամի իստրամակնից և խալիֆայության<sup>4</sup> ստեղծումից հետո Ջի-հադի սկզբունքը դարձավ պետական զարգացարախոսության ամենակարևոր տարրերից մեկը, որը նորադարձ մահմեդականներին մղում էր աշխարհով մեկ տարածել իսլամը և ստեղծել համաշխարհային իսլամական պետություն: Ալեմհայտ է, որ այն արտահայտում էր *dar al-Islam-ի* այսինքն՝ իսլամի աշխարհի (կամ խաղաղության աշխարհի) պաշտպանության զարգացարք ոչ իսլամական ուժերից: Միևնույն ժամանակ Ջի-հադսը էր պայմանավորվելու *dar al-harb-ի* այսինքն՝ պատերազմի աշխարհի փոխակերպումը *dar al-Islam-ի*<sup>5</sup>:

Ջիհադն ամբազրված է Դուրանով և իստիսնեթով<sup>6</sup> Ջիհադի հայեցակարգն իսլամական իրավական դասական դպրոցների՝ *մազհաբների*, կողմից համակարգվեց խալիֆայության կայացումից հետո: Մշակվեցին Ջիհադի քե՛ տեսական և քե՛ գործնական կողմերը:

Իսլամական իրավունքի մեջ թույլատրվեց պատերազմի միայն մի տեսակ՝ Ջիհադը, որի նպատակը իսլամի առաքելության պաշտպանությունն էր: Գրանուժ շեշտադրվեց *շարունակական պատերազմի* սկզբունքը: Իսլամը մարտնչելու էր մինչև աստծո խոսքը երկրի վրա հաստատելը:

Հիմնվելով այս սկզբունքների վրա՝ Ջիհադը օտար՝ մասնավորապես եվրոպական լեզուներով բարգձմանվել է սրբազան պատերազմ, որն արտահայտում է տերիմի միայն իրավական-կրոնական նշանակությունը:

Ջիհադն իսլամական համայնքի հիմնական պարտականություններից մեկն է: Դուրանում նշված է, որ աստված կնեթի նրանց մեղքերը, ովքեր *բամսուցե Բն* համուն աստծո (կամ աստծո ճանապարհին *[jihad li sabil Allah]*) և կառաջնորդի դրախտ: Հադիսներում նույնպես նշված է, որ Ջիհադի մեջ ներգրավվածները մեծ առավելություններ են տնեմալու քե՛ երկրային, քե՛ երկնային կյանքում<sup>6</sup>:

Մահմեդական շատ հեղինակներ նշում են, որ Ջիհադը պարտադրված չէր հավատացյալներին, այլ բողևված էր նրանց կամքին: Մահմեդական իրավագետները Ջիհադը չեն ներգրավել հավատքի՝ *իման*, հինգ սյուների մեջ, քանի որ այն ոչ քե ամհատական պարտականություն (*farid 'ain*) էր, այլ մահմեդական համայնքի՝ *ումմայթ*<sup>7</sup> պարտականությունը (*farid al-kifayah*): Պարտադիր չէ, որ *ումմայթ* բոլոր անդամները ռազմական գործողությունների միջոցով մասնակից դառնային Ջիհադին: Գրանից կարող էին ազատվել ֆիզիկապես տկարները<sup>8</sup>:

Ջիհադը *շարունակական պատերազմի* կարգավիճակ է հեթանոսների (*mushrikah*) և «անհավատների» (*kuffar*) դեմ: Խալիֆայության կազմավորումից հետո հեթանոսների համար այլընտրանք չկար: Նրանք կա՛ն պետք է ընդունեին իսլամը, կամ՝ կյանքով հատուցեին, քանի որ իս-

լանք և քաղցմաստվածությունը (*տնտ*) անհամատեղելի են: Ուստի մահմեդականների աստվածային պարտականությունն էր վերացնել հեթանոսներին<sup>11</sup>: Այս մասին հաղթանքում կա Մուհամմադ մարգարեի խոսքերը. «Եւ կոչում եմ ձեզ մարտնչել կոսպալստների դեմ, մինչև որ նրանք ասեն՝ «Չկա աստված քացի Ալլահից»<sup>12</sup>: Նմանօրինակ շնչուաղբումներ Ղուրանում կան մահ «անհավատների» վերաբերյալ<sup>13</sup>:

Ուշագրավ է *Ջինադի* մուտեջումը խալիֆայության մոնոթեիստաների, հիմնականում՝ քրիստոնյաների և հրեաների նկատմամբ: Ղուրանում նրանք հիշատակված են որպես *ախ/ա-կրեթ*<sup>14</sup>, այսինքն՝ Գրոց ժաղվուրդ, և միջակա տեղ եմ գրադեցնում մահմեդականների և հեթանոսների ու «անհավատների» միջև:

Մահմեդական մվաճողական արչավանքների ժամանակ հանդուրժողականությունը *ախ/ա-կրեթ*-ի նկատմամբ պայմանավորված էր նրանցից աջակցություն ստանալու ակնկալիցով: Խալիֆայության կազմավորումից հետո փոխհարաբեղությունները մոնոթեիստների և մահմեդականների միջև կարգավորվեցին իսլամական իրավունքի միջոցով: Այս մասին Ղուրանում կա համապատասխան նշումը. «Մարտնչի՞ք Գրոց մարդկանց դեմ, որոնք չեն հավատում ո՛չ Ալլահին և ո՛չ էլ դատաստանի օրվան, որոնք պիտի չեն համարում այն, ինչ պիտի է համարել Ալլահը և նրա առաքյալը, և ոչ էլ հետևորդն են ճշմարիտ հավատքի, մինչև որ նվառասացած, իրենց իսկ ձեռքով չվճարեն ջիզյան»<sup>15</sup>:

Ալլակրոնության հարկ կամ անհնամայ գլխահարկ՝ *ջիզյա* վճարելու դիմաց քրիստոնյաները, հրեաները և մնացած մոնոթեիստները մահմեդական համայնքի կողմից ստացան հովանավորչայի հատուկ կրոնական կարգավիճակ՝ *ախ/ա-ճնուտախ*<sup>16</sup>: Նրանք բուլլատրվեց դավանել սեփական կրոնը, երաշխավորվեց նրանց կյանքը, ազատությունը, ունեցվածքի անձեռնմխելիությունը: Մահմեդականները պարտավոր էին հարգանքով վերաբերվել *զեմեյնեդին* և իրականացնել նրանց նկատմամբ ստանձնած պարտականությունները: Համաձայն ավանդույթի՝ մարգարեն մահմեդական հավատացյալներին կոչ է արել չհետապնդել զիմեյնեդին՝ Ահեղ դատաստանին շարժանաճալու համար<sup>17</sup>:

IX-X դարերում *Ջինադ* հասկացությանը ստացավ նոր քոլանդակություն: Չևավորվեց *Ջինադ* քարձրագույն ձև՝ եզկուր *Ջինադ* (*կամ մեծ Ջինադ, մեքքին Ջինադ*) հասկացությունը, որ նշանակում է մեքքին ինքնակատարելագործում համուն աստուռ<sup>18</sup>: XII դարի մահմեդական ուսցիտմալիստ փիլիսոփա, գիտնական և տեսաբան Իբն Ռուշդը (Ավետես) նշում է *Ջինադ* իրականացման չորս եղանակներ՝ *սրտով, լեզվով, ձեռքով և սրով*: Առաջին դեպքում մարդը պայքարում է աստամայի դեմ՝ ձգտելով դիմագրավել մեքքին արատները, երկրորդ և երրորդ դեպքերում աստվելապես պայքար է մղվում ճշմարիտը, լավը յուրացնելու և սխաղ

գիտակցելու ու դիմագրավելու համար: Չորրորդը «անհավատների» և հավատքի բշտամիների դեմ ճակատամարտն է, որի մեջ ներգրավվածների՝ որպես փոխհատուցում արժամանակառի են հավիտենական փառքի և դրախտի<sup>19</sup>:

\*\*\*

Մահմեդական ժամանակակից հեղինակներից շատերի կարծիքով՝ *Ջիհադը* սրբազան պատերազմ բարձրամեղը ճիշտ չէ, որ կապված է Արևմուտքում իսլամը ոչ ճիշտ ըմկալելու հետ<sup>20</sup>: Իսլամը գիտակցվել է որպես *ուլլե կոմն*, մանժագվել է նրա խորքային հոգևոր նշանակությունը, աղճատվել՝ իմաստը: Մահմեդական տեսարաններից շատերի կարծիքով՝ միջազգային լրատվամիջոցների և քարոզչության միջոցով Արևմուտքը ձգտում է իսլամը ներկայացնել որպես մարտնչող և դաժան կրոն, իսկ *Ջիհադը՝* որպես աշխարհի խաղաղությունը խաթարող հանգամանք: Իրականում *Ջիհադը* լայն հասկացություն է և «խորհրդանշում է իսլամի վեհ ուսմունքը»<sup>21</sup>:

Մահմեդական տեսարան Ֆալլուք Ռահմանի կարծիքով՝ եկրպացիների մեջ տարածված այն տեսակետը, թե «իսլամը տարածվել է սրով», կամ «իսլամը սրի կրոն է», ճիշտ չէ: «Այն, ինչ տարածվել է սրով ոչ թե իսլամի կրոնն էր, այլ իսլամի քաղաքական տիրապետությունը... իրականում զինված Ջիհադը (Ջիհադի - Ա.Փ.) միայն մի տեսակն է»<sup>22</sup>:

Ժամանակակից հեղինակները, ըստ *Ջիհադի* մասին իրենց պատկերացումների, բաժանվում են երեք խմբերի՝ *ապոլոգիստներ, մեռկասիցիստներ, մոդեռնիստներ*<sup>23</sup>:

Ապոլոգիստները, որոնք երևան եկան 19-րդ դարի երկրորդ կեսին Հնդկաստանում քրիստոնեական գաղութատիրության շրջանում, խաղաղասիրական մոտեցում ցուցաբերեցին *Ջիհադը* մեկնաբանելիս: Վկայակոչելով Մոհամմադ մարգարեի մղած բոլոր մարտերը՝ նրանք հավաստում էին, որ իսլամն ընդունում է միայն պաշտպանողական պատերազմ հասկացությունը: Մելիդ Ահմադ Խանի (1817-1898)<sup>24</sup> պնդմամբ՝ քանի դեռ քրիստոնեացիները չէին սահմանափակել մահմեդականների կրոնական իրավունքները, անընդունելի էր նրանց դեմ *բիհադ* հայտարարելը: Նրա կարծիքով՝ *Ջիհադը* ընդունելի է երկու դեպքում՝ երբ մահմեդականների դեմ ազդեսխա է իրականացվել, սակայն ոչ թե նրանց երկիրը նվաճելու, այլ բացառապես իսլամը վերացնելու նպատակով, և, վերջապես, երբ մահմեդականներին արգելում են դավանել իսլամը<sup>25</sup>:

Նեռկասիցիստների մոտ *Ջիհադը* ներկայացված է դատական պատկերացման շրջանակներում, սակայն նորացված ձևով: Այս առումով ուշագրավ է մահմեդական տեսարան Աբու Ալա Մաուդուդիի (1903-1979)<sup>26</sup> «Ջիհադն իսլամում» բազմածավալ մեմուարությունը, որտեղ հեղինակը ձգտում է փելիստիայորեն հիմնավորել *Ջիհադի* դասական հա-

յնցակարգը<sup>27</sup>: Երես կարծիքով մարդիկ ճշմարիտ ազատություն կաշտող են վայելել և ազատ ընտրության հնարավորություն ունենալ, թե՛ երկրի վրա իշխի իսլամի օրհնը<sup>28</sup>:

«Դեպի իսլամի ճանաչումը» գրքում Աբու Ալա Մատուդդին նշում է, որ *Ջիհադը* բացատրապես պաշտպանողական բնույթ ունի. «...ամենօրյա աղոթքների ու ծովի նման Ջիհադը մահմեդականների գլխավոր պարտականությունն է»: Հեղինակի կարծիքով՝ թե՛ որևէ իսլամական պետության դեմ ագրեսիա է իրականացվել, և Տա ի վիճակի չէ դիմագրավել այն, ուրեմն հարևան իսլամական պետությունների, ինչպես նաև ողջ աշխարհի մահմեդականների պարտքն է աջակցել այդ երկրին, այսինք՝ *Ջիհադ* մղել<sup>29</sup>:

Ապոլոգիստների մեծ մեծամասնությունը մուսուլման հավատում են, որ իսլամը միայն պաշտպանողական պատերազմի կողմնակից է, իսկ Դուրանի պատվիրանները և մարզարկի գործողությունները որևէ կասկած չեն հարուցում, որ իսլամը դատապարտում է ագրեսիան: Եզիպտացի գիտնականներ Մահմուդ Շաբուրը և Աբու Ջահրան հարում են այս մտոնցմանը:

Շաբուրի կարծիքով՝ *Ջիհադը* բույր է տալիս կովել միայն ագրեսիան կանխելու, իսլամի առաքելությունը և կրոնի ազատությունը պաշտպանելու համար: Դուրանը ձգտում է խաղաղության և հակված չէ արյունահեղության: Մոդեռնիստների համար տիպական է *Ջիհադիմ* վերաբերող դրույթները քննարկել ոչ թե առանձնացված, այլ՝ համատեքստում, իսլամական հեռանկարի մեջ: Աբու Ջահրան պատերազմի և խաղաղության մասին խոսելիս քննության է առնում իսլամում մարդու արժանապատվության, մարդկության միասնության, մարդկային խոստովության համագործակցության, ազատության, արդարության, հավասարության, փոխգործողությունների մասին հարցերը<sup>30</sup>:

Արդյո՞ք *Ջիհադը* հոգին փրկելու միջոց է, թե՛ պաշտպանվելու և ուժմայի ամրամնեղին էլ պաշտպանելու միջոց, գրում է իսլամագետ Նյունհիլյուզը<sup>31</sup>: Ժամանակակից մահմեդական իրավագետները վիճաբանում են, թե արդյոք *Ջիհադը* միակ արդարացված պատերազմն է, որ ամրագրված է *Շարիաթով*<sup>32</sup> և պաշտպանական բնույթ ունի:

Մահմեդական իրավագետների մեծամասնությունը, գրում է իսլամագետ Ռ.Մարտինը, գտնում են, որ ժամանակակից իսլամական ազգպետության<sup>33</sup> շրջանակներում *Ջիհադն* ունի բացառապես պաշտպանական նշանակություն արտաքին հարձակման և ներքին կործանարար գործողությունների դեմ<sup>34</sup>: Իսլամական աշխարհընկալմանը բնորոշ են թե՛ պատերազմը և թե՛ խաղաղությունը, որոնք աստվածային հիմքեր ունեն: Պատերազմը հնարավորություն է տալիս պաշտպանել *ուժմայի* անդամներին *աստվածային ճշմարտության* թշնամիներից: Իսլամական ի-

քավունքի մեջ պատերազմն արդարացված է, որը մահմեդական հավատացյալի կրոնական պարտականություններից (*'ibadat*) մեկն է: Խաղաղությունը (*salam*) նույնպես ամրագրված սկզբունք է Ղուրանում: Մահմեդականները վերջնական խաղաղության կարող են հասնել, երբ *ամման* հատրահարի բոլոր ընդդիմադիր երևույթները, երբ *պատերազմի աշխարհք* փոխակերպվի *խաղաղության աշխարհի*, այսինք՝ երբ ողջ մարդկությունն ընդունի իսլամը<sup>35</sup>: Այդ դեպքում *Ջիհադն ակտիվ պատերազմից* կվերածի *համդարտ պատերազմի*<sup>36</sup>:

Ժամանակակից մահմեդականների մեծամասնության կարծիքով, գրում է իսլամագետ Ա.Մայերը, *Ջիհադը* մահմեդական համայնքի պաշտպանության մպատակ է հետապնդում<sup>37</sup>: Իսլամական և միջազգային իրավունքի մասնագետ Հասան Մուայյունդինի կարծիքով՝ *Ջիհադն* արդարացված է, երբ մահմեդականներին վտանգ է սպառնում: Մահմեդականներն իրենք չպետք է դիմեն պատերազմական գործողություններ կամ էլ՝ ագրեսիայի<sup>38</sup>: Այս կապակցությամբ հաճախ է մեջբերվում Ղուրանի հետևյալ այսբը. «Պատերազմից հանուն աստծո նրանց դեմ, ովքեր իրենք են պատերազմում ձեր դեմ, սակայն նախահարձակ մի եղեք: Ալլահը չի սիրում ագրեսիվներին (mu'atafin)»<sup>39</sup>:

Իսլամական և միջազգային իրավունքի մասնագետ լիբանանցի Սոբիի Մահմաստանիի կարծիքով՝ իսլամական իրավունքի մեջ պատերազմի կանոնը աստիճանաբար մերդաշնակվում է միջազգային իրավունքի նորմերին: Պատերազմը տեսականորեն ճիշտ և բույրատրեյի է կրոնի ազատությունը, սոցիալական արդարությունը պաշտպանելու, ինչպես նաև ագրեսիան հետ մղելու, անարդարությունը կանխելու տեսանկյունից<sup>40</sup>:

Ըստ Շաբուքի՝ Ղուրանի այսբներն ուղղված են ապահովելու խաղաղությունը, վերջ դնելու ագրեսիային մախրամ միջազգային կառույցները դրանով կզբաղվեին: Իսլամում ճակատամարտ (*գիթ*) մղելը արդարացված է, գրում է նա, միայն ագրեսիան դիմագրավելու, իսլամի առաքելությունը և կրոնական ազատությունը պաշտպանելու համար<sup>41</sup>:

Մահմեդական տեսարան Դաուդ Էլհամիի կարծիքով՝ իսլամական *Ջիհադը* իսլամ տարբերվում է մարդկության պատմությանը հայտնի պատերազմներից, որոնք նյութական նկատառումներ հետապնդելով՝ հանգեցրել են ոչ հզոր ազգերի դժբախտությանը: Ըստ այդմ, այն չի համապատասխանում ժամանակակից պատերազմներին, որոնք անմարդկային նպատակներ են հետապնդում: Իսլամի համար անընդունելի են պատերազմները, զաղութատիրությունը և շահագործումը: Էլհամիի կարծիքով՝ *Ջիհադի* մարտիկները պայքարում են հասարակական քաղաքականության և սրբազան նրազանքների իրականացման համար, մինչև որ աստված զբասրտություն ցուցաբերի<sup>42</sup>:



Ձգալի հետաքրքրություն է ներկայացնում *Ջինաչի* հոգևոր նշանակության վերհանումը, որը հասկանալու համար մախ պետք է ընկալել իսլամում *հավատարակչություն* գաղափարը, զրոյն է ժամանակակից մահմեդական տեսքան Սեյիդ Հուսեյն Լասրը<sup>43</sup>: *Հավատարակչությունը* աստվածային ճշմարտության երկրային արտացոլումն է և խաղաղության անհրաժեշտ նախապայմանը: Այն շարունակական ջանքեր է պահանջում, որի կորուստը կհանգեցնի քաոսի թե՛ ուժմայի, թե՛ անհասի կյանքում: Մահմեդականները պետք է ջանան կյանքի բոլոր պահերին՝ սրալարելու մարտում թե՛ ներքին և թե՛ արտաքին ուժերի դեմ<sup>44</sup>:

Սեյիդ Հուսեյն Լասրի կարծիքով՝ ներքին *Ջինաչի* առնչվում է սոցիալ-տնտեսական քնազավառնին, որը նկատի է առնում հասարակության մեջ արդարության (*adl*) հաստատումը: Արդարության գիտակցությունը պետք է սկսվի մարդուց: Անհատը պետք է ձգտի պաշտպանել ոչ միայն իր և իր ընտանքի, այլ մյուսների պատիվը, վարկը, իրավունքները, ինչը կրոնական պարտականություն է և նույնպես՝ *Ջինաչի*: Անհատը *Ջինաչի* միջոցով պետք է հետամուտ լինի մահ սոցիալական արդարության հաստատմանը՝ համաձայն Դուրանի սկզբունքների՝ ձգտելով վերականգնել *հավատարակչությունը*<sup>45</sup>:

Հեղինակի կարծիքով՝ չմայած իսլամական հավատքի հինգ սյուների մեջ *Ջինաչի* ներկայացված չէ, սակայն դրանցից յուրաքանչյուրն առնչվում է դրան: *Շահադայի*<sup>46</sup> (*shahadah*) միջոցով արտահայտվում է ոչ միայն ճշմարտության, այլև՝ ներքին *Ջինաչի* էությունը: Ամենօրյա աղոթքները (*salat*) նույնպես անվերջամալի, չընդհատվող *Ջինաչի* օրինակներ են, որոնք ընդմիջվում են մարդկային գոյի շարունակական ռիթմով, որն իր հերթին ներդաշնակ է տիեզերական ռիթմին: Աղոթքի ժամանակ նավատագրալը հոգևոր պայքար է մղում: Ռամադան ամսի ծոց (*sawm*), որի ընթացքում մարդը ներքին մաքրության և մեկուսացվածության միջոցով պայքարում է արտաքին աշխարհի կրքերի և գայթակղությունների դեմ, պահանջում է ասկետիզմ և ներքին կարգուկանոն: Այս ամենը չի կարող դրսևորվել այլ կերպ, քան *Ջինաչի*: Ուխտագնացությունը (*hajj*) Մեքքա չի կարող տեղի ունենալ առանց մախօրոք, երկար նախապատրաստվածության, ջանքերի և ճիզերի: Այս կապակցությամբ հասնալ է մեջբերվում Մուհամմադ մարգարեի հետևյալ խոսքերը, «Ուխտագնացությունը ամենագեղեցիկն է բոլոր տեսակի *ջինաչի*ներից»: Եվ վերջապես ռոքրմածությունը (*zakat*) նույնպես *Ջինաչի* մի տեսակ է, որի դեպքում ռոքրմած մարդը ոչ միայն հոգին է հանգստացնում, այլ փորձում է սոցիալական արդարություն հաստատել հասարակության մեջ:

Մահմեդական տեսարանի կարծիքով՝ հավատքի բոլոր սյուներից հոգևոր տեսանկյունից կարելի է դիտարկել ներքին *Ջինադե* լույսի ներքո, որը մահմեդական հավատացյալի կյանքի կարևորագույն մասն է<sup>47</sup>։

Այսպիսով, հոգևոր կյանքում կատարելության բարձրագույն աստիճանին կարելի է հասնել ներքին *Ջինադե* միջոցով։ Կյանքի արատնեքից հեռանալ և աստվածային գոյի ամաղաղությունը տրվել կարելի է միայն ինտենսիվ *Ջինադե* միջոցով։ Երբքին անկատարությունը հաղթահարելու համար մարդը պետք է հասնի նաստատուն *Ջինադե*։ Հոգին վատնուժից հեռու պահելու և աստվածային խաղաղությանը վերադարձնելու համար պետք է ներքին *Ջինադե* մղել։ Ըստ այդմ, հոգևոր և էգոտներիկ տեսանկյունից ներքին *Ջինադե* բանալի է՝ հոգևոր աշխարհը հասկանալու համար։ Այն ուղի է դեպի իսլամի ատարելությունը։ Իսլամական ուղին դեպի կատարելություն, որն ուրվագծեց Մուհամմադ մարգարեն, իրականացվում է *Ջինադե* միջոցով։ Այն կոչված է կենսական ազդակներ հաղորդել մարդկանց։ «Մեր գիտակցական կյանքի բոլոր պահերին մենք պետք է ձգտենք կատարելագործել *Ջինադե*»<sup>48</sup>։

Ուշագրավ է *Ջինադե* հայեցակարգը իսլամական միտոլոգիայի՝ սուֆիականության տեսանկյունից, որտեղ *Ջինադե* պայքար է կրքերի և արատների դեմ։ Դա մեծ *Ջինադե* է։ IX դարի սուֆի տեսաբան ալ-Բուֆիի կարծիքով՝ *Ջինադե* ներառում է տաս բաժիններ, որոնցից միայն մեկն է նշանակում է մարտնչել իսլամի թշնամիների դեմ։ Մնացածները նկատի են առնում պայքարը սեփական նախ դեմ<sup>49</sup>։

\*\*\*

Հետաքրքրություն են ներկայացնում նաև *Ջինադե* հայեցակարգի վերաբերյալ արժանատական տեսակետները։

Մատղան Աբարխայի թագավորության Իսլամի, վակֆերի, կոյի և կողմնորոշման մախարաբության Իմամների և քարոզիչների ինստիտուտի գիտական հանձնախմբի հրատարակած «Շարիաթական և արաբական գիտությունների»<sup>50</sup> հետազոտման ծրագրեր» գրքում *Ջինադե* բացատրապես բնութագրված է որպես զինված պայքարի ձև, որը մահմեդականների համար պարտադիր է։ Այստեղ նշված են նաև *Ջինադե* մպատակներն ու շարժիչ ուժերը։ Եպատակներից մեկն է՝ «զինված պայքար տանել, որպեսզի Ալլահի խոսքը վեր լինի ամեն ինչից, իսկ կրոնն ամբողջովին ենթակա լինի Ալլահին»<sup>51</sup>։ *Ջինադե* պայքարն ուղղված է «ամհավատներին» և հեթանոսների դեմ, որոնց թվին են դասվում նաև քրիստոնյաներն ու հրեաները, ինչպես նաև վահհաբակականության տեսանկյունից իսլամի դրույթները խախտած մահմեդականները։ Ի դեպ, վահհաբակականության որդեգրած անձնակարևոր սկզբունքներից մեկը՝ *թաքֆիդը*, «ամհավատության» մեջ մեղադրում է նաև մահմեդականների, որոնք առերես մվիթված լինելով իսլամին՝ քաբցնում են իրենց անհավատությունը։

Դրանք կարող են լինել իսլամի մեջ նորարարություն ներմուծողները, որոնց դեմ պետք է *Ջիհադ* մղել՝ սպանել կամ դատապարտել<sup>22</sup>:

Այս առումով ուշագրավ է նաև ահաբեկչական գործողություններ իրականացրած «Հիզբ ալլահ» կրոնաքաղաքական կազմակերպության գլխավոր քարտուղար Մեյխի Հասան Նասրալլահի ելույթներից մեկի հետևյալ հատվածը. «Մենք նորից ու նորից ենք ընդգծում... որ այրումը կոփում է սուրը, այն միշտ հաղթել է սրին և ավերել ու կործանել բոլոր շրջաններն ու կապանքները...»: «Մենք մեր հարգանքն ու երախտագիտությունն ենք հայտնում բոլոր մոզահիլդներին, որոնք զոհարել են իրենց հոգիները, մաքառել են իրենց ժողովրդի արժանապատվության համար, բողբ են ուսումը, հեռացել են իրենց ընտանիքներից, տներից ու իղձերից և ներդրել են իրենց ծաղկուն նրիտասարդությունը պայքարի և Ջիհադի մեջ»<sup>23</sup>:

Ռուսաստանի Դաշնության մահմեդականների գերագույն մուֆտի շեյխ ուլ-իսլամ Թադլայթ Թաջուդդինի կարծիքով՝ իսլամական արժատականները<sup>24</sup> աղավաղել են *Ջիհադի* նշանակությունը: Իրականում *Ջիհադ* ասելով մախևառաֆ պետք է հասկանալ մեծ *Ջիհադը* (al-jihad al-kabir)՝ այն մեծ ճակատամարտը, որ յուրաքանչյուր մահմեդական պետք է մղի իր ներսում, իր արատների և կրքերի դեմ: Փոքր *Ջիհադը* պայքար է նրա դեմ, ով սերմանում է բռնություն և չարիք, դաժանություն և անհամբուրժողականություն, ով մեծում է հավատքն ու ճշմարտությունը: Մինչդեռ մահմեդական մուշտանդիները պատերազմ են հայտարարում նրանց դեմ, ովքեր համաձայն չեն իրենց հետ, այսինքն՝ ամբողջ աշխարհի դեմ՝ փաստորեն ընդդիմանալով նաև ավանդական իսլամին: Նման անհամբուրժողականությունը, ըստ իսլամի հոգևոր առաջնորդի, ի վերջո հանգեցնում է ահաբեկչության<sup>25</sup>:

*Ջիհադի* սկզբունքները ահաբեկչությանը ծառայեցնելը խորացնում են իսլամի դեմ անհամդորժողականության դրսևորումները: Իսլամական աշխարհի պաշտոնական շրջանակները ահաբեկչական գործողությունները համարում են «խոթք իսլամի հանդուրժողական աստվածային էությանը» և քննադատում են ցանկացած փորձ, որ ձգտում է եզրեր փնտրել ահաբեկչության և իսլամի միջև<sup>26</sup>:

\*\*\*

Արապիսով, դասական իմաստով *Ջիհադ* նշանակում է պայքարել հանուն իսլամի պաշտպանության և չի ենթադրում ազրեսիա: Մակայն շատ դեպքերում *Ջիհադի* դրույթներն օգտագործվել են ոչ այդ իմաստով քե՛ իսլամի վաղ շրջանում, մասնավորապես՝ խարիջիների<sup>27</sup> կողմից, քե՛ ներկայումս իսլամական կրոնաքաղաքական կազմակերպությունների կողմից, որոնք հետամուտ են ահաբեկչական գործողությունները կինճավորել և արդարացնել *Ջիհադ* երևույթով:

Փաստ է, որ Կուրանում բռնության նկատմամբ երկինաստ դիրքորոշում կա: Մի կողմից՝ ճնշումը թույլի նկատմամբ դատապարտվում է, նշվում է, որ մահմեդականները պետք է կռվեն միայն ինքնապաշտպանության համար<sup>58</sup>, որ իսլամը չի պարտադրում<sup>59</sup>: Մյուս կողմից՝ Կուրանի շատ այբերը արդարացում են պատերազմ վարելը հնազանդեցնելու և իսլամը տարածելու նպատակով<sup>60</sup>:

Հարկ է նշել, որ *Ջիհադի* սկզբունքները լայնորեն օգտագործվել են XIX դարի վերջին և XX կեսերին Ասիայի և Աֆրիկայի իսլամադավան երկրների՝ գաղութատիրության դեմ ազգային-ազատագրական պայքարում:

Ժամանակակից փուլում իսլամական աշխարհում միտում կա *Ջիհադը* մեկնարանել որպես պաշտպանողական պատերազմ: «...Ջիհադ է պատերազմը պետության տարածքային ամբողջականության պաշտպանության համար: Սակայն պատերազմը ծավալապաշտության նպատակով Ջիհադ չէ»<sup>61</sup>:

Հարկ է փաստել, որ ընդհանուր առմամբ քաղաքական, հասարակական, մասամբ նաև գիտական շրջանակներում *Ջիհադ* հասկացությունը մեկնարանվում է թերի կերպով, շեշտադրվում է միայն ոչ մահմեդական աշխարհի նկատմամբ պատերազմի և խաղաղության հարցը իսլամի տեսանկյունից: Մինչդեռ *Ջիհադի* հայեցակարգը շատ ավելի տարողունակ է և նշանակում է նաև լուրջ պայքար ինչպես սոցիալական, տնտեսական և մշակութային ամենատարբեր խնդիրների լուծման<sup>62</sup>, այնպես էլ ամհատի հոգևոր աշխարհի կատարելագործման ուղղությամբ:

## ARAKS PASHAYAN

### SOME REMARKS ON JIHAD AND ITS INTERPRETATION

The paper deals with the concept of *Jihad*. The word *Jihad* is derived from the Arabic root *jd* with the primary meaning "strive" or "exert oneself". Its juridical-religious (traditional) meaning is the exertion in the "path of Allah", i. e. for the sake of God for the spread of the belief of Allah. It should be taken in its widest meaning to include sacrifice of life in fighting as well as material support. The formation of doctrine of *Jihad* is connected with the name of Muhammad and the new ideology of Islam. *Jihad* is a required duty imposed upon the Muslim community. It is a continuous status of war against idolaters and "unbelievers" until the whole world would be islamized. The *hadith* emphasizes the great advantages to be gained in this life and the life eternal by those who fights for the sake of Allah. Taking into account these facts the *Jihad* usually is translated into European languages as "holy war".

The Modern perceptions differ from the traditional in important ways. The Muslim thought is convinced that Islam does not at all stand offensive war, defensive

war being the only kind allowed and that Islam condones aggression. The Muslim ideologists maintain that *Jihad's* translation into "holy war" combined with the erroneous notion of Islam prevalent in the West as the "religion of the sword" which has helped to eclipse its inner and spiritual significance and to distort its connotation. There are also fundamental approaches on the *Jihad* whose concept serves as an ideological basis for terrorism.

It is necessary to maintain that the doctrine of *Jihad* is interpreted not completely in political, public as well as scientific circles. Actually, it is a not only a doctrine of war and defense. It means a serious struggle in social, economic and cultural fields, as well as a way for perfection of the spiritual values of Muslim believers.

### ՃԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իսլամին առնչվող տեսական հարցերը սկսել են զիտական շրջամատուցյան մեջ դրվել հիմնականում XIX դարից սկսած մասնավորապես եվրոպացի իսլամագետների կողմից: Այս մասին մանրամասն տե՛ս՝ Albert Hourani, *Islam in European Thought*, Cambridge University Press, 1991, 199 p.
2. Դուրան, «Սուրաթ աս-Սաֆ», 61;11: Դուրանից կատարված տողացի թարգմանությունները՝ ըստ Ա. Փաշայանի:
3. Ash-Shaffi, *Kitab-ul-Umm*, Cairo, 1321, A.H., v. IV, pp. 84-85.
4. *Նազիխատությունը VII դարում* իսլամ ընդունած արաբների նվաճողական արշավանքների հետևանքով ձևավորված արաբամանիդական թեոկրատ պետությունն է: Պետությունն առաջնորդը՝ խալիֆան (արաբերեն՝ փոխափող), մարմնավորում էր ինչպես քաղաքական (եմիրաթ), այնպես էլ հոգևոր (ժամաթ) իշխանությունը: Մահմեդական իրավունքի մեջ խալիֆությունը կատարյալ վարչարարական կառույց է, որը միավորում է իսլամական ազգին՝ *ումմայթն*:
5. Իսլամական տեսության համաձայն աշխարհը քաժանված է *խլամի աշխարհի* և *պատճառավի աշխարհի* միջև: Իսլամի աշխարհում իսլամի օրենքներով ղեկավարում են մահմեդականները: Հնարավոր է նաև, որ մահմեդյակներն այստեղ մեծամասնություն չկազմեն: Պատերազմի աշխարհի բնակիչները մահմեդականներ չեն, այլ՝ «անհավատներ», իսկ երբ մահմեդականներ են, ապա՝ «անհավատներ» տիրապետության տակ են:
6. Հաջիաները Մոհամմեդի և նրա համախոհների արարքների և արտահայտությունների պատմություններն են, որոնք զբված են *խճաջի* (արդյուրագիտական շրջա) հիման վրա: Գոյություն ունեն *ժաջիսմիդի* վեց հիմնական ժողովածուներ:
7. «Ալլահը-Ա.Փ.» ներում կլնորի ձեր մեղքերին և ձեզ կառաջնորդի այգիները (*ձոտթ*, որոնք ընդերքով գետեր են հոսում, կրմակեցմի ձեզ դրախտի այգիների ծառայա՞ կացարաններում: Դա մեծագույն արքայություն է», Դուրան, «Սուրաթ աս-Սաֆ», 61;12:

8. «Ալլահը դրախտում խաբուր խանգրվան է նախատեսել նրանց խանաթ, ովքեր կմարտնչեն իր ճամաարսիհին», Al-Bukhari, Al-Jami' al-Sahih, Cairo, 1314, A.H., v. IV, p. 17.
9. *Ուսման իսլամացալաների խանայնը* է, որ կազմված է տարբեր ցեղերի և ազգությունների մահմեդականներից, որոնց միավորում է մույն կրոնը՝ իսլամը:
10. Majid Khadduri, *The Law of War and Peace in Islam*, Luzag & London, 1940, p. 32-33.
11. «Երբ ավարտվեմ արագան ամիսները, սպանիչ նեյանտաներին, որտեղ որ զոմնը նրանց...», Ղուրան, «Մուրաթ ար-Յուրաթ», 9;5:
12. Ash-Shafi'i, նշվ. տեղում, էջ 94:
13. «Բնիկ հավատացալաներ, պատերազմներ անհավատներից նրանց դեմ, ովքեր ձեզ մտերիմ են, և բոլ նրանք զգան ձեր անողոք լինելը: Ինչպե՛ք, որ Ալլահը աստվածավախների հետ է», Ղուրան, «Մուրաթ ար-Յուրաթ», 9;124:
14. Արաբերեն *ած/ ա/ -հ/ ած* նշանակում է՝ զրբի ժողովուրդ: Ղուրանում նկատի է առնվում սուրբ զիրք տնեցող ժողովուրդներին, ին՜ն՝ քրիստոնյաներ, հրեաներ:
15. Ղուրան, «Մուրաթ ար-Յուրաթ», 9; 29:
16. Արաբերեն *ած/ ա/ -ժնտաժ* նշանակում է՝ իսլամավորություն վայելող մարդիկ:
17. Այս մասին տե՛ս՝ Dawood Elhami, *The Doctrine of Jihad in Islam*, Iran, 1991, p. 121.
18. Համաձայն միջնադարյան ֆակիհ առ-Ուադիր ալ-Իսխանաֆի՝ մահմեդականը Ջիհադ է նդում արտաքին թշնամու (*այնիսթաթ ա/ -ճոսաթ աթ-զահիթ*), աստանայի (*այնիսթաթ աթ-ճայտաթ*), ինչպես նաև ինքն իր դեմ (*այնիսթաթ աթ-թաթ*): Sh'u' Mustansir Mir, *Jihad in Islam and it's Times* (Dedicated to Andrew Stefan Ebrekrentz), The University of Michigan, 1991, p. 117:
19. Ibn Rushd, Al-Muqaddamah, Cairo, 1325 A.H., v. 1, p. 259 \* Այստեղից էլ՝ հասկացությունը Ջիհադը չորս տեսակների մասին՝ *թաթի Ջիհադ, թզզթ Ջիհադ, ժժաթի Ջիհադ, օթի Ջիհադ*:
20. *Jihad in Medieval and Modern Islam*. Translated and annotated by Rudolph Peters. Leiden: E.J.Brill, 1977, p. 4.
21. Dawood Elhami, նշվ. աշխ. մեջ, էջ 12.
22. Fazlur Rahman, *Major Themes of The Qur'an*, Chicago, 1980, p. 63.
23. Mustansir Mir, *Jihad in Islam and it's Times* (Dedicated to Andrew Stefan Ebrekrentz), The University of Michigan, 1991, p. 117:
24. Ազգայնամբ հնդիկ մահմեդական տեսարան, իսլամական *խալաֆի* (ռեֆորմացիա) ներկայացուցիչ:
25. М. Степанов, *Мусульманские концепции в философии и политике XIX-XXвв.*, М., 1982, с. 104.
26. XX դարի նշանավոր պակիստանցի մահմեդական տեսարան: 1941 թ. հիմնել է «Jama'at-i Islamia» իսլամական կազմակերպությունը:
27. Աբու Ալա Մաուդուդիի շուրջ վեց հարյուր էջանոց հիշյալ մեմուարությունը («Al-Jihad in Islam») գրվել է ուրդուով, ասաքին անգամ հրատարակվել է 1927 թվականին Լահորում:

28. Mostansir Mir, նշվ. աշխ. մեք, էջ 118-119:
29. Abul Ala Mawdudi, *Towards Understanding Islam*, London, 1981, p. 94.
30. Mostansir Mir, նշվ. աշխ. մեք, էջ 119-120:
31. C.A.O. Van Nieuwenhijze, *The Lifestyle of Islam*, Leiden: E.J.Brill, 1985, p. 64.
32. Շարիաթը մահմեդականների իրավական նորմերի, նրանց կրոնական, կենցաղային և սոցիալական կյանքի, վարքագծի սկզբունքների և կանոնների ամբողջությունն է: Շարիաթին հետևել նշանակում է ճշմարիտ և աստվածահաճո կյանք վարել:
33. Ինքնիշխան մահմեդական պետությունների ստեղծումից ի վեր քննարկվում էր այն հարցը, թե արդյոք ազգի (*թեմոն*) սկզբունքը չի հակասում իսլամական համայնքի միասնության գաղափարին: Աշխարհիկ և ազգային գաղափարախոսություններին տուրք չտվող մահմեդական տեսարանների կարծիքով՝ *ազգ-պետության* (*թեմոն-սթեթ*) գաղափարը հակասում է իսլամի սկզբունքներին և համահունչ է եվրոպական չափանիշներին, ուստի անընդունելի է: Այս մասին մանրամասն տե՛ս՝ James P. Piscatori, *Islam in a World of Nation-State*, Cambridge University Press, 1986, 193 p.
34. Richard Martin, *The Religious Foundations of War, Peace and Statecraft in Islam. Just War and Jihad. Historical and Theoretical Perspectives on War and Peace in Western and Islamic Tradition* (Edited by John Kelsay and James Turner Johnson), New York, 1988, p. 108:
35. Լույն տեղում, էջ 107:
36. Majid Khadduri, նշվ. աշխ. մեք, էջ 37:
37. Ann Elizabeth Mayer, *War and Peace in the Islamic Tradition and International Law, Just War and Jihad. Historical and Theoretical Perspectives on War and Peace in Western and Islamic Tradition* (Edited by John Kelsay and James Turner Johnson), New York, 1988, p. 203.
38. Hassan Moïnuddin, *The Charter of the Islamic Conference and Legal Framework of Economic Co-operation Among its Member States*, Oxford, 1987, p. 28.
39. Դուրան, «Սուրաթ ալ-բալադա», 2;186:
40. Sobhi Mahmassni, *International Law in Light of Islamic Doctrine, Académie de droit international, Recueil de cours*, 117, 1966, p. 320-321.
41. Rudolph Peters, *Islam and Colonialism*, Leiden: E.J. Brill, 1979, p. 37-55.
42. Dawood Elhami, նշվ. աշխ. մեք, էջ 24:
43. Seyyed Hossein Nasir, *Traditional Islam in The Modern World*, London & New York, 1987, p. 28.
44. Լույն տեղում, էջ 31, 32:
45. Լույն տեղում, էջ 33:
46. Շահադան (արաբերեն՝ վկայություն) իսլամի կարևորագույն դրույթն է: Արտահայտվում է հետևյալ խոսքով՝ «Չկա աստված քաղի Ալլահից, և Մուհամմեդը Ալլահի առաքյալն է»: Օգտագործվել է որպես արդի և տարրերակցման րացականություն, ինչպես նաև՝ ռազմական կոչ: Այստեղից էլ՝ չափից՝ նահատակ անվանումը: Շահադան արդրքի

ամենակարևոր բանաձևերից մեկն է, ուր և անվերջ կրկնվում է: Միևնույն ժամանակ *Շահադաթ* արտահայտում է միաստվածության և աստծո նկատմամբ մարդկային միասնության (տեսնել) գաղափարները:

47. Seyyed Hossein Nasr, նշվ. աշխ. մեջ, էջ 29-32:
48. Նույն տեղում, էջ 33:
49. Margaret Smith, *An Early Mystic of Baghdad*, London, 1935, p. 76.
50. Սաուդյան Արաբիայի իշխանությունները, վահիհաբալանությունը դիտարկելով իրեն իսլամի հատուկ տեսակ, այն անվանում են շարիհաբալան և արաբական գիտություն (*ալ-իսլամ ալ-շարի ափյա ուա ալ-շարիհյա*):
51. А. Игнатенко, Экстремизм-исламский или ваххабизский? В кн.: Угрозы исламу или угроза исламу?, М., 2001, с. 85, 86.
52. Նույն տեղում, էջ 86:
53. Sayyid Hassan Nasrallah's Speech At Beirut Jbeil Mass Celebration Given on 26-05-2000, p. 8.
54. Т. Таджудин, Исламский экстремизм: история и роль в современном мире, В кн.: Угрозы исламу или угроза исламу?, М., 2001, с. 27.
55. Իսլամական արժատական ծայրահեղակացների մեջ մահմեդական հոգևորականը առաջին հերթին նկատի ունի սալաֆականներին և վահիհաբալաններին:
56. Այս մասին տե՛ս՝ Ա. Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարաբարդյան հակամարտության նկատմամբ, եր., 2003, էջ 171-176:
57. John L. Esposito, *Islam. The Straight Path*, New-York, Oxford University Press, 1988, p. 95.\* Խարիջիները (ծագում է արաբերեն *kharij*՝ *դուրս գալ, ընտրատանալ, ընդվզծել* արմատից) իսալիֆայության ամենատառջին ընդդիմադիր կոոնաքաղաքական ուղղության ներկայացուցիչներին էին: Սկզբնական շրջանում իսարիջիները աջակցում էին շրդողոդ *արաբադաա* իսալիֆա Ալի իբն Աբի Տալիբին՝ օմայանների դեմ իշխանության համար մղված պայքարում: Սակայն 657թ. Ալ-Ֆիլիի ճակատամարտից հետո հիասթափվելով Ալիի քաղաքականությունից՝ հեռացան նրա ճամբարից: Այստեղից էլ՝ *խարիջիներ* անվանումը: Իրենց գործողություններում այդքն են ընկել քացատիկ մղեխանդությամբ, անհանդուրժողականությամբ և դաժանությամբ:
58. «...Ով թշնամանում է ձեզ հետ, դուք էլ թշնամացեք նրա հետ այնպես, ինչպես ինքն է թշնամացել ձեզ հետ: Երկնչե՛ք Ալլահից և իմացե՛ք, որ Ալլահը աստվածավախների հետ է», Դուրան, «Սուրաթ ալ-Քակարա», 2:190:
59. «Կրոնի մեջ հարկադրանք չկա», Դուրան, «Սուրաթ ալ-քակարա», 2: 257:
60. Fred M. Donner, *The Sources of Islamic Conceptions of War, Just War and Jihad. Historical and Theoretical Perspectives on War and Peace in Western and Islamic Tradition* (Edited by John Kelsay and James Turner Johnson), New York, 1988, p. 47.



61. Այսպես է սահմանված *Ձիաջը* Լաւերի շրջանի եզրափակւան դաւազրքերում: Տե՛ս՝ Մ. Տեփանի, *Мусульманские концепции в философии и политике XIX-XXвв.*, Մ., 1982, с. 104.
62. *Ձիաջը* որպէս տնտեսութեան զարգացման համար պայքար է մեկնարանել մոսկիւի նախագահ Գաբրի Բուրգիւրան: Այս մասին տե՛ս՝ Н. Ворончанка, *Культурные преобразования в современном Тунисе*, М., 1978, с. 35.

ՎԱՆԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայոց հին պատմությունը, որը զանազան զրավոր և քանավոր աղբյուրներով հասել է վաղ միջնադարի հայ պատմիչներին, 19-րդ դարի վերջերից պատմաբանների կողմից անհիմն կերպով մերժվել է: Խեթական, ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրությունների ոչ քակարար ուսումնասիրության մակարդակը թույլ չի տվել մասնագետներին հայոց հին պատմության մասին եղամ տվյալները բաղդատել սեպագիր աղբյուրների ընձեռած փաստերի հետ:

Եվ քանի որ այժմ նշված աղբյուրները բավականին ուսումնասիրվել են, մենք ձեռնամուխ ենք լինում այստեղ դրանց տվյալների հիման վրա ստուգելու հայոց հին պատմության վավերական կամ ոչ հավաստի լինելու խնդիրը՝ շեշտը դնելով ժամանակագրական փաստերի վրա:

Այսպես, Մովսես Խորենացու հասած հաղորդումների համաձայն հայոց առաջին տիրակալ Հայկ նահապետը իշխել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում: Նա կռվել է Ասորեստանի արքա Բեղի՝ Նեբուպի դեմ, որն իր մեծաքիվ զորքով մուտք էր գործել նշված տարածաշրջանը<sup>1</sup>:

Հայ ժամանակագիրների տվյալներով, որոնք ամփոփել ու կայուն հայտարարի է քերել 18-րդ դարի հայ նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը, Հայկ նահապետը իշխել է 246 տարի՝ 166 տարի նա գահակալել է Բեղի դեմ կռվելուց առաջ, 80 տարի դրանից հետո<sup>2</sup>:

Բեղն Ասորեստանի առաջին քազավորն էր, որը նախքան գահ բարձրանալը «ապրել էր» 75 տարի, իսկ տիրել է 126 տարի հին հույն մատենագիրներից հայ մատենագիտությանը հասած տվյալների համաձայն<sup>3</sup>:

Այսպիսի անհավանական թվացող թվական տվյալների քաջաբույրությունը մենք գտնում ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Անբոխնս նշում էր, որ հույն պատմիչ Կեփաղիոն վկայում է, թե

սկզբից ինքը գրել է իր աշխատության մեջ արքունի դիվանի ազգաբանությունը անձնայն մանրամասնությամբ (խոսքը վերաբերում է Ասորեստանի քաղաքներին), քայք քաղաքներից հրաման է ստացել, որ «քայք քողմի քաղաքներից անճշաններին և վատահամբավ մարդկանց» նշելով միայն քաջ և խնաստուն աշխարհակալների մասին<sup>4</sup>։

Պարզվում է, որ հին հույն պատմիչը գրել է միայն նշանավոր քաղաքների մասին։ Ուստի քնական է, որ նա անճշան և վատահամբավ տիրակալների իշխանության տարիները վերագրել է մնացածներին։ Դրանով էլ ստացվում է, որ Ասորեստանի քաղաքոր Քելը՝ Նեբրովքը, սկզբից ապրել է 75 և ապա իշխել 126 տարի<sup>5</sup>։

Ալենհայտ է, որ այդ նույն ձևով են վարվել հայ ժամանակագիրները Հայկ մահապետի առիթով, կրճատելով նրանից առաջ և հետո Հայստանում իշխած տիրակալների անունները՝ նրանց իշխանության տարիները վերագրելով առաջինին։

Այժմ անզրադատմանք այն հարցին, թե Քելն Ասորեստանի որ նշանավոր քաղաքում էր, որին վերագրել են իր մախորդ և հաջորդ քաղաքների տարիները։

Մ. Զամչյանին հասած Ասորեստանի քաղաքների արքայացանկի տվյալներով Շամիրամ քաղաքից (մ.թ.ա. 810թ.) առաջ մինչև Քելի համդես գալը տևել է 537 տարի (Քել՝ 75+126, Քաթ՝ 88, Անեթլա՝ 63, Արթել I՝ 40, Քայաղ՝ 55, Արթել II՝ 38, Նիմուս՝ 52 տարի, ընդամենը՝ 537տարի)<sup>6</sup>։

Ե. Քիկերմանի ժամանակագրական ցանկի տվյալներով, որոնք հիմնված են միայն սեպագիր արքայությունների հաղորդումների վրա, Շամիրամից առաջ Ասորեստանում հերթականությամբ իշխել են քաղցմաթիվ քաղաքները։ Մակայն, ինչպես ընդունում են մասնագետները, Աշուրաթրայիթ I-ի օրոք (մ.թ.ա. 1365-1330թթ.) Ասորեստանի պետությունը դեռևս նոր էր ձևավորվում, իսկ Ադադներարի I-ի ժամանակ (մ.թ.ա. 1307-1275թթ.) այն սկսում է հզորանալ<sup>7</sup>։

Այսպիսով, ժամանակակից մասնագետները դժվարանում են որևէ որոշակի քվական որոշել Ասորեստանի պետության համդես գալու առիթով։

Նշենք, որ դա դժվար է այն ձևավորվել է աստիճանաբար։

Մակայն հին հույն ժամանակագիրները այդ տարեթիվը դրել են։ Նրանք անճշան քաղաքների անունները հասնել են ցուցակից և նրանց տարիները ավելացրել նշանավորների վրա՝ վախճելով վերջիններիս անունները<sup>8</sup>։ Քելից սկսած մինչև Շամիրամ իշխած արքաների տարիների գումարը կազմում է 537։

Եթե մենք նկատի ունենանք, որ հին ժամանակագիրները նշում էին միայն քաղաքների իշխած տարիների քանակը, ապա դրանք գու-

մարելիս ամեն մեկի համար մեկական միավոր ավել կտասցվի, քանի որ ամեն բաժանարար մի տարի և ճախորդի, և հաջորդի համար հաշվվում է: Ուստի քանի միավոր պլտի կրճատել 537 տարվանից, որ ստացվի ճշգրիտ արդյունք: Մեր կարծիքով 29-ով կրճատելիս կդառնա 508:

Եթե նկատի ունենաք, որ Ծամիրամը զարծել է քազուհի (իշխել է իր մամկահասակ որդի Ադադնիբար III-ի փոխարեն) մ.թ.ա. 810թ., ապա մա պետք է այդ թվականը բաժանել իր ճախորդի՝ ամուսնու հետ: Վերջինիս էլ վերագրելով մեկ տարի 508-ը կդառնա 509:

Ահիտ այդքան տարի ասաց Ասորեստանում մ.թ.ա. 1319թ. գահը ժառանգել է Արիկեղենիլին: Այս բոլոր մեր եզրահանգումները հաստատվում են նրանով, որ նշված թվականից մինչև Ծամիրամ քազուհին՝ մ.թ.ա. 810թ., ըստ է. Բիկերմանի ժամանակագրական ցուցակի, իշխել են 29 արքաներ: Այդքան միավորով մենք կրճատեցինք 537-ը: Ուրեմն հին հայոց ժամանակագիրները Ասորեստանի պետության սկիզբը համարում են մ.թ.ա. 1319 թվականը:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Բելի գահ բարձրամալուց ասաց՝ 75 տարվա ընթացքում ովքեր են իշխել Ասորեստանում, դրանց անունները հին հույն մատենագիրները համել են ցուցակից և նրանց տարիները վերագրել Բելին: Դրանց են՝ Արիկեղենիլին (մ.թ.ա. 1319-1308թթ.), Ադադնիբարի I-ը (մ.թ.ա. 1303-1275թթ.) և Սալմանասար I-ը (մ.թ.ա. 1274-1245թթ.), որոնք հաջորդաբար իշխել են 74 տարի: Եթե նկատի ունենանք, որ վերջինիս հաջորդ Քուրբուլի-Նիմուրթա I-ը (մ.թ.ա. 1244թ.) իր սկզբի տարին բաժանած կարող էր լինել ճախորդի հետ, ապա մեկ միավոր հաշվելով այդ թվականից ճախորդի վրա, կտասցվի 75 տարի, որը և վերագրվել է Բելին:

Այս ասագարեկից պարզվում է, որ Բելը՝ Նեբրուլքը, Քուրբուլի-Նիմուրթա I-ն է, որը մ.թ.ա. 1244թ. գարնանը գահ բարձրամալով, ասաջինը իր ճախորդների մեջ, ձեռնարկում է արչապանք դեպի Հայկական լեռնաշխարհ և մտքը գործում Արածանի գետի ավազան:

Այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում ըստ խեթական տեքստերի գոյություն ուներ Հայասա քազավորությունը, որին Քուրբուլի-Նիմուրթա I-ը նիշատակում է «Նախի երկրներ» անունով: Դրանց նույնական լինելու մասին վաղուց բերել ենք քազմաթիվ փաստեր<sup>9</sup>:

Ուրեմն, Հայկ մահապետը այդ ժամանակ Հայասայի՝ Հայքի քազավոր է եղել: Հայասան խեթական տեքստերի տվյալներով ընդգրկել է լեռնաշխարհի արևմտյան հատվածը՝ Վանա լճի, Հայկական Տավրոս լեռների, Նիքրատ գետի և Սև ծովի միջև ընկած տարածքները<sup>10</sup>: Ավելին, նշված տարածաշրջանի տեղանունների և անձնանունների մեծ մասը

կազմված են հին հայերենի արձանագրից<sup>11</sup>։ Դա ցույց է տալիս, որ իբրև Հայքը (խեթ. Հայասա, ասուր. Նահրի) քնակեցված էր հայերով։

Հայ ժամանակագիրների տվյալներով, ինչպես վերը նշվեց, Հայկ մահապետը Բելի՝ Թուրուլի-Նիմուրաս I-ի դեմ կռվելուց առաջ «սալքել է» 166, իսկ դրանից հետո՝ 80 տարի։

Ա.թ.ա. 1244 թվականից 166 տարի առաջ հաշվարկելիս ստացվում է, որ 1410թ. համարվել է Հայասայի՝ Հայքի պետականության սկիզբ։ Իբրև, այդ ժամանակ խեթական թագավոր Թուդիսալիաս III-ի օրոք Հայասայում տիրակալ էր Մարիյան, որի անունը, որպես առաջին արքայի, դառնում է տխտղոս իր հաջորդների համար<sup>12</sup>։ Իսկ մ.թ.ա. 1244 թվից 80 տարի հետո (մ.թ.ա. 1165թ.), հայ ժամանակագիրները գտնում են, որ Հայքի պետականությունը կործանվել է։ Դա ճշգրտապես համընկնում է Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի այն հաղորդման հետ, որի համաձայն նրա գահ թաքծրանալուց (մ.թ.ա. 1115թ.) ուղիղ 50 տարի առաջ մուշկերը (թրակապտյուզիական ցեղերը) մուտք էին գործել Հայկական լեռնաշխարհի<sup>13</sup>։

Ուրեմն հայ պետականությունը սկզբնավորվել է մ.թ.ա. 1410 թվին և կործանվել մ.թ.ա. 1165թ. մուշկերի հարձակման հետևանքով։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ով էր Հայկ մահապետը։ Չէ որ նրա անունը տխտղոս է՝ կազմված հայ էթնոնիմից -(ի)կ մասնիկով<sup>14</sup>։

Նեթական թագավոր Առնուվանդաս III-ը, մ.թ.ա. 1232թ. գահ թաքծրանալով, արշավանք է ձեռնարկում դեպի Հայասա, նվաճում նրա Իսուվա (Շուֆր), Պախուվա, «Թարծր երկիր» (Թարծր Հայք) նահանգները։ Դրանց իշխաններին կալանավորում, տանում է Խաաուի և պայմանագիր կնքում Արխիտայի (Ազի՝ Երզնիսի ավազան) տիրակալ Միսիյայի հետ։ Նա իր այդ դաշնագրում թագմիցս է հիշատակում Պախուվա նահանգի (այն ընդգրկել է Դերաիմից մինչև Բյուրակնի լեռների արևմտյան շրջանները) առաջնորդ Միտայի մասին, որը նվաճել էր նշված նահանգները և չէր ենթարկվել Խաաուի պետությանը։ Սակայն տեքստի հաղորդումների համաձայն նա կենդանի չի եղել Առնուվանդասի այդ արշավանքի (մ.թ.ա. 1232թ.) ժամանակ։ Պախուվայի առաջնորդը նրա որդի Ուսապան էր, որը Խաաուիի թագավորի կողմից դեռ կալանավորված չէր<sup>15</sup>։

Նկատի ունենալով, որ մ.թ.ա. 1232թ., մ.թ.ա. 1244 թվից, երբ Հայկ մահապետը կռվել է Բելի դեմ, բաժանված է ընդամենը 12 տարով, կարծում ենք, թե Հայկ մահապետը այդ մույն Միտան է։ Նախ, Միտա անունը, ինչպես գտնում է Գ.Բ. Ջանուկյանը, հին հայ. միտ-(ը) արմատն է<sup>16</sup>։ Ավելի, Միտայի մատավայրը Պախուվայում է եղել, որի անունանմանում է գտնվել հետագայի Հայք գավառը՝ որտեղ Հայկ մահապետը իշխում

էր: Հայ ժամանակագիրները Հայքի Մարիյա, Կարանի, Խուկանա, Անիյա, Միսիյա և այլ մեզ անհայտ թագավորների անունները դարձրաւ հանել և նրանց տարիները վերագրել են Հայկ մահապետին՝ Միտային:

Եւայն Առնուվանդաս III-ը Բաուվա, Պախուվա, Մուխմա, «Քարձր երկիր» մահապետի իշխաններին համարում է Միսիայի (Հայաստ երկրի թագավորական տան) տոհմակիցներ<sup>16</sup>:

Այսինքն, ժամանակին Հայաստայի թագավորական տոհմը իր անդամներից մահապետներ է նշանակել տվյալ տարածքներում: Իսկ վերջիններից ամեն մեկն էլ, ինչպես ցույց են տալիս հայոց պատմության տվյալները, կարող էր իրեն հռչակել որպես թագավոր:

Ինչպես տեսանք, մ.թ.ա. 1165թ. Հայք պետությունը կործանվել է Մուշկերը սկզբից վերացրել են Խատտի թագավորությունը և այսպէ՛ Հայաստան: Թիզլաթպալասարի I-ի տարեգրության մեջ գրված է, որ նրանց ոչ մի թագավոր չէր կարողացել դիմակայել:

Դա նշանակում է, որ Արմենակը Հայկի ամմիջական հաջորդը չէր կարող լինել: Սակայն հայ պատմիչները այդպես են ներկայացնում: Իսկ նրք է սկսել իշխել Արմենակը, որը հայոց զահը տեղափոխել է արևմուտքից արևելք՝ Արարատյան դաշտ: Դա պարզելու համար դիմենք նորից աստրական ժամանակագրական տվյալներին:

Եշված հայոց արքայից հետո Արմավիրում հերթականությանը տիրել են Արամայիս, Գեղամ, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ, Արայան Արա կամ Կարոյոս և Անուշավան արքաները: Արա Գեղեցիկը ըստ հայ պատմիչների հաղորդումների զոհվել է Ասորեստանի թագուհի Շամիրամի դեմ պատերազմելիս: Վերջինս Ասորեստանում իշխել է մ.թ.ա. 810-806թթ. իր դեռահաս որդի Արադեբարի III-ի փոխարեն: Այդ ժամանակ Ասորեստանի և Ուրարտուի միջև ոչ մի հակամարտություն չի փաստագրված սեպագիր արքայութեան: Բաղդաստելով դա հայ պատմիչներին հասած տեղեկությունների հետ, ըստ որոնց Շամիրամը նստում էր Վանում, այստեղ մեծ կառույցներ է արել և ջրանցք անցկացրել, պարզ է դառնում, որ վերջինս օգնել է Ուրարտուի թագավոր Մեմուային գանազան ամրոցներ և շինություններ կառուցելու գործում: Մ.թ.ա. 809թ. Մեմուան ձեռնարկում է արշավանք դեպի Արարատյան դաշտ և հատելով Արաքս գետը վերադառնում<sup>17</sup>: Կարծում ենք, այդ ժամանակ նրա զորքի հետ էր Շամիրամը իր զորախմբով: Ուրեմն տվյալ արշավանքի ընթացքում էլ զոհվել է Արա Գեղեցիկը, որի նստավայրն էր Արմավիր քաղաքը:

Մենք վերը տեսանք, թե ինչպես ճշգրիտ են հին հայն պատմիչների և հայ ժամանակագիրների թվական տվյալները թագավորների իշխանության տարիների և տևողության մասին՝ քաղդաստելով դրանք և հաստատելով ժամանակակից գլխական նզրահանգումների հետ: Ուստի, ելնելով Արա Գեղեցիկի մ.թ.ա. 809թ. զոհվելու փաստից, ասուցար-

կում ենք հին հայ բազավորների իշխանության տարիների հետևյալ քվադրունը՝ Արմենակ, տիրել է 46 տարի, մ.թ.ա. 1085-1040թթ., Արամալիս՝ 40-ը, մ.թ.ա. 1040-1001թթ., Ամասիա՝ 32 տարի, մ.թ.ա. 1001-970թթ., Գեղամ՝ 50-ը, մ.թ.ա. 970-921թթ., Հաղմա՝ 31, մ.թ.ա. 921-891թթ., Արամ՝ 58 տարի, մ.թ.ա. 891-834թթ., Արա Գեղեցիկ՝ 26 տարի, մ.թ.ա. 834-809թթ.:

Ա. Չամչյանի ժամանակագրական ցանկի համաձայն Արա Գեղեցիկից հետո իշխել է Արայան Արամ 18, իսկ նրա հաջորդ Անուշավանը՝ 63 տարի: Մովսես Խորենացուն հասած տեղեկությունների համաձայն Արայան Արամ իր հաշր Արա Գեղեցիկի գոհվելու տարում 12 տարեկան էր: Նրան Շամիրամը պանդու է իր գորսխմբի մեջ՝ դարձնելով Հայաստանի (արևելյան մասին է խոսքը վերաբերում) վերակացու: Արայան Արամ գոհվում է Շամիրամի հետ: Դա տեղի է ունենում մ.թ.ա. 806թ.: Ուրեմն Արայան Արամ վերակացուի պաշտոնում եղել է մ.թ.ա. 809-806թթ.: Նրանից հետո Հայաստանում կառավարում է Անուշավանը: Ինչպես հայտնի է, մ.թ.ա. 782թ. Ուրարտուի քաղաքի Արգիշտի I-ը առաջինը իր մախորդների մեջ նվաճում է արևելյան Հայաստանը և ավերում Արմավիր քաղաքը՝ մտցնելով այն իր պետության կազմի մեջ: Դա նշանակում է, որ Անուշավանն իշխել է մ.թ.ա. 806-782թթ.: Ուստի և հայ ժամանակագիրները այս երկու աղբյուրների հարցում հայրենասիրական մղումով նրանց ապրած կյանքի տարիները մեզ ներկայացնում են որպես տիրակալության ժամանակաշրջան:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե վաղ միջնադարի պատմիկներին հասած հնագույն տեղեկություններում կան արյուք տվյալներ Ուրարտուի՝ Վանի քաղաքության մասին:

Ինչպես պարզվել է, ուրարտացիները սկզբնապես ապրելիս են եղել Ուրուատրի երկրում: Այն գտնվել է Վանա լճից քափակված հարավ, Ասորեստանի հյուսիսային սահմանին սողմքեր (ինն հայկական Կորդոքը)՝ արևմուտքում հարևան լինելով Կադմուխի (Ուայկ, Կադմես տուն), հյուսիսում՝ Խարխի, իսկ արևելքում՝ Կունանու (Ժնկ, Կոմանեի շրջան) երկրների հետ: Դա Մովսես Խորենացու Հայկ նահապետի կապակցությամբ հիշատակած Արարատյա երկիրն է Կադմես տան հարևանությամբ:

Մ.թ.ա. 890 թվից հետո Ուրուատրին այլևս չի հիշատակվում նշված տարածքում: Ուրարտացիները աստորակյան արչավանքների ճնշման տակ բազմում են իրենց քմիկ երկիրը և ներգաղթում Վանի նահանգ: Դա հաստատվում է այն փաստով, որ առաջին անգամ իր ձեռնարկած արչավանքի առիթով մ.թ.ա. 859թ. Վանի նահանգում Ասորեստանի քաղաքի Մալմանասար III-ը հիշատակում է Ուրարտու անունով մի պետություն, որի քաղաքներն էր Արամու ուրարտացին: Ուրուատրի

երկրամտնը (տարք. Ուրարտի, Որատրու) Ուրարտու տերմինի մախարդ ձևն է: Դա մատնանշում են բոլոր մասնագետները<sup>18</sup>:

Այդ պետությունը հզորության ժամանակաշրջան է թևակոխում Սեմուայի օրոք (մ.թ.ա. 810-784թթ.): Մ.թ.ա. 680 թվականից այն խիստ անկում է ապրում: Իսկ մ.թ.ա. 591թ. կործանվում:

Մովսես Խորենացին Արայան Արայի և ապա Անուշավանի մասին շարադրանքն ավարտելուց հետո գրում է. «քայց չափազանց շատ կլիներ, եթե այս պատմության մեջ ասենք վերը նշված մարդկանց բոլոր արժանահիշատակ գործերը և խոսքերը»<sup>19</sup>: Պատմիչը հրաժարվում է Անուշավանից հետո թվարկված (Պարեոնից սկսած մինչև Սկայորդի) թագավորների մասին գրելուց՝ թավաբարվելով միայն նրանց անունների ցուցակով: Այդ արքայացանկի մի ծանոթագրությունում մա գրում է «Դրանից առաջ ոչ ըստ ազգի, այլ ըստ այրերի առաջադիմության իշխեցին»<sup>20</sup>: Ծանոթագրությունը դրված է Արայան Արայի անվան վրա: Սակայն նրանից առաջ եղևտակված թագավորներին Մովսես Խորենացին հայ է համարում: Մեր կարծիքով գրիչները տեքստը այսուպես ծանոթագրությունը փոխանակ Սկայորդու անվան վրա դնելու շփոթել և գետնել են Արայան Արայի անվան մոտ: Դա հաստատվում է նրանով, որ Սկայորդին սկսել է իշխել մ.թ.ա. 680 թվից. նրա նստավայրը եղել է Մասունը: Ինչպես ստորև կտեսնենք, Սկայորդու օրոք հայերը ապստամբել են օտարների գերիշխանության դեմ և ազատագրել Հայաստանի մեծ մասը:

Այլ առիթով Մովսես Խորենացին ավելացնում է «Թողնեք ինչ որ առավել կարևոր չէ, ասենք ինչ որ հարկավոր է: Սրանցից հետո, որոնք ասորեստանցիների ժամանակ թագավոր էին, որոնք Շամիրամի կամ թե Նինոսի ժամանակներից էին (իշխում), մեր Պարույրի մասին կպատմեն»<sup>21</sup>:

Այստեղ խոսքը վերաբերում է «ոչ ըստ ազգի» Հայաստանում իշխած թագավորների մասին, որոնց պատմությունը հայ պատմիչը հրաժարվում է գրել:

Այդ այլազգի տիրակալները Մովսես Խորենացու մոտ պահպանված հաղորդման համաձայն Հայաստանում իշխել են Շամիրամի (մ.թ.ա. 810-806թթ.) կամ թե Նինոսի՝ Սալմանասար III-ի (մ.թ.ա. 859-824թթ.) ժամանակակից: Այսինքն հայ պատմիչը մի դեպքում նշում է Ուրարտուի հզորագույն ժամանակաշրջանի սկիզբը (մ.թ.ա. 810 թվից), մյուս դեպքում՝ պատմական ասպարեզ մտնելու պահը՝ Նինոսի՝ Սալմանասար III-ի գահակալման հետ կապված (մ.թ.ա. 859թ.):

Նա շատ լավ է իմացել Ուրարտուի որպես պետության թե հանդես գալու (մ.թ.ա. 859թ.) թե հզորության (մ.թ.ա. 810 թվից) և թե անկում ապրելու (մ.թ.ա. 680թ.) ժամանակը:



Մերեոսի «Պատմության» կազմում քննված «Խուռասրանության» մեջ այս իրադարձությունների մասին գրված է. «Այն ժամանակ Շամիրանը տիրեց Հայաստանին և այնուհետև ասորեստանցի (ասորեստանեայք) թագավորների տիրեցին մինչև Մենելքերիսի մահը, ապա հայերը ապստամբեցին ասորի թագավորների իշխանության դեմ»<sup>22</sup>.

Մ.թ.ա. 809-806թթ. Շամիրանը Հայաստանը դարձրեց լրացր վերաբերում է Արևելահայկական թագավորությանը Արմավիր մայրաքաղաքով) Ասորեստանին ենթակա երկիր: Երկրի այդ վիճակը շարունակվեց մահ Անուշավանի օրոք՝ մ.թ.ա. 806-782թթ.: Ապա «ասորեստանեայք» իշխեցին մինչև Մենելքերիսի սպանության տարին՝ մ.թ.ա. 681թ. դեկտեմբերը:

Մ.թ.ա. 782թ. ուրարտացիներն են համծինս Արգիշտի I-ի նվաճել էտիունի երկիրը (Արևելահայկական թագավորությունը) և մտցրել Ուրարտուի կազմի մեջ, որը տևել է մինչև մ.թ.ա. 680թ., երբ այդ պետությունը խիստ անկում է ապրել՝ ամփոփվելով Վանի մահառեզի, Արարատյան դաշտի և դրանց մինչև ընկած շրջանների ասիաններում:

Ուրեմն Մերեոսը «ասորեստանեայք» ասելով հասկացել է Ասորեստանի կողմից եկածներին՝ ուրարտացիներին:

Այսպիսով, այս հայ պատմիչը շատ լավ պատկերացում է ունեցել ուրարտացիների Հայաստանում լիակատար տիրապետության ժամանակահատվածի մասին:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված այս հնագույն հաղորդումները հաստատում ու համալրում է ոչ միայն Մերեոսը, այլ մահ IX դարի հայ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին: Նա Հայաստանում «ոչ ըստ ազգի» իշխած թագավորների անունները (Պարեոտից մինչև Սկայորդի) քվարկելուց անմիջապես առաջ գրում է. «Ուրեչ ոմանք բռնակալներ տիրեցին Թորգոմյան աշխարհին, որոնց անուններն այսպիսին են»<sup>23</sup>:

12-րդ դարի հայ պատմիչ Մամվել Անեցին հայոց Պարույր թագավորի կապակցությամբ նշում է. «Մյուսինց առաջ ոչ ըստ ցեղի, այլ բռնակալ մարդիկ հանդես գալով՝ տիրեցին աշխարհին, և նրանց անուններն այսպիսիք են»<sup>24</sup>:

Հովհաննես Դրասխանակերտցին Ուրարտուի՝ Վանի թագավորության կործանման վերաբերյալ նշում է հետևյալը. «Այս բոլորից հետո Հայկի ցեղից Պարույր անունով (մեկը) այստեղ ոչ ցեղակիցներին հանելով մերժեց և իր ցեղի իշխանությունը հաստատելով ժառանգեց»<sup>25</sup>: Ուրարտուն կործանվել է մ.թ.ա. 591թ.: Ուրեմն հայ պատմիչը ոչ միայն դա գիտեր, այլ մահ տեսլակ էր, որ Պարույր թագավորի գլխավորությամբ են հայերը կործանել Վանի թագավորությունը:

Այսպիսով, վաղ միջնադարի նշված հայ պատմիչները շատ լավ տեղյակ էին Վանի թագավորության՝ Ուրարտուի մասին, նույնիսկ գիտեին, թե այն երբ է հանդես եկել, հզորացել, ամկում ապրել, և կործանվել: Ուրարտացիներին նրանք բոլորը օտար են համարում, որոնք բռնի կերպով տիրացել էին Հայաստանին: Նրանք Ուրարտու անունը չեն հիշատակում, զոմե Արարատ ձևով, ինչպես տվել են Աստվածաշնչի հեղինակները: Ոչ մի մարդ իր հայրենիքը ներխուժած օտար բռնակալների Երկրի անունը չի կիրառի իր երկրի համար: Չէ որ Ուրարտու տեղանիշը Ուրարտի երկրամասի ձևափոխությունն է, որով կոչել են ասորեստանցիները Վանի թագավորությունը: Ուրարտացիներն իրենց պետությունը անվանել են Վանի գավառի անունով Բիայնիլի:

Այժմ անդրադառնանք ուրարտական արքայացանկին, որ տրված է վերը նշված հայ պատմիչների աշխատություններում:

18-րդ դարի հայ պատմաբան Մլերայել Չամչյանը, ի մի քերեղով բոլոր հայ պատմիչների մոտ եղած օտար արքայացանկերը, որոշ ճշգրտումներով, ներկայացնում է այն ժամանակագրական տվյալներով հանդերձ:

Այսպես, Պարսուրը իշխել է 50 տարի, Արբակը՝ 44, Ջավանը՝ 37, Փառնակը՝ 53, Սուրը՝ 45, Հավանակը՝ 4, Վաշտակը՝ 22, Հայկակը՝ 18, Ամպակը՝ 14, Առնակը՝ 17, Շավարշը՝ 6, Նորայրը՝ 24, Վառանը՝ 14, Կարը՝ 4, Հրանտը՝ 25, Ընծակը՝ 14, Գդակը՝ 30, Հորոն՝ 3, Ջարմայրը՝ 22, Պերճ I-ը՝ 35, Արբունը՝ 27, Պերճ II-ը՝ 40, Բագուկը՝ 50, Հոյը՝ 44, Հուսակը՝ 31, և Կայպակը՝ 45 տարի:

Բոլոր 26 իշխողների իշխանության ժամանակահատվածների զուգարը կազմում է 654 տարի: Ուրարտական պետությունը պատմական ասպարեզ է մտել մոտ մ.թ.ա. 859 թվին և կործանվել է մ.թ.ա. 591թ.՝ ղնդգրկելով 269 տարվա մի ժամանակաշրջան: Հետևաբար, տվյալ ցուցակում թվարկված են ոչ միայն Հայաստանի օտար նվաճողների արքաների, այլ նաև նրանց ենթակա մախարաբների անունները: Այդ կերպ են վարվել էին հույն պատմիչները, որոնք Ասորեստանի թագավորների անունների աղյուսակում ներկայացրել են նաև նրանց ենթակա Բարեղունի փոխարքաներին:

Նման մի ցանկ պահպանվել է խեթական սեպագիր տեքստերում, որտեղ ներկայացված են ոչ միայն իրատեի երկրի Հին թագավորության ժամանակաշրջանի յոթ տիրակալները, այլ նաև նրանց ենթակա մահաճգապետերը, որով և ցուցակը ներկայացնում է 44 անուն:

Դա փաստարկվում է նաև նրանով, որ Վանի թագավորությունում սկսած մ.թ.ա. 859 թվից մինչև մ.թ.ա. 680թ. իշխել են ինը արքաներ՝ Արամն, Սարգսրի I, Իշպուիմի, Մնմուա, Արգիշտի I, Սարգսրի II, Ռուսա I, Արգիշտի II, Ռուսա II:

Ավելին ասենք, հայ պատմիչների նշված արքայացանկում, «Հայոց անճճանունների քառարանում», ինչպես նշել է Հր. Աճառյանը, բոլոր անունները մեծ մասամբ հայերեն են, իսկ մնացածը՝ իրանական:

Հեղինակը գտնում է, որ այդ անունները Մովսես Խորենացին է հորինել: Մակայն այս առիթով Հր. Աճառյանը նշում է, որ այլ ժողովուրդների անճճանունները հայկական միջավայրում նրբեմն օգտագործվում են բարգձմանարար (ինճառ. Գրիգոր՝ Աբրու, Մտեփանոս՝ Պսակ, և այլն)<sup>26</sup>: Դա ընդունված է եղել նաև այլ ժողովուրդների մոտ: Հին հույն պատմիչները Ասորեստանի բազավորների անունների մեծ մասը բարգձմանել են կամ հարմարեցրել իրենց լեզվի օրինաչափություններին, բողմելով այնտեղ միայն մի քանիսը նույնությամբ (Շամմուրամար՝ Շամիրամ, Մալմանասար՝ Մալմանասար և այլն):

Տվյալ արքայացանկը Մար Աբաս Կատինան դուրս է գրել էին հունարեն լեզվով շարադրված «Սկիզբն մատենիքն» աշխատությունից և իրելի հայոց արքունիք: Հավանաբար այդ անունները ժամանակին բարգձմանված են եղել էլին հունարենով, իսկ հայոց բազավոր պարսիկ Վաղարշակի դպիրները, որոնց մեջ պետք է լինեին նաև պարսկերեն շատ լավ իմացողներ, բնականաբար դրանք դարձրել են հայերեն կամ իրաներեն: Դրա համար օտար բռնակալների՝ ուրարտական արքաների իսկական անունները խնդրո առարկա արքայացանկում չեն պահպանվել:

Ատեղծվածը լուծելու համար մենք ընտրում ենք այլ մտնեցում գտնել Մլրախել Չամչյանի ժամանակագրական ցուցակի մեջ հիշատակվող այն արքաներին, որոնց իշխանության տարիների քանակը համընկնում են ուրարտական բազավորների գահակալության ժամանակահատվածների հետ, որը ևս, կարծես, մեզ հաջողվել է:

Այսպես, Վաչտակը իշխել է 22 տարի, դա Մարդուրի I-ն է, որը տիրել է 21 տարի (843-823թթ.), Հայկակը՝ 18, որը Արամն է՝ 17 (859-843թթ.), Ամպակը՝ 14, նա Իչպուխիմին է՝ իշխանության 14 տարիներով (823-810թթ.), Նորայրը՝ 24 տարի, դա Մննուան է՝ 25 տարի I (մ.թ.ա. 810-786թթ.), Հրանտը՝ 25 տարի, այն ներկայացնում է Արգիշտի I-ին՝ 23 տարի I (մ.թ.ա. 786-764թթ.) Գղակը 30 տարի, Մարդուրի II-ն է՝ 29 տարի (մ.թ.ա. 764-735թթ.), Չարմայրը՝ 22 տարի, Ռուսա I-ն է՝ 22 տարի (մ.թ.ա. 735-713թթ.), Աբրունը՝ 27 տարի, Արգիշտի II-ն է՝ 29 տարի (մ.թ.ա. 713-685թթ.), Պերճ II-ը՝ 40 տարի, Ռուսա II-ն է՝ 41 տարի (մ.թ.ա. 685-645թթ.):

Ի ղեկ, հայկական արքայացանկի համապատասխան տիտակալներին վերգծված տարիների ընդհանուր գումարը կազմում է 222 տարի, իսկ ուրարտական արքաների իշխած տարիների ընդհանուր գումարը՝ 221-ը: Դա զուեղվում է մ.թ.ա. 859-645թթ. ժամանակահատվածում: Երև

նկատի ունենանք, որ հայկական արքայացանկի յուրաքանչյուր առաջնորդի համար բաժանարար տարիների մեկ միավորը հաշվվել քն նախորդի և քն հաջորդի համար, ապա 22 տարին 9 միավորով պակասեցնելիս մեկ տարվա տարբերությամբ համընկնում է մ.թ.ա. 859-645թթ. ժամանակահատվածի՝ 213 տարվա հետ:

Ռուսա II-ից հետո մինչև Ույաթուտի կոթմանվելը՝ մ.թ.ա. 645-691 թթ., իշխել են հեթոթագայությամբ Սարդուրի III-ը, Էրինենան, Ռուսա III-ը և Ռուսա IV-ը: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ զետեղված արքայացանկում Պարուրից հետո մինչև Երվանդ Մակավակյացը քվարկված են վեց արքաների անուններ, որոնց մասին դարձյալ հայ պատմիչը ոչինչ չի գրում: Մ. Չամչյանի ժամանակագրական տվյալների համաձայն, դրանցից Հրայրան իշխել է 22 տարի, Փառնավազը՝ 14, Պաճույնը՝ 35, Կոռնակը՝ 8, Փավոսը՝ 17, Մյուս Հայկակը՝ 36 տարի: Կարծում ենք, դրանցից պետք է ընտրել այն չորս արքաներին, որոնց տիրած տարիների ընդհանուր գումարը տեղավորվի մ.թ.ա. 645-591թթ. սահմաններում:

Այդ դեպքում ըստ երկու ցուցակների հեթոթականության Սարդուրի III-ը Հրայրան է, որն իշխել է 22 տարի (մ.թ.ա. 645-624թթ.), Էրինենան Փառնավազն է՝ 14 տարի (մ.թ.ա. 624-611թթ.), Ռուսա III-ը Կոռնակն է՝ 8 տարի (մ.թ.ա. 611-604թթ.), իսկ Ռուսա IV-ը՝ Փավոսը՝ 15 տարի (մ.թ.ա. 604-590թթ.), եթե ընդունենք, որ վերջինիս վերագրված ժ (17) տարին գրիչների վրիպումի արդյունք է և պետք է լինի ժն (15):

Այսպիսով, հայ պատմիչներին հայտնի են եղել նաև ույաթուտական արքաները հայկական և իրանական անուններով:

Վանի քաղաքապետությունը մ.թ.ա. 680 թվից խիստ անկում է ապրում և, կորցնելով լեռնաշխարհի շատ զավատներ ու մահամզներ, ամփոփվում է Վանի մահամզի, Արարատյան դաշտի և դրանց միջև ընկած տարածքների սահմաններում:

Մովսես Խորենացու հաղորդումների համաձայն Ասորեստանի քաղաքոր Սենեցերինի երկու որդիները սպանում են հորը և փախչում Հայաստան: Նրանց ընդունում է հայոց քաղաքոր Սկայորդին: Հայրասպան որդիների մասին գրված է նաև Բարեղական ժամանակագրության մեջ, ըստ որի Սինախնեսիթին ապանում են նրա որդիները<sup>27</sup>: Դա տեղի է ունեցել մ.թ.ա. 681 թ. դեկտեմբեր ամսին:

Հայ պատմիչի տվյալներով Սկայորդուց հետո Հայաստանում տիրում է Պարուրը, որը Ասորեստանի քաղաքոր Սարդանապալի (Աշշուրքանապալ, մ.թ.ա. 668-627թթ.) ժամանակակիցն է և որը հետո դաշնակցել է Մարաստանի տիրակալ Վարբակեսի հետ Ասորեստանը կործանելիս (մ.թ.ա. 606թ.):

Ինչպես վերը նշեցինք, Հովհաննես Դրասխանակերտցին նրա մասին գրում է. «որ քոջրից հետո Հայկի ցեղից Պարույրը այստեղ (Հայաստանում) ոչ ցեղակիցներին (ուրարտացիներին) ծանել է, մերժել և իր ցեղի իշխանությունը հաստատել»: Ուրեմն Պարույրը մ.թ.ա. 591թ. Ուրարտի կործանման գործի գլխին է կանգնած եղել:

Մ. Չամչյանի ժամանակագրական տվյալների համաձայն Սկայորդին իշխել է 17 տարի (մ.թ.ա. 680-664թթ.), իսկ նրա որդի Պարույրը՝ 49 տարի: Հոր և որդու գահակալության տարիների գումարը (66 տարի) չի համապատասխանում մ.թ.ա. 680-591թթ. ժամանակահատվածին: Սկայորդին հայոց առաջնորդ է դարձել մ.թ.ա. 680թ. և իշխել 17 տարի, իսկ նրա որդին Վանի քաղաքությունից կործանման (մ.թ.ա. 591թ.) գործն է ղեկավարել:

Մ. Չամչյանի տվյալներով Պարույրը սկզբից տիրել է 5, հետո դարձել պատկառիր և իշխել 44 տարի: Նա, կարծում ենք, պատկառիր և հարևանների կողմից ճանաչում գտած պետք է լինի միայն Վանի քաղաքությունը կործանելուց հետո՝ ներկայացնելով Հայկական քաղաքությունը որք լեռնաշխարհի տարածքում:

Այդ դեպքում, եթե Պարույրը մ.թ.ա. 591 թվից սկսած որպես պատկառիր իշխել է 44 տարի, ապա դա հակասությանբանական կլիներ, քանի որ մ.թ.ա. 6-րդ դարի առաջին քառորդից, ինչպես հաստատված է, Հայաստանում քաղաքները են Երվանդը և հետո նրա որդի Տիգրան I-ը, իսկ հայրը՝ Սկայորդին որդուց՝ Պարույրից, քաժանված կլիներ մոտ 74 տարով, որը նույնպես անընդունելի է:

Հետևաբար պետք է մտածել, այս դեպքում հայ ժամանակագիրները հայրենասիրական մղումով են համարել վերջինիս 44 տարին պատկառիր լինելու ժամանակահատված: Պետք է լրիվ հակասակը լիներ. Պարույրը սկզբից իշխել է 44 տարի (մ.թ.ա. 634-591թթ.), ապա, կործանելով Ուրարտուն, քաղաքներ է 5 տարի (մ.թ.ա. 591-587թթ.): Այդ դեպքում հոր և որդու գահակալությունները իրարից քաժանվում են 30 տարիներով:

Ինչպես պարզվել է, «Սասունցի Դավիթ» էպոսում Սկայորդին ներկայացված է Մեծ Մեծեր (նա է ընդունել Սամասարին և Բաղդասարին), իսկ Պարույրը՝ Դավիթ անուններով: Իսկ էպոսում նշվում է, որ Դավիթը ծնվում է Մեծ Մեծերի վախճանվելու ժամանակ: Դրանից հետո մինչև նրա հաստատմանը Սասունը ղեկավարում էին Չենով Օհանն ու Քեռի Թորոսը<sup>28</sup>: Այս փաստը հաստատում է վերը մեր առաջարկած ժամանակագրական եզրահանգումները:

Ամփոփելով քոյր այս փաստերն ու դրանց տրված գնահատականները՝ պարզ է դառնում, որ հայկական պետականությունը սկզբնավորվել է մ.թ.ա. 14-րդ դարի վերջերից, այնուհետև ընդմիջումներով շա-

յունակել է գոյատևել մինչև մ.թ.ա. 7-րդ դարի վերջը: Իսկ Հայաստանը գրավեցրել են հայերը և ոչ՝ ուրարտացիները և խուրբիները:

VALERY KHACHATRYAN

## PROBLEMS OF CHRONOLOGY OF THE ARMENIAN ANCIENT HISTORY

The data of Hittite Assyrian and Urartian sources concerning the Armenian highland confirm the information on ancient Armenian history, reported by the early Armenian historiographers. They were, evidently, aware of Haiaza-Hayk's ascending onto the historical scene and its collapse, of founding a new state by Armenian kings and Urartians, who had taken refuge in the Van region from Urartu, of the downfall and collapse of this state, as well as the years of reign of its kings.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, Ժա:
2. Չանչյան Մ., Հայոց պատմություն, Վեներիկ, հ. I, 1786, էջ 66:
3. Նույնի հ. III, Ժամանակագրական ցանկ, էջ 22:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, հ:
5. Խաչատրյան Վ. Ն., Հայաստանը մ.թ.ա. XV - VII դդ., Երևան, 1998, էջ 18-21:
6. Չանչյան Մ., Հայոց պատմություն, հ. III, Ժամանակագրական ցանկ:
7. Авадьян В. И., История древнего Востока, Москва, 1971, էջ 358-360:
8. Խաչատրյան Վ. Ն., Հայաստանը մ.թ.ա. XV - VII դդ., էջ 18:
9. Хачатрян В.Н., Хайаса и Наири, Լրագրիչ հաս. գիտ., 1973, թիվ 8:
10. Խաչատրյան Վ. Ն., Հայաստանը մ.թ.ա. XV - VII դդ., էջ 34-38:
11. Նույն տեղ, էջ 38:
12. Նույն տեղ, էջ 47-49:
13. Նույն տեղ, էջ 23:
14. Նույն տեղ, էջ 24:
15. Նույն տեղ, էջ 87-90:
16. Նույն տեղ, էջ 93:
17. Н. В. Арутюнян, Библ. археол., Ереван, 1970, էջ 155:
18. Խաչատրյան, Ույն աշխ., էջ 118-121:
19. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, հ. I:
20. Նույնի, I, Ժբ:
21. Նույնի, I, ի:
22. Մեղրուի նախնական Պատմություն, իրատ. Սո. Մախապյանցի, Երևան, 1939, Ա, 25:
23. Հովհաննես Կարաղեղեանի Դրասխանակերտու Պատմություն, Թիֆլիս, 1912, էջ 25-26:
24. Սամուել քահանայի Անգելոյ հավաքման ի զրոց պատմագրաց, Վեներիկ, 1904, էջ 44-45:

25. Հովհաննես Դրասխանակերտցի, նույն աշխ., էջ 25-26:
26. Սեախյան Հ., Հայոց անճանաչումների քառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 391:
27. Дьяконов И.М., Ассиро-вавилонские источники по истории Урарту — Вестник древней истории, Москва, 1951, № 4, 63.
28. Յաչարյան Վ. Ն., Հայաստանը ճ.թ.ա. XV - VII դդ., էջ 140-143:

## ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

### ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՊԱՐՍԿԱԼԵԶՈՒ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող պարսկերեն վավերագրերի շարքում մեծ քիվ են կազմում Սյունիքի XIII – XIX դարերի պատմությանը վերաբերող փաստաթղթերը: Նրանց մեծ մասը ուսումնասիրվել և հրատարակվել է Հ. Փափազյանի կողմից առանձին հոդվածներում, «Մատենադարանի պարսկերեն հրավարտակներին» երեք պրակներում<sup>1</sup> և Արևելյան Հայաստանի XVI-XVII դարերի ազդարային հարաբերությունների քննությանը նվիրված մեծագուրջումում<sup>2</sup>:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող վավերագրերից շուրջ 50-ը վերաբերում են քաջատապես Տաթևի վանքի XVII դարի երկրորդ կեսի պատմությանը: Դրանց մեծ մասը շահական ու տեղական կառավարիչների հրավարտակներն են, որոնք ձեռք է քերել Տաթևի առաջնորդ Հովհաննես Խաչակապուռ, իսկ երկուսը՝ նրա հաջորդ Ջաքարիան: Կան նաև կալվածագրեր, համախոսական գրություններ, պարսից պաշտոնյաների զեկուցագրեր և շար՝ի դատարանի արձանագրություններ:

Այդ վավերագրերը որոշակի արժեք ներկայացնող փաստագրական նոր տվյալներ են պարունակում Սյունյաց քեռի հոգևոր առաջնորդների գործունեության քե՛ր քննության, քե՛ր ժամանակագրական շրջանակների և քե՛ր ընդհանրապես Սյունիքում զարգացող դեպքերի վերաբերյալ, որոնք քաջակալում են այլ աղբյուրներում:

Առաջին հերթին դրանք լրացնում են քավականին երկար ժամանակ Տաթևի քեռի առաջնորդի պաշտոնը զբաղեցրած Հովհաննես Խաչակապուռի կյանքին ու գործունեությանը վերաբերող այն սուղ տվյալները, որոնք գտնում ենք հայկական աղբյուրներում: Ղևոնդ Ալիշանը նրան անվանում է Հովհաննես Շապահուղլի և նշում, որ նա Շինաքաղ գյուղից էր<sup>3</sup> և, որ նրա կողմից էր կառուցվել Տաթևի վանքի «առաջնորդարանն յարեռեկալադան ի քարձրավանդակի գեղահայեաց ի ձորն անդուլախոր»<sup>4</sup>: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի թղթ. Չա, վավե-



բազիր 53-ը, հնարավոր է դարձնում ճշգրտել Հովհաննես վարդապետի Տաթևի թեմի առաջնորդ դառնալու՝ թվականը: Այդ վավերագիրը իրենից ներկայացնում է շահ Աբաս Բ-ի 1662թ. հրամանագիրը, որով Տաթևին ներակա հայկական հոգևոր գործերի ղեկավարությունը համձնվում է Հովհաննես վարդապետին, այսինքն՝ հաստատում է վերջինին Տաթևի թեմի առաջնորդի պաշտոնում: Պետք է նշել, որ 1648 թվականից մինչև այդ թվականը ընկած ժամանակահատվածում Տաթևի հոգևոր գործերին վերաբերող, որևէ շահական հրամանագիր Մատենադարանում չկա, այն դեպքում, երբ Հովհաննես Եպպանոսի նախկուպոսի կողմից 1661թ.-ից մինչև 1686թ. ընկած ժամանակահատվածում ձեռք են բերվել 40-ից ավելի հրամանագրեր: Այդ թվում կա նաև 1682թ. այդ պաշտոնում նրան վերահաստատող նույն շահի հրովարտակը, որում նշվում են Տաթևի մեջ մտնող շրջանները՝ «Գյոթշան, Քաշաքաղը, Արասբաղը, Ղափանաթը, Բարգուշատը, Ագատ-Ջիրանը և Ղարադաղը»<sup>2</sup>:

«Եաքակարգութիսն նախկուպոսաց Սինեսաց արարեալ ի միաբանից Տաթևոյ վանաչ» աշխատությունում, որը հրատարակվել է որպես 1859թ. Փարիզում տպագրված Մտ. Օրբելյանի «Պատմութիւն Գահանգիսն Սիսական» երկի հավելված, նշվում է, որ Հովհաննես նախկուպոսը յոթ անգամ գնում է Սպահան՝ շահ Մուլթան Հուսեյնին ներկայանալու և մահանում է Թավրիզում՝ իր վերջին այցից վերադառնալու ճանապարհին: Նրա մարմինը տեղափոխվում է Տաթև և թաղվում այնտեղ: Այստեղ հարկ է նշել, որ Իրանի շահ Մուլթան Հուսեյնը իշխել է 1694-1722թթ., մինչդեռ Հովհաննես վարդապետի կողմից ստացված հրովարտակները տրված են շահ Աբաս Բ-ի (1642-1666) և շահ Մուլեյմանի (1666-1693) կողմից: Քանի որ հայտնի չէ Հովհաննես վարդապետի մահվան թվականը, իսկ Մատենադարանում պահվող հրամանագրերից ժամանակագրական առումով վերջինը, որում նշվում է նրա անունը, տրված է 1687թ.,<sup>3</sup> հնարավոր ենք համարում, որ նա հրամանագրերի ձեռք բերած լինի նաև շահ Մուլթան Հուսեյնից, որոնց մասին մենք տվյալներ չունենք: Հնարավոր է, որ նրա վերջին ճանապարհորդությունը դեպի Սպահան տեղի ունեցած լինի 1694-1697թթ., այսինքն մինչև այն թվականը, երբ նրա հաջորդ Ջաքարիս վարդապետը Տաթևի վանքը պարտատեղերի պահանջներից պաշտպանելու նպատակով ձեռք է բերում առաջին հրովարտակը<sup>4</sup>:

Յոթ անգամ շահի մոտ Սպահան գնացած լինելու համզամանքը բացատրում է այն, թե ինչպես է Հովհաննես նախկուպոսին հաջողվել այդքան շատ շահական հրամանագրեր ձեռք բերել, ինչպես նաև վկայում է նրա եռանդի ու անկողորմ կամքի մասին, որը չմայած շահական կենտրոնական իշխանության թուլացմանն ու տեղական իշխանությունների կամայականություններին, չէր հոգնում ու հուսահատվում տեղա-

կամ պաշտոնյաների, քաղվոր ցեղերի, ինչպես նաև ամենազանգի տալ  
գյուղացիների ամօրինական արարքների զեմ պայքար մղելուց:

Վերոհիշյալ վավերագրերում հստակ արտացոլվել է տվյալ ժա-  
մանակաշրջանում Սյունիքի քաղաքական ու սոցիալ-տնտեսական  
ծանր դրությունը անկում ապրող Սեֆյան Իրանի կազմում: Կենտրոնա-  
ձիգ ուժեր իշխանության քաջակալության մասին է խոսում հենց այն  
հանգամանքը, որ վավերագրերից շատերը կազմված են միևնույն խնդրի  
կապակցությամբ և ունեն գրեթե նույն ըսվանդակությունը, քայք ուղղված  
են տարրեր անձամբ և թվազրված են տարրեր թվակամներով, թեև  
խնդրարկում միևնույն ամձն է: Այսինքն բարձրացված հարցը տարիներ  
շարունակ լուծում չի ստացել և հրամանը կամ դատական ստյանների  
որոշումները չեն կատարվել:

Հովհաննես եպիսկոպոսի կողմից ձեռք բերված հրովարտակների  
հիմնական մասի մշատակը վանքի կալվածքների պաշտպանությունն  
ու նրանցից ստացվող եկամուտների ապահովումն էր տեղական իշխա-  
նավորների, վախատուների ու քաղվոր ցեղերի ունեձգություններից:  
Նրանցում՝ ինչպես և մախարղ դարերում Տաթևի վանքին տրված կա-  
վարտակներում, ամրագրվում է 16 գյուղերի (Բնունիս, Թաս, Ղարախի-  
սա, Դաստակերտ, Գալյազի, Սվարի, Տաթև, Խոտաման, Հալիձոր,  
Ըննիր, Խուտ, Դաշու, Աղաքնդ, Տանձատտի, Բորդի ու Կից), որպես  
վակիային կալվածքների, պատկանելությունը Տաթևի վանքին: Վերը  
նշված ժամանակաշրջանի մի շարք հրովարտակներ հիմնվելով մախի-  
նում այս առթիվ հրապարակված փաստաթղթերի (միտալներ, ֆաթվա-  
ներ, հոքներ, վակիմամեներ և այլն) վրա հաստատում են այդ գյուղերի  
Տաթևի վանքի վակից լինելու հանգամանքը և արգելում անեմ տեսակի  
հավակնություններն ու ունեձգությունները նրանց նկատմամբ: Այս շար-  
քում հատկանշական են Սեֆյան շահ Սուլեյմանի 1079, 1082 և 1086 թ.  
թ. հրամանագրերը տրված ի հաստատումն մահմեդական բարձրաստի-  
նան հոգևորականության կողմից հրապարակված միտալների ու ֆաթ-  
վաների<sup>11</sup>:

Նույն ժամանակաշրջանի հրովարտակներից<sup>11</sup> իմանում ենք, որ  
Տաթևի կալվածքների նկատմամբ շարունակ նախակնություններ էին  
հանդես բերում Ղափանի Դարաբաս գյուղի բորթելու համայնքի ներ-  
կայացուցիչները, որոնք, լինելով Սյունիքի Օրբելյանների Բուրբելյան  
ճյուղի մահմեդականացած ժառանգները, հավանաբար ունեին որոշ  
հիմքեր իրենց արահանգների համար: Ինչպես նշվում է այս վեճի կա-  
պակցությամբ Հովհաննես եպիսկոպոսի կողմից ձեռք բերված փա-  
տաթղթերից մեկում, վերոհիշյալ համայնքի ներկայացուցիչները այդ  
շրջանում զբաղեցնում էին Ղափանի դազիի, քալամբարի ու մելիքի  
պաշտոնները, և օգտվում իրենց դիրքերից իրենց պահանջները առաջ

տանելու համար<sup>12</sup>: 1662թ. Հովհաննես Եպիսկոպոսի կողմից ձեռք բերված մի հրամանագրում<sup>13</sup>, որը ևս տրված է Դարաբաս գյուղի բուրքեղու համայնքի և Տաթևի վանքի միջև ընթացող վեճերի կապակցությամբ, մատնանշվում են այդ համայնքի հավակնությունները Մվարի, Տանձատափ ու Խոտանան գյուղերի երեքական դանգերի նկատմամբ, ինչպես նաև նկարագրվում նրանց կողմից կատարված ուսնձգությունները: Վավերագրում նշվող բուրքեղու համայնքի ներկայացուցիչների անունների շարքում կարելի է գտնել նաև հայերի շրջանում ընդունված անուններ, ինչպիսիք են Խյասը (Խոխասն է), Շահնագարը: Հովհաննես Եպիսկոպոսին հասցողվում է ապացուցել վերոհիշյալ կազմվածքների պատկանելությունը Տաթևի վանքին մի փաստաթղթի շնորհիվ, ըստ որի դրանք վակֆ էին արվել վանքին բուրքեղուների նախնիների կողմից<sup>14</sup>: Փաստաթղթում նշվող այս փաստը հաստատում է այն, որ, ինչոք, բուրքեղու համայնքի ներկայացուցիչները Սյունիքի Օրբելյանների Բուրքեղյան գյուղի մահմեդականացած ժառանգներն էին: Վերոհիշյալ հրամանագրով խնդիրն այնուամենայնիվ չի լուծվել, քանի որ կան նաև հետագա տարիներին այդ հարցի շուրջ հրապարակված հրամանագրեր ու այլ փաստաթղթեր<sup>15</sup>: Պայքարն այնքան է սրվում, որ անգամ Հովհաննես Եպիսկոպոսի դեմ բուրքեղուների ու Վաղարշի վանքի վանականների կողմից մի համախոսական գրություն է կազմվում և ներկայացվում պարսից իշխանություններին, թե իբր Հովհաննես Եպիսկոպոսը Վաղարշի վանքի ունեցվածքը խլել է իրենց ծնող Ալեքսանոսին սպանել է Ի պատասխան այդ գրության կազմվել է մեկ այլ համախոսական գրություն<sup>16</sup>, որում ստորագրած մի շարք հեղինակավոր անձից ու տեղական պաշտոնյաներ վկայում են վերը նշված ատաքին համախոսական գրության կեղծ և զրպարտություն լինելու մասին<sup>17</sup>:

Մեծ թիվ են կազմում պաշտոնյաների շարաշահումների, կամայականությունների ու զանազան այլ անօրինական արարքների դեմ ուղղված փաստաթղթերը: Հատուկ այս կարգի արարքների կապակցությամբ Հովհաննես Եպիսկոպոսի ջանքերով ձեռք են բերվել շահ Սուլեյմանի 1668 – 1685 թթ. հրապարակված մի քանի հրովաբուսակներ<sup>18</sup>:

Վավերագրերում նշմարվում է նաև այդ շրջանում զանազան օրինախախտ տարրերի ակտիվացումը: Հովհաննես վարդապետի խնդրանքով Շահ Սուլեյմանի կողմից 1668թ. հրապարակված հրովաբուսակը<sup>19</sup> նախատակ ունի պաշտպանելու վանքի կազմվածքների հարստությունը, քերքն ու տեղի բնակիչներին քոչվոր ցեղերի (ջավանշիր, օբուզիքի, քեմզերլու, հաջիրու, կարաչուրու, փուսյան) ուսնձգություններից, որոնք իրենց ամառանոցային ու ձմեռանոցային փայրերը քոչելու ընթացքում իջևանում էին վանքին պատկանող վայրերում ու մեծ վնաս հասցնում Տաթևի եկամտուններին: Այս կարգի հրովաբուսակ է հրապարակվել նույն

չափի կողմից մաև 1685թ., որտեղ Տաթևի հոգևոր առաջնորդը քողարում է ածառայու ցեղի կողմից գործված անօրինակամտությունների դեմ<sup>20</sup>։ 1687թ. Ղափաձախի մեջ մտնող Գյուլարեղ գյուղի քնակչության խմբաանջով հրապարակված հրովարտակը կոչված էր պաշտպանելու վերոնիշյալ քնակավայրը խախտելու ցեղի ոտնձգություններից<sup>21</sup>։

Վերոնիշյալ ժամանակահատվածում պետական հարկերի շարունակ ծանրամալու հետևանքով հաճախակի էին դառնում մաև Տաթևի վանքի պատկանող կալվածքների քնակչության կողմից վանքի նկատմամբ իրենց պարտականությունների չկատարման դեպքերը, որոնք շնայած վանատոր քողոքներին, քնուրուջ են վերոնիշյալ ժամանակաշրջանին և լուծում շատանալով առիթ էին դառնում կողմերից կաշառքներ գանձելու համար<sup>22</sup>։

1669-1687թթ. շուրջ մեկ տասնյակ փաստաթղթեր վերաբերում են Տաթևի վակձախին կալվածք հանդիսացող Ղարաքիլիսա գյուղի կապակցությամբ Հովհաննես եպիսկոպոսի և Շելյա Ջյարին աղ-Ղինի ժառանգների միջև տարիներ շարունակ ընթացող վեճին։ Հովհաննես եպիսկոպոսը բողոք է նայտնում այդ գյուղից գանձվող հարկերի ապօրինի յուրացման ու այնտեղի քնակչիների անհնազանդության դեմ, որին ի պատասխան հրապարակված մի շարք շահակամ հրովարտակներ հաստատում են այդ գյուղի վակձախին պատկանելությունը Տաթևի վանքին<sup>23</sup>։ Այս առթիվ 1670թ. հրապարակված տեղական կառավարչի հրամանագիրը հրահանգում է 50 քուման գանձել վանքի կողմից 8 տարի շտապված քանրելի դիմաց<sup>24</sup>։ Այս գյուղի պատկանելությունը Տաթևի վանքին և Հովհաննես վանատոր իրավացիությունը հաստատված է մաև դատական առյաճի արձանագրություն ներկայացնող մի փաստաթղթով և տեղի հեղինակավոր անձնանց կնիքներով հաստատված 1687թ. մի համախոսական գրությամբ<sup>25</sup>։ Մրևույն խնդրի կարակցությամբ կազմված այս քազմաթիվ փաստաթղթերը մատմանչում են այն փաստը, որ Իրանի Սեֆյան պետության կենտրոնական իշխանության քուրացումը հանգեցրել էր տեղական բյուրակրատիայի քաշշուկների ու կամայականությունների ուժեղացմանը և օրինական ճանապարհով հարցեր լուծելու անհնարինությունը, որը պետք է առաջ բերեր ինչպես հասարակ քնակչության, այնպես մաև հոգևորականության և տեղի ունեղ խափի դժգոհությունը։

Տաթևի վանքի դեմ գործված անօրինակամտությունները մամրամասն նկարագրող 2 ծավալում հրովարտակներ<sup>26</sup> հետաքրքիր են նրանով, որ նրանցում մեկ առ մեկ պատկերվում է վակձախին կալվածքներից յուրաքանչյուրում տիրող անկարգության քնուրուջ՝ նիշատակելով օրինազանցներին։ Նրանցում կարելի է գտնել մաև տեղեկություններ տվյալ ժամանակաշրջանի իշխանավորների ու տեղական պաշտոնյաների,

ման Սյունիքի մելիքների, մասնավորապես Անգեղակոթի Մելիք Մաֆու-  
զի մասին: Մատնանշվող օրինախախտ անձանց ու համայնքների մեջ  
նշանակալի տեղ են զբաղեցնում մահմեդական պաշտոնյաները<sup>27</sup>, քոչ-  
վոր ցեղերը<sup>28</sup> ու նրանց ավագանու ներկայացուցիչները, ինչպեսիք են, օ-  
րինակ, Քարեր Բեկ ու Ղափլան Բեկ Քենգեղուհները, Ջհանգիր Այի Եա-  
ղլլում, Մոհամմադ Մալեհ Ղարադաշին, ղազի Իսմայիլը և այլն<sup>29</sup>:

Վերտիչյալ ժամանակաշրջանում Իրանում ուժեղացել էր ան-  
հանդուրժողականությունը կրոնական փոքրամասնությունների, այդ  
թվում նաև հայերի համդեպ: Այս ամենն իր արտացոլումն է գտել պար-  
սից շահերի կողմից հրապարակված հրամանագրերում:

Էջմիածնի Հակոբ կաթողիկոսի ձեռք բերած մահմեդական բարձ-  
րաստիճան հոգևորականության կողմից հրատարակված ֆաթվաները  
հաստատող երովարտակների մեծ մասում<sup>30</sup> արգելվում էին հնագանդ  
զիմնի հանդիսացող իրանահպատակ հայության մկատմամբ բռնույ-  
թյունները, ու իրավունք տալիս հայերին հետևելու իրենց հավատի օրենք-  
ներին ու սովորույթներին, վնասնորոգելու իրենց եկեղեցիները և այլն:  
Եահ Մուլեյմանի 1668թ. հրովարտակներից մեկում արգելվում էր մահմե-  
դական պաշտոնեությանը ապօրինի գոմարներ զանձել հայերից քեղ-  
խուղա նշանակելու, իրենց մեռած ազգականներին քաղելու և վանքերը  
վերանորոգելու թույլտվության համար<sup>31</sup>:

Ընդհանրապես, նշված ժամանակաշրջանում Հայաստանում  
լայն քափ է տալանում եկեղեցական շինարարությունը, որից անմասն չի  
մնում նաև Սյունիքը: 1650թ. կառուցվում է Գետաթաղ գյուղի եկեղեցին<sup>32</sup>,  
1661թ. կառուցվում է Խնձորեսակի Ս. Հովիտիմե եկեղեցին<sup>33</sup>, 1666թ. Լոր  
գյուղի Ս. Գեորգ եկեղեցին<sup>34</sup>, 1676թ. Ենեքի Կուսանաց անապատը<sup>35</sup>,  
1681թ. Վայոց ձորի Խաչիկ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին<sup>36</sup>, 1692թ.  
Վայոց ձորի Օրթաքենդ գյուղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին<sup>37</sup>,  
1671թ. վերանորոգվում է Գնդեվանքի եկեղեցին<sup>38</sup> և այլն: Ձանազան  
պատճառներով վնասված ու ավերված եկեղեցիների վերանորոգման,  
նորերի կառուցման համար անհրաժեշտ էր մալս ստանալ շահի, սաբա  
նաև տեղական իշխանությունների թույլտվությունը: Այս պատճառով  
պահպանվել են մի շարք շահական հրամանագրեր, որոնք թույլատրում  
են ինչպես քրիստոնեության Արևելյան Հայաստանի տարբեր շրջաննե-  
րում (այդ թվում նաև Սյունիքի գավառներում), այնպես էլ զանազան  
վանքերում եկեղեցական շինարարության անցկացումը: Մեֆյան շահ  
Մուլեյմանի 1668թ. մի հրամանագիր<sup>39</sup> հաստատում է մահմեդական  
հոգևորականության հրապարակած ֆաթվան, որով թույլատրվում է  
Սյունիքի բնակավայրերում, մասնավորապես Բոնակաքում, Անգեղակո-  
թում, Մեղրիում և Դարաբասում վերանորոգել վանքերը: Այսպիսի մի  
հրամանագիր էլ հրապարակվել է 1669թ. Վայոց ձորի Եատիկ Անապա-

տի վերանորոգումը հնարավոր դարձնելու նպատակով<sup>46</sup>, որը իրականացվում է վանքի վանահայր Մովսես վարդապետի ցանքերով<sup>47</sup>: Այնուամենայնիվ Մովսես վարդապետին հեշտ չի եղել այդ Ամսապատը շննացնելը, որովհետև կա նաև վերջինիս կողմից 1675թ. ձեռք բերված մի հրովարտակ, որով վերջինս խնդրում է պաշտպանել իրեն ու վանքի միաբանությանը մեղիչներին, որոնք խանգարում են նրանց բնակությանը Շատիկ ամապատում<sup>48</sup>:

Պարսից հրովարտակները, ինչպես տեսնում ենք, լիովին արտացոլում են Սյունիքում XVII դարի երկրորդ կեսին տեղեկված ամհանգիստ դրությունը, որի արդյունքում XVIII դարի սկզբին Սեֆյան Իրանի տիրապետության դեմ ժողովրդական շարժումներ են ծավալվում:

#### Քարգմանություն

Կարթղիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 65, քմագիր,  
մեծ. 48 x 19 սմ, գիր՝ շիրասքն - մասրա՛լիք.

#### Սեֆյան Շահ Մուլեյմանի կմիքը

Արքայական հրաման եղավ հետևյալ կապակցությամբ. օրերս Ղափանաթի Տաթևի վանքի միաբանության ցմտոյալ Հովհաննես քանանան գալով աշխարհի ազալների պալատ տեղեկացրեց, որ Ղաթարաղի ցավամշիք, օթուզիք<sup>49</sup>, քենգիբու<sup>49</sup>, շարվանշահլա<sup>49</sup>, հաջիլա<sup>49</sup>, խոջաարա-խահաղլու, քրդական կարայողլու<sup>49</sup>, փուսյան<sup>49</sup> ու քալաքեմն<sup>49</sup> ցեղերը իրենց ամատանոցային ու ձմեռանոցային վայրերը քաշելիս իջևանում են վերոհիշյալ վանքի վակֆային<sup>50</sup> մահալներում<sup>51</sup>, նրա ցանքեսրում աքածեցնում իրենց չոքրուտանի կենդանիներին ու բերքը ոչնչացնում, նենգորեն ոռայաքների<sup>52</sup> ձիերը, կովերն ու ոչխարները տանում - մոքրում են, բռնի ու ապօրինի արարքներ գործում: Ոռայաքները այսպիսի կյանքից վախել, ցարցոցիվ են եղել, և մահալները ամալացել են: Այս պատճառով [Հովհաննեսը] արքայական հրաման խնդրեց: Հետևաբար, կարգադրեցիմք, որ եթե իրօք այդպես է, ապա այստեևտև թող որ ցեղերից որևէ մեկը հրամանին ու կարգին հակառակ այդ մահալի հողերում կանգ չառնի և վակֆային կալվածքների ոռայաքներին ու հողագործներին չնեղի, նրանց ունեցվածքն ու ընտանի կենդանիներին ապօրինաբար չհափշտակի: Իսկ եթե ոռայաքների համաձայնությամբ իջևանեն, ապա թող կարգին համաձայն *ուլտասն*<sup>53</sup> վճարեն: Այնտեղի բարձրաստիճան բեկլարբեկը<sup>54</sup> պարտավոր է օրինավոր օգնություն ցուցաբերել և թույլ չտալ, որպեսզի ցեղերն ու ցեղախմբերը ապօրինաբար նշված վայրերում կանգ առնելով, վերոհիշյալ վակֆերի ոռայաքներին ու հողագործներին նեղություն պատճառեն: Եթե այդ ցեղերից որևէ մեկը հրա-

մանին ու կարգին հակառակ այդ մահալների ուայաթներից ու հողագործներից որևէ քան հափշտակած ու նրանց բերքին վնաս հասցրած լինի, թող ըստ կարգադրության վերականգնեն ոտնահարված իրավունքները: Եվ թող այս ընդունեն որպես խիստ հրաման ու ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն:

Գրվեց 1079թ. ուրի՛ առաջին ամսին<sup>55</sup>:

#### Ժարգմանություն

Կաթողիկոսական դիվան, թղթ. Չա, վավ. 66, բնագիր, մեծ. 18.5 x 47.5 սմ, գիր՝ շիքասքե - մասթա՛լիլ


#### Սեֆյան շահ Սուլեյմանի կնիքը

Արքայական հրաման եղավ, քանզի այդ ժամանակ Ղափանարի Տաթևի վանքի նմանների մեջ չավագույն Հովհաննես քանահան ու միաբանները աշխարհի ապավենի պալատը գալով՝ տեղնկացրին, որ այդ երկրի կառավարիչներն ու բնակչությունը նրանց հանդեպ բռնություն ու չարաչափումներ են թույլ տվել՝ արժանապատիվ շար՛ին<sup>56</sup> ու կարգին հակառակ գումար հարկադրարար գանձելով, այն դեպքում, երբ նման պահանջների առթիվ քարձրագույն հրամանագրեր կան: Այս պատճառով վերտոնն խնդրեցին արքայական հրամանագիր քարձրատիճան ազնվական, խասե-ե շարիֆեի<sup>57</sup> ծառա հարկահավաք Սուլեյման քեկի անունով, որպեսզի այդ պարտադիր հրամանագրերի բովանդակությանը համապատասխան այդ գանձումները վերցնի ու հետ վերադարձնի: Ուստի կարգադրեցինք, որ վերոհիշյալ քարձրատիճան ազնվական Սուլեյման քեկը ամենալուսավոր շար՛ի համձնակատարների ներկայությամբ պարտադիր հրամանագրերի ու սրբազան շարիաթի<sup>58</sup> օրենքին համապատասխան վերոհիշյալ անձանց [Հովհաննեսի ու Տաթևի միաբանների] պահանջած օրինական գումարները շար՛ի հաստատումից հետո վերցնեն ու հետ վերադարձնեն: Եվ այնպես անեն որպեսզի արդարություն հաստատվի, և ամօրինական բռնություններ ու չարաչափումներ տեղի չունենան: Այնտեղի քարձրատիճան քեկարքեկը պարտավոր է վերոհիշյալ հարկահավաքին օրինական օգնություն ցուցաբերել: Եվ այս թող խիստ կարգադրություն համարեն ու պատասխանատու լինեն:

Գրվեց 1079թ. զիհեջջե ամսին<sup>59</sup>:







**THE HISTORY TATEV MONASTERY IN THE SECOND HALF OF 17<sup>TH</sup>  
CENTURY ACCORDING TO PERSIAN DOCUMENTS**

About 50 Persian documents (decrees, deeds of purchase, reports of local administrators and etc) of Yerevan Masnadaran refer to the history of Tatev Monastery in the second half of 17<sup>th</sup> Century. The major part of these documents being obtained by Hovhannes Episcop, the prior of Tatev Monastery contain important information about his activities and various aspects of the situation in Siunik Region under the rule of Safavid Shahs in the decline period of Safavid Power. Several decrees were issued on each problem, which show that the orders were often not properly executed. The Persian documents of this period also witness of the increase of bribery and abuses among the local administrators and activation of various illegal elements in the region in general.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Այդ պրակներում ընդգրկված են 1449-1650թթ. վավերագրերը (Տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակնեղը, պրակ 1, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, պրակ II, Երևան, 1959, Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ I, Երևան, 1968):
2. А. Д. Пакоян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван, 1972,
3. Ղ. Ալիջան, Սիսական, Կենտրոնիկ, 1893, էջ 220:
4. Ղ. Ալիջան, Սիսական, էջ 234:
5. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 99, 111:
6. Ստ. Օրբելեան մետրասոլիտ Սիւնեաց, Պատմութիւն Եսահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 275:
7. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 121:
8. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 127:
9. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 66, 85ա; թղթ. 2թ, 114
10. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 67ա, 68, 81, 85ա:
11. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 61ա, 69, 70ա,
12. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 70ա:
13. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 61ա:
14. Նույն տեղում:
15. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 62ա, 63, 69, 85ա, 103 և այլն:
16. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 86:
17. Տե՛ս նաև ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 71:
18. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 66, 73, 87 և 2թ թղթ., վավ. 107ա, 109:

19. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 65:
20. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2բ, վավ. 113:
21. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2բ, վավ. 117:
22. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 73; քղթ. 2բ, 110, 112:
23. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 72, 75ա, 79; քղթ. 2բ, վավ. 115, 120:
24. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 78ա:
25. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 96; քղթ. 2բ, վավ. 121:
26. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2բ, վավ. 108ա, 118:
27. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 54, 87:
28. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2ա, վավ. 113:
29. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 2բ, վավ. 108ա, 118:
30. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 1բ, վավ. 145, 136, 144 և այլն:
31. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 1բ, վավ. 177:
32. Դիվան հայ վիճազրության, պրակ II, Գորխի, Սիսիանի և Դաւիանի շրջաններ, կազմեց Ա. Գ. Բարխուդարյան, էջ 128:
33. Դիվան հայ վիճազրության, պրակ II, էջ 63:
34. Դիվան հայ վիճազրության, պրակ II, էջ 109:
35. Դիվան հայ վիճազրության, պրակ II, էջ 57:
36. Ղ Ալիշան, Միսական, էջ 172:
37. Ղ Ալիշան, Միսական, էջ 129:
38. Ղ Ալիշան, Միսական, էջ 105:
39. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 1բ, 130բ:
40. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 4, վավ. 124:
41. տես Ղ Ալիշան, Միսական, էջ 159:
42. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քղթ. 4, վավ. 114:
43. Օբուզիրին 32 քրդական ու բյուրքական մար ցեղերի արհեստական միավորում էր, որի մեջ էր մտնում մաս Գևանշիր ցեղը, (տես Կ. Ս. Սեդուհովսկի, укр. соч., с. 96, 136):
44. Քենգեբլու ցեղը ղզլքաշ ցեղերի բլին պատկանող ուսրաջլու ցեղի նյուղերից էր, և նրա առաջնորդների ժառանգական սջրան էր Լախիջևանի վիչայնթը (տես Կ. Ս. Սեդուհովսկի, укр. соч., с. 94, 127):
45. Շարվանշախու ցեղը մասին նշված է Դևոնդ Ալիշանի կողմից (Ղ Ալիշան, Միսական, էջ 96):
46. Դանբլու ցեղը նույնպես հիշատակվում է Սյունիքի տարածքում (Ղ Ալիշան, Միսական, էջ 101):
47. XIX դարում Դարալագյազի շրջանում էր բնակվում իսլամի շիա ուղղությանը պատկանող քրդական կիսաքրվոր կարաչուլու ցեղը (տես Ս. Ս. Սեդուհովսկի, Исследования об армянских кырдзах и их предках, северных халдах, кн. I, СПб., 1856, с. 89):
48. Փռայան քրդական ցեղը գրանցվել է Օսպնի կողմից կազմված երևանի նահանգի էջատակարանում (Լ. Սոսոկ, Исторические памятники Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб. 1852, с. 719):

49. Թարաքեմն - Թուրքմեն քառի հոգնակին է: Թուրքալեզու թուրքմենական ցեղերը պատկանում էին դաշրաշ ցեղերի թվին (տես II, II, Петрушевская, ур. соч., с. 91, 92): Թարաքեմն անունով հայտնի էին Ղարաբաղի տարածքում գտնվող մի քանի բնակավայր (տես Օսմանե Կարաբեգովի տրուստա, с. 11):
50. Վակֆ - وقف (արաբ.) - Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին մվիրված՝ վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, մվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2, էջ 120):
51. Մահալ - محال (արաբ.) - «Մահալ» (վայր) քառի հոգնակի ծան է, որ քառացի նշանակում է «վայրեր», քայց այս տերմինը համախ գործ էր անվում արդի «շրջան»-ի իմաստով և համանիշ էր «մահիա»-ին (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 113):
52. Ռայաթ, Ճիշտը՝ ռաիյաթ - رعیت (արաբ.) - Ակզբնադրյուրներում գործ է անվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով: Իսկ խաչնարած քոչվորությունը կոչվում էր «իլաթ - ایل» և ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 118-119):
53. Չարկ, որ վճարվում էր քոչվոր ցեղերի կողմից իրենց քոչի ընթացքում որևէ տեղ կանգ առնելու համար տեղի սեփականատիրոջը:
54. Բեկլարբեկ - بیکلربک (թուրք.) - Սեֆյան Իրանի սահմանամերձ մահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր»: Այս անվան արաբերեն համանիշն է «ամիր - ուլ ումարա - أميرالمرأ», պարսկերեն արտահայտությամբ՝ «միր-ե միրան - میر میران»: Սահմանամերձ կուսակալությունները, որոնք անվանվում էին բեկլարբեկություններ (بیکلربکی) չափազանց սոման էին Արշակունյաց Չալատանի բոջնիություններին և կոչված էին վտանգի դեպքում միավորելու մերձակա մյուս խանությունների զինվորական ուժերը, իսկ վերջիններս իրենց հերթին պարտավոր էին ենթարկվել բեկլարբեկին, որպես գլխավոր զինվորական հրամանատարի:
55. Իրանեում ժՁ - ժԷ դարերում կաշիմ 13 բեկլարբեկություններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանումն էին գտնվում Ատրպատականի, Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չուխտր Սասանի կամ Երևանի բեկլարբեկությունները (Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, էջ 106):
56. 1668/VIII:
57. Շար՝ - شرح (արաբ.) - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, իզգուր օրենսդրամ-դատական խորհուրդ, որիմ մասնակցում էին տվյալ վայրի

- չարժրաստիճան հոգևորականները (Մատենադարանի պարսկերեն իրավարտականքը, պրակ 1, էջ 117):
58. Խասսե-յե շարիֆե - خاسا شريفه (արաբ.) - Այսպես էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու զործատները, և առհասարակ, շահին ու քազավորական ընտանիքին պատկանող մյուս քոլոր հաստատությունները միասին վերցրած: Ղրանք քոլորն ունեին հատուկ զործերի կառավարություն, որ կոչվում էր «Սաղքար-ե Խասսե-յե շարիֆե» (مرکز خاسا شريفه) (Մատենադարանի պարսկերեն իրավարտականքը, պրակ 1, էջ 110):
59. Շաքիաթ - شريعت (արաբ.) - Մտալմանական կրոնական օրենքն էր հաստատված նորմեք, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների քարժրագույն կրոնական - դատական ատյանը: Այս հաստատությունը հաճախ անվանվում էր հինց այդ օրենքների առումով, ասկայն սովորաբար այն կոչվում էր «Շաք'»: Շաքիաթի կամ Շաք'ի հոգևոր ատյաններում էին քննվում մեծ մասամբ տնտեսական ծաղցերի շուրջը քաղաքացիների միջև առաջագած վեճերը: Այդ ատյանին կից կային մահ նոտարական գրասենյակներ՝ «մաեշաք»-ներ, որտեղ անեղի էին ունենում կալվածքի առուժախի, վարձակալման, փոխառություն, ամուսնություն և քաղաքացիների սոցիալական դրությանը վերաբերող այլ ակտեր, կազմվում էին արձանագրություններ և տրվում էին հաճապատասխան փաստաթղթեր և նոտարական պատճեններ (Մատենադարանի պարսկերեն իրավարտականքը, պրակ 2, էջ 227):
60. 1669/V:

ԱՄ, կարողիկոսական դիվան, քրջապահմակ 2ա, վավ. 65

مهر شاه سليمان: [بند شاه دين سليمان است ۱۰۷۸ - اللهم صل على النبي و  
اوصى و البتول و السبطين و السجاد و الباقر و الصادق و النكاظم و الرضا و  
التاقي و التاقي و الزكي و المعتمد]

فرمان همايون شد آنکه چون درینولا زیدتلا شهاب اولان مهراسیا در  
میابان وانک طایف قیانات بدرگاه جهانپناه آمدن بمرض رسانیدند که  
جماعت الیوسات و احشامات جوانشیر و لئوزیکی و کنگرلو و سروانشاملو و  
ساجیلو و خواجه ابواسحقلو و لکراد فراچورلو و پسیان و تراکعات قراباغ  
در حینی که به بیلاق و قشلاق میروند در محال موقوفات وانک مزبور نزول  
نموده مزروعات و محصولات محالمزبوره را بدواب و اغنام خود چرانند  
تقصان و خسارت بسیار میرسانند و اسب و گاو و گوسفند رعایا را بر سهیل  
در ذیل میبرند و اموال و اجناس رعایا را بخلاقمساب مگر و میکشند و  
شلتافات خلافمساب میکشند و ازینممر رعایا متفرق و محالمزبوره مشرب  
میگردند و درینباب استدعا حکم اشرف نمودند بنابرین مقرر فرمودیم که

هر گاه نمود واقع بوده باشد من بعد احدی از الوسات و احشامات مزبوره بخلافحکم و حساب در اراضی محال مزبوره نزول ننموده مزاحمت بحال رعایا و زارعین موقوفات مزبوره نرسانند و اموال واجناس و دواب و اغنام ایشانرا بیجهت و بخلافحساب بچیر نگیرند و هر گاه برضای رعایای محال مزبوره نزول نمایند از عهده پورشانه آن موافق حق و حساب بیرون آهند. بعهدۀ عالیجاه بیگلربیگی آنجا که امداد حسابی بتقدیم رسانند نگذارند که الوسات و احشامات مزبوره بخلافحکم و حساب در محال مزبوره نزول نموده مزاحمت بحال رعایا و زارعین موقوفات مزبوره نرسانند و چنانچه احدی از الوسات مزبوره بخلافحکم و حساب چیزی از رعایا و زارعین محال مزبوره مستاده نقصان یا محصولات ایشان رسانیده باشد بقرار خاطر نشان گردیده احقاق حق نماید درینباب قدغن دانسته هر ساله حکم مجدد نطلبند.

تحریراً فی شهر ربیع الاول سنه ۱۰۷۹

UU, կարգուիլքութեան դիվան, բոքրապետակ շահ, վավ. 66

مهر شاه سلیمان؛ [بنده شاه دین سلیمان است ۱۰۷۸ - اللهم صل علی النبی و الوسی و النبیول و السبطین و المسجد و الباقر و الصابق و انکاشم و الرضا و التاقی و النافی و الرکی و المهدی]

فرمان همایون شد آنکه چون درینوقت زبده الاشیاء اولئس مهرامیا و سایر سکنه وانگ مطاطف قبانات بدرگاه جهان پناه آمده بعرض رسانیدند که از حکام و جماعت سکنه آذولایت ظلم و زیادتی ایشان واقع شده مبلغی بخلافشرع شریف و حساب از ایشان جبراً بازیافت نموده اند و احکام مطاعه لازم الاطاعه در باب مطالبات ایشان صادر شده مجدداً استدعا حکم اشرف بمحصلی رفعت و معالی پناه سلیمان بیگ غلام خاصه شریقه نمودند که موافق مضمون احکام مطاعه مطالبات ایشانرا موافق شرع شریف گرفته واصل و عاید گرداند بنایرین مقرر فرمودیم که رفعت و معالی پناه سلیمان بیگ مشارالیه در حضور اهالی شرع لنور موافق احکام مطاعه لازم الاطاعه و قانون شریعت مقدس مطالبات شرعی و حسابی جماعت مزبوره را بعد از ثبوت و لزوم شرعی گرفته تسلیم و نوعی نماید که احقاق حق شده ظلم و تعدی و ستم و زیادتی خلافشرعی واقع نشود. بعهدۀ عالیجاه بیگلربیگی آنحدود که در هر باب امداد و امانت شرعی و حسابی محصل مزبور بتقدیم رسانند درینباب قدغن دانسته در عهده شناسند.

تحریراً فی شهر ذی حجه الحرام سنه ۱۰۷۹.

## ՆՒԿՈՒԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԻ kumemuše ԵՎ BE.LI ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

BE.LI-ն ուրարտական արձանագրություններում համդիպում է հաճախ: Սակայն սուկ երկակի այն հիշատակվում է kumemuše քառի հետ փոխկապակցված: Եվ եթե BE.LI-ն մասնագիտական գրականության մեջ վաղուց ի վեր նույնացված է ասորեստանյան bēlu II-ի հետ<sup>1</sup>, ապա kumemuše քառիմաստի քացահայտումը տակավին չարմատակում է մնալ ուրարտերենի քառասաչաչաքի պրոթեմատիկ խմբերների շարքում:

Ի դեպ ուրարտական սեպագիր աղբյուրների փաստական նյութի ուսումնասիրությունը վկայում է, որ kumemuše-ի և BE.LI-ի փոխկապակցված հիշատակվելու իրողությունը բոլորովին էլ պատահական երևույթ չէ: Դա կոչված է ըստ ամենայնի քացահայտելու ոչ միայն kumemuše-ի նշանակությունը, այլև ուրարտերենում առայժմ անհայտ այդ քառի և վաղուց հայտնի BE.LI-ի փոխհարաբերությունը:

Եվ, այսպես, kumemuše-ն և BE.LI-ն համատեղ հիշատակվում են սուկ Ռուսա II-ի Արծկե-Աղիլքևազի և Կարմիր-քյուրի պակասավոր իդեմտիկ արձանագրություններում: Առկա նյութի քննարկման համար նպատակահարմար ենք գտնում հենց սկզբից ստորև ներկայացնելու հիշյալ սեպագիր տեքստերի kumemuše և BE.LI քառերի հետ առնչվող հատվածների գիտական տառադարձումը: Ի դեպ, դրանց համատեղ ցուցադրումը կարևոր է, մի կողմից, տեքստերի պակասավոր հատվածների փոխադարձ վերականգնումների, մյուս կողմից, նրանցում առկա փաստական նյութի առայժմ աննկատ մնացած որոշ տարրերակների քննարկման ընթացքում հետաձուտ լինելու համար: Սիս այդ հատվածները:

1. ...<sup>20</sup>Ru-sa-a-še a-li a-lu-še KÜ ku-me-mu-še BE.LI SIKIL <sup>4</sup>Hal-di-<na-ni KÁ ha-ó-li> NA<sub>4</sub> 'a-hu-li-i-ni a-li-e a-še su-nu-e i-ra-i-du-l<i ku-me-mu-še GIS> a-mu-li-ni KJ<sup>TM</sup> 'a-qu-ul-di-ni-ni a-li-e KÜ iš-ti-ni ma-nu-l[i te-er-du-li-ni É?]<sup>2</sup>

2. ...<sup>20</sup>Ru-sa-a-še <a-li a-lu-še KÜ ku-me-mu>-še BE.LI SIKIL <sup>4</sup>Hal-di-na-ni KÁ ha-ó-li <NA<sub>4</sub> 'a-hu-li-i-ni a-li-e> a-še su-nu-e i-ra-i-du-li

ku-me-mu-še GIS ... <a>-mu-li-ni KI<sup>TM</sup>-a qul-di-ni-ni a-li KÜ <iš-ti-ni ma-nu-li te-er>-du-li-ni<sup>2</sup> a-du-nu-si-ni...<sup>3</sup>

Նախքան այս տեքստերի քննարկմանը անդրադառնալը, կարծում ենք, արժե հակիրճ երկու խոսք ասել կառուցած բառի առթիվ մրանց առաջին հրատարակիչների կողմից ցուցաբերված մտածելոճների մասին: Արժկե-Աղիջըհազի պակասավոր արձանագրության հրատարակիչ Պետեր Հյուլինց, օրինակ, նույնիսկ այդ բառի կապակցված ըմբերքման վերաբերյալ վերջնական համոզմունք չի ունեցել, այդ պատճառով էլ արձանագրության գիտական տատաղարձման մեջ այն պարտահայտել է վանկագրերի տարանջատված *ku me mu še* եղանակով<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է տողերիս հեղինակին, ապա մա Կարմիր-բլուրի իդեմտիկ արձանագրության մախնակն հրատարակության ժամանակ հիշյալ բառի կառուցած կապակցված ըմբերքման վերաբերյալ ոչ մի կասկած չի տածել, քանի որ այն փորագրված է KÜ զարգիպարագրի և BE.LI «զեմք» բառի միջև: Սակայն ամհրասժեշտ կովաններ յունենալու պատճառով կառուցած բառիմաստին մենք ստիպված չենք անդրադարձել<sup>5</sup>: Իսկ հետագայում, մեր նոր դիվանի հրատարակության մեջ, ընդամենը կասեի ենք, որ կառուցած-ն, ըստ երևույթին, ինչ-որ առարկայի անվանում է, որը համդես է գալիս արձանագրություններում պաշտամունքային արարողությունների ժամանակ «զեմքի» (BE.LI) հետ միասին<sup>6</sup>:

Այս հակիրճ մախնաբանից հետո մշենք, որ Արժկեի և Կարմիր-բլուրի վերոհիշյալ պակասավոր արձանագրությունների ցիտված հատվածները, ցավոք, որոշակի ոչինչ չեն պարունակում ոչ կառուցած բառիմաստի, ոչ էլ BE.LI-ի հետ նրա ունեցած փոխառնչության մասին: Այդ արձանագրությունների տվյալների համաձայն, կարծես, մի կողմից կառուցած-ն, BE.LI-ի նման, ինչ-որ առարկա է և դրանց կոզոպատոդ Խաղյամ տանարից ձեռնարկողների նկատմամբ (սեմե KÜ կառուցած BE.LI SIKIL <sup>6</sup>Hal-dinani KÁ ha-li) մախնառեսվում է պատիժ: Մյուս կողմից, ընդհանուր առմամբ նկատել ենք, որ կառուցած-ն կրում է KÜ, իսկ BE.LI-ն՝ SIKIL զարգիպարագրի մակդիրները:

Ի դեպ կառուցած բառիմաստի քացանայտման պարագայում որոշակի առաջընթաց նկատվեց վերջերս, երբ 2001թ. հրատարակվեց Ռուսա Ռ-ի Այանիսի նորահայտ ծավալուն արձանագրությունը: Ինչպես արդեն հայտնի է, նրա հատվածներից մեկում առկա է Արժկեի և Կարմիր-բլուրի պակասավոր արձանագրությունների մեզ հետաքրքրող տեքստերի տարբերակը: Սես այդ տեքստը.

3. ...<sup>7</sup>Ru-sa-a-še a-li a-lu-še KÜ TUKUL BE.LI SIKIL <sup>6</sup>Hal-dinani KÁ-ni ha-š-li-e NA<sub>4</sub> 'a-ju-li-ni a-li a-še su-nu-e i-ra-i-du-li TUKUL<sup>MS</sup> GIS<sup>MS</sup> ... a-li KÜ iš-ti-ni] ma-nu-li te-er-du-li-ni<sup>2</sup> a-du-nu-si-ni...<sup>7</sup>



Ռուսա II-ի Այանխի նորահայտ և իրանալի պահպանված արձանագրության այս հատվածը, ինչպես դա ըստ ամենայնի ակնառու է, բավական շատ ընդհանրություններ ունի նույն բազալորի Արծկեի KYKH, 415 և Կարմիր-բլուրի KYKH, 425 պակասավոր արձանագրությունների վերոհիշյալ հատվածների հետ: Երկու դեպքերում էլ կրկնվում են BE.LI SIKIL-ը և GİS-ը կամ GİS<sup>2</sup>-ը, գաղափարագիր GIBIL-ին փոխարինում է նրա ուրարտերեն անունի համապատասխանությունը, KI<sup>1</sup>-a-ին՝ ուրարտերեն գլառ-ն և այլն: Սակայն, ցնցող նորայքը, այնուամենայնիվ, այստեղ հանդիսանում է Այանխի նոր արձանագրության KÙ TUKUL BE.LI SIKIL-ը, որը փոխարինում է Արծկեի և Կարմիր-բլուրի իղնձտիկ պակասավոր տեքստերի KÙ kumemše BE.LI SIKIL տարբերակին: Հետևաբար, այս իղնձտիկ արձանագրությունների համապատասխանությունը ամենևին կասկած չի հարուցում, որ Այանխի արձանագրության գաղափարագիր TUKUL-ը (ստորնստամյան kakku-ն) հանդիսանում է ուրարտերեն kumemše անհայտ բառիմաստի բացահայտումը:

Ասեմք, որ ուրարտերեն kumemše և շումերերեն TUKUL «զենք» համադրությունը մեր ուշադրությունը գրավել է դեռևս Այանխի նորահայտ արձանագրության հրատարակությանը 2001թ. ծանոթանալու պահին: Սակայն KYKH, 415 և KYKH, 425 արձանագրությունների kumemše (resp. TUKUL) և BE.LI զենքերի կողք-կողքի ինչատակվելու և մասնավոր նրանց KÙ և SIKIL զանազան մակդիրներ կրելու իրողությունը մեզ երկար ու ձիգ մտորելու տեղիք է տվել: Իսկ Միգրա Սավինին Այանխի նորահայտ արձանագրության հրատարակության պահին այդ հարցին ամենևին չի անդրադարձել, այն դեպքում, երբ վերջերս kumemše-ն, TUKUL-ը և BE.LI-ն միանշանակ «զենք» (arma) է անվանում<sup>8</sup>: Այդ դեպքում ինքնին հարց է ծագում, թե եթե այդ զենքերի միջև իրոք գոյություն չունի որևէ տարբերակում, ապա ի՞նչպես են նրանք կրկնակի ինչատակվում տեքստերում կողք-կողքի, կամ էլ ի՞նչու են կրում զանազան մակդիրներ՝ KÙ TUKUL կամ KÙ kumemše, բայց BE.LI SIKIL:

Հետևաբար, արժե այժմ անդրադառնալ, մի կողմից, TUKUL-ի կամ ուրարտական kumemše-ի KÙ և, մյուս կողմից, BE.LI-ի՝ SIKIL մակդիրների քննարկմանը:

Այսպես, շումերական TUKUL-ի կամ ուրարտական kumemše-ի KÙ գաղափարագիր մակդիրը, որպես կանոն, շումերերենում մեկնաբանվում է «ամենը»<sup>9</sup>: Իսկ շումերական TUKUL-ը, ինչպես նայտնի է, համապատասխանում է ակկադերեն kakku-ին, որը եթե Ռիկլե Բորգերը միանշանակ համարում է «զենք», ապա Վ. Ֆոն Զոդենը այդ բառի առաջնային նշանակությունը համարում է «զավազանը», «ցուպը» և մյայն երկրորդայինը՝ «զենքը»<sup>10</sup>:

Մակայն, եթե այս կամ այն չափով պարզ է **KÜ** կառուցած - **TUKUL**-ի հարցը, ապա շատ ավելի անորոշ է վիճելի է մնում առայժմ **BE.LI SIKIL**-ի խնդիրը: Ընդ որում, այդ անորոշությունը կապված է ոչ թե **BE.LI**-ի, այլ նրա **SIKIL** մակերկրի հետ: Վաղուց ի վեր հայտնի է, որ ուրարտական արձանագրությունների **BE.LI**-ին դա ասորեստանյան **ե՛ն**ս **II-ն** է և, **TUKUL**-ի ու կառուցած-ի նման, զարմանալիորեն նույնպես «զենք» է նշանակում<sup>11</sup>: Այդ դեպքում ինքնին հարց է ծագում, թե ի՞նչով են տարբերվում իրարից միևնույն տեքստերում կողք-կողքի հիշատակվող այդ **TUKUL**-կառուցած և **BE.LI**-**ե՛ն**ս **II** զենքերը:

Ի դեպ, եթե նկատի ունենանք, որ կառուցած-**TUKUL** զենքը, **KÜ** - մակերկրի համաձայն, «ամենը զենք» է, ապա այդ դեպքում **BE.LI** զենքի առանձնահատկությունը, թվում է, թե պետք է լրծի նրա **SIKIL** մակերկրը: Մակայն այստեղ խնդիրը ծայր աստիճանի քարայնում է այն հանգամանքով, որ ակկադերենի քառաբանմանը փաստորեն անկարող են դուշակի պատասխան տալու այդ առեղծվածին: Ռ. Բորգերի քառաբանում, օրինակ, առկա է երկու տեսակ **SIKIL**՝ լեքնց **Ս** (**ՏԱՄ**) և **NA<sub>4</sub>** դեռերմինատիվներով, որոնք, հիշյալ դեռերմինատիվների համաձայն, համապատասխանաբար անորոշ մեկնաբանվում են «ինչ-որ բույս» և «ինչ-որ քարատեսակ»<sup>12</sup>: Հետևաբար, պարզորոշ երևում է, որ այս **SIKIL**-ները ոչ մի առնչություն չունեն մեզ հետաքրքրող **BE.LI** «զենք» **SIKIL**-ի հետ:

Դժբախտաբար, շատ ավելի առեղծվածային է **SIKIL**-ի քացահայտման խնդիրը Վ. Ֆոն Ջոդենի ակկադերենի եռահատոր քառաբանի **I** հատորում, որտեղ մեզ հետաքրքրող **SIKIL**-ը, չգիտես ինչու, նույնացվում է **KÜ**-ի հետ<sup>13</sup>: Հետևաբար, հայտնվում ենք այնպիսի անելանելի վիճակում, թե ի՞րր մեզ հետաքրքրող երկու զենքերն էլ (և՛ կառուցած-**TUKUL**-ը, և՛ **BE.LI**-ն) եակասարապես ամենը զենքեր են: Այն դեպքում, երբ դա, համարձակ կարող ենք պնդել, ըստ ամենայնի քացատվում է:

Ինչպես հայտնի է, բոլոր մեզան կարգի առեղծվածային հանգամանքներում, որպես կանոն, օգնության են հասնում ուրարտերենի անհայտ քառապաշարի շումերական գաղափարագիր տարբերակների քացահայտումը: Հեռու յգմանք, հենց խնդրո առարկա ուրարտերեն կառուցած քառաբանի քացահայտումը, ինչպես այդ մասին հիշատակվեց վերևում, առիթ է ունեցել սուկ վերջերս՝ նրա շումերերեն **TUKUL** «զենք» տարբերակի առկայության շնորհիվ: Մակայն, ցավոք, շումերական **SIKIL** մակերկրը, սովյալ դեպքում հնարավորություն չի ընձեռում քացահայտելու **BE.LI**-**ե՛ն**ս **II** զենքի առանձնահատկությունը:

Այնինչ կառուցած-**TUKUL**-ի «ամենը զենք» (**KÜ** կառուցած կամ **KÜ TUKUL**) լինելու հանգամանքը, որը սեպագիր տեքստում փաստորեն եակադրվում է **BE.LI SIKIL** զենքին, ակամայից ի սկզբանե մեզ մղել է այն մտքին, որ վերջինս երկի ինչ-որ տեղ եղել է «մեղավոր», այսինքն՝

ազմական գործողությունների ժամանակ գործադրվող զենք: Եվ այդ ուղղությամբ ձեռնարկված մեր երկարատև ու համառ պրպարումներից հետո, քաղաքախտաքաք, ի վերջո վրա է հասնում նվիրական արդյունքը. հայտնաբերվում է ուրարտական սեպագիր աղբյուրներում, սակ մի անգամ Սաքուրյան ասորեզոության եզրափակիչ սյունակում հիշատակված, BE.LI SIKIL-ի ուրարտական տարբերակը՝ BE.LI<sup>MES</sup> gusūniēi «զենքեր մատակարարող»<sup>14</sup>: Իսկ դա, կարծում ենք, նշանակում է որ այս քաղաքի և դառ ամենայնից ցնցող փաստի հիման վրա ակկադերենի քաղաքաններում երևի ինտագայում հարկ լինի շումերական SIKIL-ը ուրարտերենի gusūniēi նրա տարբերակի հիման վրա համարձակորեն ստուգարանելու որպես «մատակարար»:

Ի դեպ հատկանշական է, որ «մատակարար զենքը» (BE.LI gusūniēi), ի տարբերություն «ամենը զենքի» (KÚ kumemūše), ուրարտական պաշտամունքային բնույթի արծամագրություններում հանդիպում է հաճախ, դառ որում, կամ ամենուրեք փառաբանվում է, կամ էլ ուրարտական աստվածների և տաճարների հետ միասին, նրա պատվին ձեռնարկվում են խոշոր ու մանր եղջերավոր անասունների զոհաբերություններ: Այսպես, Իշպուխմի և Մեմուայի Քելիշիմի KYKH, 30 երկնագլխյան արծամագրության ասորեառանյան տեքստում BE.LI-ն կրում է շումերական SIG, «հիանալի» մակդիրը և Խաղյան տաճարին մատուցված առարկաների և կենդանիների թվարկման մեջ զբաղվում է առաջին տեղը: Ուրարտական BE.LI զենքը «հիանալի» մակդիրով է հռչակվում մաս, այս անգամ արդեն ուրարտերենի gazuni քառով, Ռուսա II-ի Արծկիի KYKH, 415, Կարմիր-թլուրի KYKH, 425 և Այանիաի նորահայտ (Ayanis I, սեկցիա III) արծամագրություններում:

Այնուհետև, համատարած երևույթ է ուրարտական պաշտամունքային բնույթի արծամագրություններում կենդանիների զոհաբերությունները Խաղյան զենքերի (<sup>4</sup>Haldinašae BE.LI<sup>MES</sup>) պատվին: Այսպես, Իշպուխմի և Մեմուայի Աշտուակերտի KYKH, 36 արծամագրության կրկնվող երկու տեքստերում էլ նորակառույց տաճարում (qušaleni šehinaš) զերագույն աստված Խաղիի, նրա կնոջ Վարուրանիի և Խաղյան տաճարի պատվին զոհաբերվելիք կենդանիների արարողության ժամանակ նույնքան մեծ պատիվ է մատուցվում մաս Խաղյան զենքերին: Նույնը պետք է ասել Իշպուխմիի և Մեմուայի Մեերի դրան KYKH, 38 արծամագրության մասին, որում Խաղյան զենքերին ևս զոհաբերվում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Ի դեպ հատկանշական է, որ այստեղ Խաղյան զենքերը (<sup>4</sup>Haldinašae BE.LI<sup>MES</sup>) հիշատակվում են ուրարտական աստվածների թվարկման նույնիսկ սկզբնական հատվածում<sup>15</sup>, այն դեպքում, երբ Խաղյան զորքերին (<sup>4</sup>Haldinašae <sup>10</sup>A.SI<sup>MES</sup>) մա-

տուցվելիք կենդանիների զոհաբերությունները նշվում են սուկ աստվածների շարքը ավարտվելուց հետո:

Համարյա նույնը կարելի է ասել Ռուսա II-ի Կարմիր-բլուրի KVKH, 424 ծավալում արձանագրության մասին, որում կենդանիների զոհաբերությունների ժամանակ Խաղյան զենքերը անմիջապես հաջորդում են զերազույն աստվածներ Խաղիին, Քեչչեբային, Շխինին, զիրազույն դիցուեի Վաչուրանին և մամազանդ մախուրում են Խաղյան տաճարին (<sup>4</sup>Haldinase KĀ): Ի դեպ, Խաղյան զենքերը մախուրում են Խաղյան տաճարին մաս ուրարտական այլ սեպագիր տեքստերում<sup>16</sup>:

Այսու կողմից հայտնի է, որ ուրարտական արձանագրություններում BE.LI-ին ներքին փոխարինում է GIS II-ը: Օրինակ՝ Ռուսա II-ի Արծկեի KVKH, 415 և Կարմիր-բլուրի KVKH, 425 պահպանված արձանագրություններում ասկա է մերթ կառուցած BE.LI, մերթ էլ կառուցած GIS<sup>17</sup>, իսկ Այանիսի նորահայտ արձանագրության մեջ մի դեպքում՝ TUKUL BE.LI, մյուս դեպքում՝ TUKUL<sup>MS</sup> GIS<sup>MS</sup>: Դա, անկասկած, ինքնին վկայում է, որ GIS II-ը փաստորեն նույն BE.LI-ն է: Ի դեպ նրկու դեպքում էլ GIS II-ները սեպագիր տեքստերում փորագրված են ստղաձևերով: Իսկ դա նշանակում է, որ ստղաձևերի ազատ մնացած ամենյան հատվածը հնարավորություն է ընձեռել փորագրելու BE.LI-ի սուկ «կարճ» տարբերակը՝ GIS II-ը: Որոշ դեպքերում էլ հիշյալ տեքստերում նույնիսկ KŪ կառուցած-ն, այսինքն՝ «ամենդ զենքը» ամբողջական կրկնելու փոխարեն ասկա է սուկ նրա KŪ «ամենդ» մակդիրը: Երկու կրկնվում է Ռուսա II-ի Այանիսի իդեմոտիկ արձանագրության մեջ Kd կառուցած-ի շումերական տարբերակի դեպքում՝ Kd TUKUL, «ամենդ զենք»-ի փոխարեն՝ պարզապես KŪ «ամենդ»<sup>18</sup>:

Այսպիսով, ինչպես քաջահայտվեց վերևում, շումերական TUKUL և ակկադական kaku «ամենդ զենքի» ուրարտական համապատասխանությունը համոզիսանում է կառուցած-ն: Այդ դեպքում, քնակամարայ, հարց է ծագում, թե ո՞նի, այդպե՞ս, իր ուրարտերին համապատասխանությունը մաս շումերական GIS II և ակկադական BE.LI (<sup>GIS</sup>be-le) «մարտական զենքը»: Կարծում ենք, որ այդ հարցին համարձակորեն կարելի է տալ դրական պատասխան: Ելնելով ուրարտական արձանագրությունների այդ առթիվ մատուցած հարուստ փաստական նյութից, հազիվ թե կասկած հարուցի, որ BE.LI-ի և GIS II-ի ուրարտերին համապատասխանությունը եղել է հենց ամենուրեք հայտնի <sup>(GIS)</sup>šuri-ն: Դա նույնն է, ինչ խորրիներին šuri-ն<sup>19</sup> և հայերեն «սուր»-ը<sup>20</sup>:

Ակկադա-ուրարտական BE.LI gusušinoi մասն, ուրարտական <sup>(GIS)</sup>šuri-ի մարտական զենք լինելու համոզիչ վկայություն կարելի է համարել այն փաստը, որ այդ զենքով են, իբրև մախիթրանք, սկսում ուրարտական տարեգրությունները յուրաքանչյուր տարվա ռազմական արշա-

վանքները, երբ գերագույն աստված Խալդին իր զենքին (*masinie*<sup>21</sup> *šurie*) ամեն անգամ հպատակեցնում է քազում ամհնազանդ երկրներ: Հենց այդպես է Խալդին ուժեղ, Խալդյան զենքը ուժեղ (*šaldin kuruni šaldini*<sup>22</sup> *šuri kuruni*): Այդ զենքի առթև է մաս պատերազմների ժամանակ աբշախանքի օբյեկտ դարձած երկրների սարսափահար քնակչությունը փախտստի դիմում ընդդեմ քարձոցադիր լեռները (*šUKU*<sup>23</sup> *šurini-kaini kulšaršibi šatuni*<sup>24</sup> *šUKiani*<sup>25</sup> *šaruni*)<sup>26</sup>: Ղա քավական մամն է Խալդյան այն զենքերին (*šaldinaše BELI*<sup>27</sup>), որոնց պատվին պաշտամունքային արարողությունների ժամանակ, աստվածների հետ միասին, կատարվում են խաչոր և մամը եղջերավոր անասունների համատարած գոհաբերություններ:

Ինչ վերաբերում է *KU kumemuse* կամ *KU TUKUL*<sup>28</sup> «ամենը զենքերին», ապա նրանք պաշտամունքային արարողությունների ժամանակ տակ հազվադեպ հիշատակվում են մարտական զենքերի կողքին, երբք չեն առնչվում գերագույն աստված Խալդիի անվան հետ, նրանց պատվին չեն մատուցվում կենդանիների գոհաբերություններ: Մի խաբքով, նրանք չեն համոզիսամում պաշտամունքի և ուշադրության հատուկ առարկա: Հեռուարար, ելնելով դրանից և նրանց հղված *KU* «ամենը» մակդիրից, կարելի է ենթադրել, որ ամենը զենքերը, ի տարբերություն *BELI gunušini*-<sup>29</sup> *šari* մարտական զենքերի, հավանաբար հանդիսացել են արվեստի և զարդարանքի առարկաներ: Ուստի նրանց տակ, ըստ երևույթին, ենթադրվում են զինագործության հետ առնչվող քարձոցարվեստ այնպիսի առարկաներ, ինչպիսիք իրավամբ եղել են Մուսասիբի ուրարտական տաճարից մ.թ.ա. 714թ. ասորեստանցիների կողմից կողոպտված ոսկե և փղոսկրե սրերն ու դաշույնները, արծաթե միզակները և աղեղները<sup>30</sup>, հնագիտական պեղումներում հայտնաբերված քրոմիզե սեպագիր մակագրություններով<sup>31</sup> և այլն:

NICOLAY HAROUTHIOUNYAN

#### THE ETHIMOLOGY OF THE WORDS OF KUMEMUSE AND BELI OF THE URARTIAN CUNEIFORM

Based on the use of the substantive *kumemuse* with the sumerographical epithet *KU*, the author identifies *KU kumemuse* with the sumerogram *KU.TUKUL*, attested in Urartian inscriptions and suggests for it the translation 'innocent weapon'.

On the other hand, on the basis of the Urartian epithet *gunušini* of the akkadogram *BELI* 'weapon', which is considered to correspond to Urartian *GIŠ šuri*, *BELI gunušini* is interpreted as 'battle weapon'. It is also suggested, that the letter should be identified with the akkado-sumerographical writing *BELI SIKIL* and, hence, *SIKIL* should be regarded the sumerogram of Urartian *gunušini* 'of battle'.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. W. Von Soden, AHw, I, էջ 120:
2. Н.В. Арутюнян, КУКН, 415, ևսղեր 4-6:
3. КУКН, 425, ևսղեր 5-9:
4. P. Hulin, New Urartian Inscription from Adilcevaz, "Anatolian Studies", vol. IX, 1959, էջ 192, արձանագրություն 1, ևսղ 4:
5. Н.В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блуря, Ереван, 1966, էջ 48:
6. Н.В. Арутюнян, КУКН, էջ 452:
7. A. Çilingirođlu, M. Salvini, Ayanis I, Roma, 2001, էջ 257, սկզբիս IV, ևսղեր 2-5:
8. Mirjo Salvini, Note di lessico urarteo, SMEA, XLIV/2, Roma, 2002, էջ 339-340:
9. R. Borger, ABZ, էջ 178-179 (No. 468), 317; W. von Soden, AHw, I, էջ 204:
10. R. Borger, ABZ, No. 536; W. von Soden, AHw, I, էջ 422:
11. W. von Soden, AHw, I, էջ 120:
12. R. Borger, ABZ, No. 564:
13. W. von Soden, AHw, I, էջ 204:
14. Н.В. Арутюнян, КУКН, 241G, ևսղ 9:
15. Նսլյնի, КУКН, 38, ևնքստ I, ևսղ 7; ևնքստ II, ևսղ 10:
16. Аyanis I, սկզբիս I, ևսղ 11; սկզբիս V, ևսղ 7-8:
17. Н.В. Арутюнян, КУКН, էջ 416:
18. Аyanis I, սկզբիս IV, ևսղեր 3-4:
19. V. Haas, Or.Ant., II (1973). E. Laroche, RHA, XXXV, էջ 219; М.Л. Хачикян, ХУ, էջ 48:
20. Г.А. Каланцян, О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений, Ar.Or., XVII, No. 1, 1949, էջ 371:
21. Н.В. Арутюнян, КУКН, 173, I, ևսղեր 17-19. 241A, ևսղեր 1-3, C, ևսղեր 19-23 և յլլն:
22. Նսլյնի, КУКН, 241, ևսղեր 26-27:
23. И.М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, "Вестник древней истории", 1951, № 2, էջ 331-332, § 49 (352, 367):
24. Н.В. Арутюнян, КУКН, ևսղառիս II, Որար 3. ևսղառիս CXXIV, Որար 1-2:

ՀԱՊԱՈՒՄՆԵՐ

КУКН — Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

ХУ — М.Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985.

ABZ — Rykle Borger, Assyrisch-babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978.

AHw – Wolfram von Soden, Akkadisches Handwörterbuch, I, Wiesbaden, 1965.

Ar.Or. – Archiv Orientalní (Prag).

Or.Ant. – Oriens Antiquus (Budapest).

RHA – Revue Hittite et Asiatique (Paris).

SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).

## ՀԱՄՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ

### ՀԵՐԱՏ ԱՍՏՎԱԾՈՒՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հերատ (Hebat, Heba, Hira) դիցուհին (պաշտամունքային կենտրոնը Խալպա՝ այժմ Հալեպ) խուրի-մխտանճիական և խեթական դիցաբանի գլխավոր աստվածուհին է և Թեշտրի՝ կայծակի և ամպրոպի աստծո կինը: Նրա անունը առաջին անգամ հիշատակվում է Էրլայի դիցարանում՝ *Դե-ս-ե-ս-սու* ձևով:

Մեդազիր աղբյուրներում այն ի հայտ է գալիս մ.թ.ա. I հազ.՝ *Դե-ե-ե-ս-սու*, *Դի-թ-ս-սու* ձևերով: Իսկ Օրփիեոսյան հիմներում նա *Hipta* ձևով մերկայանում է որպես Դիոնիսոսի դայակը: Սկսած մ.թ.ա. II հազ. Հերատի անունը՝ քասովեթյան սեմական իգականության / ցուցիչի անկումով համոզյալանում է ամձնանունների բաղկացուցիչ մաս. օրինակ, Պուդուհեպա (*Puduhepa*) և այլն: Մ.թ.ա. I հազ., ըստ Ֆ. Հասզի, Հեբաթը և Թեշտրը համարվում էին հյուսիսաիրիական և փոքրասիական մի շարք դիցաբանների (Աշալախ, Հալեպ, Խաբբուտա, Կունմաննի, Թարխունստատա) գլխավոր աստվածային զույգը՝ Խեթական դիցարանում Հերատի պաշտամունքը վկայված է Նոր քազավարության շրջանում (մ.թ.ա. 1400-1200), որին բնորոշ էր կրոնական սինկրետիզմը:

Խեթական դիցաբանության հնագույն շերտը ձևավորել են խաբեթը, որոնց գլխավոր աստվածներն էին Էստանը և Արիմնա քաղաքի Արևի աստվածուհին՝ Վարուսեմուն: Այնուհետև, Նոր քազավարության շրջանում Հերատը՝ Նիմվիի Եսվուշկայի կամ Իշտարի և Թեշտրի հետ կազմում են եռմիասնություն: Այդ մասին են վկայում խեթական աղբյուրների կնքած միջպետական պայմանագրերը, որոնք Հերատը հիշատակվում է որանց կնքմանը վկա խեթական աստվածների շարքում: Օրինակ, Սուպլիլիլիումաս I-ի և Միտաննիի աղբյուր Եատուիվազայի<sup>2</sup>, Մուպալիլուիլիումասի և Հալասայի աղբյուր Խուկկանայի<sup>3</sup>, Մուվատաղլիա II-ի (1295-1272) և Վիլուտայի աղբյուր Ալակասանդուսի միջև կնքված պայմանագրերը<sup>4</sup>: Այս տեքստերում Հերատը բնութագրվում է որպես երկնքի տիրուհի, Հալեպի Հերատ, Կիցուվանտայի Հերատ<sup>5</sup>:

Խաբբուտի III-ի ժամանակներից սկսած, հատկապես նրա կնոջ՝ Իշտար աստվածուհու տաճարի քրմուհի Պուդուհեպայի կանոնակար-



գումնների արդյունքում խեթական և խառնիակական աստվածությունների միջև ստեղծվեց որոշակի սինկրետիզմ: Դրա արդեն հետագա արտահայտությունը մենք տեսնում ենք Արիննայի Արևի աստվածուհուն ուղղված նրա աղոթքի տողերում. «Նա ասում է, - Խաթթի երկրում դու կրում ես Արիննայի Արևի աստվածուհու անունը, քայց այն երկրում, որ դու դարձրել ես մայրիների երկիր, դու կրում ես Հեբատ անունը»<sup>6</sup>: Հայտնի է նաև, որ երազում տեսնվելով Հեբատ աստվածուհուն, Պուրոհեպան խոստանում է կանգնեցնել նրա ոսկյա արձանը: Հեբատին վերագրվող մի ոսկե արձանիկ գտնվել է և պահվում է Շիմնելի մասնավոր հավաքածուում: Ֆրանսիացի ուսումնասիրող Մ-Կ. Տրենտիլը, անդրադառնալով Հեբատի պատկերագրությանը գրում է, որ աստվածուհու արձանը նկարագրվող մի տեքստ է պահպանվել, որտեղ այն նկարագրվում է ոսկուց պատրաստված այրերով, փայտե գավազանով, կոշիկներ և գլխազանք հագած<sup>7</sup>: Այստեղից պարզվում է արձանների պատրաստման եղանակը՝ փայտե՝ վրայից արծաթագոծ կամ ոսկեգոծ: Հեբատի պատկերը պահպանվել է նաև Բողազքայում. Յագըրքայայի քարձրաքանդակներից մեկի վրա Հեբատը պատկերված է հովազի վրա կանգնած, գլխին կլոր գլխարկ և երկար հագուստով: Խեթական տեքստերը Հեբատին քնորոշում են որպես «երկնքի տիրուհի», «երկնքի քագուհի»: Նա ունեցել է նաև գլխավոր մայր դիցուհուն քնորոշ գծեր:

Հեբատ աստվածուհու խառնիակական ծագումը կասկածի տակ են առել մի շարք գիտնականներ, ինչպես նաև Ի. Գեյրը, որը մի շարք մեկնաբանություններից հետո քերում է այն փաստը, որ «Hi-ra-tu կամ «Hi-ra-tu ձևերով Հեբատի անվան վկայությունը խեթական էփրոզգիլիի արձանագրություններում և Մեոնիայից գտնված երկու հունական արձանագրություններում կասկածի տակ են առնում այն հանգամանքը, որ նա եղել է խառնիակական աստվածուհի»<sup>8</sup>:

Գ.Ղափանցյանը իր աշխատություններում անդրադարձել է այս աստվածուհու պաշտամունքին և նրա կարծիքով Հեբատը իր քնորոշ գծերով պահպանվել է հայերենի բառապաշարի (հայտ, հուպիտ, հպտիմ, հպտանք, խտպտանք և այլ) քառերում, որոնք բացի «միմուս, խեղկատակ, ծաղրածու» իմաստներից, նշանակում են նաև «այրամք, պաճուճանք, խենչ, մեղկ, պաճուճի, զարդարուի, շփամալ, մեղկութուն, զարդք, սեքևեքք»<sup>9</sup>: Հարկ է նշել, որ վերոհիշյալ «հպիտ, հուպիտ...» բառերի ծագումնաբանությունը հստակ չէ, անգամ Հր. Աճառյանը չի ստուգաբանում դրանք: Գ. Ջահուկյանը, հատուկ անունների ղափանցյանական մեկնությունները քննարկելիս, չի անդրադառնում վերոհիշյալ մեկնաբանությանը:

Բազմաթիվ են օրինակները, երբ դիցանունը իր քնորոշ հատկանիշներով վերածվում է հասարակ անվան, կամ այլ անուն ստանալով

պահպանում է իր էութունը՝ կերպարային առումով: Գրա վկայությունն է քերև Ղափանցյանի վերահիշյալ տեսակետը (Hebat՝ հայերեն հայտ, խցադտիտ անցումը): Բացի այդ, Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Հեբատը իր հիմնական գծերով համադրելի է հայկական դիցաբանի Անահիտ աստվածուհուն, որ ընտանիք իր իրանական անվանը, շարունակել է պահպանել աստվածների մոտ կերպարը և ունեցել է Իշտարին բնորոշ գծեր<sup>11</sup>:

Անահիտի պաշտամունքը իր հիմնական գծերով մ.թ.ա. II հազ. կեսերին արդեն ծաղկոթված է եղել Հայկական լեռնաշխարհում<sup>12</sup>: Մեր կարծիքով, եթե Հեբատ աստվածուհին պաշտվել է Հայաստան և Եուրբիսայում (երկրներ, որոնք մեծ դեր են ունեցել հայերի ծագումնաբանության գործընթացում), հնարավոր չէ, որ հետագայում Հայաստանի և Եուրբիսայի միջոցով Հեբատի, ինչպես նաև Թեշտրի պաշտամունքները շտապածվեին Հայկական լեռնաշխարհի մյուս մասերում: Եվ հետո միայն իրանական ազդեցության շրջանում նրանք համապատասխանաբար առաջել են Անահիտ<sup>12</sup> և Վահագն անունները: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հեթանոսական Հայաստանի գլխավոր պաշտամունքային կենտրոնները մեծ մասամբ տեղադրված էին մախկին Հայաստանի տարածքում: Պատահական չէ նաև, որ Անահիտ, Վահագն և Աստղիկ աստվածությունների մեկամեկը գտնվում էին կողք կողքի:

Անահիտ աստվածուհին հայ հեթանոսական դիցաբանում պտղաբերության, արգասավորության, ծննդաբերության աստվածուհին է, որի պաշտամունքի հետ է կապված նաև կրոնական հետերիզմը, երևույթ, որ լայնորեն տարածված էր ողջ հին աշխարհի մայրության կամ սիրտ աստվածուհիների տաճարներում: Անահիտի գլխավոր պաշտամունքային կենտրոններն էին Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանը (ամբողջ գավառը կոչվել է Անահիտական), Աշտիշատը, Արմավիրը: Գ. Ղափանցյանը ասաֆինն է արձանագրել, որ Սյունիքի շրջանի Անատա ձորը ևս կապված է Անահիտի պաշտամունքի հետ<sup>13</sup>: Նրա պաշտամունքը առնչվում է նաև բուսականության, բուժիչ հատկությունների հետ (երևույթ, որ բնորոշ է Հեբատին և Կիրեղեին), ինչպես նաև մա ունեցել է ռազմի աստվածուհու հատկանիշներ:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով Անահիտ և Աստղիկ դիցուհիների պաշտամունքը մախսպես միասնական է եղել, իսկ այնուհետև երկփեղկվել է:

Այս առումով հետաքրքրական է, որ Նուզիի շրջակայքում որպես Թեշտրի կին ընկալվում էր ոչ քե Հեբատը, այլ Նիմվեի Իշտարը:

Հայտնի է, որ հայկական դիցաբանում Իշտարին համապատասխանում է Աստղիկը, որը հայ հեթանոսական դիցաբանի երկրորդ կարևոր աստվածուհին էր: Նրա անվան մասին Գ. Չախուկյանը գրում է,

որ «Աստղիկ և Աստղ հիմքը գալիս է հայերեն «աստղից»: Աստվածուհիներ են նշանակում մասնատող նշանակող հնդեվրոպական քառերի սեռական գոգահետները՝ արքայերին *Istar*, փյունիկերին *Աստարտա* են»<sup>14</sup>: Եւս համարվել է սիրո և ջրի աստվածուհի: Գլխավոր մեխանքը գտնվել է Աշտիշատում, Վահագնի և Անահիտի մեխանքների կողքին և կոչվել է Վահագնի սենյակ, որը հին հայերենում ունի մասն «հարս» նշանակությունը: Հետարքրակյան է, որ Ուրի երկրորդ դինաստիայի ժամանակաշրջանից (մ.թ.ա. XXII) պահպանվել է Ինաննային (խոտիական Շավուշկա) նվիրված մի հիմն, որտեղ Ինաննան որպես շողացող աստղիկ երևացել է աստվածուհի աստղի մեծ և որպես պատերազմի աստվածուհի մրս պատվին խաղեր և երգեր են կազմակերպվել, որի ժամանակ դուրս են բերել ուսումնականներին, իսկ կամայք հետերաների զգեստներ են կրել: Հայտնի է մասն, որ հայկական դիցաբանում թե Աստղիկ և թե Անահիտ աստվածուհիները ունեցել են մասն ուսումնական աստվածուհիների հատկանիշներ:

Բազմաթիվ են օրինակները, երբ աստվածուհիներն պաշտամունքը, անցնելով այլ ժողովուրդներին, կորցնում է իր հատկանիշների մի մասը կամ ստանում նորերը՝ պահպանելով, սակայն, մի շարք բնորոշ գծեր: Հայտնի է, որ որոշ գիտնականների կողմից Հեբրատ աստվածուհու արևոնը համարվել է ամազոնուհիների քազուհի Հիպոլիտի, քրակյան *Meter-Hipta*-յի և հունական Հերե աստվածուհիների հետ<sup>15</sup>: Հունական դիցաբանի Հերե աստվածուհին Չևսի և Հերայի դուստրն է, որը Հերակլեսի աստվածամայրուց հետո դասում է մրս երկմային կինը: Հերին բնորոշ հատկանիշներն էին հավերժ երիտասարդությունը, կենսախնդրությունը, պատանեկությունը, մա պատկերվել է արջմակի տեսքով, ծաղկեսպակով, գինու քաթակը ձեռքին: Օլիմպոսում մա աստվածներին նկատար էր մատուցում: Պափսիանասի վկայությամբ Հերին տաճար մտնող ստրուկը ազատություն էր ստանում<sup>16</sup>:

Հետարքրակյան գոգահետ այս վերջին փաստի հետ կարելի է տեսնել մասն Շուրրիայի հավատալիցներում, որտեղ գլխավոր աստվածն էր Թեշուրը: Շուրրիայի տիրակալին հղված Ատրեստանի արքա Ասարհադրոնի մամակներից մեկում նշվում է *Մեծ տիկնոջ* տաճարում վախտականների ներում ստանալու և հետ ուղարկելու պահանջի մասին<sup>17</sup>: *Մեծ տիկնոջ*՝ այսինքն Թեշուրի կինը, այստեղ շատ հավանական է, որ լիներ Հեբաղը:

Անդրադասմանը վերոհիշյալ աստվածուհիների ամուսիններին, որոնք ինչպես կտեսնենք ստորև՝ ոչ միայն լեզվական, այլև կերպարային առումներով համախա մույնամում են: Հեբրատ աստվածուհու ամուսինն էր Թեշուրը (պաշտամունքային կենտրոնը՝ Կունենում), որը ամազոնայի, կայծակի խոտի-մխտանիական և խնքական աստվածություն էր:

Ուրարտական դիցարանում Թեշուրը նույնանուն է Թեյշերայի հետ և երկրպագվել է նաև Շուրքիայում: Թեշուրի անունը համադրվել է Թեօսայի<sup>18</sup>, իսկ կերպարը՝ Հեթակլեայի հետ: Այդ մասին է գրում Մ.Ասքուրը, որը գտնում է, որ Պավսիասնասի վկայած բնակչական Հեթակլեայի արձանը իր բնույթով խիստ տարբերվում է հերոսի մյուս արձաններից: Այն ավելի մեծան է Ուգարիտից քաջ հայտնի Բասայի պատկերով քարձրաքանդակին և հյուսիսափրիական բրոնզյա Թեշուրի արձանին, որ պահվում է Գազզոյի թանգարանում<sup>19</sup>: Ի վերջը կասկածի տակ է առնում Թեշուր աստծու խոտիական լիմեղու փաստը, հայտնելով այն միտքը, որ հնարավոր է, նա վերցված լինի մեկ այլ էրեթի խմբի դիցարանից<sup>20</sup>: Այս տեսակետի օգտին են խոսում բերև, նաև Ս. Հմայակյանի կողմից Թեշուրի և Հայկ մահապետի կերպարային անչլոթյունների մասին դիտարկումները: Նա գրում է. «Կարծում են հայերը Հայկին երբեք չեն անվանել Թեշուր կամ Թեյշերա, սակայն այդ կարող էին անել հարևանները, Հայկին կոչելով ավելի հանրահայտ Թեշուրի անունով»<sup>21</sup>:

Ինչ վերաբերում է Հեթակլեային (Հեթի ամուսնուն), ապա նա հունական աշխարհի ամենաժողովրդայական հերոսն է՝ Չևսի և Ալկմենեի որդին, որը ծնվել էր Թեբեում: Նա իր մեջ կրում է արևելյան արեգակնային աստվածուքյան տարրեր: Այդ են վկայում մի շարք փաստեր, ինչպես նաև հիսուն թվի սիմվոլիկայի անկայությունը նրա կերպարում: Հեթակլեայը մեկ գիշերվա մեջ հղիացնում է Թեպլիեայի ձիսուն աղջիկներին: Այս հիսուն թվի սիմվոլիկան ըստ Մ. Ասքուրի ունի արևելյան ծագում, որ բնորոշ է քարեկացիներին և արևմտասեմական ժողովուրդներին<sup>22</sup>: Հեթակլեայի պատվին կատարում էին տոներ Թեբեում, Կես կղզում: Նրան էին ձանված բուծիչ և տաք աղբյուրները: Հեթակլեային բնորոշում էր անսահման քաջությունը, ուղղմունակությունը՝ հատկանիշները, այդ թվում նաև արևային պաշտամունքի հետ կապը, որոնք թույլ են տվել դեռևս 5-րդ դարի հայ պատմիչներին նրան նույնացնելու Վահագնի հետ (օրինակ, Մովսես Խորենացի):

Վահագնը հայկական դիցարանում պաշտվել է որպես արևի, ինչպես նաև կայծակի աստված: Նրա գլխավոր մեծիանը գտնվել է Աշտիշատում, պաշտամունքային կենտրոններ է ունեցել Վասպուրականում, Բարձր Հայքում, Դեբեան գավառում: Վահագնին նվիրված հատուկ տոներ կային, որ կոչվում էին Վահունիք և նշվում էին մեծ շուքով: Կարծիք կա, որ Վահագնը իր մեջ է ներառել նաև շուրքիական Թեշուրին բնորոշ գծեր (Ս.Հմայակյան, Ա.Պետրոսյան):

Ի մի բերելով վերը նշվածը կարելի է եզրակացնել.

1. Գ.Վահանցյանի այն տեսակետը, որ Հեթատ աստվածուհին հայերենին անցել է որպես հասարակ անուն (նախտ, իտախտ,

հայտն, հպտանք, խտպտանք և այլ բառերում), ամենայն հավանականությամբ համապատասխանում է իրականությամբ:

2. Հաշվի յսնելով այն փաստը, որ մայր աստվածուհու պաշտամունքը իր հիմնական գծերով մ.թ.ա. II հազ. կեսերին այդնևն ճևաղոցված է եղել Հայկական լեռնաշխարհում, ինչպես նաև այն, որ Հայաստանում և Եուրրիայում տարածված է եղել այդ պաշտամունքը, և այն վերոհիշյալ կարծիքները, որ Հերատ աստվածուհին հնարավոր է ունենա հնդեվրոպական ծագում, կարելի է ենթադրել, որ Ամահիտ, մասամբ էլ, Աստղիկ աստվածուհիների պաշտամունքը իրենց բնորոշ գծերով համընկել են Հերատի հետ:

3. Հունական դիցարանում Հերատը, ամենայն հավանականությամբ, կորցնելով իր հատկանիշների մի մասը՝ իր ենչեղությունը և որոշ գծերով պահպանվել է հունական Հերե աստվածուհու կերպարում:

4. Համադրելի են և հնդեվրոպական ծագում ունեն մաև Հերատ, Հերե, ինչպես նաև Աստղիկ-Ամահիտ (հաշվի առնելով, որ Ամահիտ և Աստղիկ աստվածուհիների պաշտամունքը սկզբնապես միասնական է եղել) աստվածուհիների ամուսինները: Նրանք բոլորն էլ եղել են ամպրույզի, կաշմակի աստվածների կամ կապված են այդ երևույթների պաշտամունքի հետ և լեզվա-կերպարային ընդհանրություններ ունեն (Թեչուր, Հերակես, Վահագն):

5. Հետաքրքրական է նաև, որ հայոց լեզվում պահպանված (հայտ, հուպիտ, հպտիմ, հպտանք, խտպտանք) հասկացությունները, ըստ էության, համադրելի են հունական Հերե դիցուհու կերպարի հետ:

#### HASHIK HMAKAKYAN

#### THE GODDESS HEBAT IN ARMENIAN AND GREEK PANTHEONS

1. (<sup>4</sup>Hebat, Heba, Hiba) with the worshipping center Hsiba, now Aleppo is the most important goddess of Khurrian-Mittanian and Hittite pantheon and husband of Tešub – the god of thunder and lightning.
2. Grigor Ghapantsian's opinion that the name of goddess Hebat transferred into Armenian language as a common noun (Arm. հփի հփուի, հփու, հփուհ, չփուհ etc) meaning coquette, molly-coddle is the most probably correct.
3. Taking into consideration that the mother-goddess cult with its main features was already well-established in the second millennium BC in the Armenian Plateau and that this goddess was worshipped in Hayasa and Šubria as well as opinions that Hebat could have been of Indo-European descent, it is possible to assume that cults of goddesses Anahit and partially Astghik have important common features with cult of Hebat.
4. To all probability, Hebat loosing some of her peculiarities, preserved her name and some features in the Greek pantheon in the character of goddess Hebe.

5. Husbands of goddesses Hebat, Hebe as well as Astghik-Anahit (taking into consideration unity of cults of Anahit and Astghik initially) are comparable and have Indo-European descent. They all were gods of thunder, lightning either they are related to worshipping of these phenomena and had common character (Teshub, Hercules, Vahagn).
6. It is interesting that meaning of words *Արի, Արթիմ, Արտիմ, Արտան՝, արտան՝* preserved in Armenian are comparable with character of the Greek goddess Hebe in essence.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. V. Haas, *Geschichte der Hethitischen Religion*, Leiden, New York, Koeln, 1994, s. 385;
2. E. Weidner, *Politische Dokumente aus Kleinasien*, Leipzig, 1923, N51, s. 2FF;
3. J. Friedrich, *Staatsvertraege des Hatti-Reiches in hethitischer Sprache I*, Leipzig, 1926, CTH (42), N52, s. 103FF;
4. J. Friedrich, *Staatsvertraege des Hatti-Reiches ...*, CTH (76) N50, s. FF;
5. V. Haas, *Geschichte ...*, s. 386
6. T. Bryce, *The Kingdom of the Hittites*, Oxford University Press, 1999, pp. 317-318 ff; KUB XXI 27(CTH 384)ff 11-6;
7. M-C. Tremouille, *L'Iconographie de la deesse Hebat a la lumiere des textes*, *Studi Micenei ed Egeo-Anatolici* (Roma), 1994, Fas. XXXIV, p. 87-88;
8. I. Gelb, *Hurrians and Subarians*, *Studies in Ancient Oriental Civilizations*, N22, Chicago, 1944, pp. 106-107;
9. Գր. Կապույան, *Малозыбские (азыаннические) боги у армян*, *Историко-лингвистические работы*, Ереван, 1956, сс. 277-78, сдл.
10. Գր. Կապույան, *Малозыбские (азыаннические) боги у армян*, сс. 311-313, сдл;
11. Կ.Վ. Մելիք-Փաշալյան, *Անահիտ դիցունտ պաշտամանքը*, Երևան, 1963, էջ.73.
12. Կ.Վ. Մելիք-Փաշալյան, *Անահիտ դիցունտ պաշտամանքը*, էջ.88.
13. Գր. Կապույան, *Малозыбские (азыаннические) боги*, с. 311-12, сдл.;
14. Գ. Չախուրչյան, *Լեզվական նոր տվյալներ հայոց մաիտարբիստոնիական կրոնի և հավատալիքների մասին*, *ՊԲՀ*, 1992 թ., N1, էջ.17-18.
15. А. Петросян, *Армянский эпос и мифология*, Ереван, 2002, с.55.
16. Դիցարանական քննարկում, Երևան, 1985, էջ.128;
17. Н. Дьяконов, *Ассиро-вавилонские источники по истории Урарту* (ЛВНИУ), N 67 (b);
18. А. Петросян, *Армянский эпос*, с.52;
19. M. Astour, *Hellenosemitica*, Leiden, 1967, p.215f;
20. Gelb, *Hurrians and Subarians*, p.54f;
21. Ս. Հմայրյան, *Հայկ մահապետի մասին աստվածի մ Կիրճա քաղաքը Կիրճուր լեռներում*, *ՊԲՀ*, 1992 թ., N1, էջ.131;
22. M. Astour, *Hellenosemitica*, Leiden, 1967, p.78;

## ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### «ՀԱՅՐ ՄԵՐ» ԱՂՈԹՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵՂԻՇԵՒԻ ԵՎ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԹԵՐԱՆԻ

Տեղումական կոչվող «Հայր մեր» աղոթքը առանձնահատուկ տեղ է գրավում քրիստոնեական հոգևոր ավանդույթի մեջ: Այն ոչ միայն գլխավոր և ամենակատարյալ աղոթքն է համարվում, այլև պարունակում է քրիստոնեական աստվածաբանության և բարոյախոսության խոստացումը, ինչի շնորհիվ սույն աղոթքը միշտ գտնվել է քրիստոնեական աստվածաբանների ուչաղոթքյան կենտրոնում: Այս առումով մեծ հեռաքրքրություն են մեքկայացնում տեղումական աղոթքի Եղիշեին և Հովհան Ոսկեբերամին պատկանող մեկնությունները: Դրանց համեմատական վերլուծությունը կարող է լրացուցիչ լույս ափռել հայ և բյուզանդական աստվածաբանական ավանդույթների փոխհարաբեղությունների վրա:

Մեկնելով աղոթքի սկիզբը. «Հայր մեր, որ երկնքում ես, բոլ սուրբ լինի Քո ամուռը», Եղիշեն գրում է. « Այս աղոթքը քննությով պարզ է և խոսքի առավել վեհություն ունի. դեպի վեր հայել տվեց և Աստծուն Հայր անվանել սովորեցրեց բոլորին. որդիներին անձկալի գութի համար ստիպում է դիմել Հորը, և կարոտության կամքը Հորը մղում է կարոտության գութի»<sup>1</sup>: Եղիշեն համարում է, որ Աստծո կողմից մարդկանց արված մեծագույն պարզև Նրան Հայր անվանելու իրավունքն է: Անգամ հրեշտակները, մարդուց անչափ հզոր և հոգևոր լինելով հանդերձ, չունեն այդ իրավունքը, քանի որ նրանք սպասավորներ են և ոչ՝ որդիներ: Այս հանգամանքը մարդուն պարտադրում է միշտ բարձր պահել հրկնավոր Հոր պատիվը, իր անարատ և առաքինությանը փառք տալով Նրա սուրբ անվանը: Եղիշեն պնդում է, որ, ի տարբերություն միակ ճշմարիտ Աստծո, բազում հեթանոսական չաստվածների անունները սուրբ չեն, և այն մարդիկ, որոնք երկրպագում են նրանց, չեն կարող համարվել Աստծո ճշմարիտ որդիներ:

Ոսկեբեքանը այս խոսքերը մեկնում է հետևյալ կերպ. «Հայր մեր՝ Ով, ինչ արտակարգ մարդասիրություն: Ով՛, ինչ սրանչելի պատիվ: Որ՞ խոսքն ի գորտ է լինելու շնորհակալություն հայտնել Նրան, Ով մեզ նման բարիքներ է շնորհում: Տես, ով՞ սիրելի, թե որչափ է նվաստացած իմ և քո բնությունը, գիտակցիր, որ մա ազգակից է այս

հողին, փոշուն, կեղտին, կամին, մոխրին. քանզի մենք հողից ենք ստեղծված, և վերստին տարցալուծվելով, ի վերջո հող ենք դառնում: Պատկերասցենելով դա, գաթմացիք մեր նկատմամբ Աստծո ունեցած ժեմ քարության անքննելի հարստությանը, որի համաձայն քեզ պատվիրված է Նրան Հայր հորջորջել»<sup>2</sup>: Ոսկեքերանը համարում է, որ այս խոսքերում մահ եղբայրասիրության կոչ է արվում, քանի որ պիտի առել ոչ քն «Հայր ին», այլ «Հայր մեր»: Դրանով իսկ Աստված պատվիրում է մեզ աղոթել համայն մարդկության և մեթոավորների շահերի համար, մոռամալով սեփական շահերի մասին: Մարդասեր Աստծուն չի կարող Հայր անվանել Նա, ով գազանամամ է և տմարդի քնավորություն ունի, քանի որ նա գորկ է երկնավոր Հորը քնորոչ քարայրունից: Մյայն մա, ով հեզ է և գրասիրտ, ու քնն չի պաւում իր անձի դեմ մողբ գործածների նկատմամբ, կարող է մաքուր խղճով Աստծուն Հայր անվանել: Խոսելով Աստծո անվան սրբության մասին, Ոսկեքերանը նշում է, որ շնորհով Աստծո կողմից որոշեցվածը, աղոթելիս, մախ և առաջ պիտի հայցի երկնավոր Հոր փառքը: Չի կարելի մոռանել, որ Աստծո անունը սուրբ անվանելով, մենք Նրան սրբություն ենք ավելացնում, քանզի ըստ Եսայի մարգարծի, «Սուրբ, սուրբ, սուրբ է Ձորությունների Տեղը, և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»:

Հենց սկզբից կարելի է նկատել, որ այս երկու մեկնություններն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Եվ եղիչն, և Ոսկեքերանը ձգտում են մեկնել Ս. Գիրքը, հիմնականում ոչաղբություն դարձնելով նրա քարոյախորատական իմաստի վրա, և խոսափում են ալարամական մեկնություններից: Սակայն նրանց միջև կան մահ ևական տարբերություններ: Եղիչնի մեկնությունը որոշակի ջատագովական երանգավորում ունի: Ձգացվում է, որ վերջինս ուղղված է այն մարդկանց, որոնք քաջամանոթ չլին քրիստոնեական վարդապետության հիմնական դրույթներին, ուստի մա շեչող դնում է եենց այս դրույթների վրա, հույակելով միակ ճշմարիտ Աստծո գոյությունը և մարդու քարձր գոյարամական կարգավիճակը: Մինչդեռ Ոսկեքերանը մեկնում է աղոթքի խոսքերը քարոյախոսական տեսանկյունից, շրջանցելով վարդապետական դրույթները, քանի որ դրանք, հավամարտ, քաջ հայրանի լին նրա ունկնդիրներին:

Աղոթքի շարունակությունը. «Ժող գա ձա արցայությունը, քող ձա կամքը լինի ինչպես երկնցում, այնպես էլ՝ երկրի վրա», եղիչն մեկնում է հետևյալ կերպ. "Ինքը՝ Արցայությունը, սովորեցնում է Իր մասին խոսել. « Աշխարհի մեջ էր, և աշխարհը Նրանով եղավ և աշխարհը Նրան չմահաչեց» (Հովհ. Ա 10)<sup>3</sup>: Այսպիսով, եղիչն միանշանակ կերպով նույնացնում է Արցայությունը Քրիստոսի Անձի հետ: Այս նույնացումն Իր մեջ խորին հոգևոր իմաստ է պարունակում: Ըստ քրիստոնեական իմաստա-



սիրության, Քրիստոս, որպես Ս. Երրորդության 2-րդ Անձ, Հայր-Աստծո պատկերը լինելով, Իր մեջ է պարփակում հոգևոր մի տիեզերք, որ Ավետարանում Երկնքի Արքայություն է կոչվում: Այս Արքայության մեջ յուր հոգիները անբաժանելի միություն են կազմում, իսկ նրանց գիտակցությունները մերթափանցում են միմյանց մեջ, ինչը, սակայն, քննվ չի խախտում առանձին հոգիների անկրկնելի ինքնությունը: Դա համայն գոյի անխառն և էական միություն է, որին քննողը են հավերժական և կատարյալ անդորրն ու մեղաշնչակությունը: Ինչ վերաբերում է Աստծո կամքին, ապա Եղիշեն այն նույնացնում է մարդու սրբության հետ, վերջինիս լավագույն գոավականը համարելով մահատակությունը: Երախտարեղով, մահատակները «Լահատակադիրին մայեցին ու մահատակվեցին: Խոսքով նրանց գովաբանող լինենք և գործով մեր անձերը նույն մահատակությամբ ավարտենք»<sup>6</sup>: Ոսկերեքումը այս խոսքերը մեկնում է հետևյալ կերպ. «Մենք ավուր ենք ասել աղոթքում. «Թող գա Քո արքայությունը», քանզի բռնություն կրելով մարմնական կրքերի պատճառով ու ամբիվ գայթակությունների ենթարկվելով, մենք Աստծո Արքայության կարիքն ունենք...Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Տեսնում ես՝ գեղեցիկ կապը: Եւ մախ հրամայեց փափագել գալիքը և ձգտել դեպի իր հայրենիքը, քայք մինչև որ դա չլինի, այստեղ ապրողները պլտի քանան այնպիսի կյանք վարել, որ քննող է երկնաբնակներին: Քանզի պետի բաղձալ-ասում է Եւ - երկինքն ու երկնավորը, սակայն երկինքը հասնելուց առաջ երկիրը պետք է երկինք դարձնել, որպեսզի ապրելով նրա վրա, այնպես վարվենք և խոսենք, կարծես թե երկնքում ենք, և աղոթենք այդ մասին Տիրոջը: Քանզի այն, որ ապրում ենք երկրի վրա, քննվ չի խամգարում մեզ հասնելու երկնային գոությունների կատարելությանը: Հնարավոր է, այստեղ ապրելով, ամեն ինչ ամել այնպես, ինչպես ամում են երկնքում»<sup>7</sup>:

Այստեղ նույնպես զգալի տարբերություն է նկատվում Եղիշեի և Ոսկերեքանի միջև: Եղիշեն հատուկ ուշադրություն է դարձնում Տերունական աղոթքում առկա և քրիստոնեական դավանամքի իմքը կազմող քնազանցական գաղափարների վրա, մարտակ ունենալով իր ընթերցողներին ծանոթացնելու այդ գաղափարների հետ: Խիստ հատկանշական է նաև այն, որ Եղիշեն քրիստոնյայի սրբությունը նույնացնում է ոչ թե բարոյական կատարելության, այլ մահատակության հետ: Դա վկայում է նայ աստվածաբանի մեկնության գործնական ուղղվածության մասին, քանզի սրբության այս ոչ տիպիկ ընթացումը, անշուշտ, պայմանավորված է Վարդանանց պատերազմի ժամանակ Հայաստանում իշխող քարոյական մթնոլորտով, երբ վասն հավատ և նայրենյաց մահատակությունը քրիստոնեական առաքինության կարևորագույն չափանիշն էր դարձել:

Ոսկեբերդանի քաղաքած բարոյականությունն ունի այլ երանգավորում: Եւ մտադիր չէ իր ունկնդիրներին ծանոթացնելու քրիստոնեությանն էինմական գաղափարների հետ, և նրա քաղաքը զուրկ է քաղաքական ենթատեքստից: Երա բարոյականությունն ունի ընդգծված խորհրդապաշտական ուղղվածություն, քանզի նա համարում է, որ սարքելով երկրի վրա, մարդը կարող է իր հոգևոր կատարելությանը հավասարվել երկնային գոյություններին, ինչ՝ հրեշտակներին: Հետևաբար, նրա համար քրիստոնեությունը մախ և առաջ մի հոգևոր ճանապարհ է, որ հավատացյալին տանում է դեպի Երկնքի Արքայություն:

“Մեր համապագորյա հացը տուր մեզ այսօր”: Ըստ Եղիշեի, այս խոսքն անմիջականորեն վերաբերում են Աստծո Որդուն: «Այս է ճշմարիտ հացը, որ երկնքից է իջնում, ով որ այս Հացից ուտի, հավիտյան չի մեռնի»: (Տես Հովհ.6, 50 ) “Այս Հացի մասին է աղոթքի մեջ սովորեցնում համապազ խնդրել Աստծուց: Եթե լավ խորհես, կհամոզվես, որ նա, ով այս Հացը սրբությանը է ուտում և սրան արժանի կերպով է պատրաստում իր անձը, նա անկարող է այս երկրավոր արքայությանը”: Եղիշեն նշում է, որ Քրիստոս, մեր օր հացամաշով “Կերմատանը, հետախու ծանապազ հացամում է Եկեղեցում” սուրբ Մեղանի վրա: Եւսիսպես ճաշակելով Ինքն Իջնն, Եւ մեզ ճաշակակից դարձրեց Իր շարչարաններին, վերացնելով մեր շարչարանները Իր անշարչարելի Աստվածությանը:

Ոսկեբերդանն այս խոսքերը մեկնում է հետևյալ կերպ. «Փրկիչը հրամայեց աղոթել ոչ թե եսրոտության, վայելցների, քաղմերանց հանդերձների, կամ որևէ այլ նման բաների, այլ լույս հացի, այն էլ օրվա հացի համար, որպեսզի մենք չհոգանք վաղվա հացի համար: Հենց դրա համար նա ավելացրեց համապագորյա քաղը, ասկայն դրանով էլ չբավաբարվեց, ավելացնելով տուր մեզ այսօր, որպեսզի մենք չտանջվենք գալիք օրվա հոգսից»: Ըստ Ոսկեբերդանի, նման հոգսերն անհեթեթ են, քանզի ոչ որ չի կարող վստահ լինել՝ տեսնելու է՝ արյուց վաղվա օրը և կարողանալու՝ է վայելել իր աշխատանքի պտուղները թե ոչ: Ուտի մարդը պիտի ապավինի քարեգույք Աստծո ողորմածությանը, որպեսզի Եւ հոգա Իր ծառաների ապագայի մասին:

Վերստին կարելի է նկատել, որ Եղիշեն և Ոսկեբերդանը տարբեր կերպ են մեկնում այս խոսքերը: Եղիշեն այլարարողներն է հասկանում ծանապագորյա հացի իմաստը, նույնացնելով այն Ս. Հարությունյան ժամանակ ճաշակվող Քրիստոսի խորհրդավոր մարմնի հետ, մինչդեռ քաղաքացանդացի մեծ աստվածաբանը խուսափում է այլարարմական մեկնությունից և տեսնում է Տերունական աղոթքի սույն խոսքերում առօրյա հոգսերից և հոգեմաշ մտառումնջություններից ազատվելու մի հորդոց:

«Երբիք մեր պարոտները, ինչպես որ մենք ենք ներում մեր սարտապաններին»: Եղիշեն գրում է . «Այս է ճշմարիտ, բանական և գործ-

նական աղոթքը, երբ դու պարտքը չես պահանջում ընկերոջից, այնժամ Աստված էլ քո բոլոր պարտքերը քեզ է շնորհում, որ անմեղ լինես: Ականջ՝ դիր Պետրոսին, քե ինչպես սովորեց Տիրոջից. նա յոթ անգամ կանգնավ ներել եղբոր հանցանքը, իսկ մեր Տերը յոթանասուն անգամ յոթ ասաց: Պետրոսն իբրև մարդ սահման դրեց, իսկ մեր Տերը սահման չդրեց Իր Աստվածության մարդասեր քարեքարությանը: Համապատասխանաբար մեր մեր խոսքերով ու գործերով, և Աստված տեսնում է ու զանց առնում, որպեսզի Իր համբերությանը մեզ ապաշխարհության հորդորի»<sup>5</sup>:

Ոսկերեքանն այս տողը մեկնում է հետևյալ կերպ. «Փրկիչը քեզ, մեղավորին, քո իսկ դատավորն է դարձնում, ու կարծես քե ասում է. Ինչպես դու ինքդ դատելու ես քեզ, այնպես էլ ես եմ դատելու քեզ: Եթե ներես Քո կողմը, Ինձնից մույմպես քարեզործություն կատանաս, քե վերջինն առաջինից շատ ավելի կարևոր է: Դու ներում ես ուրիշին, ուրախե՞ստ ինքդ ներման կարիք ունես, իսկ Աստված ներում է, ոչնչի կարիքը չունենալով: Դու ներում ես եղբորը, իսկ Աստված՝ ծառային, Քո մեղքերն անքիվ են, իսկ Աստված մեղսական չէ»<sup>6</sup>: Ոսկերեքանն ասում է. որ այս խոսքերը մեզ նաև մարդասիրություն են սովորեցնում: Աստված մեզ հորդորում է լինել հեզ, ներողամիտ մեր դեմ հանցանք գործածների նկատմամբ: Թողնելով մերձավորներին նրանց մեղքերը, մենք ինքներս հնարավորություն ենք ձեռք բերում Աստծուց բողոքություն ակնկալելու, քանի որ աղերսում ենք Նրան շնորհել մեզ այդքան, որքան մենք ինքներս տալիս ենք մերձավորին, և հայցում ենք մեզ համար նույն բողոքությունը, որ տալիս ենք մեր պարտապաններին: Ինչպես դժվար չէր նկատել, այստեղ Եղիշեի և Ոսկերեքանի մեկնությունները շատ մոտ են իրար: Երկուսն էլ ներողամտության և անհիշաչաբության կոչ են անում, համարելով դա Աստծուց մեղքերի բողոքություն ստանալու անհրաժեշտ մասնաղբյուր:

«Այ տար մեզ փորձության, այլ փրկիր մեզ չարից»: Ըստ Եղիշեի, Աստված չի կամենում մարդուն փորձության տանել, այլ՝ ազատել փորձությունից և փրկել մահվանից: Քանզի Նա, Ով Իր Որդուն յխմայեց, այլ մեր բողոքի համար մահվան մատնեց, Նրանով շնորհում է ամեն տեսակ քարիքներ բոլոր նրանց, ովքեր խնդում են Իրենից»<sup>7</sup>: Եղիշեն կոչ է անում համուժ փրկության փութաջան լինել Աստծո պատվիրանները պահելու և գործելու մեջ:

Այստեղ մի տրամաբանական հարց է ծագում: Եթե Աստված չի կամենում մարդուն փորձության տանել, ապա ինչու՞ Նա աշխարհում բողոք չարին՝ Սատանային, որը փորձության սկզբնապատճառն է: Ոսկերեքանն այս հարցին պատասխանում է հետևյալ կերպ. «...Աստված բողոք նրան հատկապես այն րանի համար, որպեսզի մենք, հորդորվելով երկյուրով և ապաստելով ռոտխի հարձակումները, համապատասխանաբար զգոն և

արքուն լինենք, պարզանքի հույսով և այն մշտնջենալոր և անճառ բարիքների սպասումով հեշտացնելով առաքինության աշխատանքը: Եվ ինչու՞ ես զարմանում, որ Աստված, մեր փրկության մասին հոգ տանելու պատճառով բողեց Սատանային, որպեսզի արքեպիսկոպոսի մեր անհոգությունը, և մեզ առիթ տա պսակներ տառնալու համար»<sup>11</sup>.

Այս երկու մեկնությունների բաղդատունը բավարար է հիմքեր է տալիս որոշակի եզրակացությունների հասնելու համար: Հայագիտության մեջ բյուզանդական և հայ եկեղեցիների փոխհարաբերությունների պատմությունը վաղուց ի վեր համարվել է կարևոր գիտական հիմնախնդիրներից մեկը: Մակայն հիմնականում ուշադրություն էր դարձվում միաբնակների ու երկարբնակների դավանաբանական վեճերի և նրանց քաղաքական հետևանքների վրա: Պակաս ուշադրության է արժանացել այն չարիազանց մեծ ու դրական ազդեցությունը, որ բյուզանդական հայասրանությունը գործել է հայ աստվածաբանական մտքի զարգացման վրա: (Այս բեռնային նվիրված տակավաթիվ ուսումնասիրությունների շարքում հարկ է հիշատակել Կիմ Մուրադյանի աշխատությունները): Եվ գրեթե չեն ուսումնասիրվել բյուզանդական և հայ աստվածաբանական մտքի այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին բյուզանդացիների և հայերի մտածելակերպին բնորոշ տարրերություններով, և հենց այս տեսակետից սույն մեկնությունների մեզ դժոխած նյութը խիստ արժեքավոր է և ուշագրավ: Համեմատական վերլուծությունից ակներև է դառնում, որ Ֆլեմույն արևաքրիստոնեական հոգևոր ավանդույթի չրգանակներում զգալիորեն են ունենել երկու տարրեր կրոնական իդեալներ: Եղիշեն ջերմում է քրիստոնեությունը մախ և առաջ որպես ազգային գաղափարախոսության հիմք, որպես հոգևոր զենք իր դարաշրջանի թե՛ քաղաքական և գաղափարական պայքարում: Բնավ կասկածի տակ չառնելով նրա զերմեռանդ հավատքն ու անկեղծ բարեպաշտությունը, պիտի նշենք, որ Եղիշեն, թերևս ենթազիտակցաբար, ծառայեցնում էր կրոնը ազգային ինքնահաստատման նպատակին: Այդ մասին են վկայում և ջատագովական նպատակներ հետապնդող դավանաբանական խնդիրների արծարծումը, և նախատակության ու սրբության մոլյմացումը, և բուն ճգնակեցության քարոզի բացակայությունը: Խրտակրոնությունը նրա կողմից չի ժխտվում, սակայն ծառայեցվում է աշխարհիկ, և առաջին հերթին՝ ազգային նպատակներին:

Ոսկերեքամի կրոնական իդեալն այլ է: Թեև նա նայունի է հասարակական բարքերի արատները մերկացնող իր հրաշունչ քաղոգներով, քրիստոնեությունը նրա համար մի ինքնաբավ հոգևոր արժեք է, որ չի կարող ծառայեցվել աշխարհիկ նպատակներին: Դա դեպի հոգու փրկություն և Երկնքի արքայություն տանող հոգևոր մի ճանապարհ է, և նրա մեկնությունը ոչ այլ ինչ է քան այս ճանապարհի որոշ առանձնա-

հատկությունների լուսաբանում: Ոսկերեքամի համար ճշմարիտ քրիստոնեությունն անբաժանելի է ներհայեցական ճանաչողությունից և խորհրդարարչական փորձից, մինչդեռ Եղիշեի մեկնության մեջ չի զգացվում փոքրիչատե նշանակալի հետաքրքրություն խորհրդազգացության նկատմամբ: Այս առումով Եղիշեի և Հովհան Ոսկերեքամի մտեցումները շատ տիպիկ են հայ և բյուզանդական աստվածաբանական ավանդույթների համար, որոնցից առաջինը, քնալ շմերժելով քրիստոնեության համամարդկային կրոն լինելու իրողությունը, այնուամենայնիվ ղյտում էր քրիստոնեությունը նախ և առաջ ազգային հոգևոր արժեքների համատեքստում, շեշտը դնելով ոչ այնքան քրիստոնեության խորհրդարարչական ոգու, որքան նրա գործնական քարոյակամության վրա, մինչդեռ երկրորդը, զուրկ չլինելով հասարակական ու քաղաքական հետաքրքրություններից, հակված էր ընդգծելու, որ քրիստոնեությունը իր էությանը ընդհանրական հոգևոր վարդապետություն է, և համարում էր, որ ճգնակեցությունն ու խորհրդազգացությունը դեպի փրկություն և հոգևոր կատարելություն տանող ամենատղիղ ճանապարհն է: Նման եզրակացության համար, անտարակույս, կան լուրջ հիմքեր: Դրա, թերևս, լավագույն ապացույցը այն փաստն է, որ եթե Բյուզանդիայում ստեղծվել է ճգնավորական պրակտիկայի մամրամասն և հանգամանալից լուսաբանմանը նվիրված "Նիդոկալիա" (հայ. Գողասիքություն ) քաղմահատոր և ստվարածավալ ժողովածուն, ապա Հայաստանում, յեաշված Հովհան Մանդակունում, Խոսրով Աճճևացուն, Անանիա Նարեկացուն և Գրիգոր Վկայասերին պատկանող մի քանի փոքրածավալ գրվածքների, նման գրականություն չի ստեղծվել: Հայտնի է, որ օրբօրոքս վանականները մշակել և կատարության քարձք աստիճանի են հասցրել այդպես կոչված իմանալի աղոթքի արվեստը, որի շնորհիվ հնարավոր է դառնում Աստծու անեղ լույսի ամմիջական հայեցողությունը: 14-րդ դարում Բյուզանդիայում այդ հայեցողության էության շուրջ բուռն աստվածաբանական վեճեր են ծավալվել, որոնց արդյունքում աստվածային անեղ ներգործության մասին նոր դավանանք է ընդունվել: Նման որևէ բան Հայաստանում չի եղել: Դա, ամշուշտ, չի նշանակում, որ Հայաստանում ճգնավորներ չեն եղել: Եղել են, այն էլ քաղմաթիվ: Սակայն նրանց մեծամասնությունը չէր ձգտում հասնելու հոգևոր ճանաչողության և աստվածային լույսի հայեցողության, և պարզապես միտում էր ճգնության ու զոջման միջոցով քալել մեղքերը և փրկվել: Հայկական քրիստոնեությունը, ի տարբրություն բյուզանդականի, իր բնույթով գերազանցապես գործնական է, այլ ոչ թե հայեցողական, և հինց դրա մասին է վկայում Տեղումական աղոթքի Եղիշեին և Հովհան Ոսկերեքամին պատկանող մեկնությունների համամատական վերլուծությունը:

THE COMMENTARY ON "PATER NOSTER" ACCORDING  
TO ELISHE AND ST. JOHN CHRYSOSTOM

The mutual relations of the Armenian and Byzantine Churches traditionally was one of the most actual scientific problems, yet the main attention was paid to the elucidation of polemic and dogmatic struggle between monophysites and diophysites. Usually one emphasized the negative role of the diophysitism in Armenia, whereas the enormous and undoubtedly positive influence, exerted by Byzantine Fathers of Church on forming of the Armenian theological thought was obviously underestimated. The characteristics of mentality of the Armenians and Byzantines, which were the essential cause of the distinctions between the theological conceptions of two Churches, were not researched at all. In this connexion the comparative analysis of commentaries of "Pater noster" according to Elishe and St. John Chrysostom is of considerable interest. It shows, that within the bounds of same eastern christian tradition there were two essentially different religious ideals. For Elishe the christianity is, first of all, the basis of national ideology, the powerful weapon in political and ideological struggle, taking place in Armenia in the 5-th century. Not denying the sincerity of his piety, one should recognize, that he, perhaps subconsciously, considered christianity as a means of the national self-assertion. It is testified by the apologetic tendency of his dogmatic wordings, by identification of martyrdom and sanctity, and by the absence of propagation of the asceticism. The latter is not denied, but is subjected to the national-political aims.

The religious ideal of St. John Chrysostom is another one. Though he is known by his ardent sermons, directed at the accusation of corrupted public morals, the christian faith for him is a self-sufficing spiritual value, and it can not be subordinated to any secular goal. First of all, he perceives the christianity as the spiritual path leading to the salvation of soul in the Kingdom of Heaven; and his commentary on "Pater noster" is actually an explanation of some peculiarities of this path. The approaches of Elishe and of St. John Chrysostom are typical for Armenian and Byzantine theological traditions. The former, not rejecting the universal character of christianity, nevertheless always considered it in a context of the system of national spiritual values, and accentuated not a mystical spirit of the christianity, but the practical ethics of the Gospel. The latter, not ignoring the social problematics, underlined the universal spiritual essence of a christianity, and considered it as a direct way leading to salvation reaching of the spiritual perfection.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հոգևոր կեանքի մասին» եր. 1997 էջ 24;
2. "Наука и религия" 12 с.5
3. «Հոգևոր կեանքի մասին» եր. 1997 էջ 26;
4. Նույն տեղում էջ 27;
5. "Наука и религия" 1991 12 с.6.

6. «Հոգևոր կեանքի մասին» էր. 1997 էջ 5-6:
7. "Наука и религия" 1991 12 с.6.
8. «Հոգևոր կեանքի մասին» էր. 1997 էջ 30:
9. "Наука и религия" 1991 12 с.6
10. «Հոգևոր կեանքի մասին» էր. 1991 էջ 30-31:
11. Տես [http:// www.wco.ru/biblio/foamnzl/h14-t.htm](http://www.wco.ru/biblio/foamnzl/h14-t.htm)

## ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

### ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՊԱՆԱԶԱՐ ՄԱՐՏՈՒՆՈՒՅ

Հայ-խոտակալան միացյալ հնազնոտական արշավախումբը (ղեկավարներ՝ Ս. Հմայակյան, Ռ. Բիշունե) 1994 թ-ին Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում հայտնաբերել է միջնադարյան մահմեդական նրկա տապանաքար՝:

2002 թ. ամռանը, այցելելով Մարտունի, մենք տեղում գտանք միայն մեկ տապանաքար:

Տապանաքարը գտնվում է «Մուշ» կիներատրանի դիմաց, երկու տնամերձների միջև ընկած փոքրիկ հողակտորի վրա, այն օբյեկտըսան է և միջին չափեր ունի:

Տապանանքարի հարավային միտող (Ն.կ. 1) ունի հյուսածո զարդաներիզ, որի մեջ, կենտրոնական մասում, պատկերված է խորհրդանշական միևրարի քանդակ, նրա աջ կողմում պատկերված է առյուծի և վիշապի մարտի տեսարան, որի ստորին մասում գլուխը դեպի վեր պարզած զայաբվող վիշապն է, իսկ վերին մասում, թաթերով վիշապի վրա կանգնած և ճանկերը նրա մարմնի մեջ մխրճած առյուծն է, որը հռչատում է օձին: Տեսարանի վերին մասում հավերժության նշանն է:

Միևրարից ձախ նույնպես ներկայացված է մարտի տեսարան, ուր պատկերված է ցուլին հռչատող առյուծը, որը առջևի թաթերով և երսխով բռնել է ցուլին: Ցուլից վերև պատկերված է սափոր՝ ծղոտկով, վարդյակով և օղակած և նառուկով:

Տեսարանի ձախ անկյունում կա այժի փոքրիկ մի քանդակ:

Տապանանքարի հյուսիսային միտող (Ն.կ. 2) նույնպես ունի հյուսածո զարդաներիզ: Նրա մակերևույթի ձախ մասում պատկերված է քամբով, սանձով, ասպանդակը վրան ձխա քանդակ, որից վերև պատրաստով և փոկերով կեն թուր է, իսկ կողքին՝ աղեղ և նետերով լի կապարճ:

Տապանաքարի այս միտաի աջ մասում փորագրված է յոթ տողից քաղկացած արաբերեն արձանագրություն՝ կռայիտ նասիս գրատեսակով: Այն տեղ-տեղ խիստ հողմնահարված է, սակայն մեզ հաջողվեց վերծանել: Ստորև ներկայացնում ենք արաբերեն արձանագրությունը, ինչպես այն պահպանվել է տապանաքարի վրա.





Նկ. 1. Տապանաբարի հարավային միտղ



Նկ. 2. Տապանաբարի հյուսիսային նիստը



Նկ. 3. Տապանաքարի արևմտյան միտղ

- 1) صاحبه احمد ابن قاسم
- 2) [.....] [.. .. . . . . . . . . . .] [.. .. . . . . . . . . . .]
- 3) [.. .. . . . . . . . . . .] | الارض. [-]
- 4) [.. .. . . . . . . . . . .] | الذي يشفع عنده الا باذنه
- 5) ايديهم و ما خلفهم ولا يحيطون بشئ من علمه الا بما شأ وسع
- 6) كرسيه [.....] | و لا يؤده [.....]
- 7) [.....] | العظيم

Արձանագրությունը վերականգնվում է հետևյալ կերպ (քառակուսի փակագծերում նշում ենք հղմանառարարության պատճառով արձանագրության նշված հատվածները).

- 1) صاحبه احمد ابن قاسم
- 2) [الله لا اله الا هو] | الحي القيوم [لا تأخذه سنة ولا نوم]
- 3) [له ما في السموات و ما في الارض. [من]
- 4) | الذي يشفع عنده الا باذنه [يعلم ما بين]
- 5) ايديهم و ما خلفهم ولا يحيطون بشئ من علمه الا بما شأ وسع
- 6) كرسيه [السموات و الارض] | و لا يؤده [حفظهما]
- 7) [و هو العلي] | العظيم

Արձանագրությունը բաղկացած է երկու մասից: Առաջին հատվածը հայտնում է հանգուցյալի անունը, իսկ երկրորդը՝ մահմեդական տապանաքարերի վրա հաճախ փորագրվող մի հատված է՝ Լույսանից<sup>2</sup>:

- 1). Մրա տերն է Ահմադ իբն Կասիմը
- 2). [Ալլահը, չկա այլ աստվածություն Նրանից բացի,] կենդանի, գայություն ունեցող, [չի տիրում Նրան ոչ միևնչև ոչ քոմը]

- 3). Մրան է պատկանում ամենայնը, որ երկնքի և՛ երկրի վրա է. [Ո՞վ]
- 4). կարող է քարեխոսել նրա ստղև, ոչ այլ կերպ, քան նրա թույլտվությամբ [Նա գիտի ինչ որ եղել է]
- 5). մինչև նրանց և ինչ կլինի նրանցից հետո, իսկ նրանց հասանելի չէ Նրա ինսպուրյունից ոչինչ, [քացի այն, ինչ որ Նա կամենում է]
- 6). Նրա գահը [ընդգրկում է երկնքը և երկիրը և ] դժվար [չէ] Մրա համար նրանց պահպանությունը.-
- 7). [Իրավամբ, Նա քարձրյալ է,] վեհ է:

Տապանաքարի արևելյան ճակատը հարթ է, զույգ է որևէ պատկերից: Արևմտյան միտին պատկերված է միերարի քսանդակը, որի վրա քնատարած առծիվ է (Ն.կ. 3):

Տապանաքարը վերին մասը պսակվում է երկրեք վերջավորությամբ, որի երկու կողմերում կիսազլանած և մեկական գոտիներ են:

Տապանաքարը իր ձևով և քանդակներով հար և նման է Հայաստանի և մասնավորապես Գեղարքունիքի XVI-XVII դդ. օրրոցած և նույնատիպ հուշակոթողներին և ամատարակոյս պատրաստված է հայ վարպետի ձեռքով<sup>3</sup>:

Նմանատիպ մի տապանաքար, օրինակ, գտնվում է Մարտունո ենթատարածքի Գեղիովխտ գյուղի, մոտակիմում Վերին Ղարանդիս (Վերին Կզմուտ) գյուղամիջի եկեղեցու քակի գերեզմանատան արևմտյան մասում<sup>4</sup>: Այն նույնպես օրրոցած է, պատկերում է մեջեջաչին, գավազան, նմանատիպ սափոր ծղակով և օղակով:

Գեղիովխտի տապանաքարի նույնպես ունի հյուսածո զարդերից: Այն ունի հետևյալ արձանագրությունը.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐԽՈՒԴԱՐԻՆ,  
ՈՐԴԻ ՂԶԻՆ. ԹՎ :ՌԺԲ (1563)<sup>5</sup>

Նմանատիպ մեկ այլ, ամբական տապանաքար, կա հենց նույն տեղում: Այն դարձյալ օրրոցած է, պարունակում է Մարտունո մահմեդական տապանաքարի վրա փորագրված միևնույն հյուսածո զարդերից և նմանատիպ սափոր: Այն ևս պատկերում է մարտի տեսարան՝ թանրած ծին իր ուղեքի տակ է անել գալարվող վիշապին, որը գլուխը մտեցել է ձիու վզին: Տապանաքարը չի տալիս մեջեջաչի անունը, ամբական է, սակայն հաղորդում է կազմողի անունը՝ ԱԿՈՐ ՆԿԱՐՈՂՆ<sup>6</sup>:

Մեղրակ Բարխադարյանի Դիվանից տեղեկանում ենք, որ Այոք նշանավոր կազմողից հայտնի են մեկ տասնյակից ավելի խաչքարեր և տապանաքարեր, որոնք, ըստ հեղինակի, պատրաստված են մեծ վարպետությամբ և գտնվում են Մարտունո և Վարդինիսի շրջանի գյուղե-

րում: Այդի կերտած տապանաքարերը թվագրվում են 1540-1575 թվականներով:

Նմանատիպ օրորոցածև տապանաքարերի համդիպում են նաև Մարտունու ենթատարածքի Ասողածոր գյուղի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քակում, օրինակ նրա արևելյան պատի մոտ գտնվող Տրունի տապանաքարը<sup>7</sup>, որի վրա այլ առարկաների շարքում պատկերված են քամրած ձի և վարդյակով սափոր: Տապանաքարի արձանագրությունը չի թվագրում այն, սակայն Դիվանի հեղինակը համարում է այն XVI դ. գործ:

Այսպիսով, եաչվի առնելով Մարտունու տապանաքարի արտաքին և ռճական մնանությունը Գեղարքունիքի հայկական մույնատիպ տապանաքարերին, ինչպես նաև համեմատվող տապանաքարերի պատկերների ընդհանրությունը (վարդյակով և օղակաձև նառուկով սափոր և հյուսածո զարդերի), Մարտունու տապանաքարը կարելի է թվագրել XVI -XVII դդ., սակայն ավելի ստույգ XVI դ. կեսերից մինչև նույն դարի վերջը և այն հավանաբար պատրաստված է Ալեք կազմողի կամ նրա ժամանակակից հայ վարպետի կողմից:

Անդրադատմաբով հանգուցյալին, նշենք, որ նրա ինքնությունը պարզ չէ: Հայտնի է, որ XVI դ-ի սկզբներին Մեանա լճի մոտ հաստատվել էին թուրքմենական Կարա-կոյունլու ցեղախմբից սերող Բանարլու վաչկատուն ցեղը<sup>8</sup>:

TIGRAN MIKAYELYAN

### NEWLY FOUND MEDIEVAL TOMBSTONE FROM MARTUNI

The Armenian-Italian Archaeological Expedition discovered a medieval Muslim tombstone in town of Martuni, Gegharkunik Region.

The southern side of the tombstone depicts a symbolic mihrab, scenes of fightings between a lion and a snake, a lion and a bull and a small goat. The northern side of the tombstone depicts a saddled horse and contains a seven row Arabic inscription made in rough naskh. The western side of the tombstone depicts an eagle and symbolic mihrab. The southern and the northern sides edges of the tombstone have weaving pattern.

As the inscription informs the name of the deceased is Ahmad ibn Qasim. The second part quotes Quran (2/256 (255) often met on Muslim tombstones). The tombstone is undated.

The Muslim tombstone with its shape and form as well as some its details (jug with rosette and the weaving pattern) is similar to Armenian tombstones of the same type widespread in Armenia and particularly in Gegharkunik Region. This kind of tombstones containing jugs with rosette and weaving patterns date back to 16-17<sup>th</sup>

centuries. Many of such tombstones in Martuni and Vardenis Regions are carved by Master Akob (his tombstones date 1540-1575). Taking into consideration the aforementioned, we suppose that the Martuni tombstone is carved during the 16-17 centuries and more precisely dates from middle to the end of the 16<sup>th</sup> century. The Martuni tombstone was probably carved by Master Akob or a contemporary Armenian master.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս մասին մեզ տեղեկացրեց արշավախմբի համադիվակար, հնագետ Միսոն Հմաչակյանը:
2. Դուրան 2/256 (255), քարզմանությունը մերն է:
3. Տապանարարի թվագրման վերաբերյալ մեզ զբաղմունքում հույնց հայագետ Հուսիկ Մելքոնյանը:
4. Դիվան հայ վիճակության, IV, պրակ 4, Գեղարքունիք, Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1978, էջ 217:
5. Նույն տեղում:
6. Դիվան հայ վիճակության, IV, էջ 216:
7. Դիվան հայ վիճակության, IV, էջ 176:
8. И.П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX в., Ленинград, 1949, էջ 91:

## ԱՐՏԱԿ ՄՈՎՄԻՍՅԱՆ

### «ՈՒՌՄԱ / ՈՒՐՄԱ» ԱՐՁԱՅԱՆՎԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վանի քաղաքագրության սնագիցը համակարգի վերծանության և ուսումնասիրության առավել խոցելի կողմը մնում է ըմբռնողների հնչյունային ճշգրտման խնդիրը<sup>1</sup>: Դա պայմանավորված է քիսյունական սնագրերը Ջ.ա. X-IX դարերի ասորա-քարեղնյան սնագրության հնչյունային արժեքներով ըմբռնմամբ, ինչը քննադատելի է առնվազն երկու պատճառով: Նախ, ինչպես ցույց է տալիս Վանի քաղաքագրության կալի սաղիկների վերծանությունը, քիսյունական արագագիցը ոճի մի քանի մշաններ իրենց արխայիկ ձևերով կատրվում են հին արադական (Ջ.ա. III հազ.) կամ վերջինից ծագող միտամիակամ ու խեթական գրչության դպրոցներից (Ջ.ա. II հազարամյակ), ուստի եզրակացվում է, որ քիսյունական արագագիցը ոճը պետք է տեղիծված լինի Ջ.ա. XIV-XIII դարերից ոչ ուշ<sup>2</sup>: Եվ երկրորդ՝ եթե անգամ վերջնական համարենք, որ քիսյունական կորոդային ոճը ծագում է Ջ.ա. X-IX դարերի ասորա-քարեղնյան սնագրությունից, ապա պետք է շնորհակամ, որ կատարվել է ոչ թե պարզ ընդօրինակում, այլ գրային ընդգրկում քարեիդիում<sup>3</sup>, ինչի արդյունքում, տրամաբանական է, որ գրային համակարգը հարմարեցվեր տեղի լեզվանյութին: Օրինակ՝ Հայկական լեռնաշխարհի տեղաբնակներում առատորեն հանդիպում են «օ» և «վ» հնչյունները, մինչդեռ քիսյունական սնագրում, ըստ այսօրվա ըմբռնումների, դրանք բացակայում են՝ հաճախ փոխարինվելով «ու»-ով (ցացի այդ, «վ»-ն հանդես է գալիս մահ «բ»-ի տեսքով): «ու»-ն, իբրև առանձին հնչյուն, ունի երկու սնագրական և հանդես է գալիս մահ քաղաձայնների հետ բացօթյալ այլ վանկանշաններում, ո՞ր վանկի դեպքում «ու»-ն պետք է կարդալ «օ», ո՞ր դեպքում՝ «վ» կամ «ու», հստակեցված չէ: Նման օրինակները շատ են. ակներև է, որ պետք է շարունակել Վանի սնագրության հնչյունային ճշգրտման աշխատանքները:

Հնչյունային ճշգրտման խնդիրն առկա է ոչ միայն քիսյունական սնագրության, այլև Հայկական լեռնաշխարհի մասին այլ սնագիցը արդյունքներում պահպանված տեղեկությունների ուսումնասիրության



արտագայում: Ներկա հրապարակման մեջ կամդրադատմանը դրանցից մեկին:

Վաղուց ուշադրություն է դարձվել, որ «Ռուսա / Ուրսա» արքայա-  
նունք սկզբնաղբյուրներում ունի ոչ միատեսակ գրություն: Աստրական  
աղբյուրներում (քաղառությանը մի դեպքի) այն հանդիպում է «Ուրսա»  
տարբերակով<sup>4</sup>, իսկ Վանի քաղաքագրության սեպագիր արձանագրու-  
թյուններում արքայանունը հանդիպում է «Ռուսա» տարբերակով: Այ-  
սինքն՝ արքայանվան առաջին վանկի գրությունը միանշանակ չէ, ինչից  
կարելի է եզրակացնել, որ այն ունեցել է այնպիսի հնչողություն, որի հա-  
ղորդունք որոշակի դժվարություն է ներկայացրել սեպագիր համակար-  
գերի համար:



Նկ. 1 Լուսնի քարի բրնձե քանդակի գրությունը:  
Սեպագրով գրված է՝ «Ռուսայի վարդ քաղաքի»:  
Մեհենագրով արված է նույն ճակագրությունը՝  
«Ռուսայի քաղաք վարդ»:



Նկ. 2 Ռուսայի միջին դարերի ճակագրության մեծագույն կմիքն երկրի  
ճակագրության և հատուկի մեհենագրով գրված է:  
«Ռուսայի քաղաք»:

Ժամանակին «Ռուսա» արքայամվան համար մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են մի քանի մեկնարանություններ: Նշենք մի քանիսը: Ռ. Այլերն առաջարկում էր այն մեկնարանը հունարենով բխեցնելով ΡΟΥΣΑՆ՝ «կարմիր» հիմքից<sup>4</sup>: Գր. Դափանցյանը հակված էր այդ արքայամվան հետ կապել Երվանդական շրջանից հայտնի «Երուագ» անունը՝ (քրմապետ, Երվանդ արքայի եղբայրը՝ սպանված Ք.ա. 201 թվականին): Վերջին տասնամյակներին առաջ քաշվեց «Հրաչյա» անվան հետ քննարկվող արքայանունը նույնացնելու տեսակետը («Ռուչա» կամ «Հոռչա» տեսքով)<sup>5</sup>: Առաջարկվել է արքայամունը բխեցնել հնդեվրոպական \*rudhya «կարմիր մետաղ, պղինձ» մասնից<sup>6</sup> և այլն: Որպես օրինակափոխություն, բոլոր այդ փորձերն աղվել են՝ ելնելով միայն արքայամվան այս կամ այն լեզվի որևէ բառի հետ ունեցած հնչյունային մոտությունից:

Վանի բազավորության մեհեմազիք արձանագրությունների վերծանության առաջին արդյունքներից քննարկվող արքայամվան գրության և հնարավոր նշանակության մասին մատուցեցին անակնկալ արդյունք: Մի շարք բնագրերում (նկ. 1-2) «Ռուսա / Ուրսա» արքայանունը ներկայացված էր ձևու գլոխ պատկերող գաղափարամշակով<sup>10</sup>: Դրանից պետք է եզրակացնել, որ տվյալ արքայանունը նշանակել է «ձի, նժույգ» (սրբազան կենդանիների անուններով մարդկանց անվանակոչումը չափազանց տարածված երևույթ է Հին աշխարհում): Դա նաև նշանակում է, որ Վանի տիրակալների մայրենի լեզվում այդ կենդանու անվանումը եղել է երկվանկ, ընդ որում, երկրորդ վանկը եղել է «սա», իսկ առաջինի հիմնային բաղաձայնը՝ «ր / ո»: Այդ անվան որոնումը մեզ տանում է հնդեվրոպական աշխարհի (անգլ. horse «ձի», գերմ. Ross «ձի», անգլ.-աարս. hros «ձի», պարսկ. res(a) «մասնել», հուն. ΡΩΘΜΟΛ «արչավել, ստրալ», ռուս. рысак «վարգածի», рысать «վարգել»<sup>11</sup>):

Վերջերս Հ. Հ. Կարազյուզյանն առաջարկեց մի տեսակետ, ըստ որի հին հայերենում ձին պետք է կոչված լինի «(հ)որս»՝ համադրելով այն անգլերենի horse «ձի» բառի հետ: Դրա հնարավոր վկայությունն, ըստ հեղինակի, կարելի է համարել Գաղթան երգերից հայտնի «Նրն դու յոսս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս...» հատվածը: «Հորս» բառը հեղինակն առաջարկում է բարձրմանել «ձի»: Մրաժամանակ Հ. Հ. Կարազյուզյանն առաջարկում է մի քանի հայերեն բառեր ևս մեկնարանել՝ ելնելով առաջարկված հնարավոր բացատրությունից<sup>12</sup>:

Եթե հաստատվի այդ տեսակետը<sup>13</sup>, կարելի է եզրակացնել, որ քննարկվող արքայանունը նշել է «Հորս(ա)» և նշանակել «ձի, նժույգ»՝ կապված սրացիկ և արևի պաշտամունքին միջրված սրբազան կենդանու հետ: Հարցի մասն լուծումը միանգամայն բացատրելի կարող է դարձնել նաև ասորական և Վանի բազավորության սեպագիր արձանագրու-

յունենյում արքայանվան բազմազան գրությունը, ինչն իսկապես կապվում է նշված սեպագիր համակարգերի անկատարության հետ: Դրանցում բազակայում էին «ու» և «ու» ենյունենիքը, որոնցից առաջինը սովորաբար բաց էր բողմվում կամ հայտրվում «խ»-ով, իսկ երկրորդը, որպես օրինաչափություն, մերկայացվում էր «ու»-ով<sup>14</sup>:

Անկախ նշված տեսակետի հաստատումից, մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ քննարկվող ամենը նշանակել է «ծի, մծույզ» և կապվել է արևի պաշտամունքի հետ առնչվող, բազմական զորքում առաջնային դեր ունեցող կենդանու հետ<sup>15</sup>, ինչում կարող էին արտահայտվել նաև տոտեմական պատկերացումները:

## ARTAK MOVSIYAN

### ON THE WRITING AND THE POSSIBLE MEANING OF THE KING NAME "RUSA / URSA"

After decipherment of the hieroglyphic writing of Van kingdom (Urartu) it was clear that the king name "Rusa / Urta" was written by the hieroglyph with the figure of a horse.

According to the H. H. Karagyuzyan's new version one of the horse names in oldest Armenian was the word "hors". If it is true, it is very possible that the king name "Rusa / Urta" had had the meaning of "horse" and the pronunciation of "Horsa".

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Այդ մասին մասնագիտական զրակամտքյան մեջ կան բազմաթիվ նշումներ. տե՛ս, օրինակ, Меликшванк Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 45:
2. Дьяконов И. М., Урартские письма и документы, Л., 1963, էջ 19-20:
3. Թիայնական գրային բարեփոխման մասին տե՛ս, օրինակ, Աճառյան Հր., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 399-406 (ինդիմակի բնորոշմանը՝ այդ բարեփոխման շնորհիվ սեպագրի բարդությունները կրճատվեցին 95 տեղաում): Меликшванк Г. А., նշվ. աշխ., էջ 33-45:
4. Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДМ, 1951, N 2-4, NN 46, 49, 50, 76: Ելնելով այն հանգամանքից, որ Թիայնական սեպագրության լեզվում ոչ փոխառյալ բառերը չեն սկսում «ր/ս» ենյունով, առաջ է քաշվել տեսակետ, ըստ որի ասորական աղբյուրների «Ուրտա» ձևը համապատասխանում է անվան ճշգրիտ հնչողությանը (Дьяконов И. М., Язык древней Передней Азии, М., 1967, էջ 128; Хачикян М. Л., Хуритский и урартский языки, Е., 1985; էջ 143):

5. Меликшвили Г. А., *Աշխ.*, էջ 328-334, 341-253; Арутюнян Н. В., *Корпус урартских клинообразных надписей*, Е., 2001, էջ 289-311, 330-359, 370-374, 375-77:
6. Lehmann-Haupt C. F., *Armenien Einst und Jetzt*, II-2, Berlin und Leipzig, 1931, էջ 902:
7. Ղափանցյան Գ.Ք., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 98:
8. Տե՛ս, օրինակ, Իշխանյան Ռ., Պատկերազարդ պատմություն հայոց, գիրք Ա, Երևան, 1990, էջ 75, 91; Հակոբյան Ռ., Հրայա՛ որդի Արամի (Արարատյան թագավորության վերջին տարիների ժամանակագրության մասին), «Գարուն», 1992, N 5, էջ 78-81 (Ռ. Բաղդյանը քննադրվող արքայախոնքը համեմատելով պարթևական «Ալշալ» և սամաղիտի «Ուաջա» ամենների հետ՝ նմբադրում է, որ այն կարող էր նշանակել «արքա»):
9. Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաժազման խնդիրը, Ե., 1997, էջ 100:
10. Մոխիսյան Ա. Ե., Վանի թագավորության (Թիայմիի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Ե., 1998, էջ 38-40:
11. Նշված բառերի հետ կարող է առնչվել նաև հայերեն «դրասակ» բառը, որը Հ.Ք. Անադյանը չի ստուգաբանում (Անադյան Հ.Ք., Հայերեն արձատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 136-137):
12. Կարապետյան Հ. Հ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից մահանգներում), Հայկական լեռնաշխարհը սեպագիր արդյուններում, հատոր I, գիրք I, Ե., 1998, էջ 60-62:
13. Այս հարցում վերջնական խոսքը պատկանում է լեզվաբանությանը: Տեսակետը կարելի է վերջնականապես հաստատված ու ընդունելի համարվել, եթե ցույց տրվի, որ հնդեվրոպական մայր լեզվի այն արձատը, որից առաջացել են դուստր լեզուների վերոնշյալ բառերը, մախալեզվից հայերենին անցման արդյունքում կարող է հնչել «(h)որս»:
14. Նշենք, որ մերկայացված տիպակետին հանգելուց հետո փորձեցինք Վանի թագավորության անպակիր քոլոր արձամագրություններում «տա» վանկաշարին ընթերցել «(h)որ» և որևէ հակասություն չգտանք:
15. Չենք բացառում նաև, որ ձևու գլխի պատկերի տակ կարող էր բացված լինել ոչ թե հենց «ձ», մեծույզ՝ նշանակող, այլ վերջինիս հետ իմաստով սերտորեն առնչվող որևէ բառ:

## ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԳՅԱՆ

### XVI դ. ՕՍՄԱՆԵՐԵՆ ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Ֆրանսիացի արևելագետ Ժ.Լ.Բակե-Գրամոնյի կողմից Ստամբուլի Միմիատրոնների խորհրդի արխիվում (Bazbakanlik Arşivi), Ֆեբրուի 3-րդ 134 համարի տակ պահվող փաստաթղթի երատարակմամբ գիտական շրջանառության մեջ դրվեց XVI դ. առաջին կեսի Սամցխեի արաբկությանը (Մասթարագո) վերաբերող պատմական մի վավերագիր, ուր, մասնավորապես, շրջագծվում են արաբիկ Ղուարդուարն III-ի (Ղուրդուրայի) իշխանապետության կազմ ընդգրկված տարածքների սահմաններն ու տրվում տեղի ավատատիրական տոների ազգակցական կապերի համառոտ պատկերը<sup>1</sup>:

Վավերագիրը հետագայում ևս շարունակեց մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում և համանման այլ նյութերի հետ մեկտեղ դարձավ առանձին քննության առարկա<sup>2</sup>:

Փաստաթղթում առկա հարդարումների հետ ծանոթությունը ցույց է տալիս, որ այն առանձնակի կարևորություն ունի մաև հայագիտության համար, քանի որ մերկայացնում է Դիարբեքիից Շասարցուրի, Մուշի, Բասեսանի հովտի, Թրքբուսի, Օլբիի (Ուղբիջ), Մամուրվանի, Բամակի և Աղդահանի անցումով մինչև Ախալցխե և հարակից շրջաններ տանող հիմնական ճանապարհներն ու ուղիները, տալիս Արթուրատի, Տալլի և Գուգարքի առանձին քնակատեղերի ու վայրերի աշխարհագրական-տեղագրական մկարագրությունը, ինչպես մաև պաշտպանական կառույցների՝ ամբոցների և բերդերի դիրքերը, հնարավոր կամ սպասելի դիմադրության կազմակերպման աստիճանը, քնակության խտության պատկերը և այլն:

<sup>1</sup> J.L. Bacqué-Grammont, *Études turco-safavides*, IV. Une description ottomane du Saatabago vers 1520, "Bédi Kartliss" vol. XXXVI, Paris, 1978, pp. 149-166.

<sup>2</sup> «XVI դարի առաջին քառորդի բուլղական արքյունրը Սամցխե-Մասթարագոյի պատմության վերաբերյալ», բուլղական վավերագրերը օրացերին թարգմանությամբ, ուսումնասիրությամբ ու ծանոթագրությամբով իրատարակեց Յիսանա Արալածեհն, Թբիլիսի, 1983 (վրացերեն):

Վավերագրի աղբյուրագիտական քննությանը պարզ է դառնում, որ այն Ղուարղուարի III-ի իշխանության տարիներին (1516-1535), սուլթան Սելիմի մահից հետո (1520) կազմված և Օսմանյան կայսրության կենտրոնական իշխանություններին հասցեագրված մի զեկուցագիր է, որտեղ նախանշվում է Դիարբեքիքից Սամցխե-Մաաբարագո կառուարիլիք զորաընթացի ժամանակ բամակի երթի հիմնական ուղին: Հիշյալ ժամանակաշրջանում արաբկությունը վերածվել էր թուրք-արաբական հակամարտության գոտու, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը:

1515թ. սուլթան Սելիմ Ահեդի՝ դեպի Պարսկաստան կազմակերպած արշավանքի և Չաղդուանի մոտ տալսած հաղթանակի հետևանքով շահ Իսմայիլի հետ կնքված զինադադարի համաձայն Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցան մոտ տարածքներ՝ ներառյալ Կարինը: Արևելյան սահմանների ընդլայնմամբ Թուրքիան ընդոտու պետեցավ Մաաբարագոյի տիրույթներին և սկսեց գործնականորեն միջամտել արաբկության մերթն խնդիրներին: Այլևայլ պատճառներով ու մկատառումներով վրաց իշխանավորների մի մասը հակվեց դեպի Սեֆևյան Պարսկաստան, մյուսը՝ Օսմանյան Թուրքիա:

Պատմական այսպիսի իրավիճակում, 1516թ. քուրդական կողմնորոշում նախապատվող արաբիկ Մզեմարուկի մահից հետո, Սամցխեի արաբիկ կարգվեց նրա եղբորդի Ղուարղուարի III-ը, որը հակառակ մախորդի, զերազանցապես ապավինում էր պարսկական ուժերին<sup>3</sup>: Ղուարղուարիի վարած իրամամետ քաղաքականությունը պատճառ դարձավ նրա հակառակորդ, մյուս եղբորդը՝ Մամուլարի ապստամբության համար, ինչից անմիջապես փորձեց օգտվել Օսմանյան կայսրությունը՝ շտապեց միջամտել Սամցխեի առավել ազդեցիկ Ջաղելի-Ցիխիսց-վարելի ավատական տան ներսում ծագած երկարատևությունն ու Բարբեղի ասնջակի կառավարիչ Կրգը Ահեդ օղլու Միքզա րելի գլխավորությամբ, Մամուլարին օգնություն ցույց տալու նպատակով, արաբկության վրա մի զորախումբ ուղարկեց<sup>4</sup>: Չեռնարկված հարձակումը, սա-

<sup>3</sup> Գրքագրոյնի ներկայացմամբ Մզեմարուկի մահից հետո արաբիկ կարգվեց Մամուլարը, որը ոչ թե նրա եղբայրն էր, այլ՝ որդին, մինչդեռ Մզեմարուկի եղբայրը Ղուարղուարին էր: Տե՛ս M.Fahrettin Karsoğlu, Osmanlılar'ın Kafkas-Elleci'ni fethi (1451-1590), Ankara, 1993, s. 116. Գեղարկված տեղեկանք տե՛ս Ցիսանա Արուածի, նշվ. աշխ., էջ 43:

<sup>4</sup> Գրքագրոյնի դեպքերի զարգացումն այլ կերպ է պատկերում. 1516թ. Ղուարղուարին, պաշտովելով իր և արաբիկ Մամուլարի միջև տեղի ունեցող պայքարում, օգնության խնդրանքով գալիս է այդ ժամանակ Նախիբևանում գտնվող շահ Իսմայիլի մոտ, որը և իր զորավարներից մի քանիսին հրամայում է ետձակում գործել Մաաբարագոյի վրա: Հակառակորդի թմական

կայն, հաջողություն չունեցավ, և Թուրքիան միառժամանակ ստիպված ելավ դադար տալ կայսրության արևելյան սահմանները դեպի Անդրկովկաս ընդլայնելու ձգտումներին:

Թեև XVI դ. 20-30-ական թվականներին Օսմանյան կայսրությունն արարելության նվաճման համար այդպես էլ ռազմական ակտիվ գործողություններ չծավալեց, ինչից, ի դեպ, խուսափում էր նաև Պարսկաստանը, ներկայացվող զեկուցագիրը վկայում է այդ տարիներին Բարձր Դեան կողմից մշակվող լուրջ ծրագրերի մասին:

Վավերագրում Դիարբեքիից մինչև Սաաթարագոյի շրջաններ տամոլ հիմնական ճանապարհի նկարագրումն անշուշտ փաստում է Դիարբեքիի իրրև քամակի մեկնակետ լինելու համզամանքը, ուստի ներառելի է, թե արչավանքի կազմակերպումը տեղի կառավարչին էր հանձնարարված: Եվ, հիլալի, աղբյուրներից մեկի վկայմամբ 1525թ. սուլթան Մուլեյման Կանունու կողմից Դիարբեքիի վախ Խյուսըն փաշային Պարսկաստանի դեմ զորադրավ կազմակերպելու մեան հանձնարարականներ իրոք տրվել են<sup>1</sup>: Նախապատրաստվող արշավանքի առավել հավանական ժամկետները, սակայն XVI դ. 30-ական թվականներն են: Բացի այն հանգամանքից, որ 1534թ. բուրք-պարսկական հերթական պատերազմի ընթացքում (1531-1535) Հաղպուտ գտնվող Խորասին փաշան խուսափել էր Դիարբեքիի ժամանելուն պես հարձակում գործել Սաաթարագոյի վրա<sup>2</sup>, փաստաբարձում հիշատակվող Բասեսանի արևելյան շրջանների տիրակալ Քանբույաղլն այդ նույն տարեթվերի գործող ամն է<sup>3</sup>:

Ի տարբերություն նկարագրվող ճանապարհի սկզբնամասի, վերջին հատվածը՝ արարելության տարածքը, ճանապարհները, միմյանց սահմանակից շրջանները, քերդաքաղաքների ու ամրոցների գտնվելու վայրերը և այլն առավել հանգամանալի է ներկայացված: Սաաթարագոյի տեղանքի այսչափ լավ իմացությունն ու ճանաչումը հիմք է տալիս կարծելու, որ հեղինակը կարող է տարածաշրջանում Օսմանյան կայս-

---

զեքակցությունը տեսնելով, Մանուչարը նախ քարմկում է Վել գյուղում, ապա՝ փախելով Օսմանյան կայսրություն: Միայն հաջորդ տարի՝ ձմռանը, երբ շահ Իսմայիլը վերստին հաստատվեց Նախիջևանում, իսկ սուլթան Մուլեյմանը եզիպոսի արշավանքում էր, Մանուչարը Կզղու Ահմեդ օլլուի գործերի օգնությամբ վերահաստատման փորձ կատարեց: Տե՛ս *M. Fahrettin Kirzaoğlu*, նշվաշխ., էջ 115:

<sup>1</sup> *Feridün Beg, Münseferin's-Seidrin*, I, İstanbul, 1274/1858, pp. 543-544, Տե՛ս *J.L. Bacqué-Grammont*, նշվաշխ., էջ 150:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս *M. Fahrettin Kirzaoğlu*, նշվաշխ., էջ 233: ՑԱրուզածին վկայակոչում է 30-ական թվականներ թելադող այլ աղբյուրներ ևս (տե՛ս նշվաշխ., էջ 29-30):

բության գերիշխանության հաստատումը որքոնող տեղացի ազնվականներինք մեկը լինել: Քաղաքական պայքարի դրութ մերքաշվելով, տեղի իշխանատաննչ ավատական ավագանին, սեփական նկատառումներով, հաճախ էր համագործակցում կամ Օսմանյան կայսրության, կամ էլ չափական Պարսկաստանի հետ, պարբերաբար տեղեկություններ հաղորդում երկրի ներսում իշխող տրամադրությունների և ընդհանուր իրադրության, տեղի ունեցող անցուդարձերի, նախապատրաստվող ձեռնարկումների և այլ պարագաների վերաբերյալ, փատորքն վնասում տվյալ պետության գործակալի<sup>4</sup>:

Ստորև ներկայացնում ենք օսմաներին այլ վավերագրի բարգմանությունը՝ ձեռքի տակ ունենալով Ժ.Լ.Քակե-Գրամոնի և Ց.Արուլանի զույգ վերձանություններն ու ժամբազությունները, ինչպես նաև վավերագրի մամանահանությունը: Տեղանուններն ու անձնանունները տրվում են բնագրային տեսքով, հայերենի ընտանի ինչումը բերում ժամբազություններում: Քարտեզը կազմել ենք առկա հայագիտական, վրացագիտական և թուրքագիտական գրականությունն այքի առաջ ունենալով:

Նա

Կարա Ամլոնից<sup>1</sup> և Չափակյուրից<sup>2</sup> [Աստուծով] պահպանյալ ճանապարհը [հասնում է] մինչև Մուշարալի<sup>3</sup> ձախ կողմում ընկած Բինգյուլ կոչվող լեռնաբուռը<sup>4</sup>: Հարթական քանակի մարտական երբի դեպքում նրանց միջև ընկած տարածությունը միայն տասնիննգ օրվա անցնելու ճանապարհ է<sup>5</sup>: Բինգյուլ կոչվող լեռնաբուռից դեպի Կրաստան [ճանապարհին] անցնում է Փասունի դաշտավայրի<sup>6</sup> միջով, Ավնուկ<sup>7</sup> կոչվող ամրոցի ձախ կողմով, Չորանի կամրջի<sup>8</sup> մոտով, բերև անգամ Չորանի կամրջի վրայով:

Կրաստան երկիր<sup>9</sup> ուղք դնելիս, աջ կողմում անցնում է Դուրլուրա<sup>10</sup> կոչվող անհավաս ազնավորներից Քանբուրալը<sup>11</sup> կոչեցյալի սահմանը: Այդ տարածքները նրա կալվածքն են: Քուր<sup>12</sup> կոչվող ամրոցից մինչև Մափնիկ<sup>13</sup> կոչվող վայրը երկու հարյուր գյուղ կա: Ինչ վերաբերում է Քուրին, ապա այն փոքր ամրոց է: Տեղանքի մի հատվածը զգալի թեքության վրա է, սակայն այն չի կարող դիմադրել լուրջ հարվածի: Նրանց միջև ընկած գյուղերը մեծ մասամբ պատկանում են Քանբուրալը կոչվող անհավատին, իսկ մյուս մասը՝ Ազուն օղուլլար անվամբ հայտնի ազնավորներինն է, մի քանիսն էլ Դուրլուրայի խասերն են: Քանբուրալը կոչվող անհավատը միայնակ չէ, [նա] պետք է որ մի քանի նորայր ունենա:

<sup>4</sup> Տե՛ս Ց.Արուլանի, նշվ.աշխ., էջ 73:





Վրաստան երկիր մուտք գործելիս, հիշատակված Փաստանի շրջանի աջ կողմում որոշ տարածքներ են զնկած: Մյանսից ավելի աջ Ղարաչմերի երկիրն է, Կյաղղզման<sup>14</sup> անվամբ հայտնի վայրի դեմ համոզման է: Ազատ տարածքը ծախս կողմում է: Իսկ երե այժմեղից ցամկաբայում տնն-

նա մուտք գործելու, կանցնես Յրավելի<sup>15</sup> կոչվող գավառի ծայր սահմանը: Այս Յրավելի գավառը նույնպես բազմամարդ է ընդարձակ երկիր է: Յրավելիի տարածք մուտք գործելիս սկզբում գտնվում է Շեքերլո<sup>16</sup> կոչվող հայրենի վայրը, որը Մամուրվան ամրոցի<sup>17</sup> կողմնում է: [Այստեղ] խումն ու ջուրն առատ են, լեռնաբառները՝ կամաչաչառ, որսասուղերը՝ բազում և [ընդհանրապես] գեղեցիկ վայրեր են: Հիշատակված Մամուրվանի ամրոցը մի փոքրիկ ամրոց է<sup>18</sup>: Ամրոցի պարիսպը սառի լանջով բարձրանում է մինչև գագաթը: Շեքերլո կոչվող մահիճից հուսող գետը<sup>19</sup> նրա մոտով է անցնում: Հիշատակված Մամուրվանի ամրոցը Գուրդուրյա քեյի խումն է, սակայն ժամանակավորապես հանձնված է իր կառավարչին՝ Ներիման կոչվող ազնավորին: Նրան աջ կողմից հարակից Հիմյադար<sup>20</sup> անվամբ հայրենի մահիճն է ամրոցը այս Ներիմանի երկիրն է: Հիշատակված Ներիմանի երկիրը [բաղկացած է] քառասուն-հիսուն գյուղից: Այսպիսով, վերի կողմում գտնվող, Գուրդուրյայի տիրույթ Վրաստանի երկրները սրանք են, որոնք և հիշատակվեցին:

Այս հիշատակված երկրներից դեպի ձախ, մեկ անգամ իջևանելու հետազոտության վրա Յուրթումի ամրոցն է<sup>21</sup>: Այդ շրջանն անվանվում է Խախայի<sup>22</sup> կիրճ: Ըստ գեղեցիկ տեղեր են: Սրանից բացի՝ մի քանի փոքր քերտեր էլ կան: Մեկը կոչվում է Աղչա-կալե<sup>23</sup>: Այս Յուրթումի ամրոցը սկզբնապես Գուրդուրյայինն էր, բայց ժամանակավորապես Քորեսնի ձեռքն է անցել: Քորեսնի հիմնական եին քերտն Աղչա-կալեն էր: Հիշատակված այս ամրոցները ներկայիս գտնվում են Ռուստեմ անվամբ մի անհավատ ազնավորի ձեռքում: Այս Խախայի շրջանը հայրենի է մաև Իշխանդար<sup>24</sup> անվամբ: Այստեղ մտտավորապես հարյուր գյուղ կա, նրանց թվում քսան-երեսուն մասը ազնավորներ կան՝ անկախ անհավատներ:

Հիշատակված շրջաններ մուտք գործելու վայրերն են՝ Օվաջիկի<sup>25</sup>, Իսայիրի<sup>26</sup> և Վեյիրիկի<sup>27</sup> կողմերը: Սրանք՝ սկզբից մինչև հիմա հիշատակված [տարածքները], Վրաստան երկրի սահմաններն են: Վրաստանի երկիր մուտք գործելիս բանակը պետք է անցնի այս հիշատակված տարածքներով: Սրանք այստեղ ավարտվեցին:

Քիչ վերևում հիշված Մամուրվանի ամրոցի տողառուից դեպի Օլթի կոչվող քերտը<sup>28</sup> մի գետ է հոսում<sup>29</sup>: Օլթիի քերտը նասնելիս վայր ես իջնում: Այս Մամուրվան քերտից մինչև Օլթի բանակի նամար մեկ օրվա անցնելու ճանապարհ է<sup>30</sup>: Ե՛վ այս Օլթիի քերտը, ե՛վ Մամուրվանի քերտը Գուրդուրյայի խումերն են: Հիշատակված Օլթիի քերտը մախկինում Յրավելիի քաղաքն էր: Այս Օլթի քերտը գտնվում է Յրավելիի կազմում: Այս Յրավելին [սխալ] քնակեցված ու քարգավաճ է՝ մտտավորապես երկու հարյուր գյուղ կա: Տեղանքն ուղիղ է և հարթ: Այս շրջանի լեռներն ու հարթավայրերը հույժ բարեկարգ են:

Սրանից հետո, Վրաստանի Ախշբայի<sup>31</sup> ուղղությամբ, Փեննեք<sup>32</sup> կոչվող մի տեղամբ էլ կա: Այնտեղից մինչև Փեննեք կրկու անգամ կայանելով կհասնես: Այս Փեննեք գյուղի<sup>33</sup> մեջ մի եկեղեցի կա<sup>34</sup>, այն վզի պես երկարածիզ ձև ունի: Այն ևս պատկանում է Թավելիին:

Սրա և սրանից այն կողմ գտնվող Արդահան կոչվող երկրի<sup>35</sup> միջև հսկա մի գառիվեր կա<sup>36</sup> փոստահարար մեկ օրվա անցնելու ճամապարհ է: Դադար առնելու հարմար տեղ է: Այնտեղից անցնելիս Արդահան կոչվող երկիր կիջնես: Արդահանի հարթավայրը Վրաստան երկրի գեղատեսիլ վայրն է: Մինչև Թյումուկի ամրոց<sup>37</sup> երեք հարյուր գյուղ կա: Փառավորապես շնն է և բնակեցված՝ կամաչաժածկ, ջրատար և մարգագետիններով հարուստ տեղեր են:

Արդահանի ձախ կողմում գտնվում են Եակչարն<sup>38</sup> ու Արդանուջը<sup>39</sup>: Արդանուջի քերպը<sup>40</sup> փոքր է: Մտո անցյալում Դուրդուրան այն խղեց իր հորեղբոր որդու՝ Հուվանա քեյի<sup>41</sup> ձեռքից: Նրանից այն կողմ, Զորուխ գետի<sup>42</sup> երկու կողմերում ստորին հատվածում, Աջարա<sup>43</sup> և Մուրդուլի<sup>44</sup> շրջաններն են: Այդ ստորին հոսանք կհասնես, և ճամապարհն էլ ավարտվում է:

Դեպի ետ՝ վերնամասում Արդահանն է, որ արդեն հիշատակվեց: Այտեղ տանող մի ճամապարհ ևս կա, որով մախկիմում Զաղուք փաղիչանը<sup>45</sup> Աղշղայի վրա սուրբ պատերազմի էր գնում: Այս ճամապարհով կմտնես [և] դուրս կգաս: Սա Դումուլբա կոչվող հայտնի ճամապարհն է: Սրանից քաջի, այս Արդահանի հարթավայրով [անցնող] մի ճամապարհ էլ կա, որը ծառանում է Թյումուկ կոչվող քերպը: Այս Թյումուկի քերպը ևս Վրաստան երկրի հայտնի և ամուր քերպերից է: Սրա վերևի կողմում, Թյումուկ գետի վրա, լայնարձակ մի ամրություն կա: Նախկինում, սուլթան Սելիմ<sup>46</sup> խանի օրոք, Ղզզը Ահմեդ օղլու Էմիրզա քեյի<sup>47</sup> Վրաստան արշավելու ժամանակ, Մուրխան անունով անհավատը, որը Դուրդուրայի աներն էր, իր գերդաստանով և ժողովրդի հետ [այս] քարանձավում էր: Զորեսենի ընտանիքն ու ժողովուրդը ևս նրա հետ էին: [Էմիրզա քեյը] մի քանի ազնավորներ գերեզով՝ նրանց այնտեղից դուրս է հանել: Զորեսենի երջանկության շնորհ<sup>48</sup> գալու հիմնական պատճառը այդ քարանձավից [նրա] ընտանիքի ու ժողովրդի դուրս քերումն ու առանց իրեն տեղյակ պահելու երջանկության շննն ուղարկելն էր: Քիչ անց՝ ինքն էլ իր որդիներով հանդերձ ուղարկվեց:

Դարձյալ Թյումուկ գետի վերևի կողմում Զիլիչա<sup>49</sup> անվամբ մի ամառիկ քերպ ևս կա: Այն նույնպես պատկանում է Թյումուկի մահիկին: Թյումուկ քերպի տիրոջ անունը Ռ-գրար է, [նա] Դուրդուրայի աներ Մուրխանի երրորդորդին է և [այդ] Դուրդուրա կոչվող անհավատի լավագույնը հույժ ազնավորներից է:

Այս Թյումուկի մահի՞նքն Ղըզըրաշի երկրի ուղղությամբ<sup>50</sup> Ջուս-  
հաղ<sup>51</sup> կոչվող մի երկիր է: Հարթավայրոտ և դաշտաչառ տեղանք է, խիտ  
ընակեցված գյուղերով: Արդախանի երկիրը Վրաստանի առավել ընտիր  
վայրերից է: Այս գյուղերի հետ մեկտեղ, [այն] մի երկիր է, որտեղ  
գտնվում է Ազդուր կոչվող մի մեծ եկեղեցի<sup>52</sup>: Մինչև նրան հասնելը մո-  
տավորապես երկու հարյուր գյուղ կա:

Դեպի այս Ազդուր կոչվող եկեղեցին հոսող գետի<sup>53</sup> վերին մասում,  
Վրաստանի մայրաքաղաք Ախալցխա կոչվող քաղաքն է: Նրա շրջակայ-  
քում երկու հարյուր գյուղ կա:

Վրաստանի հայտնի և ճանաչված վայրերն ու երկրներն այս  
հիշատակված տեղերն են: Սրանից քացի, բազմաթիվ են նաև քիչ քե-  
չատ նշանակալի այլ շրջաններն ու վայրերը, որոնք սակայն չհիշա-  
տակվեցին:

Այս Դուրդուրա կոչվող անհավատի ազգակամներից և հագառակ-  
ներից մեկը նրա հարեղբայր Մեմուչիրն<sup>54</sup> է, որն այժմ քաշված է եկեղեցի-  
ներից մեկում: Նրա (Դուրդուրայի) եղբորքոր որդու անունը Յուվան քեյ  
է: Յուվան քեյը մի եղբայր ունի, որի անունը Քեյխալուսեվ է: Մանր քեյե-  
րի անունները սրանք են, որոնք և հիշատակվեցին:

Նախ, Դուրդուրայի կնոջ եղբայրներն են Մուրխանի որդիները, ո-  
րոնք հինգ եղբայր են: Նրանցից երեցի անունը Դութնա է, մյուս եղբեղ-  
քոր որդու անունը Ռգբար է: Ռգբարը Հունամ անունով եղբայր ունի:  
Սրանք իրենց հիմնական ժառանգություններն իրականացնելուց քացի,  
չորք քառասունական-հիստմական ազնավորներ ունեն: Մուրխանը ևս  
մի եղբայր ունի՝ անունը Բյուկնկ: Նա նույնպես մի քանի որդի ունի:  
Սրանից քացի, Աաղդուր անվամբ մի անհավատ էլ կա: Նա վերոհիշյալ-  
ներին հակառակորդ ամենավորություն է: Բոլոր [նրանք] եղբայրներ ու  
որդիներ են և գուցե ավելին ևս: Այս հիշատակվածները միասին են: Ան-  
դարձան անունով մի ազնավոր էլ կա, որին պատկանում է Ուղ<sup>55</sup> կոչվող  
շրջանը: Նա ևս նրանց հետ միասին է: Քանթուրալը անվամբ ազնավո-  
րը իր եղբայրներով հանդերձ և ամբխտըրը հայտնի տոհմից են: Նրա  
(ամբխտարի) անունը Քյուար է: [Նա] շատ եղբայրներ ունի: Սրանք էլ  
քավական բազմանդամ համայնք են կազմում: Սրանց մեջ նա հայտնի  
ամենավորություն է: Նրա երկիրը տարածում է՝ ընկած է հիշատակված  
վիլայեթից ներս և դուրս: Մեկն էլ Շմգան օղլուն է: Իր ազգակամներով ու  
ընդձեռն ժարդկանքով նա ևս մյուսներին համագոր է: Նրա երկիրը Ջե-  
վանաղ կոչվող տարածքն է:

Դուրդուրային հպատակվողները գեթազանցապես նրանք էին,  
ովքեր հիշատակվեցին վերևում: Սրանից այն կողմ, Ազդուր կոչվող ե-  
կեղեցու մտոից դեպի Վրաստան երկրի կողմը գետ է հոսում<sup>56</sup>: Մա-  
վախտանց Մելիքի երկիրն է, որը Էմիրգա Ջարուկի<sup>57</sup> քրոջ որդին էր:

[Լա] մահացած որդիներ էլ ուներ: Նրանք տիրում էին իրենց մախնի-  
մերի երկրին:

Նրանից այն կողմ թիֆլիսի իշխանությունն է, իսկ ավելի հեռու՝  
Ենքիի րեյ՝ Լեվենդ րեյինը<sup>28</sup>: Նրանից ներքև, ծովի աղբյուրյանը Քուրա-  
քիսի թագավորն է<sup>29</sup>: Այստեղ սուլթան Մելիմ խանը սուրբ պատերազմ էր  
վարում: Այս Կուրդուրա կղզիդն աննավատների իշխանապետ էր:

Նրանից ավելի ներքև Գյուրեղն է<sup>30</sup>, որը սահմանակից է Տրապզո-  
նին: Նրանից այն կողմ մինչև Մուխամ կղզիդ (քաղաքը), որտեղ հնա-  
գույն ժամանակներից սկսած մավահամգիստ կար, և մինչև Էյրբուս լե-  
ռան ստորտող Դադյանի սարածքն է: Այն կողմ Արխազիայի երկիրն է:  
Լեռների հետևում, մինչև Դեմիր Քափու (ընկած են) Չըրքեզների երկր-  
մերն ու Լեկեզլատանը: Մյուս հարավային կողմում Եիրվանի երկիրն է:

Վերջ

SAMVEL MURADYAN

### AN OTTOMAN DOCUMENT OF THE XVI CENTURY

By publishing a document, which was kept in the archives of the Council of Ministers in Stambul (Feket found, N 134) J.L.Bacque-Grammont, a French orientalist put into circulation an historical document concerning to the Semsakhe principality (Sasabago).

The sourceal examination of the document makes clear that it is a report, which was written in the period of ruling of Khurkuhare III, after the death of sultan Selim, in 1520. It indicates the basic way and route of the turkish army, which had to pass from Diarbekir to Sasabago, through Tchapskdjour, Mush, Basen valley, Tortum, Olti, Mamurvan, Banak and Ardsban, describes the separate settlements, defences, castles positions, gives the density of population etc.

### ՕՍԼՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարա Ամիցը այժմյան Դիարբեքիի քաղաքն է:
2. Մապաղդուրը (Չաֆաղչուր, Չերաքչուր, Մասպաղճուր, Մարաքչուր) նախնացվում է ներկայիս Բինգյուլ քաղաքի հետ: Տե՛ս J.L.Bacque-Grammont, Ջըվաշխա, էջ 155: Գտնվում է Արածանու և Մապաղդուր գետի (Գինեկի) միախառնման վայրից հյուսիս՝ աջ կողմում: Էվլիա Չելեբու վկայմանը՝ Մապաղդուրի անրոցի կառուցման ավանդությունը կապվում է Ալեքսանդր Մեծի հետ: Տե՛ս Էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Գ, Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Ա.Խ.Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 165-167:
3. Խոսքը Մուշի մասին է:

4. Տապաղոսը (Գիմնիկ) գետի և Ալաճախու միախառնման վայրի ավազանում, Մշո դաշտից արևմուտք տարածվող Տապաղոսի դաշտն է: Ընկած է Բյուրակն-Մեծոբյան լեռնաշխարհի և Հայկական Տավրոսի միջև:
5. Վալկերագրի հեղինակը, հավանաբար, մկառի ռուի Ամիրից մինչև Սամցխե-Սաաքաբազոյի սահմաններն ընկած տարածությունը, քանի որ Դիաքսեքիոյից Բինգյոլ տանող ճանապարհը (չուքը 270 կմ) հնչոտ հաղթահարելի է և այդպիսի ժամանակ չի պահանջում:
6. Էրզրոմից արևելք, Ալաքս գետի ձախի ուղղությամբ ձգվող Բասեանի դաշտն է:
7. Ավնիկի ամրոցը գտնվում է Վերին Բասեան գավառի հարավային սահմանագլխին: 1054թ. անջուղների կողմից ամառ ամբոյն որ կոչի Ամնիկ գրավեան ու ավերման մասին վկայում է Արիստակես Լաստիվերցին: Տե՛ս Գառնուրին Արիստակես Լաստիվերցոյ, աշխատասիրությամբ Կ.Ն.Յիլոզյանի, Երևան, 1963, էջ 89:
8. Այսօրվա Զոյվորոյտից ոչ հեռու գտնվող և «տուխ քան զ700 յերկայնութիւն և ից 30՝ ի քայտութիւն» ռանցող Չոբանդեհ կոչվող կամուրջն է, որի ճարտարապետական կերպի, կառուցման, հետագա վերանորոգումների և հարակից շինությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններն ի մի է հավաքել Դ.Անշահը: Տե՛ս Հ.Ղ.Անշահ, Ալաքսատ, Վեմետիկ, 1890, էջ 24: Կամրջի մասին հիշատակություններ ունեն մաև է.Չեկերին (տե՛ս է.Չեկերի, Տշվ.աշխ., էջ 67) և Քեսաբի Չեկերին (տե՛ս «Թուրքական արդյուրանեց...», կազմեց Ա.Կ.Սաֆրասաթյան, Կ. Ք, Երևան, 1964, էջ 26):
9. Բնագրում օգտագործված է *گورستان دیاری* (Görcistan diyarı) անվանումը:
10. Սաաքաբազոյի կառավարիչ Դուաբորաթի III է (1516-1535):
11. Բասեանի արևելյան և հյուսիս-արևելյան շրջաններում իշխող սիփահիներեցի է Արրզ Բաթրի ռոջին:
12. Զոր կոչվող ամրոցը պետք է գտնվելիս լինի Չոբանի կամրջից արևելք: Հնարավոր է, որ այն Դաքեռուկ (այժմյան Խուզեկ) ամրոցի հետ է նույնանում:
13. Սահմիկը, ամենայն հավանականությամբ, նույն Թոբրոս գետի վերին հոսանքի ավազանում գտնվող Շիպեկ կոչվող քնակավայրն է:
14. Կաղզվանի մասին տե՛ս Հ.Ղևոնդ Անշահ, Տշվ.աշխ., էջ 45; Ա.Տ.Երնմյան, Հայաստանը քառ «Ալշարհագրոյց»-ի, Երևան, 1963; Հ.Ա.Երնիկյան, Պատկերազարդ քնաշխարհիկ քառարան, Կ. 2, Վեմետիկ, 1907, էջ 263; Հ.Ղևոնդ Անշահ, Տեղագրութիոյց ի Փոքր Կի Մեծ Հայս, Վեմետիկ, 1864, էջ 216-217:
15. Թուրքական արդյուրաներում Թավնի (Dav Tav) - Էն) ձևով հիշատակվող երկիրը Դորոխի միջին հոսանքի և նրա արևելոյցյան վտակների ավազաններում տարածվող Տայք աշխարհն է: Տե՛ս M.Fahrettin Kurtoğlu, Տշվ.աշխ., էջ 45, մաև՝ Յ.Արուստան, Տշվ.աշխ., էջ 34-40:
16. Բնագրում օգտագործված է ոչ թե Ընքերլու, այլ Ընքեղու ձևը: Տե՛ս J.L.Bacqué-Grammont, Տշվ. աշխ., էջ 158:

17. Էրզրումից դեպի հյուսիս-արևելք, Օլթու գետի ձախ կողմում գտնվող մերկայիս Լարման գյուղաքաղաքն է: Աղբյուրներում հիշատակվում է Մամուրան, Մամուրան, Լամուրան, Լարման, Մամուրվան և մի այլ ձևերով: Տե՛ս Հ.Յ.Տաշյան, Տայք, Դրացիք և Խոտորչուք, հ. Ա, Վիննա, 1973, էջ 181:
18. Շատ Է.Չիլերու Մամուրվանի ամրոցը կառուցվել է մի վրացի բնի կողմից և գերագանցապես եղել մահմեդարնակ: Տե՛ս Է.Չիլերի, նշվ.աշխ., էջ 114, մաս՝ Ղ.Ինճինյան, Աշխարհագրության յոթից մասանց աշխատքի, մաս Ա, Վիննուիկ, 1806, էջ 126: Այս բնակավայրի հիշատակությամբ ենք հանդիպում «Դարի և Տիրիճանի վկայաբանության» տեքստում (տե՛ս «Վանքեր Մատենադարանի», 9.12.1977թ., էջ 185):
19. Օլթու գետի վտակներից մեկն է:
20. Է.Չիլերին Արզահանի մոտ եղած բերդից բվարկելիս հիշատակում է Հեմազար կոչվող բերդը (տե՛ս նշվ.աշխ., էջ 113): Այն պետք է որ Հեմազարի հետ նույնը լինի:
21. Թորթումի ամրոցը (Տայքի Ոլթու գավառ) համանուն գյուղաքաղաքի հյուսիսային կողմում, գետի ձախ ափին գտնվող փոքրիկ մի բերդ է: Տե՛ս Ղ.Ինճինյան, նշվ.աշխ., էջ 93-94: Է.Չիլերու մոտ պահպանվել է բերդի մանրամասն նկարագրությունը: Տե՛ս Է.Չիլերի, նշվ.աշխ., էջ 128:
22. Հեղինակը նկատի ունի Թորթումի շրջանում, համանուն գետի ձախակողմյան հատվածում միջև Օլթու գետի հետ միախառնման վայրն ընկած տարածքը: Այստեղ է գտնվել Խախտ (Խախտ, Խախու) կոչվող գյուղը:
23. Թորթումի շրջանի առավել հայտնի բերդերից է, գտնվում է Թորթումի արևելյան կողմում: Շատ Է.Չիլերու Աղյա-կալին (Ընկույզի բերդ) Ուլանի ֆաշայի կողմից կառուցված և 600 տմից քաղկեցած մի ամրոց էր: Տե՛ս Է.Չիլերի, նշվ.աշխ., էջ 125: Ֆորթը իրավացիորեն այն նույնացնում է մերկայիս Ունգյուզեկի (Ընկուզեկ) կամ Ունգեզեկի հետ: Տե՛ս M.Fabretti Karzoğlu, նշվ.աշխ., էջ 200:
24. Ժ.Լ.Բակե-Գրամոնի գրադարձած տեքստում օգտագործված է Իշխանալ (Ishanal) ձևը: Տե՛ս J.L.Bacqué-Grammont, նշվ.աշխ., էջ 152: Օլթու գետի հոսանքի վերին ձախակողմյան հատվածում գտնվում էր Իշխանաց գյուղը, որից էլ եսվանաբար գալիս էր այդ շրջանի անվանումը: Գյուղի մասին տե՛ս Ղ.Ինճինյան, նշվ.աշխ., էջ 130:
25. Էրզրումից դեպի հյուսիս-արևմուտք, Սպիք գավառի հարավ-արևելյան մասում գտնվող, արևմուտքից հյուսիս ձգվող դաշտառատ փոքրիկ մի գավառ է: Թ.Հակոբյանը Օվաջիկի դաշտը, հետևաբար մաս՝ շրջանը, նույնացնում է Շաղագոնքի հետ: Տե՛ս Թ.Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 493:
26. Վորդս գետի միջին հոսանքի շրջանում տարածվող Սպիք գավառն է: Հեղինակը, հավանաբար, նկատի ունի ոչ այնքան գետի աջ ափին գտնվող Սպիք (մերկայիս՝ Իսպիր) քաղաքը, որքան շրջանը:
27. Վեսիբիկը, ըստ ամենայնի, Թորթումից դեպի արևմուտք գտնվող Քեսիրիկ կամ Քասիրիկն է:

28. Օլթու գետի միջին հոսանքի շրջանում գտնվող Օլթի քեղաքաղաքն է: Բերրը նկարագրում և նրա մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում Զ.Քոլտը: Տե՛ս *Karl Koch*, *Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, II, Reise im pontischen Gebirge und türkischen Armenien*, Weimar, 1846, s. 248.
29. Նաբինանի աջ կողմով հատը Օլթու գետն է:
30. Նրանց միջև ներկայիս գործող ճամապարհն ունի 34 կմ երկարություն:
31. Խուսքն Ալաաջիխի մասին է: Տեղի հայտության միջավայրում կենցաղավարող Ալաախ և Ալալաա հնչյունները գալիս են թուրքական արտասանական ձևից:
32. Փեննկ (Քամակ, Շենք, Փամակ) գավառը տարածվում է Օլթու գետի աջակողմյան համանուն վտակի միջին հոսանքի ավազանում:
33. Գյուղն ընկած է Օլթի քեղաքաղաքից մոտավորապես 30 կմ դեպի հյուսիս-արևելք: Քամանակին այն եղել է նախնականստ կենտրոն: Տե՛ս *Հ.Յ. Տաշեան*, նշվ. աշխ., էջ 45:
34. Բամակի նշանավոր եկեղեցին մինչև 1789թ. կանգում է եղել: Եկեղեցու մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում Զ.Քոլտը: Տե՛ս *Karl Koch*, նշվ. աշխ., էջ 243:
35. Աղախանի շրջանը (պատմ. Գուգարաց աշխարհի) տարածվում է Կուր գետի ակունքների շրջանում, արևելյան կողմում սահմանակից է Ջավախքին: Գավառն այսօր կազմում է Կարսի մարզի հյուսիս-արևմտյան հատվածը:
36. Այս շրջանները միջանցից բաժանված են հարավայն հյուսիս ձգվող Աղախանի-Մեծբաղն (Սողանլուղի) լեռնաշխարհով:
37. Թամուկը (Թմուկ, վրաց. Թմուկլի) Կուր գետի ձախ ափին (Գուգարաց աշխարհի Ջավախք գավառ) գտնվող, XII դարից հայտնի քրիստոնեական կենտրոն է:
38. Շակչեքը (Շաչաա) ընկած է Գուգարքի համանուն գավառի և գետի վերին հոսանքի ավազանում, Արաբանիի լեռներից ձախ: Շակչեք քաղաքը ներկայիս Յենիքյոյն է:
39. Աղաանուցը գտնվում է Ղերոխ գետի աջակողմյան համանուն վտակի միջին հոսանքի ավազանում (պատմ. Գուգարքի Կուրսք գավառի կենտրոնամասում): Ներկայիս Արախայն է:
40. Ջաղարի վրա իշխող բարձր քարածառն V-VI դդ. կառուցված ամրոց է: Բերրի նկարագրությունը տե՛ս *Հ.Է. Թոմնեան*, նշվ. աշխ., հ. 1, էջ 317:
41. Իվանի քեյն է *کب ان*
42. Հայտնի Ղերոխ գետն է:
43. Ղերոխ գետի ստորին հոսանքի աջ կողմում, Ջեյա (= Վեյքն) Շակչեքի և Մեխեսի լեռնաշխարհների միջև ընկած Ազարխայի շրջանն է:
44. Մուրղուլիի շրջանը տարածվում է Ղերոխ գետի ստորին հոսանքի ձախ կողմում Արդվին քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք:
45. Ակելյունյունների Ցակնոք սուլթանն է (1478-1490):
46. Մուրթան Սելիմ I (Անդ, 1512-1520):
47. Բաբերդի, Երզնկայի և Գեղզանի սամբակների կառավարիչ Նրզը Անձեղ օղլու Միրզա քեյն է, որին սուլթան Սելիմ I-ը 1515թ. Մամգիսի արաբնկ



Ազնարուկի մահից հետո, Ղուարղուարե III-ի և նրա հորեղբայր Մամուչարի միջև առաջացած հակամարտությունը իրագործվեց Վրաստան:

48. Բնագրում օգտագործված է *استانه سعادت* (astane-i sa'adet): Միջնադարում այն Կ. Պոլսի մեծարական անվանման ձևերից մեկն էր:
49. Օգտագործված գրականության մեջ այս անրոցի վերաբերյալ որևէ տեղեկություն չենք գտել:
50. Հնդիմակը նկատի ունի Պարսկաստանի ուղղությունը:
51. Խոսքը Վուզարաց աշխարհի Ջավախք գավառի մասին է:
52. Ազդարը (Ածոր, Ասկուրթ) գտնվում է Ախալցխից հյուսիս-արևելք: Եկեղեցու մասին կան բազմաթիվ վկայություններ:
53. Հիշատակվող գետը Կուրն է:
54. Ղուարղուարե III-ի դեմ մղած պայքարում Մամուչարի հիմնական սատարը Օսմանյան Թուրքիան էր, մինչդեռ նրա եղբորորդին ապավինում էր Սեֆևյան Պարսկաստանին:
55. Ուղ կամ Ուղե կոչվող շրջանն Ախալցխիսին սահմանակից է արևմտյան կողմից, ընկած է Կուր գետի համանուն վտակի ավազանում: Կարողիկե դավանությանը իսրաիմ նրա հայ բնակչությունը աստիճանաբար կորցրեց ազգային նկարագիրը և վրացիացավ:
56. Խոսքը Կուր գետին է վերաբերում:
57. 1502-1515թթ. Սամցխեի արաբեկ Միքզանարուկն է: 1512թ. Էրզրոմի սերասբայրի զինավորությամբ արաբեկության սահմաններ ներխուժած քուրդական բանակին սիրալիք ընդունելություն ցուցաբերելով և նպատակալարյուն հայտնելու միջոցով նա կարողացավ շրջանը զերծ պահել թալանից ու ավերումներից: Տե՛ս *M. Fahrettin Kirzozlu*, նշվ. աշխ., էջ 88:
58. Կախեթի Ասան բազալտրն է (1520-1574): 1521թ. նա արշավել և գրավել էր Ծաքին, ուստի վախերագրում հիշատակվում է իբրև Ծաքիի քեյ:
59. Քուրախի (Խմերթիայի) թագավոր Բազրատ II է (1510-1548):
60. Ռինո գետի ստորին հոսանքի ծախ կոչվում ընկած Գուրխայի շրջանն է:

## ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

### ՆՈՐ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ՏԵԶՍԵՐՈՒՄ

Վերջին երկու տասնամյակներում հրատարակված (գերազանցապես՝ ինքնագիր եղանակով) խեթական սեպագիր տեքստերում վկայված են Հայկական լեոնաշխարհի արևմտյան հատվածում կամ դրա անմիջական հարևանությամբ տեղադրվող զգալի քանակությամբ տեղանուններ, որոնք առայժմ տեղ չեն գտել հայագիտական հրատարակություններում: Որոշ քանակությամբ տեղանուններ են պարունակում ավելի վաղ հրատարակված տեքստերը, որոնք ինչ-ինչ պատճառներով վրիպել են մեր մասնագետների ուշադրությունից: Այս տեղանունների ուսումնասիրությունը անչուշտ կմպատի հայոց պատմության վաղնջական փուլի հարցերի հետազոտությանը լուսարամմանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, ստորև կմերկայացվեն այդ մյուսերը՝ համապատասխան քննազրային հղումներով և մտտավոր տեղադրության մասին համառոտ մկատառումներով<sup>1</sup>:

- 1) KUR<sup>URU</sup> Am-b'ara (Ամբ/պարա)
- 1) KUR<sup>URU</sup> Am-ba-ra (KBo XVI 20, 6')
- 2) URU<sup>URU</sup> Am-ba-ra (KUB XL 80 ԴԿ 12)\*
- 3) URU<sup>URU</sup> Am-pa-ra (KBo XVIII 50 ԴԿ 7,8)

RGTC 6.1, S.13; Ertzen, 1973, p.9\*\*.

Sbքստեր.

1) KBo XVI 20 - Առայժմ անհայտ պատկանելության պատմական քնույթի տեքստի քեկոր<sup>2</sup>:

2) KUB XL 80 - «Դատական պրոցես» պայմանական անվանումը կրող տեքստերից<sup>3</sup>: Հիշատակվում են Իսուվայի քաղաքի Կիլուշխեպան և ոմն Այի-շարբուման (վերջինս, հավանաբար, Իսուվայի արքա Արի-շարբուման է (տես Singer, 1991, p.328):

3) KBo XVIII 50 - Խեթական պաշտոնատար անձի մամակը՝ առաջված արքային<sup>4</sup>. Հիշատակվում է Ամբարա քաղաքից քնակության տեղահանության մասին: Թվագրվում է Մովսեսապլիս II-ի կամ Խաթթու-

սիլի III-ի շրջանով (ճ.թ.ա.XIIIդ. առաջին կես) (Hagenbuchner, 1989, S.97):

Տեղադրությունը:

\*Ամենայն հավանականությամբ, գտնվել է Իսուվայում, քերև, Եփրատից արևմուտք:

2) <sup>URU</sup> A-ri-ḫu-wa (Արիխուվա)

1) <sup>URU</sup> A-ri-ḫu-u-wa (KBo XVI 42 ՀՎ 9<sup>7</sup>)

2) <sup>URU</sup> A-ri-ḫu-w[a] (KUB XL 90 ՀՎ 14<sup>7</sup>)

RGTC 6.1, S.31; Ertem, 1973, p.14 (առկա է սխալ <sup>URU</sup> A-ri?-aš-ḫa ըմբռնումը)։

Տեքստեր.

1) KBo XVI 42 - Ըստ հրատարակչի<sup>5</sup>, Իսուվայում տիրող իրավիճակը նկարագրող<sup>6</sup> աղբյային ուղղված խեթական պաշտոնյայի մամակ-գեկույցը, որտեղ, վնասված ենթատեքստում, ի քիմս այլ քաղաքների (ոչոնցից տես ստորև՝ Ḫatima, Manzana, Mezzari, Sinuwa), նիշատակվում են Արիխուվայի օավագները:

2) KUB XL 90 - «Ղատական պտցես» ամվանումը կրող տեքստերից<sup>8</sup>, որտեղ ունի <sup>URU</sup> ISTAR-ն-ն ներկայացնում է Արիխուվա քաղաքում ինչ-որ մեկի կատարած սև մոզության գործողությունը, որը «Ալիշարբու-մայի կնոջ»<sup>7</sup> մահվան պատճառ է դիտվել:

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսուվայում գրեթե հաստատ է:

3) <sup>URU</sup> A-ri-wa-aš-šu-ḫi(?) (Արիվասսուխի)

<sup>URU</sup> A-ri-wa-aš-šu-ḫi(?) (IBoT II 131 ՀՎ 13)

RGTC 6.1, S.37.

Տեքստ.

\*IBoT II 131 - Տարբեր քնակավայրերում Պիլիվա աստծո պաշտամունքի կենտրոնների գործունեության վերակազմավորմանը նվիրված տեքստ է<sup>9</sup>: Ասվում է, որ մախեխնում Իսուվայի աղբյան ժառուցումներ էր կատարում Տիվալիյա քաղաքի <sup>IZEN</sup> իտրաֆ կոչվող տոնակատարության առթիվ, սակայն այժմ նա դադարել է կատարել իր պարտականությունները:

Տեղադրությունը:

\*Իսուվայում տեղադրելու միակ կովանը այս երկրի աղբյայի պաշտամունքային գործունեությունն է նշված քաղաքի առնչությամբ: IBoT II

131-ում հիշատակվող մյուս քնակավայրերը նույնպես առայժմ չեն տեղադրվում (Šaššuna, Abia, Gaparšakkan, Hamiyara, Haruša, Ikkuna, Pulantarišša, Gopiliwanta, Hazušra, Himurwa, Ituna-x, Gak-x-na, Ša-x-ja քաղաքները և Lihša լիռը): Սրանցից միայն տուրա-ն է համեմատաբար լավ վկայված այլ տեքստերում, սակայն բացի վերինեփրատյան գոտու հետ առնչակցությունից, կոնկրետ տեղադրման համար կո վան չկա: Պիքվա աստծո պաշտամունքը լայնորեն տարածված էր հեթանոսական պետությունում դեռ Հին քաղաքագրության փուլից (մ.թ.ա.XVII-XVIդդ.) և դրա պաշտամունքի կենտրոնները գտնվում էին Փոքր Ասիայի տարրեր շրջաններում<sup>6</sup>, այսինքն, վերոհիշյալ քնակավայրերը փնտրել միայն Իսուվայում արդարացված չի լինի: Այնուամենայնիվ, Իսուվայում տեղադրման օգտին կարող է վկայել այն փաստը, որ Արիվաստիսին հիշատակվում է Տիվալիյա քաղաքի և Իսուվայի արքայի հետ միևնույն ենթատեքստում:

- 4) <sup>URU</sup>Artašaiša (Արտասայսա)  
<sup>URU</sup>Ar-ta-šu-uš-ša (KUB LVI 40 Հ 4 IV 19')

RGTC 6.1, S.13.

Տեքստ.

\*KUB LVI 40-ը<sup>10</sup> պատկանում է խեթական սեպագիր կորպուսում լավ վկայված՝ ծիսական ինվենտարը ներկայացնող տեքստերի շարքին<sup>11</sup>: Հիշատակվում են Իսուվայի (և այլ շրջանների?) քաղաքների աստվածներին տրվող մատուցումները:

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսուվայում հստակ չէ:

- 5) <sup>URU</sup>Haršalaša/i (Նարսալասա/ի)  
<sup>URU</sup>Har-ša-la-aš-ši (KBo II 1 II 32)  
<sup>URU</sup>[Ha]r-ša-la-ša-an (KUB XLIX 11 II 4')

RGTC 6.1, S.32; Ertem, 1973, p.43.

Տեքստեր.

1) KBo II 1 - Ինվենտարային տեքստ, որտեղ հիշատակվում է խրաճ՝ կոչվող սրբավայրում պահվող <sup>URU</sup>Haršalašši քաղաքի Ամպրուպի աստծո արձանը<sup>12</sup>:

2) KUB XLIX 11 - Գուշակային տեքստ, որի նպատակն է պարզել Ազզիի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվելիք) արշավանքի հնարավոր ընթացքը<sup>13</sup>:

Տեղադրությունը:

\*Չնայած երկու քաղաքների անվանումները գրեթե համընկնում են, սակայն դժվար է վստահաբար ընդունել դրանց նույնությունը: Համեմայնդիսա, KUB XLIX 11-ում հիշատակվող քաղաքը գտնվել է Հայաստայի Ուրա քաղաքի շրջակայքում կամ դրան հարող խեթական տարածքում:

6) <sup>URU</sup>Hatima (Խաթիմա)

<sup>URU</sup>Hā-a-ti-ma (KBo XVI 42 ՀՎ 18')

<sup>URU</sup>Hā-a-[ti-ma] (KBo XVI 42 ՀՎ 12')

[<sup>URU</sup>Hā-a-]ti-ma (KBo XVI 42 ՀՎ 28')

RGTC 6.1, S.101; Ertem, 1973, p.45.

Տեքստ.

\*KBo XVI 42 - Տես վերը՝ Arīḫurwa.1.

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսուվայում հստակ է:

7) <sup>URU</sup>Kardušša (Կարդուսա)

<sup>URU</sup>Kar-du-uš-ša (KUB LVI 40 ՀՎ IV 17')

\*RGTC 6.2, S.68.

Տեքստ.

\*Տես վերը՝ Artašušša.

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսուվայում հստակ է:

8) <sup>URU</sup>Kuwarpaša (Կուվարպիսա)

<sup>URU</sup>Ku-wa-ar-pi-ša (IBoT II 129 ՂՎ 10)

\*RGTC 6.1, S.233 (Իսուվայում); Ertem, 1973, p.83 (նշված է որպես <sup>URU</sup>Kuwarpašaiwa).

Տեքստ.

\*Գուշակային հարցման տեքստ է<sup>14</sup>, որտեղ ներկայացված են Խաթթիի տարբեր բնակավայրերում գտնվող աստվածների տաճարների տոնակատարությունների ժամանակ մատուցվող մվիլատվությունների հարցում մախկիմում եկատված քերացումների պատճառները: Հայտնվում է այն մասին, որ մախկիմում աստծուն մատուցումներ էին կատարում Իսուվայի Կուվարպիսա քաղաքի բնակիչները, սակայն այժմ նրանք քերացել են և այդ պարտականությունը իր վրա է վերցրել Իսու-

վայի արքան: Այս տեղեկությունը բույլ է տալիս Կուվարսիասան վաստ-  
հորեն նամարեղա Իսուվայի քաղաք:

Տեղադրությունը

\*Տեղադրությունը Իսուվայում հասակ է:

9) <sup>URU</sup>Liita (Լիտասա)

<sup>URU</sup>Li-it-ta

(KUB XXVI 62 ՀՎ IV(?) 35')

RGTC 6.1, S.249; Erten, 1973, p.87.

Տեքստ.

\*Խեթական տեքստային հյուսիս-արևելյան շրջաններից (կասկերի  
երկիր) և վերինեփրատայան երկրների առանձին քնակավայրերից  
հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների  
ցուցակ<sup>15</sup>: Տեղանվան սկզբում *a-e/i* հերթագայությունը լուրջ խաչմուտ չէ,  
քանի որ ցուցակում էրխիտային (<sup>URU</sup>Erhita = <sup>URU</sup>Arhita) նախորդում է  
Տեմիյա քաղաքը, որը, թերևս, նույնն է, ինչ այլ տեքստերից նայանի  
<sup>URU</sup>Timmiya-ն (Տյումիյա, Ժաման. *Ջիմիմ* Երզնկայից քիչ հարավ-  
արևելք)<sup>16</sup>, որը պիտի գտնվեր Պախիտավայի (KUR <sup>URU</sup>Pahhuwa) և  
Արխիտայի (<sup>URU</sup>Arhita) հարևանությամբ<sup>17</sup>: Պայմանագրի տեքստի՝ մեզ  
հետաքրքրող հատվածը, որ կրկնակի տողանջատիչով բաժանված է  
նախորդ մասից, մեղակայացնում է հիմն տեղանուններ հետևյալ  
հաջորդականությամբ <sup>URU</sup>He-x-[...], <sup>URU</sup>Se-a-la, <sup>URU</sup>E-er-ti-ta, <sup>URU</sup>Li-it-ta,  
<sup>URU</sup>Te-mi-ia:

Տեղադրությունը

\*Ըստ ենթատեքստի՝ Հայաստյում կամ դրա նախնականությամբ:

10) <sup>URU</sup>Manzana (Մանցանա)

<sup>URU</sup>Ma-an-za-na

(KBo XVI 42 ՂՎ 16', 18', 19', 21', 22')

RGTC 6.1, S.260; Ertem, 1973, p.91.

Տեքստ.

\*Տես վերը՝ Arihuwa.1.

Տեղադրությունը

\*Տեղադրությունը Իսուվայում հասակ է:

11) <sup>URU</sup>Mezzari (Մեցարի)

<sup>URU</sup>Me-er-za-ri

(KBo XVI 42 ՀՎ 14')

<sup>URU</sup>Me-er-z[a-ri]

(KBo XVI 42 ՀՎ 9')

RGTC 6.1, S.274 (= Mizri); Այս սխալ համադրության համար հինգ է ծառայել այն, որ խեթական տեքստերում Եզիպատոսի անունը գրվում է նույն կերպ:

Տեքստ.

\*KBo XVI 42 - տես վերը՝ Arifawa.1.

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսուվայում հասակ է<sup>18</sup>:

- 12) <sup>HURSAG</sup>Pupara (Պուպարա [լեռնանուն])
- |                                      |  |
|--------------------------------------|--|
| <sup>HURSAG</sup> Pu-u-pa-ra-a-aš    | (KUB XLVI 22 + KUB XLI 34 I 36 <sup>19</sup> )         |
| <sup>HURSAG</sup> Pu-u-pa-ra-an      | (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 15)                       |
| [ <sup>HURSAG</sup> Pu]-u-pa-a-ra-an | (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 2)                        |
| <sup>HURSAG</sup> Pu-pa-r[a]         | (KUB LVI 40 ՀՎ IV 9 <sup>20</sup> , 10 <sup>21</sup> ) |
| <sup>HURSAG</sup> Pu-u-[pa-ra-...]   | (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 29)                       |
| <sup>HURSAG</sup> p[pu-u-pa-ra-...]  | (KUB XLVI 22 + KUB XLI 34 IV 25)                       |

RGTC 6.2, S.127f.

Տեքստ.

1) KUB XLVI 22 + KUB XLI 34 - Ելասկան ինվենտարը ներկայացնող տեքստերից, հար և մնան KUB LVI 40-ին (տես վերը՝ Artafuša)<sup>22</sup>:

2) KUB LVI 40 - տես վերը՝ Artafuša.

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսուվայում հասակ է:

- 13) <sup>HURSAG</sup>Saliti (Սալիտի [լեռնանուն])
- |                            |                  |
|----------------------------|------------------|
| <sup>HURSAG</sup> Sa-li-ti | (KBo IV 4 II 78) |
|----------------------------|------------------|

RGTC 6.1, S.335.

Տեքստ.

KBo IV 4 - Մուրաիլիս II-ի «Տարեգրությունները»<sup>23</sup>:

Տեղադրությունը:

Ռեֆաահիհի հովտում՝ Երզնկայից քիչ հյուսիս-արևմուտք (ASVOA

4.3):

\*Հայաստանի արևմուտքում կամ հարևանությամբ:

- 14) <sup>URUK</sup>Sinurwa (Սինուրա)
- |                            |                                  |
|----------------------------|----------------------------------|
| <sup>URUK</sup> Si-mu-wa   | (KBo XVI 42 ՀՎ 6 <sup>24</sup> ) |
| <sup>URUK</sup> Si-i-mu-wa | (KBo IV 13 I 45 <sup>25</sup> )  |

RGTC 6.1, S.358; Ertem, 1973, p.125.

Տեքստը.

1) KBo XVI 42 - տես վերը՝ Ariḫwa.1:

2) KBo IV 13 - AN.TAḪ.SUM կոչվող ամենամյա զարմանային տոնակատարությանը նվիրված տեքստ<sup>21</sup>: Սինուվայի աստվածների (DINGIR<sup>MES</sup> օրն<sup>22</sup> Sinawa) համար խեթական արքան 1 զան է զոհաբերում (հիշատակվում է Նատրա քաղաքից ամմիթապես հետո):

Տեղադրությունը

Է.Լարոշը չէր բացատրում մեկ այլ՝ URU<sup>23</sup> Sinawanda քաղաքի հետ նույնացման հնարավորությունը (Laroche, 1961, p.60): Վերջինս մասնագետներն առաջարկում են փնտրել Կիլիկյան Տավրոսի էյուսխում՝ ժաման. *Սինանտը* բնակավայրի տեղում, Իվրիզ քաղաքի մոտ (RGTC 6.1, S.358f.):

\*Տեղադրությունը Իսուվայում գրեթե հստակ է:

15) URU<sup>24</sup> Taḫ-ḫa-ni-ša-ra (Տախ(հա)նիսարա)

URU<sup>25</sup> Taḫ-ḫa-ni-ša-ra (KUB XLIX 11 ԿԿ III 7)

URU<sup>26</sup> Taḫ-ni-ša-ra (KUB XLIX 11 ԴԿ II 20')

RGTC 6.1, S.151.

Տեքստ.

\*KUB XLIX 11 – տես վերը՝ Ḫaršalata.2.

Տեղադրությունը:

\*Ամենայն հավանականությամբ, Հայաստանից արևմուտք՝ Իսաթթիի տարածքում:

16) URU<sup>27</sup> D/Tarutena (Դ/Տարտենա [լեռնամոմ])

URU<sup>28</sup> Da-ar-ri?-te-na (IBoT I 33, 45)

RGTC 6.1, S.409; Gonen, 1968, p.114

\*Տեղանվան գտության երկրորդ նշանը Է.Լարոշը հավանաբար էր ըմբռնելու kit և վերականգնելու Tarkittena (Laroche, 1958, p.153).

Տեքստ.

\*IBoT I 33 - Գուշակային քնույթի տեքստ, որտեղ ներկայացվում են Կոմմախա քաղաքում տեղի ունեցած՝ խեթական արքայի անձի և պետության ասպազայի համար կարևոր նշանակություն ունեցող գուշակության արդյունքները<sup>22</sup>:



Տեղադրությունը:

Կոմմախա-Կամախի մոտակա լեռներից մեկը (Goonet, 1968, p.114).

\*Այս լեռնամվան առաջարկված մոտավոր տեղադրությունը հայկ. Կամախի շրջակայքում նաև արտացոլանալիս որոշակի նմանությունը հայկ. Ձորղյան գավառամվան հետ, մկատի առնելով ԹՕԴ I 33-ի համապատասխան հնթատեքստում լեռան ծխա-պաշտամունքային կարևոր դերը, կարող են հիմք տեղծել աշխատանքային վարկածի առաջադրման համար:

17) <sup>URU</sup>Tawatena (Տավատենա)  
<sup>URU</sup>Ta-wa-te-na (KUB XLIX 11 III 6)

RGTC 6.2, S.167.

Տեքստ.

\*KUB XLIX 11 - Տես վերը՝ *Դարձաձա.2.*

Տեղադրությունը:

\*Հայաստանի Ուրա քաղաքի շրջակայքում:

18) <sup>URU</sup>Ut-kuniša[] (Ուտկունիսա)  
<sup>URU</sup>Ut-ku-ni-ša[] (KUB XLIX 11 III 24)

RGTC 6.1, S.182.

Տեքստ.

\*KUB XLIX 11 - Տես վերը՝ *Դարձաձա.2.*

Տեղադրությունը:

\*Հայաստանի Ուրա քաղաքի շրջակայքում:

19) <sup>HURSAG</sup>Wanzapenda (Վանցապանդա [լեռնամուն])  
<sup>HURSAG</sup>Wa-an-za-pa-an-da (KUB LVI 40 ՀՎ III 5')

RGTC 6.1, S.186.

Տեքստ.

\*Տես վերը՝ *Արձաձա.*

Տեղադրությունը:

\*Տեղադրությունը Իսովալում հստակ չէ:

## NEW TOPONYMS IN HITTITE TEXTS

In a number of recently published Hittite cuneiform texts, as well as in some old ones are preserved 19 place-names (15 towns/settlements and 4 mountains) which are not referred to in Armenological literature. These toponyms belong to the area where in the II millennium B.C. were known two states – Hayasa and Lusa; some of these may lay along the borders of the above-mentioned state-formations.

## ՕՍՆՈՒՑԱԳՐՈՒՅՅՈՒՆՆԵՐ

\*Դ<sub>4</sub> = Դիմային կողմ, Դ<sub>4</sub> = Զակառակ կողմ: \*\*Խեթական տեքստերում հիշատակվող տեղանունների քառաբանները: Յուրաքանչյուր տեղանվան տեղադրության վերաբերյալ հեղինակի նկատառումները նշվում են աստղանիշով:

1. Այդ հատուկ անունները պարունակող տեքստերի ամբողջական գիտական հրատարակությունը կգտնելի մեր ուսումնասիրության պրոցեսում գտնվող «Գայկական լեռնաշխարհը մ.թ.ա. II հազարամյակում (ըստ խեթական սեպագիր տեքստերի)» աշխատությունում: Նախկինում հայտնի տեղանունների նոր վկայությունները քաջ են թողնված. դրանց լիակատար ցուցակը տեղ կգտնի հրատարակության պատրաստվող «Գայկական լեռնաշխարհի տեղանունները խեթական տեքստերում» աշխատության մեջ:
2. CTH 211.25. ըստ Ա.Կամմենհուբերի, Մուրսիլիս II-ի «Տարեգրությունների» մասն է կազմում (Kammenhuber, 1970, S.550):
3. CTH 297.11, հատվածական հրատարակությունը՝ den Heut, 1995, S.183.
4. CTH 188, հրատ.՝ Hagembuchner, 1989, Nr.62, S.96ff.
5. CTH 214.13, հատվածական հրատարակությունը՝ Klengel, 1976, S.85f.
6. CTH 295. դրանց մի մասի հրատարակությունը՝ Werner, 1967: «Վերջինիս մոտ տեղանունն ընթերցված է <sup>URU</sup>A-ri?-ab-ja, սակայն հետազայում ճշգրտվել է (RGTC 6.1, S.37):
7. Կիլուշխեպայի՝ որպես Իսուվայի արքա Արիշարրումայի կինը լինելու մասին տես Götterbock, 1973, p.137ff.; նաև Houwink ten Cate, 1996, p.48, 52f.: Սակայն KUB XL 80-ում որպես «Արիշարրումայի կնոջ» հիշատակությունը որոշ կասկածների տեղիք է տվել (տես Klengel, 1976, S.88): Կիլուշխեպան խաթթուսիլի III-ի և Պուդուխեպայի դուստրն էր (Singer, 1991, p.328) կամ Պուդուխեպայի ցույրը (den Heut, 1998, p.126): Կիլուշխեպային հիշատակող տեքստերի տեսության համար՝ de Roos, 1987, p.74ff.:
8. CTH 518, մասն.հրատ.՝ Peochioli-Doddi, 1982, p.18,43; Imperati, 1990, p.168ff.
9. Otten, 1952, S.67.

10. Գրատ.՝ Քոսյան, 2002ա, էջ 315-322: Այս տեքստը նշված չէ է.Լարոշի և Չիկագոյի համալսարանի արևելագիտության ինստիտուտի «Կատալոգներում» (վերջինս՝ ինտերնետային), սակայն րովանդակությամբ և կառուցվածքով համեմատելի է KUB XXVII 68-ին (CTH 673), որը ներկայացնում է պաշտամունքային խոշոր կենտրոն և նրիկում երկրպագվող աստվածություններից մատուցվող ծեսերը (տեքստի մի հատվածի հրատարակությունը տես մեր վերը հղված հոդվածում):
11. Այս տեքստերը է.Լարոշի կատալոգում (Laroche, 1971) ցրված են տարբեր քաժիններում (CTH 501-530): Դրանց մի մասի հրատարակությունը և հետազոտությունը՝ Carter, 1962:
12. CTH 509, հրատ.՝ Hroozey, 1919, S.1ff.; Carter, 1962, p.51ff.
13. CTH 577 (Chicago). տեքստը կզետեղվի մեր՝ հրատարակության պատրաստվող «հնթական տեղությունը և Չայասան մ.թ.ա.XIII դարում» հոդվածում:
14. CTH 574. հատվածական հրատ.՝ Otten-Rüster, 1972, S.106 և Berman, 1982, p.95f.
15. Այս և նմանատիպ տեքստերի մի մասի հրատարակությունը և հետազոտությունը տես von Schaler, 1965, S.134ff: Ատորն հղվող հատվածի գիտական տառադարձումը՝ idem, S.145:
16. ASVOA 4.3.
17. Այս, ինչպես նաև Պախիստվաչի հակախեթական ապշտամբության ենթատեքստում հիաշատակվող մեծաքանակ տեղանունների տեղադրման հնարավորությունների մասին տես մեր՝ հրատարակության պատրաստվող «Առնուվանդաս I-ը և վերիննիդատյան երկրները («Պախիստվաչի Միտայի ապշտամբությունը») մեմագրությունը:
18. Անվան գրելածևի պատճառով, այն սխալմամբ քվարկվում է Me'izzi-եգիպտոս գլխարտի տակ (RGTC. I, S.274):
19. KUB XLI 34 + KUB XVI 22 = CTH 530 (CTH.Suppl.):
20. հնթական արքա Մուրսիլիս II-ի «Տասնամյա» և «Ընդարձակ» տարեգրությունները («Տասնամյա տարեգրություններ» [= CTH 61.I], «Ընդարձակ տարեգրություններ» [= CTH 61.II] գետեղված են հետևյալ հրատարակություններում՝ Götze, 1933, S.14ff: CTH 61.I-ի վերահրատարակությունը՝ նոր կցաքեկորների ներածմամբ՝ Orelsis, 1988, p.17ff: հայագիտական հրատարակություններում տեքստի առանձին հատվածների գիտական տառադարձումը՝ Хачатрян, 1971, с.152-158, քարգմանությունը՝ Мамандян, 1956, с.89-90, 92, 96, 98; հայատրյան, 1988, էջ.69-77:
21. CTH 625, հրատ.՝ Götze, 1930, S.20ff.; Bossert, 1946, S.21f.; Cornelius, 1955, S.54ff.; idem, 1958, S.227ff (թուլղը հատվածաքար):
22. Ամբողջական հրատարակությունը՝ Laroche, 1958, p.252ff: նաև՝ Քոսյան, 2002բ, էջ 234 (հատվածաքար):

Խաչատրյան Վ.

1971. Восточные провинции Хеттской империи, Ер.

1998. Հայաստանը մ.թ.ա.XV-VII դարերում, Եր.

Բոսյան Ա.

2002ա. Իսուպայի (Օտլիք) կրոնական կենտրոնները, «Արժանավոր և Միջին Արևելքի նրկոներ և ժողովուրդներ» XXI, Եր., էջ.315-331.

2002բ. Անի-Վանախը խեթական դարաշրջանում, «Պատմա-րանասիրական հանդես», N.3, էջ.225-241.

Манандян Я.

1956. О некоторых спорных проблемах истории древней Армении, Ер.

(=Я.Манандян, "Труды" т.5, Ер., сс.437-614).

Berman H.

1982. Some Hittite Oracle Fragments, "Journal of Cuneiform Studies" 34/1-2,

p.94-126.

Bossert H.Th.

1946. Asia, Ankara.

Carter Ch.W.

1962. Hittite Cult-Inventories, Chicago (Diss.).

Cornelius Fr.

1955. Hethitische Reisewege, „Revue hittite et asianique“ 13, fasc.57, S.49-62.

1958. Geographie des Hethiterreiches, "Orientalia" 27, S.225-251, 373-398.

de Roos J.

1987. Who was Kilišhepa?, „Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch

Geselschap „Ex Oriente Lux“ (Leiden)“ 29, p.74-83.

den Hout Th.P.J.

1995. Der Ulmitesub-Vertrag: Eine prosopographische Untersuchung, Wiesbaden

(= „Studien zu den Boğazköy-Texten“ 38).

1998. The Purity of Kingship, Leiden - Boston - KΦIn.

Ertem H.

1973. Boğazköy metinlerinde geçen coğrafya adları dizini, Ankara.

Gonnet H.

1968. Les montagnes d'Asie Mineure d'après les textes hittites, „Revue hittite

et asiatique " 26, fasc. 83, p.93-170.

Götze A.

1930. Bemerkungen zu dem hethitischen Text AO 9608 des Louvre, "Revue hittite et asiatique" 1, S.18-30.

1933. Die Annalen des Muršiliš, Leipzig (= „Mitteilungen der Vorderasiatisch-Ägyptischen Gesellschaft " 38).

Grelais J.-P.

1988. Les Annales Decennales de Muršili II (CTH 61.I), „Hethitica" IX, p.17-145.

Güterbock H.G.

1973. Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe, „Journal of Near Eastern Studies" 32, p.135-147.

Hagenbuchner A.

1989. Die Korrespondenz der Hethiter, Wiesbaden (= „Studien zu den Boğazköy-Texten" 15-16).

Houwink ten Cate Ph.H.J.

1996. The Dynastic Marriages of the Period between ca.1258 and 1244B.C., „AoF", 1996/1, p.40-75.

Hrozny B.

1919. Hethitische Keilschrifttexte aus Boğazköi in Umschrift, Übersetzung und Kommentar, Leipzig (= „Boğazköi Studien" 3).

Imparati F.

1990. Obligations et manquements culturels envers la divinité Pirwa, „Orientalia" 59, p.166-187.

Kammenhuber A.

1970. Keilschrifttexte aus Boğazköi (KBo XVI), „Orientalia" 39, fasc.4, S.547-567.

Klengel H.

1976. Nochmals zu Isuwa, „Oriens Antiquus" 15, S.85-89.

Laroche E.

1958. Lécanomancie Hittite, „Revue d'Assyriologie et d'Archéologie Orientale" 52, p.150-162.

1961. Etudes de toponymie anatolienne, "Revue hittite et asiatique" 69, p.57-98.

Otto H. – Rüter Chr.

1972. Textanschlüsse und Dublikate von Boğazköi -Tafeln (1-10), „Zeitschrift

Pecchioli-Daddi F.

1982. *Mestieri, professioni e dignità nell'Anatolia ittita (= Incunabula graeca 79)*, Roma.

Schuler von E.

1965. *Die Kaskäer. ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien*, Berlin.

Singer I.

1991. The Title „Great Princess“ in the Hittite Empire, „Ugarit-Forschungen“ 23, p.327-338.

Werner R.

1967. *Hethitische Gerichtsprotokolle*, Wiesbaden (= „Studien zu den Boğhazköi-Texten“ 4).

### ՀԱՊԿԱՎՈՒՄՆԵՐ

ASVOA.4.3 - *Atlante storico del Vicino Oriente antico, Fascicolo 4.3, Anatolia: l'Impero Hittita*, Pavia, 1986 (M.Forlanini, M.Mazzzi).

CTH - E.Laroche, *Catalogue des textes hittites*, Paris.

CTH.Suppl. - *Catalogue des textes hittites. Supplement 1*, „Revue hittite et asianique“ 30, p.94-133.

IBoT - *Istanbul Arkeoloji Müselerinde bulunan Boğhazköi Tabletlerinden Seçme Metinler* (Istanbul).

KBo - *Keilschrifttexte aus Boğhazköi* (Leipzig und Berlin), 1916ff.

KUB - *Keilschrifturkunden aus Boğhazköi* (Berlin).

RGTC - *Repertoire Gnographique des Textes Cuneiformes* (Wiesbaden).

RGTC.6.1 - J.F. del Monte und J.Tischler, *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*, Wiesbaden, 1978.

RGTC.6.2 - J.F. del Monte, *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*, Wiesbaden, 1992.

ԱՍՆ ԳՐՈՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳՐԱԿԱՆ  
ԶՐԴԵՐԵՆԻ ՄԿՁՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանում քրդական գրության սկզբնավորումը առաջին իսկ օրերից ընթացավ երկու ուղղությամբ՝ քարգմանական և ոչքարգմանական գրականության ստեղծմամբ: Գրության այս երկու քննազավառմերը քրդերեն գրական լեզվի կազմավորման և զարգացման երկու աղբյուրներ են հանդիսացել և այսօր էլ շարունակում են մնալ աշխարհին: Ընդ որում տարբեր ժամանակահատվածներում նրանք ունեցել են տարբեր աստիճանի մասնակցություն, դեր ու նշանակություն այս գործում: Նրանց գիտական նկարագրության և համակարգային քննության խնդրի քարծրացումն ու լուծումը չափազանց կարևոր է ինչպես գրական քրդերենի սկզբնավորման և զարգացման պատմության հարցերի լուսարամման առումով, այնպես էլ այդ լեզվի կանոնավորման հարցերի մշակման տեսակետից: Սակայն քույր լեզվաբանության մեծ նրանք դեռևս չեն դիտարկվել և սպասում են իրենց առանձին հատուկ ուսումնասիրությանը:

Երկրա հողվածի սահմանափակ շրջանակներում առաջին անգամ վերծ է արվում լուսարանել քարգմանական գրականության դերը գրական քրդերենի սկզբնավորման և զարգացման գործում:

Հայաստանում քրդական այբուբենի հիմնումը հենարան հանդիսացավ քրդական գրության գոյացման համար, որով պայմանավորվեց գրական քրդերենի սկզբնավորման հնարավորությունը: 1921-1938թթ. Սովետական միությունում քրդերեն լեզվով հրատարակվեց ընդամենը 238 ամուն գիրք, որից 96-ը քարգմանություններ էին, իսկ մնացած 142-ը՝ ոչ - քարգմանություններ<sup>1</sup>:

Թարգմանական և ոչթարգմանական քրդական գրությունը ավելի հաճախակի է երևան գալիս և կատարելագործվում հատկապես XXդ. 60-ական թվականներից սկսած: 1939-1945թթ. որոշ ընդմիջումից հետո, սկսած 1946թ. վերականգնվում է նրա գոյատևման հնարավորությունը:

Շարունակում է լույս տեսնել համրակետական քրդական «Ուսմազա» քերթը, 1946-1990թթ. լույս է տեսնում շուրջ 180 ամուն զիրք<sup>2</sup>, այդ թվում դպրոցական դասագրքեր, ղրոնցում նշանակալի տեղ է հատկացվում հայ և ռուս բանաստեղծների և արձակագիրների ստեղծագործությունների թարգմանություններին, ինչպես նաև առանձին թարգմանական դասագրքեր, քուրդ գրողների գործեր և ստեղծագործությունների ժողովածուներ, արժեքավոր թարգմանական ստեղծագործություններ հայ և ռուս գրականությունից և այլն:

Քրդական ոչթարգմանական գրությունը իր սկզբնավորման առաջին քսան տարիների ընթացքում հիմնականում ներկայացվում է հետևյալ երեք խոսակցական ոճերով, գրավոր-առօրյա, բարբառախոսվածքային ոճ, գրավոր-ֆոլկլորային (քամահյուսական) ոճ և գրավոր բարձր կուլտուրական (հարգանքի) ոճ: Նրա զերակշռող մասը՝ մոտ 70 ամուն զիրք դպրոցական ձեռնարկներ են՝ քրդերեն լեզվի և քուրդ գրականության առաջին դասագրքերը տարբեր դասաշրանների աշակերտության համար, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, դասավանդման ծրագրեր և այլն: Հանձնատարար շնչին քանակ են կազմում, ընդամենը 7 ամուն զիրք՝ զեղարվեստական ստեղծագործությունների՝ քրդախոս հայ գրող Նուրիի «Լուսարացը» (1934), Ա.Շամիլովի «Քուրդ հովիվը» (1935), Ա.Շարոյի «Առաջին լուսարացը» (1935), Վ.Նադիրի «Նուրաբը» և «Կնոջ առևանգումը» (1935), Ա.Սիրազիի «Անցած ժամանակները» (1935)<sup>3</sup>:

Այս վերջին 6 ստեղծագործությունները հանդիսացան առաջին զեղարվեստական գործեր, գրված առաջին քուրդ ստեղծագործողների գրչով: Նրանցում առկա են վերոհիշյալ երեք խոսակցական ոճերի էլեմենտները, սակայն զերակշռողը առօրյա բարբառախոսացվածքային ոճն է:

Առաջին տարիների ոչթարգմանական գրության մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում նշել նաև ժողովրդական բանահյուսության գրատուները՝ Հ.Ջնդիի և Ամինե Ավդալի կողմից հրատարակված «Քրդական բանահյուսության առաջին զիրքը» խորագրով բանահյուսական ժողովածուն (1936), կոմպոզիտոր Կարո Քարաբյանի հրատարակած «Քրդական ժողովրդական երգերը» վերնագրով երգարանը (1936), որանց ֆոլկլորային ոճի փայլուն նմուշներ են համդիսանում և մատչելի հիմնարար նյութ են ծառայում այդ ոճի զիտական ուսումնասիրության համար: Դրան պետք է ավելացնել նաև առօրյա խոսակցական ոճով գրված, սակայն մեծ քանակությամբ հրատարակախոսական ոճին բնորոշ էլեմենտներ պարունակող Ա.Շամիլովի «Լեմինի կյանքը» և «Կեղ-խոզի օգտակարությունը գյուղացիության համար» պատմվածքները (1930) և այլն<sup>4</sup>:



Հատկանշական է, որ նոր ձևավորվող ոչքարգմանական գրութ-  
յան ստեղծման մասնակիցները՝ հայ և քույր ազգությամբ չեն ունեցել  
քրդական կրթություն, քրդագիտական գիտելիքներ և հանդիսացել են լոկ  
կորմանցի քարքառի իմացողներ: Նրանք չունեցել են հայկական, մա-  
սամբ ռուսական կրթություն<sup>5</sup> և հայագիտական ու ռուսագիտական գի-  
տելիքներ, մի հանգամանք, որը իր կնիքն է բռնել նրանց ստեղծագոր-  
ծությունների լեզվի վրա և մեծապես նպաստել է ոչքարգմանական  
գրության արագ ձևավորմանը և արդյունավետ զարգացմանը: Սակայն  
քրդական ոչքարգմանական գրության ձևավորումն ու զարգացումը ավել-  
ի շատ խթանվել է մեկ այլ հանգամանքով՝ նրան զուգահեռ ձևավորվող  
և զարգացող քարգմանական գրությամբ, որը սկզբից ի վեր առաջին  
քույր մտավորական-ստեղծագործողների համար յուրատեսակ ընդօրի-  
նակության դարձրեց է ծառայել, նրանց հաղորդակից դարձրել գրակա-  
նության ստեղծման արվեստին, նրա տարրեր ոճերի միջոցներին և  
խնդիրներին:

Թարգմանական գրությունը առանձնահատուկ դեր է խաղացել  
քրդերին լեզվով գրության սկզբնավորման և տարածման, քույր գրակա-  
նության հիմնման, նրանում խոսքի նոր ոճերի ձևավորման և գոյություն  
ունեցող ոճերի ակտիվացման ասպարեզում, որոնք իր հերթին սկզբում-  
քային մշակակութային են լինեցել առաջին անգամ Հայաստանում կազ-  
մավորվող քրդերին գրական լեզվի գոյացման ճանապարհին:

Առաջին արձակ և չափածո գրական գործերի գերակշռող մասը  
քրդերին լեզվով, առաջին տարրեր բնմաներով հրատարակված ռուսական  
ոճի ստեղծագործությունները, պաշտոնական, քաղաքական, գիտամաս-  
սայական, հասարակական - քաղաքական գրականությունը, ինչպես  
նաև ուսումնական, ուսումնամեթոդական գրականության զգալի մասը  
հանդիսացել են քարգմանությունները հայերին և ռուսերին լեզուներից<sup>6</sup>:  
Ընդ որում, ինչպես այլևս վերևում նշվեց, քարգմանական գրությունը ա-  
վելի ընդարձակ և ընդգրկում է հանդիսացել գրական լեզվի սկզբնավոր-  
ման առաջին երկու տասնյակ տարիներին և հետագայում, քան ոչքարգ-  
մանական գրությունը: Նրանով ներկայացված 96 անուն գրքերը վերա-  
բերում են քրդերին համար բացարձակապես նոր սկզբնավորվող խոս-  
քի ոճերին և պարունակում են վերջիններին բնորոշող լեզվական իր-  
դությունները՝ այդ թվում քառապաշարն ու դարձվածապաշարը և այլն:

Քրդերն առաջին հերթին առանձնահատուկ է գեղարվեստական գրակա-  
նության շնչ և լեզուն քարգմանված շուրջ երեսուն անուն գեղարվեստա-  
կան ստեղծագործություններում, որոնց թվին են պատկանում՝ Լազրյի  
«Ջասմի պատմությունը» պատմվածքը (1931), Հովհաննես Թումանյանի  
«Գլխորդ» (1932), «Ամուշը» (1934), «Շուն ու կատուն» (1935), «Երկերի

ժողովածու» (1936), «Զարի վերջը» (1937), «Տերն ու ծառան» (1936), «Քաջ Նազարը» (1937) և այլն, Հրայր Զոյարի «Խաչի» (1935), Միրասի «Արքիֆա» (1936), «Մամն և Այշն» (1935), Հովհաննես Շիրազի «Միամանրո և իրափզարի» (1936), Լ. Ն. Տոլստոյի «Պատմվածքներ կնիդանիների մասին» (1935), «Կովկասի գեղին» (1937), Ա. Ս. Պուշկինի «Բանաստեղծություններ և պատմվածքներ», «Հեքիաթ ձկան և ձկնորսի մասին» (1937) և այլն<sup>7</sup>:

Թարգմանական գրականության ասպարեզում նշանակալի տեղ են զբաղում դրամատիկական ոճի ստեղծագործությունները, որոնց սկզբնավորման գործում մեծ դեր են խաղացել նախկին Ալազյազի շրջանի քրդական քաղաքում տարիներ շարունակ քննադրվող մադաստվետական և սովետական շրջանի հայ քաղաքագիտների պիեսների թարգմանությունները՝ Գ. Սունդուկյանի «Պեպոն», Ա. Շիրվանզադեի «Նամուսը» և «Զար ոգին», Վրթանես Փափազյանի «Ժայռը», Դ. Դեմիրյանի «Քաջ Նազարը», Ն. Զարյանի «Վրիժը», Ա. Պապյանի «Բարձրունքը», Ա. Շայրանի «Ալազյազի հովտում», Ա. Գլինոսյանի «Հասոն», «Միրաքի աղջիկը», Ա. Արարատյանի «Ստախոս տիրացուն» (1930), Հ. Շալչյանի «Նոր ուղին» (1934), «Փռատվոր կյանքի ճանապարհին» (1935), պիեսները և այլն<sup>8</sup>:

Դրամատիկական ոճի կայացման գործում մեծ դեր ու նշանակություն ունեցան հասկապես քուրդ հասարակությանը հարազատ քրդական վիպերգերի հայկական պիեսային մշակումների թարգմանությունները՝ Ս. Տարոնցու «Մամն ու Զինեն», Ա. Գլինոսյանի «Կոտ ու Կուլուկը», «Խաչի և Միաբանը», «Հերոսը Ջզիր քաղաքից» և այլն<sup>9</sup>:

Թարգմանական տարրեր ենթառնելի գեղարվեստական գրականությունից ավելի վաղ, դեռևս 1921թ. սկսած, քրդերենով թարգմանական գրությունը ներկայացվում է քրդերենի համար բացարձակապես նոր՝ տատմանական, ուսումնասնիքողական ոճի գրականությամբ, որով ըստ էության սկիզբ է դրվում գրական քրդերենի ձևավորմանը: Ընդ որում այս գրականությունը ներկայացնում է տարրեր գիտատառմանական քննադատներ, թվարանություն, մաքենատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն, բուսաբանություն, աշխարհագրություն, կենսաբանություն, հասարակագիտություն և այլն, որոնք արտացոլվել են մասնավորապես նևոկյալ դասագրքերում՝ Տ. Զ., Ը. Ս «Աշխարհագրություն» (1932), Ն. Պուպովա «Թվաբանություն» (1933), Ա. Շախարյան, Լ. Կարդանյան «Մաքենատիկա» (1933), Մ. Զարաֆյան և Վ. Աբրահամյան «Բնագիտություն» (1934), Բ. Վսեպյանտսկի «Բուսաբանություն» (1935), Ն. Պուպովա «Երկրաչափություն» (1935), Ա. Կլանդով «Հանրահաշիվ» (1937) և այլն<sup>10</sup>: Այս քննադատների թարգմանում տեղիներաբանության ներհուսքը քրդերենը զգալիորեն հարստացրեց նրա բառային կազմը, ընդհանուր մասնագի-

տական գիտա-տեխնիկական և արտադրա-տեխնիկական նոմենկլատուրան:

Թարգմանական գրության շնորհիվ առանձին մեմագրությունների և քրդական «Ռեա Թագա» թերթի էջերում տարիների ընթացքում նրատարակվող թարգմանական նյութերի տեսքով քրդերենում կազմավորվեց ևս մեկ այլ նոր՝ հրապարակախոսական ոճը զանազան բնմաններով: Այդ գրության օրինակ են ծառայում, մասնավորապես՝ Ա.Նազարյանի «Քնտր» (1933), Նուրիի և Ջ.Ջալիլի «Կարլ Մարքսի կենսագրությունը» (1934), Վ.Ի.Լենինի «1905թ. հեղափոխության մասին» (1933), Անդրեյի «Ջրույց պեռներների հետ 1905թ. հեղափոխության մասին» (1933), Ա.Նավասարդյանի «Տրախտնը» (1933), Ա.Ալեքսանյանի «Մտամոքսային տիֆը» (1934), Մադակյանի «Անասնապահության մասին» (1934), Ռ.Մարգարյանի «Կամանց առողջապահությունը» (1934), Գ. Նարոքյունյանի «Ինչպես պաշտպանել կոլտոզի ամաստոններին հիվանդությունից» (1935), Ա.Սելիքյանի «Մի քանի հիվանդությունների մասին» (1936), Խմկո Ապերի «Տրամվայը Երևանում» (1936), Ա.Խանջյանի «Պայքարի և հաղթանակի ուղիով» (1933) և այլն<sup>17</sup>: Այս ոճին զուգահեռ թարգմանական գրականության միջոցով քրդերում սկզբնավորվեց նաև քաղաքական, գիտաքաղաքական ոճը, որով պայմանավորվեց լեզվի հարստացումը մեծ քանակությամբ քաղաքական, գիտաքաղաքական տեքստերով, որոնք իր արտացոլումն են գտել հրատարակված քառասուններում: Այդ գրականությունից են՝ Ի.Վ.Ստալինի «Սովետական Միության ազդարային քաղաքականության հարցերի շուրջ» (1933), Ա.Խանջյանի «Հնգամյակի հաղթանակը Սովետական Հայաստանում» (1933), Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի «Մանիֆեստը» (1934), Կ.Մարքսի «Կարծու աշխատանքը և կապիտալը» (1935) և այլն<sup>12</sup>:

Վերջապես, թարգմանական գրականության շնորհիվ գրական քրդերենը տիրեց խոսքի պաշտոնական ոճին: Այդ գրականությունից կարելի է նշել՝ «ԻՄ-ի կանոնադրությունը» (1931), «Գյուղական արտելի տնտեսության օրենսգիրքը» (1935), «Սովետական Սոցիալիստական Միության սահմանադրությունը» (1936) և այլն<sup>13</sup>:

Ամփոփելով վերևում բերված նյութերը, կարելի է արձանագրել, որ քրդերենը, գրական լեզվի կարգավիճակը ձեռք բերեց շնորհիվ նրանում առկա բոլոր անհրաժեշտ խոսքի և լեզվի ոճերի կազմավորմանը, որում կարևոր դեր կատարեց թարգմանական գրականությունը հայերեն և ռուսերեն լեզուներից: Նոր՝ գեղարվեստական, հրապարակախոսական, քաղաքական, պաշտոնական ոճերի զոյացումը քրդերենում<sup>14</sup> պայմանավորվեց նրանում առկա լեզվամյուրթի կիրառության բարձր հաճախականությունը, նոր լեզվամյուրթի՝ քաների, հասպավումների, կայուն դարձվածաբանական միավորների կազմությունը, մեծ քանակությամբ փո-

խառնությունների, այդ թվում միջազգային տերմինների ներմուծումը, որոնք այդին իր արտացոլումն են գտել հրատարակված քառարաններում, այդ թվում առանձին տերմինարանական քառարաններում<sup>15</sup>:

ASAN DRBOYAN

### THE ROLE OF FOREIGN LITERATURE IN TRANSLATION IN FORMATION AND DEVELOPMENT OF THE LITERARY KURDISH

The different styles of the Literary Kurdish has been formed and developed due to the Translatory Literature.

The paper deals with the researching that the formation of the political, publicistical, belletristical, scientific language styles are the result of the translation process of foreign literature.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Библиография к'тебед к'брдияэ Советие, hazarkar H.A.Александрян, Ереван, 1962.
2. Զրդական գիրքը Հայաստանում 1930-1980 թթ., կազմեց Ջ.Ջալիլ, Երևան, 1981թ.
3. Библиография к'тебед к'брдияэ Советие, hazarkar H. A. Александрян, Ереван, 1962, էջ 34-40.
4. Նույն տեղում, էջ 24:
5. Մասնավորապես, քոչոք գրող Արար Շամիրզը իմեր առական կրթություն և նրա տեղեւորությունները մեծապես արտացոլում են նրա գիտակցությունը:
6. Նրանք անդրադարձան ներկայացված են հրատարակված մատենագիտական գործերում: Տես՝ Библиография к'тебед к'брдияэ Советие, hazarkar H.A. Александрян, Ереван, 1962. Курсы Советской Армении, библиография (1920-1980), составил Джалиле Джалил, Ереван, 1987. Զրդական գիրքը Հայաստանում 1930-1980, կազմեց՝ Ջալիլի Ջալիլ, Երևան, 1981:
7. Տես՝ Նույն տեղում:
8. Տես՝ Նույն տեղում:
9. Տես՝ Նույն տեղում: Այս և մյուս պեճանների գրականագիտական քննադատումը տես՝ Հաջիի Ջնդի, Ավետիկ Սովետական Հայաստանի քրդական գրականության, Երևան, 1970:
10. Библиография к'тебед к'брдияэ Советие hazarkar H.A. Александрян, Ереван, 1962, էջ 34-40.
11. Տես՝ Նույն տեղում:
12. Տես՝ Նույն տեղում:
13. Տես՝ Նույն տեղում:

14. Նրանց վարկարկարյալից տե՛ս՝ Максиме Хэмон, змане к'брдан, Литература, Ереван, 1990, էջ 109-200; Գոհորեմ Хэбэрданейэ Դ'эզэ Լь заре к'брдан советнеда у пешдаһатъна змане անкн литератури.- "Ряа Таээ", 1988, N 28.
15. Տես՝ Хэбэրնэма жэ змане фьлэй-к'брданши. Դ'эրшэма кыры В.Петойан, эминне э'вадал, һащине Щьдди. Щэрдое Геншо. Рэван, 1933. Хэбэրнэма терминологизэ һазыр кыры проф. А.Хачатрыан, проф. Г.Капансйан, В.Петойан, Ереван, 1939: Курдско-русский словарь составил Ч.Х.Бакаев, под редакцией акад. И.А.Орбели, М., 1957; К.Курдоев, Курдско-русский словарь. М., 1960; М.У.Хамоян, Курдско-русский фразеологический словарь. Ереван, 1979.

## МАКСИМ ХАМОЯН

### К СТРУКТУРНО-СЕМАНТИЧЕСКОЙ ТИПОЛОГИИ ПАРЕМИОЛОГИЗМОВ (НА МАТЕРИАЛЕ КУРДСКОГО ЯЗЫКА)

Состав паремиологизмов языка представляет собой отдельную, самостоятельную языковую подсистему, подлежащую всестороннему исследованию в качестве предмета особого раздела теории языка — паремиологии<sup>1</sup>.

Главная проблема последней как зарождающегося раздела науки о языке — разработка ее основ: определение ее объекта и объема, методов и аспектов исследования, а также установление принципов создания классификационной системы паремиологизмов, способной послужить объективной основой разработки паремиологической теории.

Исследование паремиологизмов в их связях с породившей их социальной потребностью приводит к выявлению у них особого лингвистического назначения в языковой системе и специфической структурно-семантической модели их образования<sup>2</sup>. Согласно этой модели, описание которого содержится в отдельной работе автора<sup>3</sup>, логико-семантическая структура паремиологизмов в ее полном, развернутом виде состоит из следующих трех разных по природе семантем:

(1) собственно паремиологической семантемы в виде умозаключения о социальной закономерности, из потребности в объективации которого образуются паремиологизмы;

(2) семантемы — следствия в форме суждения о частном проявлении социальной закономерности, находящегося с умозаключением в причинно-следственных отношениях и

(3) семантемы — аналога в форме суждения о некоторой вне-социальной закономерности, находящегося с семантемой — следствием в отношениях сравнения — уподобления — отождествления. Из этих трех семантем собственную материальную оболочку в структуре предложения имеет только семантема — аналог. Их можно проил-

люстрировать, в частности, на примере логико-семантической структуры паремнологазма *ji serg qijikê gezeqefî şîbabe*:

"(1) Ничтожный человек из себя ничего не представляет (умозаключение об общей социальной закономерности);

(2) (Поэтому) из ничтожного человека ничего значительного не получается (суждение — следствие);

(3) (Подобно тому как) из головы кыкыка (грача) каурма не делается (суждение — аналог — сравнение) + материальная оболочка предложения — сцепление компонирующих слов".

Аналогичную логико-семантическую структуру в одном из двух функционирующих проявлений ее<sup>4</sup> обнаруживают все остальные паремнологазмы языка. Строго установленный состав семантем и взаимобусловленность между ними в этой логико-семантической структуре представляют возможность через грамматическую структуру паремнологазмов определить характер их семантем — умозаключений, а через характер семантем — умозаключений — тип их грамматической структуры. В обоих случаях выделяется типология суждения — аналога, через которую прокладывается путь к типологии суждения о социальной закономерности и умозаключения и, тем самым, к типологии самих паремнологазмов как таковых. Обусловленность характера суждения — аналога в соответствующей материальной оболочке характером суждения о социальной закономерности и зависимость присутствия последнего в логико-семантической структуре паремнологазмов от умозаключения лежат в основе дифференциации паремнологического состава языка на структурно-семантические типы: относящиеся к каждому из них паремнологические единицы возникают в качестве единиц, обладающих одной и той же грамматической структурой (при различиях в лексическом наполнении последней) и общей, категориальной, дифференцирующей семантемой — умозаключением (при различиях в частных проявлениях этого умозаключения). Эта дифференциация паремнологических единиц, отражающая реальную картину паремнологической подсистемы языка со всеми присущими ей особенностями, впервые обнаружена в результате анализа паремнологического материала курдского языка. Она отличается от существующих в литературе по паремнологии других языков классификационных систем тем<sup>5</sup>, что основана на единстве формально-смысловых особенностей комплексной организации паремнологазмов, образованных (и образующихся) по единой паремнообразовательной модели, лежащей в основе системности паремнологии, состоящей из подсистем или микросистем, характеристика которых следует ньюка. Однако, прежде чем проиллюстрировать их, заметим, что состав структурно-семанти-

ческих типов паремиологизмов отражает систему социальных закономерностей не полностью. Она представляет лишь отдельные, наиболее выделяющиеся из них или их отдельные участки в системе. В зависимости от этого последовательная типологическая дифференциация социальных закономерностей остается не выявленной, а в соответствии с этим сама типологическая классификация паремиологизмов оказывается несколько разрозненной. В ней одни структурно-семантические типы представлены не более двадцатью паремиологизмов, другие значительно малочисленны. Некоторые из них представлены одним или двумя примерами, которые значительно расширяют границы классификационной системы, придавая ей оттенок некоторой расплывчатости, бессистемности.

Состав структурно-семантических типов паремиологизмов курдского языка чрезвычайно богат и разнообразен. Из них, однако, в ограниченных рамках настоящей статьи представляются лишь некоторые наиболее распространенные и продуктивные. В их число входят:

1. Паремиологизмы с общей типовой семантемой, констатирующей невозможность существования явления без составляющей его части: *Cot bê ga nabe* ("Пахания без быков не бывает"), *mal bê mezin nabe*, ("дома без главы не бывает"), *mal bê jin nabe* ("дома (семья) без женщины не бывает"), *avayî bê stûn nabe* ("дома (здания) без столбов не бывает") и т.д.

2. Паремиологизмы с общей типовой семантемой "явления без сопутствующих его или изначально присущих ему и/или отрицательно характеризующих его особенностей, пороков не бывает": *gund bê ze nabe* ("деревни без собак не бывает"), *merî bê dijmin nabe* ("человека без врагов (недоброжелателей) не бывает"), *baxçe bê gul nabe* ("сада без роз не бывает"), *mêşe bê wawîk nabe* ("леса без шакала не бывает"), *mal bê mişk nabe* ("дома без мышей не бывает") и т.д.

3. Паремиологизмы с общей типовой семантемой, отражающей обязательное сосуществование в явлении положительных и отрицательных, негативных сторон; положительное без свойственных ему негативных особенностей не существует: *Gul bê strî nabe* ("Розы без ключков не бывает"), *masî bê dasî nabe* ("рыбы без косточки не бывает"), *zebeş bê dendîk nabe* ("арбуза без косточки не бывает"), *merî bê reng nabe* ("человека без фокусов не бывает") и т.д.

4. Паремиологизмы с типовой семантемой "явления без порождаемых им и сопровождающих его особенностей (последст-



вий) не бывает": *bazirgan bē deng nabe* ("Караванна без шума (звуки) не бывает"), *mai bē qirqir nabe* ("дома (семьи) без шума не бывает"), *Şin bē giro nabe* ("Траура без плача не бывает"), *ağir bē dū nabe* ("огня без дыма не бывает"), *Şer bē kuştin nabe* ("войны без убийства не бывает") и т.д.

5. Паремнологизмы с типовой семантемой, отражающей качественную характеристику объекта, его физические, морально-этические и психофизические особенности: *jın k'ılta zergē mēre* ("женщина (жена) — наставник мужчины (мужа) (ключ от его головы (разума))"), *jın stūpa malēye* ("женщина опора семьи (столб дома, на который опирается потолок)"), *jın kanıya jıyınēye* ("женщина источник жизни"), *jın p'arsūa xage* ("женщина кривое ребро (никогда не прямится, не станет искренней, преданной)"), *Sebir sikana merıyaye* ("терпения — надежда человека"), *xıret k'ubarıya mēraye* ("честь — гордость мужчин"), *zago ēmısb malēne* ("дети — фрукты дома (семьи)") и т.д.

6. Паремнологизмы с типовой семантемой, отражающей неизменчивость, стабильность состава явлений, непревращаемость их в явление другое, противоположное им по своим качествам: *Xūn nabe av* ("кровь водой не станет (родной человек не станет чужим, останется родным всегда)"), *Dil nabe kevır* ("сердце не станет камнем (любящий (любимый) человек не станет нелюбящим (нелюбимым)"), *Osax nabin būsax* ("Очаги не станут руинами (настоящая, благоустроенная семья (очаг) не станет развалиной, сохранит свое существование, свое достоинство)"), *Gur nabe temazix* ("волк не станет домашним скотом (чужой не станет родным, его нужно остерегаться)") и т.д.

7. Паремнологизмы, объединяющиеся общей типовой семантемой "социальное явление порождает (вызывает, приносит) адекватное, аналогичное, тождественное себе явление", выступающее его умозаключением. Умозаключение, выражаемое такими паремнологизмами, построенными по модели "А порождает А", нередко расширяется в структуре, отражая корреляцию двух умозаключений, образующих схему "А порождает А, а Б порождает Б": *Qencı qencıyē tıne* ("Добро (доброе отношение) порождает добро (доброе отношение)"), *de'w de'wē tıne* ("война (ссора, спор) порождает войну (ссору, спор)"), *Şayı Şayē tıne* ("веселье порождает веселье"), *gıf gıya tıne* ("слова (разговоры) порождает слова (разговоры)"), *Gul gula tıne* ("радость (веселье, дружеские отношения) порождает радость, букв. Роза приносит розы"), *p'ere p'era tıne*

("деньги (капитал) порождают деньги (капитал)", *hurmet hurmetê tîne, bêhurmetîjî – bêhurmetîyê* ("уважение порождает уважение, а неуважение – неуважение") и т.д.

8. Паремнологизмы с общим значением констатации отношения превосходства одного объекта действительности перед другим объектом на фоне сравнения их определенных проявлений, основанных на качественно противоположных признаках: *cînarê nêzîk ji birê dûr Gêtire* ("близкий сосед лучше далекого брата"), *berfa êvarê barana sibê Gêtire* ("вечерний снег лучше утреннего дождя"), *Sirka belaş ji hingivî Şirintire* ("дареный укуса слаще меда"), *Mişkekî sax Şerekî mirî Gêtire* ("живая мышь лучше мертвого льва"), *jîneke baş h'ezar mêrê xirab Gêtire* ("хорошая женщина лучше тысячи плохих мужчин"), *hêlkeyî emro le cûckî sibeynê baştire* ("сегодняшнее яйцо лучше завтрашней птенцы") и т.д.

9. Паремнологизмы, отражающие отношения тождественности природы порождаемого природе порождающего: *Mak Gîye, Sag jî ewe* ("какова мать, такова и дочь"), *bav Gîye, kur jî ewe* ("Каков отец, таков и сын"), *dar Gîye, ber jî ewe* ("каково дерево, таковы и плоды"), *k'ok Gîye, serk'ok jî ewe* ("каков корень, таков и побег") и т.д.

#### MAXİM KHAMOYAN

### ON STRUCTURAL-SEMANTIC TYPOLOGY OF PAREMIOLOGISMS (ON THE KURDISH MATERIAL)

Paremiologisms are the units of the language, which emerge in the sentence structure in order to express the conclusions. They form by the special structural-semantic model, defining in itself their differentiation on structural-semantic types.

#### ПРИМЕЧАНИЯ

1. См.: М.У.Хамоян, Проблема проявления в лингвистике (на материале курдского языка). – Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, Ереван, 2001, с. 270-289. Проблема дефиниции в лингвистике (на материале курдского языка). – Страны и народы Ближнего и Среднего Востока. XVII, Ереван, 1998, с. 209-229.
2. М.У.Хамоян, Лингвистическое назначение и модель образования паремнологизма (на материале курдского языка). – Страны и народы Ближнего и Среднего Востока, XVI, Ереван, 1996, с. 210-222.
3. Там же.
4. Там же.

5. См., в частности, Г.Л.Пермяков, Пословицы и поговорки народов Востока, М., 1979; О смысловой структуре и соответствующей классификации пословицных наречий. Паремнологический сборник, М., 1989, с. 105-135. Г.Г.Садовая, Некоторые лингвистические принципы классификации сентенций. — Сборник научных трудов Ташкентского университета, N 512, Т., 1976, с. 118-126.

## ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ

### ԺԱՄԱՆԱԿԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՇՈՒՋ ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ

Ժամանակի քերականական կարգի խնդիրը ուրարտերենում ըստ  
տեքյան դեռևս չի տատմնասիրվել:

Այս քաջը բխում է ուրարտական դիվանի քնույթից, այն քաղկա-  
ցած է տեքստերի երկու հիմնական խմբից՝ ուրարտական թագավորնե-  
րի արշավանքներին, մվաճումներին և շինարարական գործունեությանը  
նվիրված պատմողական տեքստերից և կարգադրություններից: Տեքս-  
տերի առաջին խումբը ենթադրում է անցյալ ժամանակի քայանների օգ-  
տագործում, երկրորդը՝ անիրական (պայմանական, չղծական) եղա-  
մակների կիրառում:

Ինչ վերաբերում է աննշան թվով մեզ հասած վարչական փաս-  
տաթղթերին և նամակներին, որոնցում կարելի է ենթադրել ոչ-անցյալ  
ժամանակի քայանների ավելի լայն օգտագործում, ապա նրանք, ցա-  
վոք, քավարար չափով վերլուծության չեն ենթարկվում:

Մինչև վերջերս այս խնդրի լուծման համար խուռիական նյութի  
ներգրավումից ստացված արդյունքը մեծ չէր<sup>1</sup>, քանի որ խուռիերենը՝ ի-  
րեն հատուկ քավականին հետևողական և ներդաշնակ քայական ժամա-  
նակների համակարգով, նկատելիորեն տարբերվում է ուրարտերենից:

Թեև հին խուռիերեն տեքստերում, ինչպես նաև անձնական ա-  
նուն-նախադասություններում վկայված քայանները ավելի մեծ նմա-  
նություն են հանդես բերում համապատասխան ուրարտերեն ձևերի հետ  
(լատ. *pašt-o-m*<sup>2</sup> 'ճա կառուցեց', Urk. 6; Սո-ա-Ե-Դեօծ 'Քիչորն եկավ'  
(անձնանուն), ուրարտ. *šidišt-o-ne*<sup>2</sup> '(ճա) կառուցեց-այն, KYKH, *passim*;  
սև-ա-Ե 'ճա արշավանքի կավ', *ibid.*, *passim*), ինչպես դա առաջինը  
նկատեց Ի. Մ. Դյակոնովը<sup>2</sup>, սակայն այդ նյութը ևս քավարար չէր մեզ  
հետաքրքրող խնդրի պարզաբանման համար:

Վիճակը որոշ չափով փոխվեց Բոզագչյում խուռի-խեթական  
բիլինգվայի հայտնաբերումից հետո<sup>4</sup>: Այդ տեքստը, արժեքավոր նյութ  
ընձեռնելով խուռիերենի գրականության, սոցիալական կյանքի, կենցաղի,  
դիցաբանական և էթնիկական պատկերացումների մասին, վերջապես

նշանակություն ունի նաև խոտի-ուրարական լեզվաբանության համար: Այնուհաստի վերաբերելով խոտիերենի զարգացման հին շրջանին՝ այդ տեքստի լեզուն համոզեւ է բերում մի շարք առանձնահատկություններ, որոնք նայանի են նաև ուրարտերենին, սակայն բնորոշ չեն խոտիերենի ոչ արբանոցերին: Դա հույս է ներշնչում, որ բայական ժամանակի արտահայտման միջոցների ուսումնասիրումը հին խոտիերենում կարող է որոշ չափով նպաստել ուրարտական փաստերի վերծանմանը:

Դասական խոտիերենում (յստքը խոտիերենի կարևորագույն սկզբնաղբյուրի՝ Միտանիե թագավոր Թուշրատտայի նամակի լեզվի մասին է՝) ներգործական բայերը խոնարհվում էին քաջատապես էրգատիվ, իսկ չեզոք սեռի բայերը՝ արտյուտիվ խոնարհմամբ: Էրգատիվ խոնարհումը կազմվում էր բայի հիմքին էրգատիվ դիմավոր ցուցիչների կցումով (Հ+էրգ՝ tad-av 'ես սիրում եմ', Mit. I 75; tad-ia 'մա սիրում է', ibid. I 74; ur-av a- 'մենք ցանկանում ենք', ibid. I 80), արտյուտիվը՝ բայի հիմքին բայի քակագծիչ (թեմատիկ) ձայնավորի՝ և արտյուտիվ շարքի դիմավոր ցուցիչների կցումով (Հ+քն. ձայն.+արս. 'տո-ս-lla- 'մա գալիս է', Mit. I 115; pisando- +-tta- 'ես ուրախացա', ibid. IV 9):

Թե էրգատիվ և թե արտյուտիվ խոնարհման ձևերը դասական խոտիերենում ունեին երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի: Ներկա ժամանակի ձևերը նշույթավորված չէին, անցյալ ժամանակը կազմվում էր -օ -/օտ-, իսկ ապառնի՝ -ed-/ett- ածանցների միջոցով (kad-is 'մա ասում է', Mit. IV 12; kad-ed-av 'ես կասեմ', ibid. III 99; kad-օ -a 'մա ասաց', ibid. I 96):

Պատկերը բոլորովին այլ էր հին խոտիերենում: Այստեղ ևս վկայված են -օ - և -ed- ածանցները, սակայն դրանք ակնհայտորեն չեն կատարում ժամանակի ցուցիչների դեր: Այսպես, օրինակ, կոոք կոոքի վկայված են -ed- ածանցով և առանց դրա ապառնի իմաստ արտահայտող մի շարք ձևեր, որոնց խեթերենում համապատասխանում են ոչ անցյալ ժամանակի բայեր (թահ-ed-av...hub-օտ-av = խեթ. harnikni...duwarnahhi 'ես կոչնչացնեմ...ես կավերեմ', KBo 32 19 Vs. 24...26):

Մյուս կողմից, ավանդված են անցյալ ժամանակ արտահայտող բայաներ -օ - ածանցով (šiyal-օ -օտ 'մա դրեց', KBo 32 14 Rs. 56; himzath-օ -i-0 'մա գոտևորվեց', ibid., 13 Vs. 10; nahh-օ\* -օ-0 'մա նստեցրեց', ibid., 13 Vs. 26), սակայն առանց այդ ածանցի ձևերը ավելի մեծ թիվ են կազմում: Ուստի, -օ - ածանցը չի կրում անցյալ ժամանակի ցուցիչի իմաստ:

Խոտի-խեթական բիլինգվալում վկայված են նաև պայմանական և ըզծական եղանակի ձևեր, որոնք գործածված են ապառնի ժամանակի

իմաստով և համապատասխանում են խեթերին ոչ-անցյալ ժամանակի քայսձևերին (*kədu-i/e* = *memiškimi* 'ես կպատճեմ', KBo 32 14 Rs. 21; *kappil-ewa* = *piweni* 'մենք կցնենք', *ibid.* 15 Vs. 19; *un-ewa-tta* 'ես կգամ', *ibid.*, 19 Vs. 23):

Հին խուտիերենի մյուս տարբերությունը դասականի համեմատությամբ այն է, որ վերջինում ներգործական քայերը խոնարհվում են բացառապես էրգատիվ խոնարհմամբ, մինչդեռ այստեղ ներգործական քայերը վկայված են ոչ միայն էրգատիվ, այլև արտլուտիվ խոնարհմամբ: Ներգործական քայի արտլուտիվ խոնարհման ձևերում քնակազմիչ ձայնավորի իմաստով հանդես է գալիս *-o-* ձայնավորը (*ulan-o-m* 'մա խոնոց', KBo 32 14 Rs. 12; *pašt-o-m* 'մա կտուցեց', *ibid.*, 14 Rs. 35; *ele-o-b* 'մա մուռեցրեց', *ibid.*, 14 Rs. 36; *tawašt-o-m* 'մա ձուլեց', *ibid.*, Vs. 43 և այլն), որը բացակայում է դասական խուտիերենում:

Ներգործական քայի էրգատիվ և արտլուտիվ խոնարհման ձևերը հանդես են բերում հետևյալ օրինակալուծությունը. առաջինները արտահայտում են ոչ-անցյալ ժամանակ (*haded-av* 'ես կօրհնեմ', KBo 32, 19 Vs. 14; *talast-av* 'ես կվերցնեմ/կտանեմ', *ibid.*, 19 Vs. 35; *arol-av-nna* 'ես այն [-nna-] տալիս եմ/ուղարկում եմ', *ibid.*, 15 Rs. 15; *ar-ia-ma* 'մա չի [-ma] տալիս', *ibid.*, 15 Rs. 16), վերջինները՝ անցյալ (*haban-a-b* 'մա ճանփա ընկավ', *ibid.*, 14 Vs. 3; *nahh-a-b* 'մա մտոց', *ibid.*, 13 Vs. 4; *kelkelešt-o-m* 'մա դրեց', *ibid.*, 13 Vs. 6):

Խուտիերենի հետագա զարգացումը հանգեցնում է նրան, որ ներգործական քայը այլևս չի խոնարհվում արտլուտիվ խոնարհմամբ, արտլուտիվ խոնարհմամբ համակարգում վկայված ներգործական քայի *-o-* քնակազմիչ ձայնավորը կորսվում է, իսկ վերոնիշյալ *-o-* և *-ed-* ածանցները, որոնք, ըստ ամենայն հավանականության, զործողության կերպի (*Aktionserf*) ցուցիչներ էին, վերաիմաստավորվելով, ձևոք են բերում ժամանակային ցուցիչների իմաստ:

Խուտիերենում ժամանակի համակարգի ձևավորման մասին այս բանցիկ անդրադարձից հետո վերադառնամք ուրարտերենին:

Ուրարտերենը, ակնհայտորեն տարբերվելով դասական խուտիերենից, որոշակի ընդհանրություններ է հանդես բերում հին խուտիերենի հետ. նրան, ինչպես և հին խուտիերենին, հայտնի չեն ժամանակ արտահայտող հատուկ ածանցներ, չնայած սեռի քայերի ոլորտում չի նշմարվում ժամանակի տարբերակման որևէ միջոց, մինչդեռ ներգործական քայերը տարբերակում են անցյալ և ոչ-անցյալ ժամանակները: Սակայն, ի տարբերություն խուտիերենից, որտեղ ներկա ժամանակը արտահայտվում էր էրգատիվ խոնարհման ձևերի միջոցով, իսկ անցյալը՝ արտլուտիվ, ուրարտերենում ներկայի ձևերը կազմվում էին քայի հիմքին էրգատիվ վերջավորության (*al-ie* [զրաֆ.՝ *a-li a-li-i/e*] 'մա ասում է', KYKH, *passim*; *tiy-*

is-ne [qruaʃ. ti-a-ni] 'մա ասում է-այն [-ne], նույն տեղում, 125 3; 143 2; ա... ar-is-ne [qruaʃ. a-ri-a-ni] 'մա չի [ա] տալիս-ճրամ [-ne], նույն տեղում, 446 8)՝, իսկ անցյալինը՝ քայի հիմքի և էրզատիվ վերջավորության միջև -o- ձայնավորի ազդեցումով (zāšg-o-0-ne 'մա սպանեց/հյնչացրեց-մրամ [-ne], KYKH, *passim*; par-o-ve 'ես քշեցի', *ibid.*, *passim*): Փաստորեն ներգործական քայերի քնակազմիչ ձայնավորը այստեղ ձեռք է բերում լրացուցիչ՝ անցյալ ժամանակի ցուցիչ նշանակություն:

Այսպիսով, ուրարտերենում քայական ժամանակի համակարգը ավելի արխայիկ է դասական խտոհերենի համեմատությամբ: Ինչպես հին խտոհերենում, ուրարտերենում այն չի ընդգրկում չեզոք սեռի քայերը՝ տարածվելով միայն ներգործական քայերի վրա:

Այդ փաստը, ինչպես նաև խտոհերենում և ուրարտերենում ժամանակ արտահայտելու համար տարբեր միջոցների օգտագործումը, վկայում են այն մասին, որ քայական ժամանակի քերականական կարգը հատուկ չէր խտոհ-ուրարտական մախավելին, ուստի այն ինչպես լեզուների հետագա զարգացման արդյունք է:

Ինչ վերաբերում է ուրարտերենի ժամանակների տարբերակմանը անվանական ստորոգյալով նախադասություններում, ապա այստեղ ներկա ժամանակը արտահայտվում էր -ne հոդի միջոցով, իսկ անցյալը՝ man- լինել՝ քայի և ստորոգելիական վերադիրի կապակցությամբ (Sarduri-ne Argište-be... aluse Tošpa URU 'Մարտրե Արգիշտորդին... Տոշպա քաղաքի տիրակալն է', KYKH 244 33-34; qarbe salze manu 'ժայռը զահավեժ էր'[?], *ibid.*, 419 4)՝:

#### MARGARIT KHACHIKYAN

#### ON THE CATEGORY OF TENSES IN URARTIAN

The paper deals with the problem of tenses in Urartian language. Based on the interpretation of a few Urartian forms as 3<sup>rd</sup> person singular present tense forms of the ergative conjugation (al-ie 'he says', ti-is-ne 'he says-it', ar-is-ne 'he gives-her', cf. parallel Hurrian forms tad-is 'he loves', kad-is 'he says' etc.), the author suggests, that, unlike the past tense of transitive verbs, formed by adding ergative personal markers to the thematic vowel of transitive verbs -o- (amast-o-ve 'I burnt'), the present tense of transitive verbs was deprived of this vowel. Thus, the thematic vowel of transitive verbs, having lost its original function, played actually the role of the past tense marker.

Unlike Hurrian, which had developed a harmonious system of tenses, comprising all types of verbs (transitive, as well as intransitive ones), the temporal system in Urartian seems to be limited to transitive verbs only and, thus, reveals some features in common with old Hurrian (the latter also distinguished tenses in the sphere of transitive verbs only, moreover, the marker of transitivity was not used in the

Hurrian forms of the present tense, either). This attests of the archaism of the Uartian temporal system, as well as of the underdevelopment of the category of tenses in Proto-Hurro-Uartian.

### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հմմտ. Ի. Մ. Դյակոնովի -ed- և -(s)- անանցներին համապատասխանաբար անկատար կերպի (նշ ժամանակի) և արակերպային (безличной) ինքնանմանի վերաբերմանը ("Языки древней Передней Азии" [ЯДПА], М. 1967, 147 և "Hurritisch und Uartitisch" [HuU], Munchen 1971, 116) և հեղինակի՝ al-je (գրաֆ.՝ a-li a-li-i/e, КУКН [Н. В. Арутюнян, "Корпус урартских клинообразных надписей", Ереван 2001], passim), iy-ia-ne (գրաֆ.՝ ti-a-ni, նույն տեղում, 125 3; 143 2) ձևերը որպես արակերպային լրակ, բայտ էություն, ներկա ժամանակի) ձևերը շեղարկելը ("Хурритский и урартский языки", Ереван 1985, 97).
2. Այս ձևերի օ-ն նախնական ընդունված էր տատաղարձել -օ-: Սակայն խուռի-խեթական քիլինգվայի հայտնաբերումից հետո (տես ժամադրագրություն 4), որի ողորակչությանը հաստի էր ս և օ ձայնավորների տարբերակումը, պարզվեց, որ մերգործական բայերի քնակազմիչ ձայնավորը -օ- էր քննննվում (տես G. Wilhelm, *Zum Hurritischen Verbalystem*, "Texte, Sätze und Moneme" [Festschrift Heger], 1992, 667): Նույնիերենի հետ համամասնությանը արարտելենում ևս մերգործական բայերում ս ձայնավորը տատաղարձում ենք օ:
3. I. M. Diakonoff, HuU, 111, n.123; Դյակոնովի կարծիքով, pašt-օ-m ձևի -m անանցը համապատասխանում է ուղարտիենի -ne-ին և կատարում է ուղիղ խնդրի դեր: Հեղինակի կարծիքով, ակալայն, այն ոչ թե -ne, այլ -be- անանցի նմյունային տարբերակն է և կատարում է գործողության ստրյեկտի (ներակայի), ոչ թե խնդրի դեր, տես M. Khachikyan, *On the Typology of Hurro-urartian Verb*, "Societies and Languages of the Near East" (Studies in Honour of I. M. Diakonoff), Warminster, Wilts 1982, 165-168: Այս ենթադրությունը, հաստատվեց հետազոտյում խուռի-խեթական քիլինգվայի տվյալներով, որտեղ կողք-կողքի վկայված են -m և -b անանցով բայանանցը:
4. H. Otten, *Chr. Rueter*, "Keilschrifttexten aus Bogazköy" [KBo] XXXII, Berlin. 1990, nn.11-19; E. Neu, "Das Hurritische: Eine altorientalische Sprache in neuem Licht" Akad. d. Wiss. u. d. Literatur, Mainz-Stuttgart: Steiner-Verl. Wiesbaden 1988, 32; "Studien zu den Bogazköy-Texten" 32 (1996) 23,101.
5. Winkler-Abel, "Der Thontafelfund von el-Amarna" (Mitteilungen aus den orientalischen Sammlungen der. Kgl. Museen zu Berlin, Heft. 1-3, 1889-1890; J. Friedrich, "Kleinasiatische Sprachdenkmäler", Berlin 1932, 8-32.
6. Բնակազմիչ ձայնավորները՝ -օ-, -\*, -i-, -u-, կախված ցննելով բայի քննյքից, գործածվում էին համապատասխանաբար մերգործական (-օ-), չեզոք (-\*)-, միջին սնտի (-i-) և վիճակի բայերի հետ (-u-):
7. Խուռիերենի բայի մասին ավելի մամրամասն տես M. L. Khachikyan, *The Hurrian Verb Revisited*, "Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians" 10, 1999, 257-265.



8. Պետք է, սակայն, նշել, որ –ոս մասնիկը արարտեքնում, ինչպես և խոտիերենում, կորցրել էր որոշյալ հոդի իր մախմական իմաստը (տես Մ. Նաչիկյան, *Բուռնիերեն հոդի ծագման և զարգացման շուրջ*, “Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ” XXI, Երևան 2002, 364-368): Այն գործածվում էր եզակի բվի արսոյութով հոգւում (Haldi-*os* uštabe ‘հաղին եզակ արչականի’, KYKH, *passim*) և որոշիչի և հատկացուցիչի կազմում: Վերջին երկու դեպքերում այն կատարում էր հարաբերկցական մասնիկի դեր. նրա միջոցով որոշյալի և հատկացյալի հոգւական վերջավորությունները կցվում էին որոշիչի և հատկացուցիչի ձևերին (Russ-*ke* Argiltehi-*os*-*ke* ‘Ռուսա Արգիշտյանը [ըզատիվ հոլով]’, KYKH, *passim*; Haldi-*y*-*os*-*le* šēš-*le* ‘հաղիի դուռը [բառացի՝ դռները]’, Շույն տեղում, 92-3): Այլ կերպ էր բացատրում այս ձևերը Ի. Մ. Դյակոնովը (տես ЯД/А, 144; ԻՍԱ, 110, 134), սակայն խոտի-խեթական քիմիզգվալի նյութը, կարծես, հաստատում է հեղինակի՝ դրանք էրզատիվ խոնարհման ձևեր մեկնաբանելու հնարավորությունը (տես ժանրագրություն 1):

## ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈԶՄՈՅԱՆ

### ԽՈՍԵՅՆԻ ՊՈՆԶԻԱՅԻ

## ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՄԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

Էմամ Խոմեյնիի գրական ժառանգության՝ բանաստեղծությունների ճանաչմանն ուղղված սցարադամները մեզ կանգնեցրին հետաքրքիր խնդրի առջև, ավանդաբար՝ էր Խոմեյնին իր գրական գործունեության մեջ, քե՞ն նորարար:

Իդ ուղեքճմներից մեկում Խոմեյնին գրում է, քե ոչ երկուսսարդ ժամանակ, ոչ էլ ծերության օրոք, բանաստեղծություն գրելու շնորհ չի ունեցել<sup>1</sup>: Սակայն նրա բանաստեղծությունների ժողովածուն այսօր պարսից պոեզիայի գրական փաստերից մեկն է, որ հրատարակվել է քսանից ավելի ամգամ, «Դիվանե Էմամ» խորագրով<sup>2</sup>: Դիվանի ժանրային կառուցվածքն արդեն իսկ բավական է, Խոմեյնին պարսից գրականության դասական ավանդների շարունակալը դիտելու համար: Նա ունի ներքողմեր (դասիդե), դազալներ (գազել), բանաստեղծական փոքր չափի օրեկոթներ» (դաթե), քառյակներ (տոբայի) և մի քանի միջնադարյան պոեզիայում շատ տարածում գտած բանաստեղծական ձևեր, որ կոչվում են մուսամաթ և թարջիբանդ:

Արարական մվանամներից հետո, նոր էքմոշակութային աշխարհում ձևավորվող պարսից պոեզիան կայանում և զարգանում էր արքունիքում: Լինելով սոցիալական ինտոլոտուտի պատվեր, ներքողդասիդեն և քամակով և կարգավիճակով առաջին տեղն էր գրադեցնում ժանրային համակարգում: Հենց այդ տրամարանությունն էլ որդշում էր ժանրային ձևերի աստիճանակարգը, որով ձևավորվում էին պոետների Դիվանները: Սակայն Խոմեյնիի բանաստեղծությունը թելադրում է Դիվանի այլ կառուցվածք: Այն սկսվում է նրա պոեզիայում գերակշիռ՝ դազալներով:

20-րդ դարի սարճոմքից պարսից գրականության զարգացման իր ընթացքը քմնող և դասակարգող իրանցի գրականագետները (Մալեք աշ շարա Բահար) պայմանականորեն եինգ հաջորդական ոճ են փաստել: Դրանք են՝ Խորասանյան (պարզ), իրաքյան, հնդկական (քարդ), ենի «վերադարձի» (քազգյաշ) և ժամանակակից-անհանգ՝ որ

կոչվում է նոր քանաստեղծություն (չերե նո): Քվում է, թե Խոմեյնիմ լինելով 20-րդ դարի պարսից մտքի ներկայացուցիչ, ճանաչելով պարսից նոր պոեզիայի այնպեսի մեծությունների աղվեստը, ինչպիսիք էին Նիմա Յուշիքը, Սոհրաբ Մեփեհրիմ և այլք, պետք է է դառնար ամենագ քանաստեղծության զատագույ, սակայն, նա ստեղծագործեց դասական արուզի համակարգում, պարսից պոեզիայի ավանդական ժանրային ձևերով: Նա դարձավ մի կողմից խորասամյան պարզ ոճի շարունակողը, մյուս կողմից՝ պոլիթեմատիկ, առփիական-միտոսիկական սիմվոլիստով, դրամայան ոեմիմիացենցիսմերով և դիցարանական մոտիվներով հագեցած քանաստեղծության կրող, որով և լրացրեց իրաքյան ոճի քանաստեղծների շարքը:

Խոմեյնիմ քնաքերգում է, իսկ քնաքերգությունը պատմական է: Ինչպիսի ավանդական ձևեր էլ այն ստանա, միևնույն է, մյուս արժեքը որոշվում է պոետի անհատականության միջով անցած դարի և ժամանակի բեկումով: Այդ է պատճառը, որ, օրինակ, ռուսային դարերի ընթացքում իր ձևական օրենքների խիստ կանոնիկության հետ մեկտեղ, քովանդակային կոնֆորմիզացիայի է ենթարկվել, իր փոքր ծավալով և ճշուն քանաստեղծական չափով արձագանքել դարի անցողաբժին: Խոմեյնիի դիվանում ավանդական սիրային, խոհական, միտոսիկական, փիլիսոփայական, ներքոդային, երգիծական քառյակի կողքին մեծք տեսնում ենք քառաքանկանը, այս պարագայում Իրանի հեղափոխությունն արտացոլողը «جمهوری ما» Մեր համրասպետությունը», «جمهوری اسلامی» Իսլամական համրասպետությունը», «عبد سید» ևմ<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է քառյակի ձևի պոետիկային, ապա համզավորման հայտնի երկու ձևն էլ առկա է և աղխայիկը և գրական-դասականը:

Ղազալը Խոմեյնիի նախասիրած ժանրային ձևն է: Նրա Դիվանը քովանդակում է մոտ 150 քազմաբեմատիկ դազալ: Իզուր չենք շեշտում թեմաների լայն սպեկտրը: Ղազալը մինչև քնաքերգության ինքնուրույն ձև դառնալը զարգացման երկար ճամապարհ է անցել<sup>4</sup> և Հաֆեզի պոեզիայում իր կատարյալ և չափանշային ձևն ստացել: Հաֆեզի դազալը սովորաբար թեմաների մի փունջ է, միավորված խիստ միջնորդավոր, երբեմն քաջմվող զուգորդական կապերով, որոնք դազալին հաղորդում են որոշակի միասնություն. միասնություն ոչ թե տրամաբանական, ուսցիոնալ, այլ՝ զգացմունքային միասնություն, տրամադրության միասնություն<sup>5</sup>: Զմնել Խոմեյնիի պոեզիայի առանձնահատկությունները, առանց նշելու նախորդների ազդեցությունը, կնշանակի կտրել նրա քանաստեղծական արվեստը այն շարժում և կենսունակ հողից, որով մեծեմում են համամարդկային արժեքները դարից դար փոխանցող պոետոնե-

րը: Բանաստեղծությունների Դիվանը ցույց է տալիս, որ Խոմեյնիի պոեզիան ձևավորվել է ոչ առանց Սամայիի, Ռուսիի, Հաֆեզի և այլոց ազդեցության: Այո, ակնհայտ է նրա ազդեցությունը իրացյալն ու ջատագովներից, սակայն փոյթ չէ: Հենց իր, Հաֆեզի դազալները մեկ անգամ չէ, որ մեզ տանում են դեպի պարսից պոեզիայում չափանիշ դարձած պոետները: Օրինակ, Հաֆեզը իր «Սիրոս դարդով լիքն է, ախ, քե լիներ սպեղանի» (سینه ما مال درد است ای دروغ مرهمی) դազալի նախավերջին քերթում

مولیان آید همی

«Որ զեփյուրից Մուլյան գետի բույրն է գալիս»<sup>6</sup>:

Խոմեյնիի Դիվանում կան դազալներ, որոնց սկիզբը (մարբա) Հաֆեզի հայտնի<sup>7</sup> առաջին դազալի առաջին կիսատողով է սկսվում (Ո՛վ մատուկակ, լցրու գավը) یا ایها الساقی: Այն արարերեն է: Այդօրինակ տարավորիչ, յուրահատուկ սկիզբը պոետիկայի արվեստում հատուկ անվանում ունի, որ կոչվում է հրաշալի մուտք (ուսմ ալ մարբա)<sup>7</sup>: Հայտնի է, որ Հաֆեզն ինքն էլ, ըստ ավանդության, այդ տողը քաղել է մեկ այլ բանաստեղծից<sup>8</sup> یا ایها الساقی ادر کاساً و ناولها .

Ի դեպ, առավել կամ մվազ չափով դա հատուկ է քոլոր ժամանակներին և քոլոր ժողովուրդներին: Երբ Պետրոսյանի բանաստեղծություններից մեկում նրա աշակերտը հայտնաբերում է Վերգիլիոսի տողը, ապա Պետրոսյանն արդարանում է, ասելով, քե ինքը՝ Վերգիլիոսն էլ, ժամանակին օգտվել է Հոմերոսից և Լուկրեցիոսից<sup>9</sup>:

Պարսից մեջ դրա արմատները գնում են դեպի պոեզիայի ձևավորման ակունքները: Գրական մտքի ջատագով Նեզամի Արուզի Սամարղանդին հավաստում էր, որ բանաստեղծական արվեստում ոչ մեկը չէր հասնի կատարելության, եթե անգիր չիմանար 20000 տող իր մախոլդների և 10000՝ իր ժամանակակիցների բանաստեղծություններից<sup>10</sup>: Գեղարվեստական մշված հնարքը այնպես էր օրինակամացված, որ միջնադարյան պոետիկայի արվեստում դրանք քննադատվում և տարբերակվում հատուկ տեղումներ կային, օրինակ՝ քաղիլը, նազիրե, քազմին, ջավաբ, որ համապատասխանում էին «ոճապատճնմուն», «բարտասխան» և «մեմանակուն» հասկացություններին: Հաճախ մեջբերումներն այնքան ընգծված էին լինում, որ հարկ չէր լինում փնտրել բնօրինակը: Շատ անգամ նմանակումը ուղղված էր լինում մեկ այլ բանաստեղծի հանգին, չափին կամ սխալներին: Միջնադարյան պոետիկայի տեսարան Ար-Ռադոյանին գրում է, որ բանաստեղծը մեկ ուրիշի քերթը կարող

է տեղադրել իր ստեղծագործության մեջ, որը հարգանքի դրսևորում է և ոչ թե յուրացնելու ցանկություն<sup>11</sup>:

Խոմենյիի դազալի պոետիկան մեծապես մերժեմուն է հաֆեզյան շրջանի դազալի հետ, քերթի անկախության՝ այսպես կոչված դեզինտեգրացիայի հատկությամբ: Այդօրինակ դազալները դառնում են տարբեր քեմաների և մտախմբների միացություն, որոնք իրենց բազմազանությամբ հանդերձ, ներքին միասնություն ունեն: Առաջին հայացքից սովորական քեմաները՝ սերը տարբեր մոդիֆիկացիաներով, բարեկամությունը, կնոջ գեղեցկությունը, կյանքի ունայնությունը, ճակատագրի փոփոխականությունը, զարման գարբոնքը և՛, իրականում ունեն երկրորդ խորք: Այդ ամենը ուղեկցվում է սադի (մատուլակ), ոհնը, Մաջնուն, շնյխ, մոքշեղ (ձոզևոր ասաջմորը), էլխ, խանեզան (զինետուն), մայ (զինի), ոռխ (զնմք) և այլ մտախմբներով, որոնք մահ առփիական տեղեկների ուժ ունեն և մատաղավի օրինակներ են: Դրանք աստծու էությունը (գաթ) ուղեկցող աստիքուտներ են (սեֆաթ), որոնք այտահայտում են աստվածային լույսի էմանացիան, կամ այդ լույսի տարբեր դրսևորումները: Միջոցները ծառայում են նպատակին, դառնալով մարդու և աստծու իտացիոնալ հանդիպման «ծածկագոներ»:

Ընենեք Խոմենյու այդօրինակ դազալի մի քերթը.

خواستم راز دلم بیشه خودم باشد و بس

در می خانه کشودند و چنین غوغاشد<sup>12</sup>

«Ես ուզեցի, որ գաղտնիքս անհայտ մնա ամեն մեկից,  
Բայց պանդոկի դուռը բաց էր, ու քարծրածայն աղմուկ  
դարձավ<sup>13</sup>»

Հաֆեզ

نهان کی ماند آن رازی کز او سازند مجفلا<sup>14</sup>

«Ինչպե՞ս քաղցնեմ այն գաղտնիքը, որ բոլորինը դարձավ»:

Ռումի

سر من از ناله من دور نیست

«Իմ գաղտնիքն իմ ուրբից հեռու չէ.....»

Խոսքն աստվածային սփյուռ գաղտնիքի մասին է, որը պոետիայում հաճախ «քոր» ձևով է հանդես գալիս: Եթե աստծու սիրով արքածը չի կարողանում այն քաղցնել օտար աչքից, ապա մա չի հասել աստծուն արժանի լինելու կատարելությանը: Միքանաբը պետք է արքած լինի աստծու սիրով, իսկ զինին խղում է սրափությունը: Այտեղից բխում է զինու խորհրդանշային մտախմբ: Այսօրինակ երկիմաստությունը հատկանշական է առփիզմին, զխտակրոմական ուսմունքին, որն իր մեջ ներառելով

տարքեր գաղափարախոսություններ, այնուհանդերձ զարգանում էր խլամի եղի վրա, իսկ Ղուրանի 76-սուրահի 21 ալաբը խոստանում է դրախտային գինի (...եղ մրանց Տէրը կըլմնեցնէ նրանց մաքուր գինի)<sup>15</sup>: Երբ վերը նշված քանաստեղծական մտքերի վրայից վերցնենք ալաբանության քաղը, ապա այն կդասուս մարդկության փորձով ձեռք բերած մի սովորական քաղաքազիտություն. «Գաղտնիքը, որը շատերին է հայտնի, գաղտնիք չէ»:

Այս համատեղատոմ հասկանալի են Խոմեյնիի «Հոնքերիդ կամարը աղոթքիս կողմն է» և Հաֆեզի «Լաղոթքի քո հոնքերի կամարի տակ» ու մմասօրինակ բազմիմաստ տողերի ընդհանրությունները: Ինչ վերաբերում է Խոմեյնիի դազալի ձևի պոետիկային, ապա այն, մեր կարծիքով, առավելապես մերձենում է խորասանյան շրջանի դազալին, երբ նրա ձևական օրենքները դեռևս չէին կանոնարկվել: Օրինակ, Խոմեյնիի դազալը չի պահպանել տողերից մեկում կամ վերջին քերթում իր գրական անունը (թախալու) ամբազանում օրինաչափությունը, որով առանձնանում են Սաադիի և Հաֆեզի դազալները: Խոմեյնիի պոեզիան առավելապես հետահայաց էր և կարելի է ասել, տարքեր եզերելով մերձենում էր նախորդների կողմից ձևավորված ոճերին՝ խորասանյանին և իրաքյանին: Երբ այս ամենին ավելացնենք նաև Խոմեյնիի ստեղծագործությունների հրատարակության համձնաժողովի կողմից կատարված վերլուծականի փաստարկները, որոնք հաստատում են Խոմեյնիի ազդեցությունը ժամանակակից պոեզիայի վրա, ապա ակնհայտ կդասուս հենի ու նորի հարաբերակցությունը, որը պարսից պոեզիայի զարգացման քննական ընթացքի դրսևորումներից ամենակարևորն է:

Armanoush Kozmoyan

#### THE PECULIARITIES OF IMAM KHOMEINI'S POETRY IN THE CONTEXT OF PERSIAN LITERARY HERITAGE

Based on the analysis of Imam Khomeini's poems – 'Divan' – it can be inferred that he worked in the context of medieval classical heritage of Persian poetry. Although he was affected by polythematic Sufi 'gazel' thereby complementing the Iraqi style. Moreover, Imam Khomeini's poetry was retrospective, and, in many ways, he followed the style created by his predecessors. One of his innovations was the motive of the Iranian revolution expressed in traditional poetic forms.

#### ՕՍԱՆՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ۱۳۷۸. دیوان امام جاب بیست و دوم.

2. دیوان امام ص ۲۰

3. Sbu' b'zq. w'zju., էջ 193,195,206:

4. Այդ մասին ասերանի տես Ա. М. Мирзоев, Рудак и развитие газели в 10-15 вв. Сталинабад, 1958. И. С. Брагинский, Очерки из истории таджикской литературы, Сталинабад, 1956. История персидской и таджикской литературы (под ред. Яна Рипка) М. 1970, с. 105, М. Л. Рейснер, Эволюция классической газели на фарси, 10-15 вв. М. 1989, Рашид ад Дин Ватват, Сады волшебства в тонкостях поэзии. пер. с перс. исслед. и комм. Н.Ю. Чалисовой, М., 1985. Шамс ад Дин Мухаммад ибн Ханс ар-Рази, Сбор правил персидской поэзии. О науке рифмы и критики поэзии. Пер. с перс., исслед. и комм. Н. Ю. Чалисовой, М, указ, терминов.

5. Հովիտ: М. И. Занд, Шесть веков славы, М., 1964, с. 200

6. دیوان حافظ، سید ابو القاسم انجری، ص ۲۶۰

7. دیوان حافظ، ص ۱

8. Sbu' Հաֆեզ, կազմեց և բարձրանեց Աշոտ Գ. Միմասան, թիկնագ, 1995, էջ 256

9. Հմմտ: А. Баткин, Итальянское возрождение в поисках индивидуальности, М., 1989, с. 38

10. Никзми Арузи Самарканди, Собрание редкостей или четыре беседы, М. 1963.

11. Рахим Мусульманкулов, Асрори сухан, Душанбе, 1980, с. 712. ۸۹ ص امام

دیوان

13. Էնան Խոնինի, Մյուս զինին, բարձմ. Հրայր Մովսիսյանի, Երևան 1993, էջ 27

14. دیوان حافظ، ص ۱

15. Դուրան, բրզմ. Ա. Սմիթյանեանցի, Կառնա 1909, 76-21

## ԱՇՈՏ ԱՏԵՓՈՒՅԱՆ

### ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՅՈՒՄՎԱԾ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՊԵՏ)

*«Զարմանքի ու հիացմունքի է արժանի ժողովրդական ստեղծագործությունն իր քաղմագանությունը ու հարստությունը: Առավել ևս՝ ստեղծագործությունը հայ ժողովրդի, որին քնն պատմության ողբերգական համզամանքները ցրել են աշխարհով մեկ, բայց մա կարողացել է ստեղծել մահ կիրառական արվեստի հիամստի մուշմեթ և դարձրել դար, աշխարհի տարբեր ծայրերում պահպանել իր ավանդները».*

*Մարտիրոս Մարյան («Երկու խոսք», Ա. Դավթյան «Հայկական կայսրություն», Երևան, 1975)*

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողության ընդհանրական համամասնությունն ու անհատականությունն առավել քաղմագանունի է վերաբարտարվում հատկապես մշակութային համակարգի քաղմատես ողբերգումներում, հիմնվելով պայմանաճանաչային գաղափարական իմաստավորումների գեղարվեստական վերաբարտարությունների, ազգային ավանդապահ մտեցումների, նրանց առանձնահատկությունների, ինչպես և պատմականի ընդհանրական վերաիմաստավորումների վրա:

Հայոց մշակույթը ևս ժամանակի ու քաղմարտական պատմականի հարստագույն գանձարանում մշտապես կարողացել է պահպանել իր անմակարևոր չափանիշներից մեկը՝ ազգային անհատական դիմագիծը, լիիրավ մուտք գործելով համաշխարհային մշակույթի հիմնավորումների մեջ ու հաստատելով իր առանձնահատուկ տեղը: Հայկական մշակույթի համակարգվածությունն առավել ցայտուն է արտահայտվել հատկապես կիրառական արվեստի գեղատես ձևայիններից մեկում՝ հյուսածո արվեստում: Հանդիսանալով գեղարվեստի առավել լայն կիրառում ունեցող ձևային, քնագավառը հիմնավորված է եղել հյուսվածքի մշակման ու նրբագեղության, գարդամախաչային համակարգի և գունային ներկապմանի հարստության չափորոշիչների վրա, որոնցով և քնդրվել են գործվածքների կիրառական նպատակայնությունը, նրանց վերածելով արքայավայել իրերի, պատվարեր հարստության, տուրքի առարկայի, վրանի, կացարանի հատակածածկի, սենյակների միջնորդի ու դրան,



անկողնակալի, հարսանեական օժիտի ու քաղման աքաղաղակարգի ան-  
քակտելի սրայմամամասնի, ինչպես նաև քուրաու (թոնքի վրա զգվող ծած-  
կոց), բազմամսաբուսակ պարկ-խորթինի, աղսպարկի ու զղաղամանի,  
հացանատկի և հացի պանպանժան համար սրարկի, ճիածածկի (ջվալ) և  
այլ ու այլ կիրառումներ: Այսօրինակ իրերի զգալի մասն են կազմել ա-  
վանդական գորգերը, որոնց հյուսվածքածևերով հիմնավորվել է և *կար-  
պետագործությունը*, որի հյուսվածքի իրականացման առանձնահատ-  
կությամբ ստեղծագործվել են ժողովրդական առավել լայնատարած կի-  
րառումներ ունեցող քիլիմները, փաբասները, ջեջիմները, զլիմները, սու-  
մախիմները, խորթինները, ջվալները և այլ ու այլ հյուսվածքներ: Կարպե-  
տագործ (գորգահյուս) իրերի\_ենչեղության չափորոշիչներն են եղել  
հումքանյութը (յուրը, բամբակ, մետաքսաթել, ուղտի կամ այծի բուրդ),  
օգտագործվող ներկատեսակների քաղաղքամասերը (բուսական ու հան-  
քային ծագումով. որդան կարմիր, տորոմ, գլատոք, տխի կեղև, կաղին,  
ինդիգո, լաջվարդ, պաղլել և այլն), զարդակերպի սրայմամանչանային  
համակարգի գեղարվեստական իմաստավորումները (երկրաչափական,  
կենդանական ու բուսական ճախչեր, կրկնապատկերներ, զարդանայլի  
հայկային ամրադարձի սկզբունք կամ նույնի մեկ քառոյղի անկյունա-  
յին կրկնություն և այլն) և, որ ամենակարևորն է, հյուսվածքը ստեղծա-  
գործող վարպետի անհատական մտեցումները, որով պարզագույն գոր-  
գահյուսքերը վերածվել են քարձրարժեք իրերի, մինչ օրս մնալով մաս-  
նագիտական անսպառ ուսումնասիրությունների առարկա:

Եթե հայկական դասական գորգերը եղել են համեմատաբար  
քարզ գործվածքներ, ապա կարպետի գործքի տեխնիկական սրարգե-  
ված ենարներով գործված իրերը, պահպանելով հարդարային սկզբունք-  
ների ազգային իմաստավորումների կանոնարգված կերպավորման  
սկզբունքները, եղել են շատ ավելի մատչելի ժողովրդական լայն խափ-  
րի համար, ունենալով առօրեական, բազմամսաբուսակ կիրառումներ:  
Բնագավառի ենագույն ժամանակներից գոյության մասին են վկայում և՛  
լեզվաբանական և՛ աղբյուրագիտական և՛ սլետմական փաստագրու-  
մներն ու տարաբնույթ տեղեկությունները, որոնցից ռաջինն ամխոս կա-  
րելի է համարել հայկական գեղերի ստեղծման պահից հունական բնագ-  
րերից հայերեն բարզամավոր Աստվածաշնչի մեջ համդիպող որոշ հյու-  
սածու իրերի բնորոշումներն որպես «*կարպետ*»:

Այսօրինակ գործվածքի անվանումը տարբերակվել է այլ հյուս-  
վածքներից և հայերենում օգտագործվել հատկապես այն իմաստով, որն  
առավել համրածանոթ է, ունի տխրական բնորոշում և համապատաս-  
խանում է գործվածքի քառապատկերային մատչելի ընկալմանը: Պետք  
է նկատի ունենալ, որ գորգահյուսքի «կարպետ» տեսակը եղել է միմիայն  
հայկական մենաշնորհ, երբևէ չի կրել և ոչ մի ալլաձևությ փոփոխում,

ներգործություն ու հիմնածևի վերաճակում, մշտապես մնալով ազգային նախահիմնավորումների անհատական համակարգավածության շրջանակների մեջ:

«Կապերտ» (այսպիսին է հայերեն իրական արտաբերումը) տեսակի գործվածքը մշտապես քնդոչվել է հյուսվածքի քնդուսերական առանձնահատկություններից ելնելով՝ գորգահյուսք: «Կարպետ» բառը, ըստ Հայկազյան բառարանի, նշանակում է «եմացած, մաշված բրդյա կտոր, քուրք»: Հայ անվանի լեզվագետ Հր. Աճառյանը «կապերթը» համարում է բնիկ հայկական բառ, որը կազմավորվում է կա-տեղ և պերտ-փերթ-կտոր բառերի միակցմամբ: Բառածևը ստորին լատիներենի *carpita*-ից է. քրդի ձոթ, որն իր հերթին կազմվում է *carpo*-քուրդ կամ քել բառահիմքից: Հր. Աճառյանի կարծիքով կարպետ գործելու արհեստն առաջացել է Հայաստանում, սակայն որ միայն տարածվել օտարների մոտ: Հայերի կողմից միջազգային չուկա տարվող կտորների շնորհիվ, գործվածքի այս տեսակի անունը տեղ է գտել և նվրոպական ժողովուրդների լեզուներում. անգլ. Carpet-գորգ, հին ֆրանս. *carpette*-սենյակի հատակին զգվող քառանկյունի գորգ, գերմ. *Karpet*-գորգ, սերբերեն *kerpets*-սեղանի վրա փռելու գորգ: Ըստ գիտնականի եզրահանգման, «կարպետ» բառը զավատական արտահայտություն է (նկատի ունի այսօրվա ըմբռնումով կարպետի գործածությունը) և տարրեր զավատներում հանդես է գալիս տեղական հնչյունաբանությամբ: Օրինակ, «*կարպետ*» (Ախալցխա, Գորիս, Երևան, Վան, Մալմաստ, Կարին, Շամախի, Թիֆլիս և այլուր), «*կարպրետ*» (Արցախ), գաբրեղ(Խարքերդ, Սերաստիա), «*գարրիթ*» (Համշեն, Ջեյրուս), «*կարպեթ*» (Ալաշկերտ, Մուշ) և այլն: «Անտվածաշնչի» հայերեն առաջին քարգմանություններում, կատարված հունարեն բնագրերից, տարրեր կիրառում ունեցող գործվածքների նկարագիրներում ու հյուսվածքներին վերաբերվող պայմանախմաստային արտահայտություններում առավելապես շեշտադրվում են նրանց գորգահյուսք և առավել էիննավորված՝ կարպետագործք ծագումները, որոնք ժամանակագրական առումով առավելս համապատասխանում են իրականությանը: Այդուհանդերձ, ավելի ուշ շրջանի և ժամանակակից տեքստային մշակումներում գործվածքների, հագուստների, վրանների, հատակածածկերի և այլ ու այլ գործվածքների աստվածաշնչային էիչատակումները քարգմանվում են որպես «լաթ», «ծվեն», «եմացած շոք, կտոր», «նոր կտոր», «քաթան», «վերարկու» և այլ քնդոչումներով, որոնք ըստ էության հայերենի «ձոթ, ձուն, քուրք» բառիմաստներն են, սակայն ըստ մեզ, հետո են նախախմաստավորումներից, որոնք անառարկելի ճշել են հատկապես կարպետագործքի և նրա հյուսվածքային տարրերակներով կատարված գործվածքների մասին: Այսպես օրինակ, «Ո՛վ երկրքեսն ի դաշտին: Եւ բուռն հեար Աքիա գիանդերձն խրմէ զնո-

բոյ, որ ի վերայ իւր, և պատասնաց զնա երկնութեան *հայտնութեամբ*<sup>2</sup> (այս և հետագա քննութեանքը կատարված են մեր կողմից-Ա.Ա.): Տվյալ դիպքում հունարեն բնագրում օգտագործվում է «*ρεγοζ*» (երեզոս) բառը, որն արտահայտում է «*պատաստանած*», «*ծվեծ-ծվեծ*» իմաստը: «Գառչին ի սմանէ որպես ի *հայտնուէ* որ լինի ըստ օրինակ կամանց»<sup>3</sup> «Եւ առ Արդեւէլիք գասն ընդ իւր, եւ ակն յարարանս բազաւորին ի գետնափոր տուն գանձին, առ անտի *հայտնութեամբ* հինս և պարանս հինս»:

Արդեւէլիքը դիմում է երոզմարացի Երեմիային. «Դիր զինն *հայտնութեամբ* եւ գրայս ընդ անբոյժ ձեռաց ըոց ի մերոյ պարանցոք» [ուսուարեն «*ροχοζ*» (*հրախոս*) - փախասներ]:<sup>4</sup> Եւ այն արտաբերմամբ բառը հանդիպում ենք և Մարկոսի ավետարանում. «Եւ Աքիա զգացեալ էր հանդերձ նոր: Եւ որ արկանն *հայտնութեամբ* անբաւի վերայ հնացեալ ձորձոյ, զի առնու ելանէ գլորիսն նորա ի հանդերձէն»,<sup>5</sup> իսկ Մարկոսի ավետարանում ասվում է. «Բայ որ *հայտնութեամբ* նոր անբաւի արկանն ի վերայ հնացեալ ձորձոյ»:<sup>6</sup> Եւսկասի ավետարանում մեզ է մերկայանում հուն. «*επι - βλημεα*» (*էլիպի-վլեմա*) բառը, որն արտահայտում է «գորգ» կամ «վրայի ծածկոց» իմաստը:<sup>7</sup> Միևնույն ժամանակ, Հովհաննու Հայտնութեան մեջ «կապերտ» բառը օգտագործվում է այլ նշանակությամբ. «Եկ տեսի յորժամ երաց զվեիքն վեցերորդ, եղի շարժումն մեծ, եւ արեզակն եղի սեւալ իրրել զ*հայտնութեամբ* այժեայ...» [հունարենում օգտագործված է «*στρομα τριχομολλοζ*» (սագմա տրիխոմալլոս) - «մազոց հյուսված պարֆ» իմաստով]:<sup>8</sup> Այստեղ ուշագրավ է այժի մազից գործված. միատարր սև գույնի պարկի երշտակումը, որը համապատասխանում է ավանդապահ ձևով մինչ օրս հայկական գլորակա միջավայրում ուսուարել-խորթինների նկարագրին:

7-րդ դ. հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացին, նկարագրելով Արցախումյաց գավառի պատմական միջադեպերը, Ջիվաճըլիի մեծ իշխանին ապանդի հայրեմական տան և նրա ունեցվածքի երդեման նկարագրում գրառում է որ ոչնցացվեցին «Մտաքսախոս ու կերպաս դիպակները, գույնզգույն կապերտները...»:<sup>9</sup> Պետք է ներառել, որ այս դիպքում, ամենայն հավանականությամբ երշտակումը վերաբերվում է եստկապես խավավոր գորգերին (երև նկատի ունենանք, որ նկարագրվում է իշխանական տան ունեցվածք): Դեռևս երկար ժամանակ անխավ գորգերն ու կարպետները հանդես կգան ընդհանուր պատկերահայտավածքային համադրմամբ, ավելի ուշ շրջանում հատակ դիտարկվելով որպես նայնահին, բայց և տարբեր հյուսվածքաձևեր:

Հայագետ և եմանավար Հարություն Ջյուրոյանը հայկական գորգերին նվիրված իր երկնադար ուսումնասիրությունների մեջ, մասամբ անդրադառնալով նաև հայկական կարպետին, առանձնացնում է այդօրինակ գործվածքի չորս խումբ. «Ա. Անոթ, որ ունեն յաչաձև ուղ-

դածիզ քելերու ցանց մը, որուն վերայ գունավոր քելերով կը քանվի գորգերու մման գծածներ... քելերու ամպետ ծայրերն ազատ կը բողվին կարպետին կոնակին...: Բ Նման առաջինին, միայն թե խաչածևով կը հասնին գծածներուն յուրաքանչյուր գույննրան եզերքը և նո կո գան մինչև այդ գույնի ավարտիլը և այսպես շարունակաբար յուրաքանչյուր գույնին համար: Գ. Թե առաջին և թե երկրորդ տեսակեն, միայն թե կապերտին երկու երեսներն ալ հավասարապես ավարտած կլլա և կարելի է կապերտին երկու կողմերն ալ գործածել: Դ. Այս վերջին երկու տեսակին հյուսելակերպը բոլորովին կտարբերի մախորդներն: Հավաքածուիս մեք ունին կտոր մը, ձեռք բերած երզնկայի մեք: Ոտքը մը կամ 9 ինճեզ լայնքով երկար շերտեր են անոնք շատ ցանցատ բուրդ կերպաս մը, կամ միջակ լավ հյուսվածալ ալյուրի տապրակի մը մման, որուն վերս սակայն հետո ասեղով ձեռագործ կը քանվին զանազան գորգի գծածներ...: Այս շերտերը հետո իրար կը կարվին կազմելով կատարյալ կարպետներ, որոնք սակայն ծանր գործածության յնն դիմամար և շուտ կը մաշվին»:<sup>10</sup> Հայկական կարպետագործ իրերին առնչվող տարողունակ նկարագրիներինց են հատկապես հայագնո-պատմաբան Դ.Ալիշանի ուսումնասիրություններուն տեղ գտած որոշ վավերագրական գրատուները, որոնք վերաբերվում են հայերի կողմից եվրոպական երկրներում կատարվող առևտրական գործավարտյթների քննարկմանը. «Յիշիմ և յետ այնը յառուս Լեոնի Բ և Հեթոյ Բ վաճառական մտք արևմտեայց ի Կոռիկոս. և յառուկ ձեռագործ մի Կոռիկոսի, այն է կարպետ (carpeto di Curcho), յոքմէ հակ մի բարձեալ էր յամի 1294-95 Մաքսիլիացի վաճառականն Պետրոս Գաղղղենկ (Quatrelingue), որպէս յիշի յայլում դիւանական գրուածքի (1295, սեպտեմբ. 2) և ընդ այլոց ընդիցն կողոպտեցաւ ՚ի Վենետկեցոց չորից քերպամատոց, որք դադարէին ի մատահանգտի անդ Կոռիկոսի»:<sup>11</sup> Խոսելով հայերին տրվող առևտրական մեմաշնորհների մասին գիտնականը նշում է հետևյալ փաստը. «Ի վերջ կոչս, ԺԴ դարու (իբր յամի 1390) շնորհեցաւ արտոնություն Հայոց և Թուրքաց ի Պրլեժ՝ վաճառել զկարպետս իրենանց առաջի դրանս և Դոմաս եկեղեցոյ, որպէս յետոյ և ի հրապարակի ս.Մարկոսի ի Վենետիկ՝ հանդէպ դրանց հրաշակելոս տաճարին»:<sup>12</sup> Այս դեպքում հստակ է, որ խոսքը վերաբերվում է հատկապես գորգերին, իսկ մնկ այլ հշատակության մեք կարդում ենք. «Ի միջոցի 1653-65 ամաց փառակցի ոճն Մանուէ վաճառական՝ որդի Տեսոն Ոսկանի՝ զտանի ՚ի Վենետիկ, և ընծայէ անդ եկեղեցոյն Հայոց խալիչայ մի (կապերտ)»:<sup>13</sup> Հեղինակը, սովյալ գործվածքի համար օգտագործել է և՛ «խալիչայ», և՛ «կարպետ» քառերը: Գրելով Հայաստանից արտահանվող ապրանքների մասին, որոնք եղել են «բնական արգասիք երկրին Հայոց» սլաատմաբանն ավելացնում է «Ձեռագործաց մոցին առ որ օտարս առաքելոց, ոչ յիշի շատ ինչ, քայց ի

զգեստեղիմաց և հիսամոց. որպես Կարպետոց աստեայք, բերև և ստեղծեր, Բամբակեայ բնիզք մրբինք, յորոց սակի հոչակեայքն ի միջին դարս, Boccassini կամ Bueherami (Պոզոսի) Երզնկայ և Կիլիկիոյ»:<sup>14</sup> Տվյալ պարագայում ակնհայտ է, որ նկարագրվում է հատկապես կարպետո՝ ամխալ գորգը: Գրականագետ և պատմաբան Գ. Ջաբրահամայանը հայազգի ամվանի հոնտոր Պարսլը Հայկազնի (Պրոյեյրնիտոսի) և Հեկեստոսի համատեղ աշխատանքի ու ընկերության նկարագրում, նշում է. «Մէկ պատմութեանն ու մէկ վերարկուտ գատ բան մը յունէին. իրեք կամ չորս ալ կապերտի կրտստանք, որոնք հմութեմէ մաչեր ու գունաբախի կոյր էին»:<sup>15</sup> Հիշատակության մեջ «կարպետ» բառի եկմ ձևի օգտագործումից կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերվում է կարպետագործքով պատրաստված քիկնոցին, որը ժողովրդական խոսակցական ձևերում շատ ավելի եստեսի էր «քուրձ» անվանումով:

Հետաքրքրության է արժանի այն հանգամանքը, որ արդեն 17-րդ դարից կատարվում է պարզորոշ սահմանազատում գորգ և կարպետ հասկացությունների միջև, որի առավել հստակ օրինակները հանդիպում ենք հատկապես իրամահայ գաղթօջախի կենցաղում, որի տիպական օրինակներից է մոբբուդայեցի մեծահարուստ խոջա Պողոս Վելիջանյանի կտակ (1646թ.) մեջ կատարված հաշվեկցառումը հետևյալ քվարկմամբ. «...նամաղ (յաղիքն գործվածք-Ա.Ա.), հանդերձեղենք, կարասիք, ոսկեղենք, արծաթեղենք, պղնձեղենք, կիտուածեղենք (մորասայ), գահարեղենք, շինեղենք (նաղմապակյա սպասք-Ա.Ա.)» իրերը, որոնց շարքում հատուկ շեշտադրվում է. «...սփողոց՝ գորգ՝ կարպետ՝ ...»:<sup>16</sup> Կարպետի առանձին հիշատակման օրինակի ենք հանդիպում մաև 1707թ. մեկ այլ մոբբուդայեցի, խոջա Ոսկանի ունեցվածքի գույքացուցակի գրառման մեջ, որտեղ մասնավորապես նշվում է. «... 5 հատ նամաղ, 4 գորգ, 9 կարպետ...»:<sup>17</sup>

Հայկական իրականության մեջ, կարպետների վերաբերյալ հետագա հիշատակությունները կրում են հպանցիկ բնույթ և քազմիցս ներկայացվում են որպես անորոշ գործվածք, որը սակայն արդեն 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին, որպես ազգագրական քննազավտի ամենաբնորոշ երևույթ կազմավորվում է որպես առանձնահատուկ երևույթ, ներգրավվելով ոչ միայն հայկական գավառներին նվիրված գիտական ուսումնասիրություններում, այլև իր տարբերակումներով հատկենցվում է հայերի կենցաղավարության քազմաբնույթ նկարագիրներում և գիտական հետազոտություններում (Ե.Լալայան, Գ. Մրվանձտյանց, Մ.Սիրախոյան, Ս.Թառայան, Ղ. Տեր-Ղազարյան և այլք), իսկ մեր օրերում շրջանառության մեջ գտնվող ազգագրագետ-արվեստաբան Ս.Դավթյանի «Հայկական կարպետ» (Երևան, 1975) աշխատությունը կմնա միակ փորձը ներկայացնելու հայկական ժողովրդական հյուսածո արվեստի

այդ յորօրինակ տեսակը, համդիսամարդկ և կարևոր տղեցույց սույն շարադրանքի համար:

Ինչ՞ էր կարպետը:

Ընթյամբ լինելով գորգահյուսք, այն իր տեխնիկական իրականացման և զարդահամակարգի յափամիջներով ունեք զգալի տարբերակում ավանդական գորգատեսակներից: Այդուհանդերձ պետք է նկատի ունենալ, որ հայ վարպետները մշտապես առաջնային կարևորություն են տվել հատկապես օգտագործվող բրդի տեսակին, որին համակցվել է բամբակ, իսկ որոշ դեպքերում նաև մետաքսյա և վուշե թելեր կամ այծի մազ: Հիշենք նաև, որ բյույա թելի կիրառումը Հայաստանում տարածված էր դեռևս վաղնջական, խաչմարածության ժամանակաշրջաններից, որի մասին է վկայող մասնակի օրինակներից է Ատրեստանի Դուր-Շառուկինի պալատական արձանագրության մեջ (Փարիզ, Լուվր), Սարգոն Որբազավորի (մ.թ.ա. 722-705) վերաբերյալ այն գրառումը, համաձայն որի, միայն Մուսասիրի տաճարից (Ուրարտական շրջանի կառույց՝ Վանա լճի հարավում) վերցված ավարի մեջ եղել է ավելի քան 100.000 զլոխ ոչխարը:<sup>18</sup> 14-րդ դարի արար աշխարհագիր-ճանապարհորդ ալ-Մա'ալիքին իր դիտարկումներում եզիպտականից հետո ամենաբարձր գնահատականն է տալիս հատկապես հայկական տարածքի ոչխարի բրդին և թելերին,<sup>19</sup> որի առավել բարձրակարգ տեսակը տարածված է եղել Ամատոլիայի շրջանում, զարմանային խուզից առաջված ամենավերակյալ բյրյով: Հետաքրքրական է, որ Հայաստանում գործվածքների համար օգտագործվող բրդի քանակը որոշ դեպքերում ունեցել է տեղական այնպիսի զգալի սպառում, որ պահանջարկը բավարարելու նպատակով ներմուծվել է անգամ Իրաքի Նահրասրան քաղաքից:<sup>20</sup> Հայ արհեստագործները օգտագործվող ուղտի բրդի և այծի մազի ժողովրդական անվանումներով «քորք» և «դիտիկ» գործում էին նաև փոքր յակեթի կարպետներ և գորգեր: Որոշ դեպքերում, կարպետի գործվածքին յուրահատուկ ճկունություն հաղորդելու համար օգտագործվում էր նաև անգորական այծի մազը:

Թելահումքը հատուկ մշակման ենթարկվելով եզան թվեցրած մեզի մեջ, բեղվում էր փայտի մոխրից պատրաստված լուծույթով և ավանդական ձևով, յոթ անգամ լվացվում հոսող ջրի մեջ: Բրդի հետ օգտագործվում էր նաև բամբակ, որը մուտք էր գործել հայկական կենցաղ դեռևս վաղ միջնադարում, ունենալով և տեղական տարածվածություն: Այսպես օրինակ. նրա առատության մասին Փայտակարանում Ամանիա Շիրակացին գրառում է. «Լինի ի մնա բամբակ անբա»,<sup>21</sup> իսկ Մովսես Կաղանկատվացին շեշտում այն հանգամանքը, որ բամբակը տարածված յույսերից էր Արցախում:<sup>22</sup> Բամբակաթելի հետ համարժեք կիրառումն ունեք նաև մետաքսաթել, որի ցածրորակ տեսակից արված կար-

պետի միջնաբերը ճկունություն և փափկություն էր հաղորդում իրին: Հունրանյութը գործքի թելի վերածելու համար մշակվում (զգվում) էր սանդեբրով (ունեք հոսանկունածև կառուցվածք, որի վերին մասում գտնվող սանդեբրի վրայով մի քանի անգամ անց էր կացվում բուրդը և վերածվում *մայանի/է* Առաջին մշակումից ստացված բրդից պատրաստվում էին հինքի թելերը, իսկ երկրորդից՝ գործքի թել(անյութը) և կամ անեղով (աղեղնածև փայտ, որի ծայրերն իրար էին միացվում ոչ-խարի աղիքից պատրաստված երիզով: Նրա վրա դրված բուրդը (քամ-բակը) ծեծվում էր կտրագլուխ, փայտյա քակիչով և ստացված քեղանիմ-քը հիմնականում օգտագործվում էր թաղիքն գործվածքների համար: Անեղով արվող գորարությանը ավանդարար գրադվում էին միայն տղամարդիկ, որոնք անգամ միավորվում էին ընկերակցության մեջ, ունենալով մաս մերթին օգտագործման խոսակցական յուրահատուկ լեզու՝ «տիղերեն»):

Բուրդը (քամբակը) մշակելուց հետո հյուսվում էր (մանել), իլիկով (ձեռքով թել մանելու համար ամենապարզունակ գործիքը. 20-35 սմ երկարության սրածայր ձողիկի տեսքով, որը մախնական շրջանում պատրաստվում էր քարից, կավից կամ ոսկրից, իսկ ավելի նոթ շրջանում հատկապես փայտից, որի վերնամասին ամրացված կիսակրո գլխիկը պահում է ուղիվող թելահավաքը և ապահովում իլիկի ձեռքով պտույտի համաչափությունը) կամ ճախարակով (իլիկի որոշ չափով «մեքենայացված» տեսակը, որն ունեք ոտքով կամ ձեռքով պտտեցվող անիվ, նրան ամրացված «թև» և իլիկ, իսկ սարքի կրո լիսեռն ու կաշվի ականջափուկը ծառայում էին մանվածքին հավասար ոլոր հաղորդելուն): Գոյանում էր *վճառը* (թելահյուսք), որը կծիկ դարձնելուց հետո վերածվում էր *կաժի*, պատրաստ լինելով մերկման համար, որով հետագա հյուսվածքը պետք է ստանար իր անկրկնելի գրավչությունը, ենչելությանն ու արտահայտչականությունը, կամխորոշելով և ստեղծվող իրի արժեքը:

Հատկանշական է, որ մերկարությունը հայաստանյան հնագույն արհեստներից էր, կազմելով առանձնացված թաղամասեր կամ համքարական միավորներ. օրենադրական նեղքին չափորոշիչներով և անգամ անհատական դրաշով՝ հիմնադրի (մախսետը) պատկերով: Միջնապարուն ձևավորված արհեստավորական այսօրինակ խմբավորումները, մասնագիտացման մախսետայր էին համարում Քրիստոսին, որն ըստ ավանդության, ինք տարեկան հասակում աշակերտել էր Իսրայել մերկարարին:<sup>23</sup> Ներկարար-արհեստավորները ունեցել են արհեստը քնորոշող առանձնակի անվանումներ. մարտուամերկ (մերկված թելը կոչվում էր «նարտու», որից և անվանումը), մերկիչ,<sup>24</sup> բոյախի (կրով մշակող), սիլաջի (մերկարար) և այլն: Ներկարարի արհեստանոցն համապատասխանաբար անվանվում էր «մերկատուն», «մերկոց»,<sup>25</sup> «տուն



մեղկոց», «քոյա-խանա», «սիլագ-խանա»<sup>26</sup> և այլն: Ներկայարարան արհեստի տարածվածության իմացում անշուշտ Հայաստանում գոյություն ունեցող ներկատեսակների բազմազանությունն էր բուսական, կենդանական և հանքային ծագումով, որնց շարքում առաջնային ենչեղություն ու առաջնայնությունն ունեցողներից էր հատկապես Ուրդան կարմիրը,<sup>27</sup> ինչպես նաև բազմաթիվ այլ ներկառուցքեր, որոնցից նշենք մի քանի, օրինակ.

ՏՈՐՈՆԸ (rubia) ներկատու բույսերի մեջ ունի առաջնային համարում, որի բույրնով եփված քելերը ունենում էին տաք կարմիրի կամ մուգ քաղազույնից սևին մոտեցող գունավորում: Ներկանյութը պատրաստվում էր բույսի յուրացրած արմատների և տաք ջրի մեջ լուծված կարմիր կավի մածուկի խառնուրդով: Հայկական ներկատեսակին առնչվող հիշատակությունների շարքում<sup>28</sup> մեզ համար առավել հետաքրքրական առաջին տեղեկություններից է հույն պատմագիր Հերոդոտոսի (մ.թ.ա. մոտ 485-մոտ 425) կողմից կատարված գրառումն այն մասին, որ «Այս երկրում (Կովկասում-Ա.Ս.), ինչպես ասում են, զարմանալի տերևներով ծառեր կան: Այս տերևներից ներկ են պատրաստում՝ մամրելով և ջրի հետ խառնելով: Եվ հետո դրանով նախշեր են անում իրենց զգեստների վրա: Լվանալուց հետո այդ նախշերը շեն անհետանում, այլ մաքրվում են քրոյի (կտորի) հետ, կարծես սկզբից և եր դրանք զործված են կտորի մեջ»<sup>29</sup> (պարզաբոլ է, որ հեղինակը նկարագրվում է նախ դաշնախաչ գործվածքը, և ապա շփումն տերևները արժատի հետ): Նոր ժամանակներում, 18-րդ դարում, հայազգի Ալեքսնը (Ալեքսյան) կծուարևի տղոնի աճեցում Ֆրանսիայի Վոլկուզ նահանգում, որտեղից ստացված ներկանյութը կուսենա այնօրինակ համարում, որ ժամանակի Սեն-Շամանի քաղաքական մամուլակտորայի տնօրեն Ժան-Կլոդ Ֆրաչային, իր նամակներից մեկում կգրի. «...Ալեքսնի պլանտացիաները այնպիսի մեծ հաջողություն ունեցան, որ ներկայումս տղոն են մատակարարում զանազան ֆարքիկանների և հատկապես Օրանժի քանրակյա գործվածքների ֆարքիկային»:<sup>30</sup> Միևնույն ժամանակ ֆրանսիական կառավարության կողմից, որպես ներկանյութից ստացվող շահույթի գնահատական և երախտիցի նշան Ալեքսնի կատարածին, հատուկ որոշմամբ 1846թ. նրա հուշարձանը կհանգանեցի Ալիյոնում: Ներկատեսակին նմանակում էր և ալածարիները (առաք. «al-jahri», բուրբ. «Jehri», ֆրանս. «alizeris»-տղոն):<sup>31</sup> Թելերը ներկվում էին և ասոդարակով կարճազույնի համար, որի առանձնահատկության մասին կհիշատակի Ստրաբոնը (մ.թ.ա. մոտ 63-մ.թ. 20թթ.) գրելով, որ Միսսերիսիոյում (Մսեր-Մեծ Հայքի կարևորագույն գավառներից-Ա.Ս.) «...գոյություն ունեն հանքեր, որտեղից ստանում են սամոլիկ մետաղը, որը «նայկական ներկ» անունն է կրում և նման է «պուրպուրին»:<sup>32</sup> Ներկատեսակը



ծծմբակն էր, որից ղեղինց օգտագործվում էր և նկարչության մեջ, իսկ կարմիրն իր նրանգային ինքնատիպությամբ (յուսմահայր) արտահանվում էր անգամ Իրաք, Սիրիա և Եգիպտոս:՝<sup>35</sup> Հավանաբար հենց այս ներկանյութն են հռոմեացի նկարիչները անվանել «Hocobitis»,<sup>36</sup> որի վերաբերյալ 10-րդ դարի 70-ական թթ., արաբ աշխարհագիր Իբն-Հատկալը Ուրմիա լճի նկարագրում կնշի, որ այնտեղ կա «...կարմիր և զառիկ-սանդղարակ»<sup>37</sup> Հետաքրքրության է արժանի մաս այն փաստը, որ Բաղդադի մզկիթներից մեկի զմբերը ծածկված է եղել կարմրավուն նրանգ ունեցող հայկական կավով, որից և ստացվում էր ներկանյութը («աք-քին ալ-ախմար ալ-արժանի»)։<sup>38</sup> Պետք է նշել, որ հատկապես կարմիր գույնի օգտագործումն այնքան տարածված էր հայկական արհեստագործության մեջ, որ նույնիսկ ստորյա գործածություն էին ստանում կարմրի ու նրա գունային նրանգները բնութագրող քառիմատները, ինչպես օրինակ. խրտնկ (կարմրի նրանգը), բոսոր (արևագույն կարմիրը), ծիբանի, հալազ(ջ)ի (կեռասի և վարդագույնի միջանկյալ նրանգ) և այլն: Հայ ներկարարները օգտագործում էին բուսական ներկանյութերից «կապտաչը»՝ մարնչագույն, «ասպուրը» (կակժիրակ)՝ հրագույն կարմիր, հոնի ծառի երիտասարդ ընձյուղները տաք կարմիր նրանգ ունեցող ներկ ստանալու համար և այլն: Հայկական ներկանյութերի մասին հարուստ տվյալներ է հաղորդում հռոմեացի նշանավոր գիտնական-քննախույզ Պլինիոս Ավագը (23–79թթ.), որի կողմից կատարված հիշատակություններից մեկը վերաբերվում է հատկապես կապույտ ներկանյութ լաջվարդին: Հեղինակը նշում է, որ «Հայաստանը մեզ (հռոմեացիներին-Ա.Ս.) ուղարկում է ներկատու նյութ, իր երկրի ամուճով Armenia կոչվող հայկական քաղը... որը բոլոր կապույտներից տարբերվում է իր համալսվի սպիտակությամբ (միատարրությամբ-Ա.Ս.), որը սրա գույնը նուրբ է դարձնում»: Հեղինակը հիշատակում է նաև հայկական խրխակով ներկտեսակը<sup>37</sup> (հուն. «տսկել» և «տսինձ» քառերի միակցում)՝ պղնձի օխրան, որը հայտնի էր իր ժամանակին Կիպրոսից, Իսպանիայից, Մակեդոնիայից և հատկապես Հայաստանից արուսահանվող քարձրակարգ տեսակներով: Փռշի վիճակում հումքը ոսկեգույն էր, որը քացախով բուրմ պատրաստելուց հետո դառնում էր մաև կապույտ, իսկ այլ քաղաղրամասերի հետ խառնուրդից ստացվում էր կանաչ գույնը: Կապույտ գույն ստանալու համար օգտագործում էին նաև բուսական ու հանքային այլ ներկատուներ, որոնց թվում էր կապույտ բոսորագույնի և կապույտի միջանկյալ գույնի համար ծառայող ինդիգո բուսահումքը, որը բերվում էր Հնդկաստանից, Ալթրանստանի Քարուլ քաղաքով անցնող խոշոր առևտրական ճանապարհով և հայտնի էր նաև «քարույան ինդիգո» անվանումով: Լերկանյութը ստացվում էր «ինդիկատու» բույսից, մուգ կապտագույն բյուրեղային փոշու տեսքով, որով ներկվող թելը ստանում

էր քաց կապտա-կամաչալում հյութեղ երանգ: Ինդիզոն դասվում էր առավել քանկարծեց մերկերի շարքին և հայ մերկաբարձերը միարմարում էին կապտյտ գույնի համար օգտագործել տեղական ավանդական կիրառում ունեցող մերկաբույսերից սանդալենը, գխտորը, հասպալաթը, կալաքարը (հայտի էր նաև «խալիուն» անունով), ինչպես նաև «տոկեղը» (քարաքոսի տեսակ)՝ կապտամանուշակագույն երանգի համար: Կապտյտը բնորոշելու համար օգտագործվում էր նաև «կապուտակ»՝ մոթեգույն, «հիր»՝ նակինթագույն, «շերմագույն» քառիմաստները և այլն: Կապտյտ և կապտակամաչալում մերկատեսակներն անգամ արտամանվում էին «Արտոնտո» անվանմամբ:<sup>16</sup> Դեղին գույնը առանում էին դեղնածաղկից, իչակաբնուկից, բրնձնուց (Ճարնջափայտ), զչխաֆուանից, եղջերակչի կեղևից, գառիկից, կծոխտրի աքմառից և այլն: Մոխի կեղևից ստանցվում էր դեղնաչազանակագույնը, իսկ ծիրամագույնի երանգը՝ սպարսածառի կեղևից: Դեղինը պատկանում էր հմագույն ժամանակներից տարածվածությամբ ունեցող այն մերկերի թվին, որոնք ժողովրդական բառահամակարգում ստացել էին անգամ տեսակների սահմանազատումներ. դեղնամ՝ կարմիր գույնին հարող դեղնագույն, չլոռա՝ դալար ըմճյուղների դեղնագույնը, դեղը՝ կամային հարող դեղնագույն և աննակսրևորը՝ սոխի կեղևից ստացրվող կարմրագույնով դեղինի երանգը և այլն: Սև գույնը ստացվում էր կամպեչեծառի կեղևի մշակումից (երբեմն երկաթի փոշու հավելումով), կակայի սերմերից, գխտորից, ընկուզենու կեղևից, արջապից («արջոն» սև), ճալի ցեխից և այլն: Հնաքրքրական էր և տեխնիկական այնպիսի նրբությունը, երբ ճալացեխի մեջ թելը պահելու ժամանակահատվածից էր կախված լինում նաև մուգ դեղնաչազանակագույն երանգի ստացումը: Մետ երեսուն տեսակ բնական մերկատու բույսերի խառնուրդներից և թրանց համակցումներից հանքային բաղադրամասերի հետ ստեղծում էին մոտ 150 գունային երանգներ, որոնցով և կազմավորվում էր գորգահյուսվածքի հնչելուրքյան ստաջունայնությունը:

Յուրաքանչյուր մերկաբար աշխատում էր միայն իրեն հատու, սերմից-սերմուղ անցնող, քայց և բնատուր զգացողությամբ, համակարգելով մերկի դիմացկունությունը, նրա փոխազդեցությունը լույսի, օդի, ջրի, փոշու հետ և այլն: Լեռնկետաց առաջ թելը մշակում էին վայրի թթի պտուղների հյութով, որից հետո թելը մերկվում էր խեցե կամ պղնձե կարթաններում, որոնց մեջ դրվում էր սալոթի պատեղ կամ կալաքար: Լեռնկված թելերը՝ մաքրուող չորացնում էին արևի տակ, քարերի վրա կամ տաք գամբում: Չորացումից հետո մաքրուող կայունացվում էր պաղլիղով՝ շիր, որը թելին հաղորդում էր պայծառություն: Տեխնիկական նմանօրինակ մշակման մասին է նիչատակվում նաև մույն Պլինիոս Ավագը, նշելով, որ քրդի թելերին պայծառ գույն տալու համար օգտագործում էին հե-

դուկ սպիտակ սքաղեղը, իսկ մուգ գույների համար՝ սևը, որոնց համընթաց կախն Իսպանիայում, Եգիպտոսում, Մակեդոնիայում, իսկ հայտնի էին նաև Կասպիսկա ծովափում և Կասպիսկի ծովում: Քելերի գույները ամրացվում էին մակ կրով ու աղով, իսկ փայլի համար կաճի բրդովում էր բանաջրով: Հետաքրքրական է, որ միայն Արցախում գգելուց և մանելուց առաջ բուրդը յուղում էին՝ թելին փափկություն հաղորդելու համար: 19-րդ դ. վերջին կովկասյան, ինչպես նաև հայկական ներկարարության մեջ հիմնավորվող թիմիական ծագում ունեցող ներկամայրությունը ներկվող թելերն այլևս չեն ունենա այն ենչեղությունն ու յափանջները, ինչ ավանդական տեսակները:

Կարպետի ստեղծման համար մախատեսված վերջին և հիմնական աշխատանքը կապված էր հաստոցի հետ (տորք, դագգահ, ոստայն), որը հիմնականում լինում էր ուղղահայաց (կառուցվածքի այս ձևը տարածված էր Արևմտյան Հայաստանի գավառներում) և հորիզոնական՝ գեղեցիկ դրվող շրջանակներ, որն առավել կիրառելի էր Արևելյան Հայաստանում: Հենքի համար բրդյա թելը մեղ, ուղղագիծ շարքերով ձգվում էր շրջանակի վրա (ավելի ուշ այդ նպատակի համար կկիրառվի քամրակյա թելը, որը թերևս կարպետագործության մեջ կառաջացնի գործքի տեխնիկական խախտումներ): Պատրաստ էր կարպետագործքի թելը ու հաստոցը: Այտեղ վերջանում էր արհեստի բարդությունը և սկսվում էր հյուսքով ստեղծագործվող արվեստը՝ գործելաձևի երկու հիմնական եղանակներով.

ա) Կարպետի և դաչտը և զարդահորինվածքը իրականացվում էր ընդհանրական փուլով, մերթևից մինչ դագգահի վերջամաս:

բ) Կարպետագործ տվյալ իրի համար մախատեսված զարդանախշերը մախտորք գործվում էին հենքաթելերի համապատասխան մասերում, որից հետո միայն ազատ մնացած տարածքը լցունվում էր գունահյուսքով:

Երկու դեպքում էլ գործվող թելերը չեին կազմում միահյուսումներ և հենքաթելի միջնավորներում ստեղծում էին բացվածքներ, որոնք իրենց հերթին վերածվում էին զարդանախշի օրգանական մասերի, կարպետին հաղորդելով առանձնակի տարբերակվող հմայք: Կարպետագործքը լինում էր «երկերեսամի», «մատնաքաշ» և «շուլաղ»: Վերջինիս ամվանումը գալիս է գործելու տեխնիկայից, որտեղ հյուսվող թելը կարպետի դիմային կողմից ամցնում է հակադիր երեսը և վերադարձվում էտ: Այսօրինակ գործվածքը լինում էր հաստ և դժվար իրականացվող՝ սակայն և երկարակյաց էր: Գործելու տեխնիկան հնարավորության էր տալիս հյուսքի մեջ ներառել մանր մախշատեսակներ՝ նրբագեղ անցումներով և արտաքնապես մոտենում էր գորգի դեկորատիվությանը:



Կենցաղային ամենալայն տարածվածությունն ունին, մեզարդ-  
որը լինում էր «հրկեքես», գոմային նեղ ու լայն իրար ետքորտոլ շեր-  
տագծերով, «ցանցային» կառուցվածքով, որի կենտրոնական հատվա-  
ծը՝ դաշտը գործվում էր քրդի բնական գույնով, իսկ գոմավորված բնե-  
րով ստեղծվում էին կողային (եզրագուտի) զարդանախշերը: Մեզարի և-

քիզները հաճախ ունենում էին Երկար դեկորատիվ հյուսքեր: Ջեջինը, որի ուղղամկյուն կառուցվածքի վրա տեղադրվում էին իրար հաջորդող տարագույն, շերտավոր եռիզոնակյան գուգորդումներ (որոշ դեպքերում ուղղահայաց), որոնք վերածվում էին զարդամախչի և ստեղծում տեսողական «ամհանգիստ» ռիթմ: Գործվածքային պարզությամբ ջեջինը մոտ էր մեզարին: Ջեջինի գործվածքի համար, որոշ դեպքերում, միջնաթելի համար օգտագործվում էր մետաքսաթել, իսկ իրար հաջորդող գունային շերտերին ուտոցիկություն հաղորդելու համար, թելի նստ միահյուսվում էին փայտիկների կամ եղեգի շերտեր: Ջարդամախչը տարբեր գույների կուտակվող շերտերի միակցումն էր: Մակայն որոշ դեպքերում այսօրինակ կարպետի դաշտը արվում էր լայն կարծիք կամ կանաչ շերտերով, որնց շուրջ գործվում էին մանուշակագույն, շագանակագույն գունային երիզներ, որոնք ընդմիջվում էին սպիտակով կամ դեղինով արված, ուտոցիկ գործքի հատվածներով, լայն շերտի մեջ տեղադրված նույնագույն խաչազարդերով: Մտեղծվում էր երկու «խկակական» երես՝ միանման արտահայտակամությամբ: Մեզարն ու ջեջինը իրենց գործվածքային ստանձնահատկություններով պայմանավորում էին սովորական ցուխակագործությանից անցումը դեպի բուն «կարպետոց» կազմավորված գեղարվեստական կերպարով, որի առավել հայտնի օրինակներից էր խուրջինը, որի գործքը, չափն ու զարդամախչը որոշվում էին ըստ գործածության նպատակի (մախատեալում էր և մարդկանց համար և կենդանիների վրա օգտագործելու համար. իշախարջին՝ միջին, անհամեմատ մեծ՝ եզնախարջին, ձիախարջին՝ երկարավուն կառուցվածքով ևն) Գեղեցական կենցաղավարության մեջ խիստ անհրաժեշտ այս սարքը բաղկացած էր երկու իրար միակցված մասերից՝ հարթ միջնաերիզով: Խուրջինի հատակային մասը գործվում էր միագույն սպիտակ, կարմիր, կապույտ, շագանակագույն կամ սև թելերով, որոնցից կազմվում էր շերտավոր հաջորդակամություն: Թիլահյուսքի միջով երբեմն անցնում էր այլ գունավորում ունեցող եռիզոնակյան կամ զիզգազ գործված թելային զիծ: Խուրջինի արտաքին կողմերը նույնպես կարող էին ունենալ եռիզոնակյան կամ ուղղահայաց երիզներ՝ փոքրաչափ, պարզ զարդամախչերով: Շուրջ գործվածքի դեպքում փոփոխվում էր մակ զարդամախչային համակարգը: Շուրջամայր պարկի արտաքին կողմն ունենում էր կարպետի համար կանոնիկ կառուցվածք՝ դաշտ և շրջագոտի: Դաշտի մեջ տեղադրվում էին կեռիկավոր կուտոններով զարդարված մեծ կամ փոքրաչափ շերտակյուն մախչեր, որոշ թեքությամբ արտահայտված քառակուսիներ, որոնց ներսի մասում գործվում էին մանր շերտակյունիներ, ինչպես նաև կենսաց ծառի, քոյմակերպերի, «օձիկների», «աստղածաղիկների», «ծրարի» և այլ պայմանագարդեր: Նույնօրինակ կառուցվածքով, սակայն այլ նպատակային կիրառում ունեւր անկողնակապը

(մափօաշ), որը լինում էր լայն, երկարավուն, երիզավոր կողային հաս-  
վածների ունեցող կառուցվածքով, իսկ հաստակային մասում դրվում էր  
ընդհանուրից տարբերակվող կտորահատված: Աճկողնակապի վերնա-  
մասը ուներ վրածածկ և հյուսածո կապիչներ, որոնք ամրացված էին հաս-  
տուկ այդ մարտակի համար գործված եզրային օղակներով: Աճկողնա-  
կապի զարդանախշերը ևս թելադրվում էին մրա մարտակայնությունից.  
հատակի կտորը (ինչպես և խորքինի համար) լինում էր միազույն կամ  
շեքտավոր գործքով, իսկ կողային հատվածների զարդանախշերը հիմ-  
նակաճում ունենում էին հորիզոնական գծային դասավորվածություն,  
երկրաչափական հորինվածքներով (կետեր, եռանկյունիներ, ծաղ-  
կաձևեր, գծիկներ և այլն): Աճկողնակապի կողային մասերի վրա պատ-  
կերվում էին մեծատարած զարդանախշեր, որտեղ առավել ծանախ հան-  
դիպողը հատկապես օձակերպի երկարածից պատկերումն էր: Գեղիչ-  
խող երիզի վրա արվող վարդակում գործվում էր ծրարի զարդաձևը, որ-  
պես պամիլստության խորհրդանիշ, որը շրջապատում էին բազմազույն  
խաչանախշերը: Բազմաշեքտ հարդարանքի մեջ զգալի տեղ էր հաս-  
կացվում հատկապես զուճային համադրություններին, որտեղ պարտա-  
ղիր էր ֆոնի կարմիրը և սպիտակով, կամայով ու կապույտով արված շե-  
ղանկյունի զարդանախշը:

Ինքնատիպ արտահայտչականություն ունեին կարպետագործք  
աղամանները (աղսքսակ), որոնք քառակուսի, փոքրաչափ սքարկեր էին՝  
կապիճ-օղակներով: Աղամանի գործվածքը թեթև էր, հարմար տեղավորի-  
ման համար և, որ ամենակարևորն է, սրանց մեջ արդ չէր խոնավանում: Ա-  
ղամանների զարդանախշը զուսպ և պարզունակ էր. վարդակի զարդան-  
տիվ, որը մի քանի շեքտով կրկնվում էր լայնացող միջին հատվածում: Դե-  
կորատիվ յուրօրինակ հնչելություն ունին ճիտ կարպետագործ ծածկոց-  
ները (լույ), որով կենդանին պաշտպանվում էր ցրտից և միևնույն ժամա-  
նակ այն հարդարանք էր: Գործվածքի ստաֆմային մասի կտրվածքի մի-  
ջով անց էր կացվում ճիտ սարսնոցը և ծածկվում էր կենդանու կտրծքը:  
Չույի զարդանախշում գերիշխող մարդկային ֆիգուրների պատկերում-  
ներն էին, որոնք կարմիր, կամայ կամ դեղին թելերով գործվումն էին դի-  
մային մասից և երիզվում հակադրվող զուսպտրամար թելերով: Չարդա-  
չարի մեջ ներառվում էին նաև կենդանիների և հատկապես երկզլասնի  
(առփևից և սլոլային մասից) թռչունների պատկերումներ, գլուխների միա-  
կողմ ուղվածությամբ, պատկաճ և հատվածային բաժանմամբ պոչերով, ո-  
րոնց միանման ֆիգուրներով կազմվում էր շրջա:

Կարպետագործ իրերի պարկային կառուցվածքով էին ջվաղը  
(մեծ պարկ)՝ հասցահատիկի կամ ալյուրի տեղավորիման ու պանդան-  
ման համար, որն ունենում էր միազույն տարածական գործվածք երիզա-  
յին նախազարդով, գրալամանը (գրալակալ), որը կարվում էր կարպե-

տակտորագործ երկարուկ երիզից, գնդիկներ ունեցող ցանցկեն ծպկե-  
բով: Գրալամանը կախվում էր տան հեմասյունից և կարող էր տեղափո-  
քել մինչև 60 փայտե զրալ, մկրատամանը, որի կառուցվածքը մոտ էր  
զրալամանին, գործքի զարդանախչի մեջ գերիշխող նախկյունաձևով:

Հայաստանի տաքերը գավառներում ստեղծագործված կար-  
պետները միմիանցից զատվում էին միայն զարդանախչի մասնակի ա-  
ռանձնահատկություններով, քանզի դրանց զրալի մասի վրա «թափա-  
ռող» մախչածներ էին, որոնք տարածված էին սրտմակաև Հայաստա-  
նի բոլոր ազգագրական շրջաններում (կից ներկայացված են առավել  
տիպական զարդանախչերի գծապատկերները, կատարված հեղինակի  
կողմից):

Այսօրինակ զարդանախչերից էին նուստամնավոր, ութաթև ա-  
տամնավոր աստղածաղիկը, ողորասյուռոյտ շրջանակի տաքերակներով  
ստեղծված կոմպոզիցիաները, մանր նախկյուններից ստացվող քառա-  
կուսիները, մշաման, ատամնավոր ելուստներով խորհմվածքները և այլն  
(մարդկանց ու կենդանիների պարզագույն պատկերումներ), ինչպես  
մաև մշտապես առաջմային մշամակութուն ունեցող խաչի զարդանը:  
Կարպետի զարդանախչային համակարգը հնարավոր է բաժանել երկ-  
րայափակաև, բուսական և կենդանական զարդամոտիվներ ներկայաց-  
նող խմբերի՝ կազմավորված «շեղանկուն» հիմնաձևով, որով ստեղծա-  
գործված պայմանաշառային հիմնավորումներով զարդանկերից էին.

Խաչ. հայ մշակույթի բազմաբնույթ ստեղծագործություններում ա-  
մենադայն տարածում ստացած զարդանախչը, որի տաքերակները տեղ  
են գտել մաև մինչդրիստոնեական Հայաստանի մշակութային համակար-  
գում, մարմնավորելով տիեզերքի չորս հեմարանները: Կեռխաչ, խաչի  
հեմագույն, այլաձև գրաֆիկական արտահայտությունը, երբ խաչի քեռի  
ծայրային մասերը շեղված են ուղիղ անկայան տակ: Հախչակաև մյուսա-  
կաև մշակույթում խաչի ու կեռխաչի պատկերումները համընկում են  
անգամ վաղճօական ծայրապատկերներում և մինչ մեր օրերը հասած  
բրոնզեդարյան իրերի նախարանքում: Մթճնադարում համընկում ենք  
մաև մեկ այլ տարբերակի, երբ կեռխաչի քեռի հատման մասում տե-  
ղադրվում է սկավառակ: Այսօրինակ ձևը անգամ առկա էր ճարտարապե-  
տական դեկորում (Աճի քաղաքի սլաքիսպների վրա), ինչպես մաև գորգա-  
գործության մեջ (օձագորգեր) և գուգոդովում էր «Կենաց ծառի» պատկե-  
րամշանին, ունենալով իմաստային նույնություն. պաղարքութայուն, կյան-  
քի, կրակի ու կայծակի, նավերության խորհրդանշում, առանաղով տա-  
քածում և կրքատական արվեստի այլ քնագավառներում: Խաչի (կեռխաչ)  
մշամակումն երբեմն տեղադրվում էր «քրքուցող» ելուստավոր շրջանակ-  
ների կամ շեղանկյուններից կազմված վարդակների մեջ, ստեղծելով խնց-  
զեռնի, խաչի, նղեղառի պայմանամշամային խորհմվածքներ: Հանախ,

կարգվելու հիմնական կոմպոզիցիան կազմվում էր փեցանկյուն շեղանկյուն-  
նիներին, որոնց շքերասային հաջորդական տեղադրումը կարգվելու դաշտի  
վրա նկատվում էր մեղմակերպակի խոռոչներ:

Հայկական կարգվելու գործարարական մեջ ընդգրկված զարգանախ-  
չերի կառուցվածքը արտահայտվում էր պարզագույն գծերից մինչև  
բարդ գրաֆիկական կերպարների փոփոխություններ, որոնք հիմնվում  
էին տվյալ տարածաշրջանին բնորոշ ազգագրական իմաստավորումնե-  
րի վրա, ինչպես օրինակ, շուշամ' մաքրություն, մեխակ' իմաստություն,  
աստղ' լույս, օկտոգոն' տիեզերական մասնություն, օձ' օրախ, ըմտանի-  
քի հավանավորություն, ծրար' կարոտ ու պանդխտություն արտահայ-  
տության կողմ գարյակերի մեղմակերպեր և այլն: Առավել տարածված երկ-  
րաչափական զարգանախչերն էին քառակուսին, շեղանկյունն ու ե-  
ռանկյունին, որոնց տարբերակված կցումները միմյանց ստեղծում էին  
կանթերի' եռանկյան ու քառակուսու համադրությամբ, տիկնիկի' մթին  
չափի եռանկյունիների միախառնումներ, մոմի' երկարավուն եռանկյունու  
զագագի վրա քառակուսու պատկերի տեղադրում և այլն իմաստավոր-  
ումները: Բուսական զարգանախչերից ամենատարածվածը աստղա-  
ծաղկի պատկերումն էր, որն ունենում էր հինգ և ավելի զրբերիկներ», եր-  
բմն կիբասովելով որպես կենտրոնական վարդակ և կամ մանրագաղղ:  
Աստղածաղկին էր նման խաչվարդը, որն ստեղծվել էր աստղածաղկի  
զարդանախչի առանցքային գծերի հատումից նրա կենտրոնում ստաց-  
վող խաչածևի գծապատկերից: Այս նախածևների (վեցաթև աստղա-  
նախչ և կամ վեցաթև վարդակներով ստեղծված խաչեր) գեղեցկագույն  
տարբերակների ենք համոզվում նաև Անիի եկեղեցական կառույցների  
դեկորում: Այսօրինակ զարդանախչերը հայտնի էին և գորգարվեստում  
«արևային սկավառակներ» տեսքով, որոնք տարածված էին «Արծվա-  
գորգերի» մեջ, խորհրդանշելով արևի ու արծվի պայքարը (որից և գորգի  
անվանումը: Լավագույն նմուշներից է հռչակավոր «Գուհար» գորգը:  
1680, ՀԱՀ, ժամանակոր հավաքածու):

Մի քանի սուրանկյուն եռանկյունիներից էր կազմվում նաև եր-  
րեմվածքը, որն հիմնականում զուգակցվում էր իր առանձնակի տեղը  
զբաղեցնող կենցաղ ծառի պայմանաճանի հետ, որի տարբերակները  
առկա էին անգամ ուրարտական շքեանի հուշարձաններում, ապա և հե-  
տագա ժամանակաշրջանների հայկական ճարտարապետական կոթող-  
ների դեկորներում. երեքույր (IV-V դդ.), Քասաղ (IV դ.), Գլինի կաթոլի-  
կոսական պարտա (V դ.), Մրին (VII դ.), Սևանի վանքի ու եկեղեցիների  
փայտյա խոյակների հարդարանք (IX դ.), ինչպես նաև մանրանկարչա-  
կան արվեստում, որտեղ արժավագարդի երկու կողմից ջուր խմող եղ-  
նիկների կամ թռչունների պատկերումները մարմնավորում էին հավեր-  
ժության ճգնման զարգացումը: Պետք է նկատի ունենալ, որ քուսական



